բայց եթէ ընկենուլ արտաքս՝ և կոխան լինել 'ի մարդկանէ։ Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք թաքչել՝ որ 'ի վերայ լերին կայցէ։ Եւ ոչ լուցանեն ճրագ՝ և դնեն ընդ գրուանաւ, այլ 'ի վերայ աշտանակի. և լոյս տայ ամենեցուն՝ որ 'ի տանն իցեն։ Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, ոչ զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է։ 16։

Մէնէդի Յարու-Ը Ա։ Ռարոզ. Ասասցուք։

Համբարձի Ա։

Յարուցեալ տէրն ի գերեզմանէն. միածինն որպէս փայլակն. Եւ լոյս փառաց ծագեաց յաշխարհս. Եւ երկինք և երկիրքս ցընծային։ Փառք Հօր։ Ահա է յարութիւն ամենայն։ Քանզի դրունք երկնից բացեալ եղեն. և հոտ անոյշ բուրեաց յաշխարհս. Եւ լցոյց զարարածս ամենայն։ Այժմ և միշտ։ Օծրք երկնից ինչեալ էին Եւ բանակեալ շուրջ ըզգերեզմանաւն Եւ հոգեղէն բարբառովն երգէին. տէր օրհնեալ է քո յարութիւնդ։

Ամէն։ Սաղմոս ՃՀ։ Օրհնեցէք զԱ. 197։

Ա-էպտրոն ըստ Մարկոսի։ Ա. 21։

Տերամբ մերով Յեսու Քրիստոս։

Եւ մնանեն 'ի կափարնաում, և իսկ և իսկ 'ի շաբաթուն մտեալ 'ի ժողովուրդն, ուսուցանէր զնոսա։ Եւ զարմանային ընդ վարդապետութի նր, զի ուսուցանէր զնոսա իբրև իշխանութիւն՝ և ոչ որպէս դպիրքն։ Եւ էր 'ի ժողովրդեանն նոցա այր մի, յորում այս պիղծ գոյր 'ի նմա. որ աղաղակեաց՝ և ասէ։ Թո՛յլ տուր, զի՞ կայ մեր և քո՝ Յեսու Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ՝ ո՞վ ես սրբդ Աստ։ Սաստեաց 'ի նա Յեսու և ասէ. կարկեաց՝ և ել 'ի դմանէ։ Եւ զարկոյց զնա այսն պիղծ. և

աղաղակեաց 'ի ձայն մեծ, և ել 'ի նմանէ: Եւ զարմացան ամենեքին, մինչև հծծել ընդ միմեանս՝ և ասել. զի՞նչ է այս նոր վարդապետութի՛, զի իշխանութե՛ և այսոց պղծոց սաստէ՝ և հնազանդին նմա: Եւ ել լուր նորա ընդ ա՛մ կողմն Գալիլեացւոց: Եւ վաղվաղակի ելեալ 'ի ժողովրդենէն, եկն 'ի տուն Սիմովնի և Անդրեայ՝ Յակովբաւ և Յովհաննու հանդերձ: Եւ զոքանչ Սիմովնի դնէր ջերմացեալ, և վաղվաղակի ասեն ցնա վն նր: Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա. և եթող զնա տենդն՝ և պաշտէր զնոսա: Եւ իբրև երեկոյ եղև 'ի մտանել արեգականն, բերէին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս. և էր ա՛մ քաղաքն ժողովեալ առ դուրսն: Եւ բժշկեաց բազում հիւանդս 'ի պէսպէս ախտից, և դևս բազումս եհան. և ոչ տայր խօսել դիւացն, զի գիտէին զնա թէ Քն է: 34:

Գէրգ. Խնդրեսցուք: Կեցո: Աղօթք. Թագաւոր:

Բ. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն ԻԶ:

ՕՐՀՆԵՍՑՈՒՔ զՏէր, որ օրհնեացն. 160:

Ալէլուիա Յարութեան ԻԶ:

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Ա:

Անըսկիզբըն Բանըդ մարմնացար ի կուսէն յանձն առեր կամաւ զխաչն եւ զչարչարանս. Աստուած հարցըն մերոյ: Եհանկեց Հօր եւ Հոգւոյն Բանդ Աստուած ի գերեզմանն իջեր մնա-

լով անապակութեան. Աստուած հաւրցըն մերոց։
Յարեար ի մեռելոց յաւուր երրորդի լուծանելով զիշխանութիւն ընդդէմ։ Աստուած հաւրցըն մերոց։

Գ. Զի՞նչ օրհնեցէք բարձր արարէք ընդ նա յաւիտեան։ Փառք Հօր։ Հրաշալի ընդ յարութիւն Աստուածորդւոյն. ժողովուրդք բարեբանեալով. բարձր արարէք ընդ նա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Մի՞ թաքանեցէք ընդ յարութեանն ի մեռելոց. քահանա՞յք հոգեւոր երգով. բարձր արարէք ընդ նա յաւիտեան։

Մեծացո՛ւսցէ Աստ։

Ով գերագոյն ծաղիկ բուրեալ յԱդեմայ. հոտ անմահութեան ծնընդոցս Աստուծոյ. յորմէ սփռեցաւ մահ ընդ տիեզերս. օրհնութիւն ընդքեզ մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Լուր լուծիչ երկանց բարձող անիծից. ծագումն արեւու լուսոյն ճշմարտի. որոյ հերքեաւ խաւարն առաջին. օրհնութիւն ընդքեզ մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Ընդքեզ ունի մինչ բարեխօս կոյս ամէնօրհնեալ. մայր անարատ Իմմանուէլի. տաճար Բանին Հօրն երկնաւորի. օրհնութիւն ընդքեզ մեծացուցանեմք։

Ողորմեա՛ Աստ։

Իջեր յերկնից Որդի Աստուծոյ. եւ մարմնացար ի սրբոյ կուսէն. որ անմեկնելիդ ես ի Հօրէ՝. ողորմեա։ Փառք Հօր։ Անկիր ի չարչարանս կամաւորապէս Աստուծ. եւ խաչեցար վասն ազգի մարդկան. եւ ի գերեզմանն իջեր անապակա՝ն. ողորմեա։ Այժմ և միշտ։ Օմանք լուծեր և զանշխարհս աղատեցեր կա-

բոզանպէս Տ՝ր. և ի մեռելոց յարեալ իշխանութիւն. ողորմեա՛ :

ՏԷՐ ՅԵՐԻՒԷՆ ԱԿ :

Աքանչելի՛ հրեշտակքն Տ՚ն ցընծութեամբ իջեալ ի գերեզմանքն հարկանէին զձեր. փող յարութեանքն Տ՚ն : Ի հարկանել փողոյն պահապանքքն զարհուրեցան և եղեն ձեռն. ի յահէն որպէս մեռեալ։ Փառք Հօր : Զայն եղեւ ի հրեշտակէն բարբառ եղեւ ուրախութեան Տէր յարեաւ զձեզ. փառք յարութեանքն Տեառն : Ամէն և միշտ : Դրօքքն փակելովք երեւեալ Յ՚ն աշակերտացն և ասէ զձեր. խաղաղութիւն ընդ ձեզ :

Ամ-ոսոս Էրգ Յոր-ԼԷ ՐՁ : ՎՐԵՊ. Ասացուք :

Ամ-ոսոս Սողմոս ՁԴ :

48. Յոյց մեզ Տէր : Փխ. Հաճեցար Տէր. 191 :

Ամ-Էսոսան ըսպ Ղ-ԿՈՍ : Ե. 12 :

Տ՚ն մերոյ Յն՚ի Վն՚ի

Նա եղև ՚ի հասանելն նորա ՚ի մի քաղաքացն, ահա այր մի ի բորոտութիւն իբրև ետես զՅն՚ անկեալ ՚ի վրն երեսաց աղաչեաց զնա՝ և ասէ. Տէր՝ եթէ կամիս, կարող ես զիս սրբել : Զգեաց զձեռն իւր՝ հասոյց ՚ի նա՝ և ասէ. կամիմ՝ սրբեաց. և վաղվաղակի գնաց ՚ի նմանէ բորոտութիւն : Նա նա պատուիրեաց նմա մի ումեք ասել, այլ թէ երթ ցոյց զանձն քո քահանային. և մատո պատարագ վն՚ սրբութեանդ քո՝ ոգ և հրամայեաց Մովսէս, ՚ի վկայութիւն նոցա : Նա յորդէր առաւել բանն զնմանէ. և ժողովէին ժողովուրդք բազումք լսել՝ և բժշկել ՚ի հիւանդութենէ իւրեանց : Նա նա խոյս տայր յանապատ տեղիս, և կայր յաղօթս : 16 :

ՎՐԵՊ. Խնդրեսցուք : Կեցո՛ : Ամ. ՎՐՈՒՄ ամենա :

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ա-ՈՒՂԻՂ ՍՈՂՄՈՍ ՃԼՈՒԹ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. 193։

Ա-ԵՓՈՓՈՒՆ ԸՍՓ ՄՈՓԼԷՈՍԻ։ Ե. 17։

ՏԷՐՆ մեր ՅԻ ՎՐԻ ասէ.

Ամի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ։ Ամէն ասեմ ձեզ՝ մինչև անցցեն երկինք և երկիր՝ յոտ մի, որ նշանախեց մի է, ոչ անցցէ յօրէնացն և 'ի մարգարէից՝ մինչև ամ եղիցի։ Որ ոք լուծցէ մի ինչ 'ի պատուիրանացս յայսցանէ 'ի փոքունց, և ուսուցցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեն երկնից. իսկ որ արասցէ՝ և ուսուցցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեն երկնից։ Բայց ասեմ ձեզ. զի եթէ ոչ առաւելուցու արդարութի ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութի երկնից։ Լուարուք զի ասացաւ առաջնոցն, թէ մի սպանաներ. զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի։ Այլ ես ասեմ ձեզ. եթէ ամ որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար, պարտաւոր լիցի ատենի. և որ ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտաւոր լիցի 'ի գեհենն հրոյն։ Եթէ մատուցանիցես զպատարագ քո 'ի վերայ սեղանոյ, և անդ յիշեսցես՝ եթէ եղբայր քո ունի ինչ խէթ զքէն, թո՛ղ զպատարագն քո առաջի սեղանոյն. և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո։ Եր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ լիցես ընդ նմա 'ի ճանապարհի. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն դահճի. և արկանիցիս 'ի բանտ։ Ամէն ասեմ քեզ. ոչ ելանիցես անտի, մինչև հատուցանիցես զյետին նաքարակիտն։ Լուարուք զի ասացաւ, մի շնար։ Բայց

ես ասեմ ձեզ. թէ ՈՒՄ որ հայի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում: Եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա՝ և ընկեա 'ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի ՈՒՄ մարմինդ քո անկանիցի 'ի գեհեն: Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա՝ և ընկեա 'ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի ՈՒՄ մարմինդ քո արկանիցի 'ի գեհեն: Ապաքէն ասացաւ, եթէ որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն: Բայց ես ասեմ ձեզ, եթէ ՈՒՄ որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան՝ նա տայ նմա շնալ. և որ զարձակեալն առնէ՝ շնայ: Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջնոցն. մի երդնուցուս սուտ, բայց հատուսցես Տ՚ն զերդմունս քո: Այլ ես ասեմ ձեզ՝ ամենևին մի երդնուլ, մի յերկինս՝ զի աթոռ է Աստ՚ծոյ, և մի յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա, և մի յԵրուսաղէմ՝ զի քաղաք է մեծի արքայի. և մի 'ի գլուխս քո երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել՝ կամ թուխ: Այլ եղիցի ձեր բան, այո՝ այո. և ոչ՝ ոչ. զի աւելին քան զայն 'ի չարէն է: Լուարուք զի ասացաւ. ակն ընդ ական, և ատամն ընդ ատաման: Այլ ես ասեմ ձեզ, մի կալ հակառակ չարին. այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ դարձո՛ նմա և զմիւսն: Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո, թո՛ղ 'ի նա և զբաճկոն քո: Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա և երկուս: Որում խնդրէ 'ի քէն՝ տո՛ւր. և որ կամի փոխ առնուլ 'ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս: Լուարուք ապաքէն զի ասացաւ. սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զթշնամին քո: Այլ ես ասեմ ձեզ. սիրեցէք զթշնամիս ձեր. օրհնեցէք զանիծիչս ձեր. բարի արարէք ատելեաց ձերոց. և աղօթս արարէք 'ի վերայ այնոցիկ՝ որ լուկենն

զձեզ և հալածեն. զի եղիջիք որդիք Հօր ձերոյ որ
յերկինսն է. զի զարեգակն իւր ծագէ 'ի վրայ չարաց
և բարեաց, և ածէ անձրև 'ի վրայ արդարոց և մե-
ղաւորաց: Զի եթէ սիրիցէք զայնոսիկ որ սիրենն
զձեզ՝ զի՞նչ վարձք իցեն, ո՞չ ապաքէն և մաքսա-
ւորք զնոյն գործեն: Եւ եթէ տայցէք միայն ողջոյն
բարեկամաց ձերոց՝ զի՞նչ աւելի առնէք, ո՞չ ապա-
քէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն: Արդ՝
եղերուք դուք կատարեալք. ոգ և Հայրն ձեր երկ-
նաւոր կատարեալ է: 48:

Մեծեպէ Յոպո-Ի Ի Ի: Ի Ի: Ասացուք:

Հոմբոպէ Ի Ի:

Ա՛կն ի գերեզմանն առաւօտեան եբ կանանքն.
յօծանել խընկել զանապական մարմնին: Փառք
Հօր: Ո՛չ ոմանքն հրեշտակին քաջալերէր ըզնոսա
ասելով. ցընծացէք յարեաւ որպէս յառաջն ա-
սաց: Այժմ և միշտ: Լուեալ ի հրեշտակէն զաւե-
տիս յարութեն. պատմէին աշակերտացն եթէ յա-
րեաւ Քրիստոս:

Ադյոկման Սողմոս ՃՕ: Օրհնեցէք զՄ. 197:

Ա-Էպոպան ըսպ Մոպկոսի: Ա. 35:

Տէրն մեր Յս Քս

Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ էլ և
գնաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս:
Եւ գնաց զհետ նորա Սիմոնն՝ և որ ընդ նմայն էին:
Եւ իբրև գտին զնա՝ ասեն ցնա, թէ ամենեքին
խնդրեն զքեզ: Եւ ասէ ցնս. եկա՛յք երթիցուք և
յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն, զի և անդ քարո-
զեցից. զի յայս իսկ եկեալ եմ: Եւ քարոզէր 'ի
ժողովուրդս նց ընդ ամ Գալիլեացիս, և դևս հա-
նէր: Գայ առ նա բորոտ մի, աղաչէր 'ի ծունր
իջանէր՝ և ասէր. Տէր՝ եթէ կամիս, կարող ես
զիս սրբել: Իսկ Յս գթացեալ ձգեաց զձեռն, մեր-

ձեցաւ 'ի նա՝ և ասէ ցնա. կամիմ սրբեաց: Եւ իբրև ասացն ցնա, վաղվաղակի գնաց 'ի նմանէ բորոտութիւն՝ և սրբեցաւ: Եւ սաստեալ նմա՝ եհան զնա արտաքս վաղվաղակի, և ասէ: Զգոյշ լեր՝ մի ումեք ինչ ասիցես. այլ երթ ցոյց զքեզ քահանային. և մատո վասն սրբութեանդ քո պատարագ՝ զոր հրամայեաց Մովսէս, 'ի վկայութիւն նոցա: Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ՝ և հռչակ հարկանել զբանն, մինչ ոչ ևս կարող լինել նմա յայտնապէս 'ի քաղաք մտանել, այլ արտաքոյ յանապատ տեղիս էր. և գային առ նա յամենայն կողմանց: 45:

ՎԵՊ. Խնդրեսցուք: Կեցո՛: Ամ. Թագաւոր:

Բ. ՅԻՇԵՑՈՒՑԱՔՍՔ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն Ամ:

ՄԱՐԱՒՈԿՆ հանդերձ կառաքն ընկղմեցաւ. 164:
Ալելուիա Յարութիւն Ամ:

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Ամ:

Որ յամենայն փառաց նախստիս ընդ Հօր. օրհնա՜բանեա՛ի ի դասուց քերովբէից. օրհնեա՛լ Տէ՛ր Աստուա՛ծ հայրցն մերոց: Որ եկիր ի փրկել ընտանեաց Ադամ. ի ճաշակմանէ՛ մահաբեր պղտղոյն. օրհնեա՛լ Տէ՛ր Աստուա՛ծ հայրցն մերոց: Որ փոխանակ ծառոյն գիտութեան ետուր ընկեաչ քո Տր. եւ արբուցեր ըմե՛ղ ի կողանէս աղբերէդ. օրհնեա՛լ Տէ՛ր Աստուա՛ծ հայրցն մերոց:

Գ. Զգոյշ օրհնեցէք եւ բարձր արարէք ընդանաձ

յաւիտեան։ Որ եղոյծ ըղվտանգաւոր երկունքս նախամծրն. ծընանելով ի սրբոյ կուսէ՛՛՛ն. օրհնեցէք եւ բարձր արարէք ընդ՚ընաձ յաւիտեան։ Փառք Հօր։ Որ եբարձ ըղփշաբեր անիծադրութի՛ բուսաբերին. բևեռելով ի վերայ խաչի՛՛՛ն. օրհնեցէք եւ բարձր արարէք ընդ՚ընաձ յաւիտեան։ Այժմ և միշտ։ Որ ճաշակեացն ըղլեղի դառնութե՛ վա՛ ազգի մարդկան. եւ պարգեւեաց ըզմարմի՛ն և զարիւն իւր զանապակա՛՛՛ն. օրհնեցէք եւ բարձր արարէք ընդ՚ընաձ յաւիտեան։

ՍԷՖՈՅՈՍՅԷ ԱԿ։

Զանձառելի՛ ըզլոյս աստուածութեանն. տրնօրինաբար կրեցեր ի քո՛ւմ յորովայնի՛ Մարիամ մայր եւ՚ կոյս. օրհնութեամբ ըզքեզ մեծացու՛ցա՛՛՛նեմք։ Փառք Հօր։ Լ՚ մանանաւոր լուսոյն զարհուրեցան դասք առաքելոցն. այլ ի քեզ բովանդակ կրեցեր ընդհո՛ւր ա՛՛ծութեանն Մարիամ մայր եւ՚ կոյս. օրհնութեամբ ըզքեզ մեծացուցա՛՛՛նեմք։ Այժմ և միշտ։ Առաքելոցն հովանացեալ ամպ լուսեղէն. գերագոյն քեզ Հոգւոյն սրբոյ եւ զօրութի՛ Բարձրելոյն հովանաւորեալ սուրբ Աստուածածին. օրհնութեամբ ըզքեզ մեծացուցա՛՛՛նեմք։

ՈՂՈՐԿԵԱ՛ ԱԿ։

Որ խոնարհեցար յերկնից ի հայրական ծոցոյ. միածին Որդի Աստուծոյ առեր մարմին ի՛ սրբոյ կուսէն. վասն մերոյ փրկութեան. ողորմեա՛։ Փառք Հօր։ Ընդ մեզ Աստ՚ծ շնորհեցար ընդ մեղաւորանս. եւ կոխեցեր ըզգլուխս վիշապին և շինչան

խայթոցքդ մահաբերին. և փրկեցեր զքեզ զերս. ո՞ղորմեա՛: Այժմ և միշտ: Թեւեռեցեր զքեզ զերս մեր ի վերայ խաչին. եւ համբերեալ մահու իջեր ի գերեզման. կենդանութեան շնորհեցեր նիստելոցն ի խաւարի. եւ զօրութիւն յարեար ո՞ղորմեա՛:

Տէր յերկնից Ակ:

Քրիստոսի զգայարութիւնն աստուածորդւոյն. ա՛յսօր տեսեալ առաքելոցն. եւ բազմութիւնք հրեշտակացն. երգէին երգ նոր անլռելի ձայնիւ: Փառք ՀՕՐ: Զայն ահեղ գաբրիէլեան փողոյն. ա՛յսօր գոչէր աւետարանէր. աւետիք են աշխարհի. երգէին երգ նոր անլռելի ձայնիւ: Այժմ և միշտ: Լոյս մեծ եւ ահաւոր. ա՛յսօր ծագեաց ՝ի եկեղեցւոյ. յարուցեալ ի մեռելոց Քրիստոս. երգեսցուք երգ նոր անլռելի ձայնիւ:

Առաւօտու երգ Յարութեան Ակ: Քեզ. Սաղմոս Զ:

Կ3. Յոյց մեզ Տէր: Փս. Հաճեցար Տէր. 191:

Առէպտրան ըստ Ղուկասու: Ե. 17:

Տէրն մեր Յս Քս

Այս եղև 'ի միում աւուրց՝ և ինքն ուսուցանէր, և փարիսեցիքն և օրինացն վարդապետք նստէին, որ ժողովեալ էին յամենայն քաղաքաց Գալիլեացւոց՝ և Հրէաստանի և Երուսաղէմի. և զօրութիւն Տեառն էր 'ի բժշկել զնոսա: Այս ահա արք բերէին մահճաւք զայր մի որ էր անդամալոյծ, և խնդրէին զնա մուծանել 'ի ներքս՝ և դնել առաջի նր: Այս իբրև ոչ գտանէին թէ ընդ որ մուծանիցեն զնա 'ի ներքս վասն ամբոխին, ելին 'ի տանիս և 'ի ցուցն կախեցին զնա, և իջուցին մահճաւքն հանդերձ 'ի մէջ առաջի Յսի: Այս տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ ցնա. այր դու՝

թողեալ լիցին քեզ մեղք քո։ Ակսան խորհել դպիրքն և փարիսեցիք, և ասեն. ո՞ է սա՝ որ խօսի զհայհոյութիւնս, ո՞վ կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն Ա.Ծ։ Իբրև գիտաց Յն զխորհուրդս նոցա, պատասխանի ետ և ասէ ցնոսա. զի՞ խորհիք 'ի սիրտս ձեր։ Օ՞ի՞նչ դիւրագոյն է. ասել՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի և գնա։ Այլ զի դիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս. ասէ ցանդամալոյծն, քեզ ասեմ՝ արի առ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո։ Եւ առժամայն յարուցեալ առաջի ամենեցուն՝ առ զիւրև յորոյ վերայ անկեալն դնէր, գնաց 'ի տուն իւր, և փառաւոր առնէր զԱ.Ծ։ Օ՞արմանք կալան զամենեսեան, և փառաւոր առնէին զԱ.Ծ. լի եղեն ահիւ, և ասեն, եթէ տեսաք այսօր նոր նշան։ 26։

Փ՚Ը. Խնդրեսցուք։ Կեցո։ Ա.Ը. Պ.ում ամենա։

ՅՆԵՐԿՈՅԻՆ

Ա.ՈՒՐԲԱՆ ՍՈՒՐԲ ՈՒՍԹ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. 193։

Ա.ԷՊՈՍԱՆ ԵՒ ՄՈՒՐԷՈՍԻ։ Ջ. 1։

Տէրն մեր Յն Պն ասէ.

Զգոյշ լերուք ողորմութեանդ՝ մի առնել առաջի մարդկան, ոչ թէ 'ի ցոյց ինչ նոցա. գուցէ և վարձս ոչ ընդունիցիք 'ի Հօրէն ձերմէ՝ որ յերկինսն է։ Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի հարկանէր փող առաջի քո, ոչ կեղծաւորքն առնեն 'ի ժողովուրդս և 'ի հրապարակս, ոչ զի փառաւորեսցին 'ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա։ Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո. ոչ զի եղիցի ողորմութիւն քո 'ի ծածուկ. և Հայրն քո որ տեսանէ 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս։ Եւ յորժամ յաղօթս կայցես, մի լինիցես

ոչ կեղծաւորքն. զի սիրեն 'ի ժողովուրդս և յան-
կիւնս հրապարակաց կալ յաղօթս, ոչ զի երևեսցին մարդկան. ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա: Այլ դու յորժամ կայցես յաղօթս, մուտ 'ի սենեակ քո՝ և փակեա զդուրս քո, և կաց յաղօթս առ Հայր քո 'ի ծածուկ. և Հայրն քո որ տեսանէ 'ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս: Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շատախօսք լինիք իբրև զՀեթանոսսն. զի համարին թէ 'ի բազում խօսից իւրեանց լսելի լինիցին: Արդ՝ մի՛ նմանիցէք նոցա. զի գիտէ Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչ չև ձեր խնդրեալ ինչ իցէ 'ի նմանէ: Եւ արդ՝ այսպէս կացէք դուք յաղօթս. Հայր մեր որ յերկինս, եր եղիցի անուն քո: Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո ոչ յերկինս և յերկրի: ՕՀաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձուն, այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէն. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն: Զի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր: Այլ թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր: Եւ յորժամ պահիցէք՝ մի՛ լինիք իբրև զկեղծաւորսն տրտմեալք. որ ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երևեսցին մարդկան թէ պահիցեն. ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա: Այլ դու յորժամ պահիցես, օծ զգլուխս քո՝ և լուա զերեսս քո, զի մի՛ երևեսցիս մարդկան իբրև զպահօղ. այլ Հօրն քում 'ի ծածուկ. և Հայրն քո որ տեսանէ 'ի ծածուկ, հատուսցէ քեզ: Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի. ուր ցեց և ուտիճ ապականեն, և ուր գողք ական հատանեն և գողանան: Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ոչ ուտիճ ապականեն, ոչ գողք ական հատանեն և գողանան:

Օ՛ի ուր գանձք ձեր են՝ անդ և սիրտք ձեր եղի-
ցին։ 21։

Մէ՛ոնէ՛ի Յարու՛ն Բկ։ Քէ՛ռ. Ա՛սասցուք։
Ժամբարձի Բկ։

Քրիստոս յարեա՛ւ ի՛ մեռելոց։ Ընդ արշալո՛յսն
առաւօ՛տուն կանխեա՞լ կանանցն ի գերեզմանն
ասելո՛վ. Քրիստոս յարեա՛ւ ի՛ մեռելոց։ Փառք Հօր։ Ա-
ռ նո՛սա ասէր հրեշտակքն զի՞ խնդրէ՛ք զկեն-
դանին ընդ մեռեա՛լս. Քրիստոս յարեա՛ւ ի՛ մեռելոց։
Այժմ և միշտ։ Փութացարո՛ւք ով սքանչելք
եւ պա՞տմեցէ՛ք աշակերտացն ասելո՛վ. Քրիստոս յա-
րեա՛ւ ի՛ մեռելոց։

Ակիմանա Սաղմոս ՃՀԱ։ Օրհնեցէ՛ք զԱ՛ծ. 197։
Ա-Հոգեւոր ջոգ Մարկոսի։ Բ. 1։
Տ՛ն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Ա՛ւ մտեալ դարձեալ 'ի կապառնաումա յետ ա-
ւուրց. լուաւ եղև եթէ 'ի տան է. և ժողովեցան
բազումք՝ մինչև տեղի ևս ոչ լինել՝ և ոչ առ դրանն.
և խօսէր նոցա զբանն։ Ա՛ւ գային առ նա՝ բերէին
անդամալոյծ մի բարձեալ 'ի չորից։ Ա՛ւ իբրև ոչ
կարէին մերձենալ առ նա յամբոխէ անտի, քակեցին
զյարկն՝ ուր էր Յիսուս, և բացեալ զառաստաղն՝ ի-
ջուցին զմահիճն յորում կայր անդամալոյծն։ Ա՛ւ
տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն.
ո՛րդեակ՝ թողեալ լիցին քեզ մեղք քո։ Ա՛ւ էին
ոմանք 'ի դպրաց անտի՝ որ անդ նստէին. և խոր-
հէին 'ի սիրտս իւրեանց. զի՞նչ է այս՝ որ խօսի
սա զհայհոյութիս. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ
ոչ՝ մի Ա՛ծ։ Ա՛ւ գիտաց Յիսուս յոգի իւր՝ թէ այնպէս
խորհին 'ի սիրտս իւրեանց, և ասէ. զի՞ խորհիք
զայդ 'ի սիրտս ձեր։ Օ՛ի՞նչ դիւրին է, ասել ցան-
դամալոյծն՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ
ասել՝ արի՛ առ զմահիճս քո և երթ 'ի տուն քո։

Ա՛յլ զի գիտասջիք եթէ իշխանութի ունի որդի մարդոյ 'ի վը երկրի թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն։ Պ՚ասէ ասեմ, արի առ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո։ Եւ յարեաւ վաղվաղակի առեալ զմահիճսն, եկ առաջի ամենեցուն. մինչև զարմանալ ամենեցուն՝ և փառաւոր առնել զԱ՚ստ՝ և ասել, թէ այսպիսի ինչ երբէք ոչ տեսաք։ 12։

Քէպ. Խնդրեսցուք։ Կեցո։ Ամ. Թագաւոր։

Բ. ՊԼՈՒՏԱՐՔ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն գ.։

ՕԳՆԱԿԱՆ ընդունելի եղև իմ ցէր. 168։

Ալէլուիա Յարութիւն գ.։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Ակ։

Ընեղանելո՛ւդ Ա՚ստ իջե՛ր յերկնի՛ց ի՛ յեղականքս. եւ անճառելի՛ ծագմամբ տընօրի՛նեցար յարգանդի՛ կուսին արեգա՛կն արդարո՛ւթեա՛. օ՛րհնե՛մք ը՛զքե՛զ Ա՚ստ՚ծ հա՛րցըն մերո՛ց։ Ընմեկնելո՛ւդ ի Հ՚օրէ եկի՛ր կամա՛ւ ի՛ մա՛հ խա՛չի՛. եւ ընդ չարագո՛ր ծսըն պատժեա՛լ ի՛ սպա՛նդ վա՛ր եցար. ա՛յլ ի ծո՛ցդ Հ՚օր ո՛չ բաժա՛նեցա՛ր. օ՛րհնե՛մք ը՛զքե՛զ Ա՚ստ՚ծ հա՛րցըն մերո՛ց։ Ընմահո՛ւթե՛ց տըւ՚օ՛ղ Ք՚՚ե՛ իջե՛ր ի՛ հո՛ղ մա՛հո՛ւ. կա՛տարելո՛վ զողբումըն հո՛գերգողին եդա՛ր ի գբի՛ նեՐքնո՛ւմն. ա՛յլ ակնարկելո՛վ քո ի՛ գըժոխըս հա՛նե՛ր ըզկապեա՛լսըն քա՛ջուԹ՚՚ե՛ եւ որ նըՐնջէ՛ի՛ն ի՛ տա՛պանս. օ՛րհնե՛մք ը՛զքե՛զ Ա՚ստ՚ծ հա՛րցըն մերո՛ց։

Գ. Ոչ զՏՐ օրհնեցէք եւ բարձր արարէք ընդ-
նաձ յաւիտեան։ Փառք Հօր։ Որ անապական
թաղմամբն ելոյծ զանէծս երկրի. ի ջանելով ի
ստորինս աղատուի շնորհեաց նիստելոցն ի խաւա-
րի. օրհնեցէք եւ բարձր արարէք ընդնաձ յաւիտ-
տեան։ Այժմ և միշտ։ Որ կենսաբեր յարու-
թիւնն իւրով ազատեաց զադամեանս ի կեանս ան-
մահ. եւ ե՛ր մարմնով և արեամբն հրաւիրեաց
ընդեզ յերկնից յարքայութիւն. օրհնեցէք եւ
բարձր արարէք ընդնաձ յաւիտեան։

Մէծացուցէ Ամ։

Որ ընդկեանքն անմահարար մահկանացու բնու-
թիւս ի քեզ կրեցեր ե՛ր կոյս Մարիամ. որով մե-
ռեալքս որ Ադամայ կենդանացաք յիսուսով յա-
րութիւնն. առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց
մերոց։ Փառք Հօր։ Որ ընդանն անեղական զէակն
էից գոյացութիւնց. անճառաբար ծընար մարմին
եղեալ ի փրկութիւն եղականացս. առ նա միշտ
բարեխօսեա վասն անձանց մերոց։ Այժմ և միշտ։
Որ ընդպտուղն ի քէն կենաց ընծայեցեր մեռեալն
Ադամայ. զորոյ պանհօք քառասնօրեայ քաւեաց
զպտղոյն ճաշակումն եւ յանվախճան ընդնոյն վերա-
ծեաց ի կեանս. առ նա միշտ բարեխօսեա վասն
անձանց մերոց։

Ողորմեա Ամ։

Ինկիր ի տեսութիւն անհանանելիդ Ամ. եւ մար-
մին զգեցար ի սրբոյ կուսէն. կեցուցիչ եւ յոյս
մեր կեցո՛ ընդեզ։ Փառք Հօր։ Խաչի համբերե-
ցեր վա՛ անզգի մարդկան. եւ մերովքս չարչարեալ

փրկեցեր՝ ի մահուանէ. կենցուցի՛ր եւ յոյս մեր կեցո՛ ըզմեզ։ Այժմ և միշտ։ Եղար ի գերեզմանի կեանք աշխարհի. և յարուցեալ յերրորդ աւուր զմարդի՛կ ի կեանս փոխեցեր. կենցուցի՛ր եւ յոյս մեր կեցո՛ ըզմեզ։

ՏԷՐ ՅԵՐԻՆԷՑ ԱԿ։

Երգեսցո՛ւք քեզ ընդ հրեշտա՛կս յաղթակա՛ն օրհներգութիւն։ Որ մահուամբ քո՛ մեռուցեր ըզմահ. եւ յարութիւն պարգեւեցեր հոգանի՛ւթ բընութեա՛նս. երգեսցո՛ւք քեզ ընդ հրեշտա՛կս յաղթակա՛ն օրհներգութիւն։ Որ ցուցա՛ր մեզ ճանապարհ նորոգման. եւ մաքրեցեր զաղտեղուի՛ յանցանացըն զոր պատրեա՛ց թըշնամի՛ն. երգեսցո՛ւք քեզ ընդ հրեշտա՛կս յաղթակա՛ն օրհներգութիւն։

Կանխեցի՛ն կանա՛ք ի՛ւղաբերք ի գերեզմանն եւ տեսի՛ն զյարութիւնըն Տեառն։ Փառք Հօր։ Ասացա՛ւ դո՛ւռըն յա՛ռուն գերեզմանի՛ն կընքելոյ. լոյս ծագեա՛ց տիեզերա՛ց։ Այժմ և միշտ։ Յարեա՛ւ Տէրն ի մեռելոց հըզո՛ր զօրութեամբ հաստատեա՛ց զհիմունս եկեղեցւո՛ սըրբոյ։

Ա՛ռաւօտու երգ Յարութեան։ Ձայն Ա. Ասացուք։

Ա՛ռաւօտու Սաղմոս Զ։

Ղ3. Յոյց մեզ Տէր։ Փխ. Հաճեցար Տէր. 191։

Ա՛ռաւօտեան ըսոյ Ղ.ուկասու։ Ե. 27։

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ

Եւ յետ այնորիկ ել անտի՝ և ետես մաքսաւոր մի որում անուն էր Ղեւի, զի նստէր 'ի մաքսաւորութեան. և ասէ ցնա, եկ զկնի իմ։ Եւ թողեալ զամ

յարեաւ գնաց զկնի նորա։ Եւ արար ընդունելու-
թիւն մեծ նմա Ղևի 'ի տան իւրում. և էր ժողովուրդ
բազում մաքսաւորաց և այլոց՝ որ էին բազմեալ ընդ
նոսա։ Եւ տրտնջէին փարիսեցիքն և դպիրքն նո-
ցա զնմանէ առ աշակերտսն նորա՝ և ասէին. ընդէր
ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէք և ըմպէք։
Պատասխանի ետ Յն և ասէ ցնոսա, ոչ ինչ են պի-
տոյ բժիշկք ողջոց, այլ հիւանդաց։ Ոչ եկի կոչել
զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն։ Եւ
նոքա ասեն ցնա. ընդէր աշակերտքն Յովհաննու
պահեն ստէպ՝ և խնդրուածս առնեն, նոյնպէս և
փարիսեցւոցն. և քոյդ ուտեն և ըմպեն։ Եւ նա
ասէ ցնոսա. մի թէ կարօղ էք մանկանց առագաս-
տի, մինչ փեսայն ընդ նոսա իցէ. հրաման տալ
պահել։ Եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի 'ի նո-
ցանէ փեսայն, ապա պահեսցեն յաւուրսն յայնո-
սիկ։ Ասաց և առակ մի առ նոսա, թէ ոչ ոք ար-
կանէ 'ի նոր հանդերձէ 'ի վերայ հնացեալ ձորձոյ.
ապա թէ ոչ՝ և զնորն պատառէ, և ընդ հնոյն չմիա-
բանի կապերտն որ 'ի նորոյն։ Եւ ոչ ոք արկանէ
գինի նոր 'ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ
գինին նոր զտիկսն հինս. ինքն հեղու, և տիկքն
կորնչին։ Այլ գինի նոր 'ի տիկս նորս արկանելի
է, և երկոքին պահին։ Եւ ոչ ոք ըմպէ զհինն՝ և
կամիցի զնորն. քանզի ասէ՝ թէ հինն քաղցրա-
գոյն է։ 39։

Ռեպ. Խնդրեսցուք։ Կեցո՛։ Ամ. Ռում ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ա-ուջին Սաղմոս Ոնսթ։

Օրհնեցէք զՏր յօրհնութիւն նոր. 193։

Ա-ելուածն ըստ Մատթէոսի։ Գ. 22։

Ցն մեր Յն Ռն ասէ.

Հրաշք մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ է,

ամ մարմինդ լուսաւոր եղիցի։ Եպա թէ ակն քո չար է՝ ամ մարմինդ խաւարին եղիցի. իսկ արդ՝ եթէ լոյսդ որ 'ի քեզ է՝ խաւար է, խաւարն որչափ ևս։ Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին ատիցէ, և զմիւսն սիրիցէ. կամ զմին մեծարիցէ, և զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք Ես ծառայել և մամոնայի։ Ա՛ յդորիկ ասեմ ձեզ. մի հոգայք վասն ոգւոց ձերոց՝ զինչ ուտիցէք, կամ զինչ ըմպիցէք. և մի վասն մարմնոց ձերոց՝ թէ զինչ ագանիցիք. ոչ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր՝ և մարմին քան զհանդերձ։ Հայեցարուք 'ի թռչունս երկնից՝ զի ոչ վարեն և ոչ հնձեն և ոչ ժողովեն 'ի շտեմարանս, և Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնս. ոչ ապաքէն դուք առաւել էք քան զնս։ Իսկ արդ՝ ո՞ 'ի ձէնջ առ հոգալ իւրում՝ յաւելուլ կարիցէ 'ի հասակ իւր կանգուն մի։ Եւ վասն հանդերձի զի՞ հոգայք. հայեցարուք 'ի շուշանն վայրենի՝ ո՞ւր աճէ. ոչ ջանայ, և ոչ նիւթէ։ Ասեմ ձեզ՝ զի և ոչ Սողոմոն յամ 'ի փառսն իւրում զգեցաւ իբրև զմի 'ի նոցանէ։ Իսկ եթէ զխոտն 'ի վայրի որ այսօր է՝ և վաղիւ 'ի հնոց արկանի, Աստ այնպէս զգեցուցանէ. որչափ ևս առաւել զձեզ թերահաւատք։ Մի այսուհետև հոգայցէք՝ և ասիցէք. զինչ կերիցուք՝ կամ զինչ արբցուք՝ կամ զինչ զգեցցուք։ Զի զայդ ամ հեթանոսք խնդրեն. քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամ։ Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստի և զարդարութիւն նր. և այդ ամ յաւելցի ձեզ։ Մի այսուհետև հոգայցէք վասն վաղուի՝ զի վաղիւն վասն իւր հոգասցի. շատ է աւուրն չար իւր։ 34։

Մեծեցի Յոլոմէ Գ։ Քարոզ. Ասասցուք։

Հոմբարձի Գ։

Այսօր յարութի՛ Քրիստոս ծնեցէք հաւատացեալք.

ի՛ մի՛ Աստուած Հայր ամենակալ։ Փառք Հօր։ Այսօր եւ կանայքն իւղաբերքք անուտիս տալով առաքելոցն. օրհնեն զԱստուած զՀայր ամենակալ։ Այժմ և միշտ։ Այսօր և հրեշտակք ի յերկինս հոգեւոր հընչմամբ երգով. օրհնեն զԱստուած զՀայր ամենակալ։

Աբիյոկիան Սողմոս ՃՀ։ Օրհնեցէք զԱ. 197։

Ա-Էպոլոան ըստ Մարկոսի։ Ր. 13։

Տէրն մեր Յս Քս

Եւ ելանելով դարձեալ 'ի ծովեզրն, և ամ ժողովուրդն գայր առ նա. և ուսուցանէր զնս։ Եւ մինչդեռ անցանէր, ետես զՂեւի Ալփեայ՝ զի նստէր 'ի մաքսաւորութեան. և ասէ ցնա. Եկ զկնի իմ։ Եւ յարուցեալ գնաց զկնի նր։ Եւ եղև 'ի բազմելն նր 'ի տան նր, և բազում մաքսաւորք և մեղաւորք բազմեալ էին ընդ Յսի և ընդ աշակերտսն նորա. քանզի էին բազումք՝ որ երթային զհետ նորա։ Իսկ դպիրքն և փարիսեցիք իբրև տեսին՝ թէ ուտէ ընդ մաքսաւորս՝ և ընդ մեղաւորս, ասեն ցաշակերտսն նր. զի՞ է՝ զի ընդ մեղաւորս՝ և ընդ մաքսաւորս ուտէք և ըմպէք։ Իբրև լուաւ Յս՝ ասէ ցնս. ոչ ինչ է պիտոյ բժիշկ ողջոց՝ այլ հիւանդաց, և ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։ Եւ էին աշակերտքն Յովհաննու՝ և փարիսեցիքն 'ի պահս, գան և ասեն ցնա. ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու՝ և փարիսեցիքն պահեն, և քո աշակերտքդ ոչ պահեն։ Եւ ասէ ցնս Յս. մի թէ մարթ ի՞նչ իցէ որդւոց առագաստի մինչ ընդ նս իցէ փեսայն՝ պահել. ցորքան ընդ իւրեանս ունիցին զփեսայն, ոչ է մարթ պահել։ Այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ վերասցի 'ի նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն յաւուրն յայնմիկ։ Ոչ ոք կապերտ նոր անթափ արկանէ 'ի վրայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ առ-

նու լրութիւն իւրով նորն 'ի հնոյ անտի, և չար ևս պատառումն լինի։ Եւ ոչ ոք արկանէ գինի նոր 'ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին զտիկսն, գինին հեղուս, և տիկքն կորնչին. այլ գինի նոր 'ի տիկս նորս արկանելի է։ 22։

ՎՐԵՊ. Ինդրեսցուք։ Կեցո։ Ամ. Թ. ագաւոր։

Բ. ԵՍՔՍԹ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն գ.։

ԱՐԳԵՍՅՈՒՐ Տեառն երգ նոր ձայնիւ. 171։

Ամենա-ի Յարութեան գ.։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Ի.Զ։

Որ ի յերկնից իջեր անբնակիզն Ամ՛ծ Բան եւ լոյս. զքեզ ամենեքեան օրհնեսցուք Ամ՛ծ հարցըն մերոց։ Որ ի խաչին բեւեռեցար եւ հեղեր զարիւնդ ի փրկուն տիեզերաց. զքեզ ամենեքեան օրհնեսցուք Ամ՛ծ հարցըն մերոց։ Որ ի գերեզմանի եդար եւ յարեար ի մեռելոց Ա՛ն յաւուր երրորդի. զքեզ ամենեքեան օրհնեսցուք Ամ՛ծ հարցըն մերոց։

Գ. Ընդունէր օրհնեցէք եւ բարձր արարէք ընդեան յաւիտեան։ Որ ի խաչին բեւեռեցար եւ ի գործոց ձեռաց իւրոց ապտակեցար. եւ կերակուր ընկալար ընդելի. ամենայն արարածքդ գովեսցուք բարձր արարէք ընդեան յաւիտեան։ Փառք Հօր։ Այսն որոմ՛ մ՛ մ՛ Յ արեգակն խաւարեալ եւ ցե-

լոյր վարագոյր տաճարին վերուստ ի վայր. վէմքք պատառեալ երկիր շարժեալ. ամենայն արարածքք գոլվելով բաժ՛ին ի ամենայն յաւիտեան։ Այժմ և միշտ։ Թաղեցաւ ի մէջ երկրի և ի յերրորդ աւուր յարեաւ ողջապէս. եւ ի յերկինս համարձաւ Աստուած. ամենայն արարածքք գոլվելով բաժ՛ին ի ամենայն յաւիտեան։

Մեծացուցանէ Զ։

Սուրբ եւ Աստուածին Մարիամ ցանկալի կուսից և պարծանք ազգի մարդկան. մայր և աղախին մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Անկէզ մորենի և տանձար ընդհանուր լուսոյն. անարատ և անխախտելի կուսութիւն. մայր և աղախին մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Խորհուրդ կենաց եւ մայր կենդանութիւն. և առանգաստ հրաշալի ծագմանմբ. մայր և աղախին մեծացուցանեմք։

Ողորմեա Զ։

Ինչեր յերկնից Որդի Աստուծոյ աղաւաղեցեր զարարածս. անկանիմ առաջի քո. ողորմեա՛ ինձ Աստուա՛ծ։ Փառք Հօր։ Ի խաչին բեւեռեցար Աստուածն. և ընդմարդն ի կապանաց մահու արձակեցեր. և՛ զիս մի անտես առներ. որ մեղաքս եմ մեռեալ։ Այժմ և միշտ։ Յարութիւնն Հօր յանմատոյց լուսոյն. որ ինչեր ի գերեզման. կենդանացուցեր զարարածս քո. եւ զիս մի անտես առներ քանզի քեզ միայնոյ մեղայ։

Տէր յերկնից Զ։

Ի գերեզման քո կանխեցին կանայքն զիւղս և զխունկս բերին. ի՛ պատիւ թաղման քո. զի

զմեղքդ ըզհողացեալըս վերածեր ի կեա՞նս։ Փառք Հօր։ Փոխանակ իւղոյն զհաւատս անբիծս եւ զաղաչանըս մեր ընդ առաւօտեան կանանցն ընկալ. որք զողջոյն կենաց լուան Ն՝ւայի ունկամբն։ Այժմ և միշտ։ Նոյնոյն ամենայն առաքելոցն յարեաւ յաւրուցիչըն մեր աւերեաց ըզդրժոխս. եւ զթշնամին կապեաց ի՝ յանլոյծ կապանս։

Ա-ա-օպո- Եվգ Յարու-Ն Գկ։ ՎՅՊ. Ասացուք։
Ա-ա-օպո- Ասղոս ԶԳ։

Կ3. Յոյց մեղ տէր։ Փխ. Հաճեցար տէր. 191։
Ա-Ն-ԵՊՈՒԼԱՆ ԸՍՊ ԳՈ-ԿԱՍՈ-։ Ջ. 1։
Տէն մերոյ Յեսի Քրիստոսի

Նա եղև 'ի շաբաթու յերկրորդում պառաջնոյն՝ անցանել նմա ընդ արտորայսն. և աշակերտքն նորա կորզէին հասկ՝ շփէին ընդ ափ, և ուտէին։ Նա ոմանք 'ի փարիսեցւոցն ասեն ցնոսա. զի՞նչ գործէք զոր չէ օրէն 'ի շաբաթու։ Պատասխանի ետ նոցա Յեսու և ասէ. չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ զոր արարն Դաւիթ, յորժամ քաղցեաւն ինքն՝ և որ ընդ նմայն էին։ Օ՛խանդ եմուտ նա 'ի տունն Ա՛յ, և զհացն զառաջաւորութեան եկեր՝ և ետ այնոցիկ որ ընդ նմայն էին. զոր ոչ էր օրէն ուտել, բայց միայն քահանայապետիցն։ Նա ասէ ցնոսա. տէր է որդի մարդոյ և շաբաթու։ Նա եղև 'ի միւսում շաբաթուն մտանել նմա 'ի ժողովուրդն՝ և ուսուցանել. և էր անդ այր մի և ձեռն իւր աջ գօսացեալ էր։ Նա սպասէին նմա գրիչքն և փարիսեցիք՝ թէ 'ի շաբաթուն բժշկիցէ, զի գտանիցեն չարախօսութի՝ զնմանէ։ Նա նա գիտէր զխորհուրդս նոցա, ասէ ցայրն՝ որոյ ձեռնն գօսացեալ էր. արի՝ անց 'ի մէջ։ Նա նա յարուցեալ եկաց։ Ասէ ցնոսա Յեսու. հարցիցս ինչ զձեզ. զի՞նչ արժան է 'ի շաբաթու, բարի՞ ինչ առնել՝ եթէ չար գործել, ոգի՞ մի ապրեցուցանե՞լ

թէ կորուսանել։ Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրագին՝ ասէ ցնա. Ձգեա զձեռն քո. և նա ձգեաց, և հաստատեցաւ ձեռն նորա իբրև զմիւսն։ Եւ ելեալ փարիսեցիքն՝ խորհէին ընդ միմեանս՝ թէ զինչ առնիցեն Յիսուսի։ 11։

Ռ։ Խնդրեսցուք։ Կեցո։ Ամ։ Մ։ Ագաւոր։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Առաջին Սաղմոս Կ.Զ։

Ամ ողորմեա՛ մեզ և օրհնեա՛ զմեզ. երևեցո՛ զերեսս քո՝ ի մեզ և ողորմեա՛ մեզ։

Զանազգել յերկրի զճանապարհս քո. յազգինս ամենայն զփրկութիւն քո։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Ամ, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն։

Ուրախ եղիցին, և ցնծասցեն ազգինք. զի դու դատիս զժողովուրդս յուղղութի. և ազգաց երկրի դու առաջնորդես։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Ամ. դոհասցին զքէն ժողովուրդք ամենայն։

Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց զմեզ Ամ Ամ մեր։ Ամ մեր օրհնեսցէ զմեզ, և՝ ի նմանէ երկիցեն ամենայն ազգք երկրի։

Առ Եփեսոսն ըստ Պողոսի։ Գ. 1։

Տէրն մեր Յս Քս ասէ.

Ոչ դատիք՝ զի մի դատիցիք։ Զի որով դատաստանաւ դատիք՝ դատելոց էք. և որով չափով չափիք՝ չափեսցի ձեզ։ Զի՞ տեսանես զշիւղ յականն եղբօր քո, և՝ ի քում ականդ զգերանդ ոչ տեսանես։ Կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո, թո՛ղ հանիցից զշիւղդ յականէ քումմէ. և ահաւադիկ՝ ի քում ականդ գերան կայ։ Կեղծաւոր՝ հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսցես հանել զշիւղն յականէ եղբօր քո։ Ոչ տայք զսրբութի շանց.

և մի արկանէք զմարգարիտ ձեր առաջի խոզաց, զի մի առ ոտն կոխեսցեն զնս, և դարձեալ երգիծուցանիցեն զձեզ։ Խնդրեցէք՝ և տացի ձեզ, հայցեցէք՝ և գտջիք, բախեցէք՝ և բացցի ձեզ։ Զի ամ որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա։ Որ իցէ 'ի ձէնջ մարդ՝ ցոր խընդրիցէ որդի իւր հաց, մի թէ քար տայցէ նմա. և կամ խնդրիցէ ձուկն, մի թէ ծձ տայցէ նմա։ Արդ՝ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց, ո՞րչափ ևս առաւել Հայրն ձեր որ յերկինս է տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա։ Զամ որ միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս և դուք արարէք նոցա. զի այս իսկ են օրէնքն և մարգարէք։ Մտէք ընդ նեղ դուռն. քանզի ընդարձակ է դուռն՝ և համարձակ ճանապարհն՝ որ տանի 'ի կորուստ, և բազումք են որ մտանեն ընդ նա։ Որ նեղի անձուկ է դուռն՝ և նեղ ճանապարհն՝ որ տանի 'ի կեանս, և սակաւք են որ գտանեն զնա։ Զգոյշ լերուք 'ի սուտ մարգարէից՝ որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և 'ի ներքոյ են գայլք յափշտակողք։ Ի պտղոյ նց ծանիջիք զնս. մի թէ քաղիցե՞ն 'ի փշոց խաղող՝ կամ 'ի տատասկէ թուզ։ Այսպէս ամ ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ։ Ոչ կարէ ծառ բարի՝ պտուղ չար առնել, և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել։ Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ պտուղ բարի, հատանի և 'ի հուր արկանի։ Այսպա 'ի պտղոյ նոցա ծանիջիք զնս։ Ոչ ամ որ ասէ ցիս՝ Տէր Տէր, մտցէ յարքայութիւն երկնից. այլ որ առնէ զկամն Հօր իմոյ որ յերկինսն է։ Բազումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ. Տէր Տէր՝ ո՞չ յանուն քո մարգարէացաք, և յանուն քո դևս հանաք, և յանուն քո զօրութիս բազումս արարաք։ Եւ յայնժամ ասացից ցնոսա՝ եթէ ոչ երբէք գիտէի զձեզ. 'ի բաց կացէք յինէն ամենե-

քեան՝ զյք գործէիք զանօրէնութիւն։ Ամենայն որ
լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և առնէ զսոսա, նմանեսա-
ցի առն իմաստնոյ՝ որ շինեաց զտուն իւր 'ի վերայ
վիմի։ Իջին անձրևք՝ և խաղացին գետք, շնչեցին
հողմք՝ և բախեցին զտունն, և ոչ կործանեցաւ.
քանզի 'ի վերայ վիմի հաստատեալ էր։ Եւ ամ
որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և ոչ առնէ զսոսա,
նմանեսցի առն յիմարի՝ որ շինեաց զտուն իւր 'ի
վերայ աւազոյ։ Իջին անձրևք՝ յարեան գետք,
շնչեցին հողմք՝ հարին զտունն, և անկաւ և էր
կործանումն նորա մեծ յոյժ։ Եւ եղև իբրև կա-
տարեաց Յն զամ զբանս զայսոսիկ, զարմանային
ժողովուրդքն ընդ վարդապետութի նր։ Զի իբրև
իշխանութիւն ուսուցանէր՝ և ոչ որպէս դպիրքն նց։
Այլ իբրև էջ 'ի լեռնէ անտի, գնացին զկնի նո-
ցա ժողովուրդք բազումք։ Եւ ահա մատուցեալ
բորոտ մի, երկիր պագանէր նմ, և ասէր. Տէր՝ եթէ
կամիս՝ կարող ես զիս սրբել։ Զգեաց զձեռն իւր
և հասոյց 'ի նա Յն՝ և ասէ. կամիմ՝ սրբեաց. և
վաղվաղակի սրբեցաւ 'ի նմանէ բորոտութիւն։ Եւ
ասէ ցնա Յն, զգոյշ լեր՝ մի ումեք ասիցես. այլ
երթ ցոյց զանձն քո քահանային. և մատո զպա-
տարագն, զոր հրամայեաց Մովսէս, 'ի վկայութի
նց։ Եւ մտեալ 'ի Կափառնաում, մատեաւ առ
նա հարիւրապետ մի, աղաչէր զնա, և ասէր. Տէր՝
մանուկ իմ անկեալ կայ 'ի տան անդամալոյծ՝
չարաչար տանջեալ։ Ասէ ցնա Յն. ես եկից՝ և
բժշկեցից զնա։ Պատասխանի ետ հարիւրապետն՝
և ասէ. Տէր՝ չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ ի-
մով մտցես. այլ ասա բանիւ, և բժշկեսցի մանուկն
իմ։ Զանզի և ես այր մի եմ ընդ իշխանութիւ,
ունիմ ընդ ինև զինուորս. ասեմ սմա երթ՝ և
երթայ, այլում թէ եկ՝ և գայ, և ծառայի իմում
թէ արա զայս՝ և առնէ։ Իբրև լուաւ Յն՝ զարմա-
ցաւ, և ասէ ցայնոսիկ՝ որ զհետն երթային. ամէն

ասեմ ձեզ՝ և ոչ Իսրայելի այսպիսի հաւատս գտի երբէք։ Բայց ասեմ ձեզ. զի բազումք յարևելից և յարևմտից եկեսցեն՝ և բազմեսցին ընդ Աբրահամու՝ և ընդ Սահակայ՝ և ընդ Յակովբու յարքայութեան երկնից։ Եւ որդիքն արքայութեան ելցեն՝ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց։ Եւ ասէ Յն ցհարիւրապետն. երթ՝ և ոչ հաւատացերդ եղիցի քեզ. և ողջացաւ մանուկն նոր յաւուր յայնմիկ։ Եւ եկեալ Յն՝ի տուն Պետրոսի, ետես զի զոքանչ նորա անկեալ դնէր տապացեալ. կալաւ զձեռանէ նորա՝ և եթող զնա ջերմն. յոտն եկաց՝ և պաշտէր զնա։ Իբրև եղև երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս բազումս, և եհան զոգիսն բանիւ. և զամ հիւանդսն բժշկեաց։ Զի լցցի բանն՝ որ ասացաւ՝ի ձեռն Եսայեայ մարգարէի. Նա զհիւանդութիս մեր վերացոյց, և զցաւս մեր եբարձ։ Ր. 27։

Մեսեղի։

Օրհնեալ որ գաս յանուն Տն. օրհնեալ որ գալոց ես։

Տէր Աստ մեր երևեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեամբ կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ։

Հոմէոսյի Դ։

Թանգաւոր գոլով քո՞ յաշխարհ. մերոտեր ի քաղաքն Երուսաղէմ. նըստեալ ի վրայ հողեղէն նոր յաւանակի՞՝՝՝. կոչել զհեթանոսս յերկրպագութի՞։ Ոչ՞երբն ոստովք ձի՞թենեաց. եւ տղայքն ոստովք արմաւենեաց. եւ երամ երամ դասուքն աղաղակէի՞՝՝՝ն. ովսաննա օրհնեալ՞ եկեալ ի յանո՞ւնն Տ՞ն։ Զընծացաւ ո՞ր Սիոնն. բերկրեցան ո՞ր եկեղեցի՞ք. եւ խնդութի՞ր բազմաւ ելի՞ն ընդ առա՞՝՝՝ջ. օրհնէ՞ին զգալո՞ւստ քո փրկի՞չ յաշխարհ։

† Յորժամ եկն Յն. Յերուսաղէմ ի քաղաքն. ընդ առաջ ելին ծերքն ոստովք ձիթենեաց՝ և զՎ. ծորդին փառաւորէին։ Ի լեռնէ ձիթենեաց. տարածանէին մանկունքն ըզհանդերձս իւրեանց. եւ ոստս ի ծառոց բերեալ մատուցանէին՝ և Վ. ծորդոյն եբ թագաւորին։ Ոստովք և տերևեալ ձիթենեօք. Եբրայեցւոց մանկունքն օրհնէին. ուրախ լեր Երուսաղէմ քաղաք՝ և ցընծա՝ Սիոն մայր եկեղեցի։

† Օգաստոս քդ՝ Ի՝ այսօր. Յերուսաղէմ նոր եկեղեցի սուրբ. յաղթական երգով բարեբանեմք. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։ Որ վասն մերոյ փրկութեան յաւանակի նըստիլ յանձն առեր. ընդ մանկունսըն բարեբանեմք. օրհնեալ եկեալ անուամբ Տ՝ն։ Թագաւոր երկնաւոր. զեկեղեցի քո անշարժ պահեա. եւ զերկրպագուս անուանըդ քո պահեա՝ ի խաղաղութեան։

† Ի յարութեան յաւուր գալըստեան փրկչին. տարածանէին մանկունքն ըզհանդերձս. և անդադար ձայնիւ օրհնէին օրհնեալ եկեալ անուամբ Տ՝ն։ Փառք Հօր։ Ոստս ի ծառոց բերեալ մատուցանէին. Վ. ծորդոյն առ ճանապարհաւն. և անդադար ձայնիւ օրհնէին օրհնեալ եկեալ անուամբ Տ՝ն։ Այժմ և միշտ։ Ի ծերոց ընդլսեալ օրհնուի՝. եւ ի տղայոց փառաբանուի. և անդադար ձայնիւ օրհնէին օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։

Աղյոխման Սողոս Զ։

Յնծացէք առ Վ. ծ՝ օգնական է մեր աղաղակեցէք առ Վ. ծ՝ Յակովբայ։

Ուռէք սաղմոս և տուք օրհնութիւն. սաղմոս ասացէք նմա 'ի ձայն քաղցրութեան:

Փառք հարէք 'ի գլուխս ամենից, յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց:

Զրաման է այս Իսրայելի, և իրաւունք Դ Յակովբայ:

Զ կայութիւն Յովսեփու զոր եդ ընդ նմա, ոչ ելանէր նա յերկրէն Եգիպտացւոց, զլեզու՝ զոր ոչ գիտէր լուաւ:

Ի բաց արա 'ի բեռանց զթիկունս նր, և զձեռն նր յորթ և 'ի թիւ ծառայելոյ:

Ի նեղութեանդ կարդացեր առ իս՝ և փրկեցի զքեզ. լուայ քեզ 'ի գաղտնութեանէ մրրկին, և փորձեցի զքեզ 'ի վրայ ջուրցն հակառակութեանդ:

Լուր ժողովուրդ իմ և վկայեմ քեզ. և Իսրայէլ, թէ լուիցես ինձ:

Մի ևս եղիցին քեզ աստուածք առժամայնք. և մի երկիր պագանիցես դու այլ օտարի:

Զս եմ Տէր Դ՚ք քո, որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց. բաց զբերան քո և լցից զդա:

Ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում, և Իսրայէլ յիս ինչ ոչ նայեցաւ:

Արձի թողի զնա երթալ զհետ կամաց սրտից իւրեանց. զի գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց:

Զի թէ ժողովրդեան իմոյ լուեալ էր ինձ, կամ Իսրայելի զճանապարհս իմ գնացեալ էր:

Ոչ զոչինչ խոնարհ արարեալ էր իմ զթշնամիս նր, և 'ի վրայ նեղչաց նր արկեալ էր զձեռն իմ:

Թշնամիք Տն ստեցին նմա. եղիցին ժամանակք նց յաշխարհի:

Կերակրեաց զնա 'ի պարարտութեանէ ցորենոյ. և 'ի վիմէ մեղր յագեցոյց նոցա:

Ա-Էպոպան ըստ Մարկոսի։ Բ. 23։

Առ Տէրն մեր Յիսուս

Եւ եղև նմա 'ի շաբաթու անցանել ընդ արտոյսս. և աշակերտքն 'ի գնալն իւրեանց՝ սկսան հասկ կորզել և ուտել։ Եւ փարիսեցիքն ասեն ցնա. տես՝ զի՞նչ գործեն աշակերտքն քո 'ի շաբաթուս՝ զոր չէ արժան։ Եւ ասէ ցնոսա Յիսուս. ո՞չ երբէք իցէ ընթերցեալ ձեր զոր արարն Դաւիթ, յորժամ պիտոյն եղև՝ և քաղցեաւ նա և որ ընդ նմայն էին։ Օ՛իաՀրդ եմուտ 'ի տունն Աստուծոյ առ Աբիաթարաւ քահանայապետիւ, և զՀացսն զառաջաւորութեան եկեր՝ և ետ այնոցիկ որ ընդ նմայն էին. զոր ոչ էր օրէն ուտել, բայց միայն քահանայից։ Եւ ասէ ցնոսա. շաբաթ վնա մարդոյ եղև, և ոչ եթէ մարդ վնա շաբաթու։ Ապա ուրեմն՝ Տէր է որդի մարդոյ՝ և շաբաթու։ Եւ եմուտ միւսանգամ 'ի ժողովուրդն, և էր անդ այր մի որոյ ձեռն իւր գօսացեալ էր։ Եւ սպասէին նմա՝ եթէ բժըշկիցէ զնա 'ի շաբաթուն՝ զի չարախօսեսցեն զնմանէ։ Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ էր. արի անց 'ի մէջ։ Եւ ասէ ցնոսա. զի՞նչ արժան է 'ի շաբաթու, բարի՞ ինչ գործել՝ եթէ չար առնել, ոգի մի ապրեցուցանե՞լ՝ եթէ կորուսանել. և նոքա լռեցին։ Եւ հայեցեալ Յիսուսի զնոքօք լի ցասմամբ, տրտմեալ վնա կուրութենէ սրտից նոցա՝ ասէ ցայրն. ձգեա՛ զձեռն քո. և նա ձգեաց, և ողջացաւ ձեռն նորա։ Գ. 5։

Գէպ. Լանդրեսցուք։ Կեցո՛։ Ամէն. Ամագաւոր։

ԳԻՐՔ ԱՂՔԱՏԱՆՔԻ

ԱՇԽԱՐՀԱՄԱՏԵՍՆ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն գ։

ՕՐՀՆԵՑՈՒՔ զՏԷՐ և զյաղթող զօրուի. 175։

Ալէլուիա Յարութիւն գ։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց գ։

Երկնրպագեմք քեզ Քրիստոս ի՝ ձեռն սրբոց առաքելոցն ծանուցար մեզ ՏԷՐ Աստուծ հայրցն մերոց։ Նա աշակերտեալք ի սրբոց առաքելոցն. ուսակ փառաւորել զքեզ ի տաճարի սրբուեաք քո. զոր հիմնեցուցեր ի վերն վիմի հաւատոյ. ՏԷՐ Աստուծ հայրցն մերոց։ Նկայք ժողովուրդք որք ի հեթանոսաց. ցընծուք տօնեսցուք զնաւակատիս որ եկեղեցւոյ. բարեբանելով զՏԷՐ Աստուծ հայրցն մերոց։

գ։ ԶՏԷՐ օրհնեցէք և առաւել բարձր արարէք զնա յաւիտեան։ Փառք Հօր։ Զ՞նդ անմարմնական բազմութիւն զՔ՝ն թագաւորն որ եկաւորէ այսօր ի ՝ք եկեղեցի՝. ամենայն ազգինք գովեցէք և առաւել բարձր արարէք զնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Նկայք հաւատացեալքք ՝ք Երրորդութեն յեկեղեցիս օրհնեցէք զԱստուծ. արարէք տօնս ուրախութեն մինչև յանկիւնս սեղանոյ. և առաւել բարձր արարէք զնա յաւիտեան։

Մեծացուսցէ Գ.Ձ։

Անծածին Երկնային գունդ անծային ձայնիւն աւետարանէր հրեշտակն. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ։ փառք Հօր։ Ի քերովբէս բազմեալ ընդ Հօր անապականաբար բնակել հաճեցաւ ի քում յորովայնի. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ։ Այժմ և միշտ։ Որ բոցեղէն սրովբէիւք շուրջափակեալ պահէիւր. այսօր ի մէջ մարդկան ի գիրկս հողեղինի յայտնեալ. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ։

Գիշերին, Գալստեան սա. Դասք լուսեղէն։

Ողորմեա Գ.Ձ։

Այսօր հրեշտակաց բազմութիւքն տօնակից լինին ընդ մեզ. քանզի երկնաւոր Թագաւորն եկաւորէ ի սուրբ եկեղեցի։ փառք Հօր։ Խնդա և զուարճացիր հարսնացեալդ յԱՅ եկեղեցի. քանզի ընդ քեզ Տէրն տերանց ընտրեաց և հաճեցաւ բնակել ի քեզ։ Այժմ և միշտ։ Լուսաւորեա լուսաւորեա կաթուղիկէ եկեղեցի. քանզի ի քեզ շող անծեղէն ի Հօրէ լուսոյ ծագեաց. և լուսաւորեաց ըզմանկունս քո։

Տէր յերկնից Գ.Ձ։

Որք արժանաւորեցայք ի կոչումն փառաւորուե Քրիստոսի ԱՅ մերոյ. եկայք ժողովուրդք երգեցէք Տն երգ նոր. երգեցէմք զանուն նորա ձայնիւ ցնծութե յօրհնութիւն ի նոր։ փառք Հօր։ Օրացեալքս ի քեզ Քն ժողովուրդք հաւատացելոց. ճշմարիտ խոստովանութեամբ օրհնեմք զխորհուրդ անծային կենսաբեր տնօրէնութե քո.

փառաւորելով զհաւր և ըզսքանչելի անուն քո Տէր Տէր մեր՝ ի մէջ ամենայն երկրի։ Այժմ և միշտ։ Ուրախ լեր եկեղեցի որ Հարսն Երկնաւոր խորհրդոյն. ի փառս ամենայն Երրորդութեան. որ համագոյ իշխանութեամբ իւրով զարդարեաց ծագ-մամբ լուսով պսակեալ զքեզ ի պատիւ ա-մենայն սրբովք իւրովք։

Առաւօտու երգ Յարութեան Գ.Ձ։ Քղզ. Ասասցուք. կամ գանձ եկեղեցւոյ։

Օրհնի Սբ Ածին եղանակն խաչին և աւետարանաւ և ամ զարդարանաւ ՚ի տօնս, աւելով Շարական Եկեղեցւոյ. Գ.Ձ։

Ուրախ լեր սուրբ եկեղեցի. քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց ըզքեզ խաչիւն իւրով. և զարդարեաց զամուրս քո սքանչելի փառօքն իւրովք։ Խնդա յոյժ դուստր Սիովնի. քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերստին քո նորոգ-մամբ. և թագաւորն երկնաւոր հաճեցաւ բնա-կել ի քեզ։ Ընդ դասս երկնաւոր զօրացըն վեր-առեալ տօնեմք քեզ այսօր զանդադար փառա-տրութիւս. ուրախ լեր հարսն անարատ անքննելի քո խորհրդով։

Կամ Գ.Ձ։

Լուսաւորեա Երուսաղէմ զարդարեա զամուրս քո. քանզի մերձեցաւ առ քեզ փեսայն երկնա-ւոր. փրկութիւն քեզ շնորհելով պսակեաց սքանչելի փառօքն իւրովք։ Այսօր ծագեաց քեզ դշխոյ դուստր Սիովնի. արդարութեան արեգակն Քրիստոս և սփռեցան ըզքեւ շնորհք սուրբ Հոգւոյն մեծապէս պարգեւօք։ Այսօր ցնծա սուրբ Սիովն

մայր Եկեղեցի՝ փայլեցո՛ զմանկունսս քո՝ որպէս զարեգակն, զի անձաժ՛ռ խընդութի՛ւն լցո՛ց ընդ քեզ Աստուծոյ թագաւորն։

ՕՂԻՆ՝ Սաղմոս ԿԷ։

ԿՅ. Յեկեղեցիս օրհնեցէք զԱ.Ծ. և զՏէր յաղ-բերացն Իսրայէլի։

ՓԽ. Յարիցէ Ա.Ծ և ցրուեսցին ամ թշնամիք նր, փախիցեն ատելիք նր յերեսաց նր։

Որպէս պակասէ ծուխ՝ պակասեսցին, ոգ հալի մոմ առաջի հրոյ՝ այնպէս կորիցեն մեղաւորք յերեսաց Ա.Յ։

Արդարք ուրախ եղիցին՝ ցնծասցեն առաջի նր, և զուարճասցին յուրախութի՛ւն իւրեանց։

Օրհնեցէ՛ք զԱ.Ծ և սաղմոս ասացէ՛ք անուան նր, ճանապարհ արարէք այնմիկ որ նստի ընդ արևմուտս՝ և Տէր է անուն նր։

Ցնծասցեն առաջի նր, և խռովեսցին յերեսաց նր։

Որ հայրն է որբոց և դատաւոր այրեաց, Ա.Ծ 'ի տեղւոջ սրբութի՛ւն իւրում։

Ա.Ծ բնակեցուցանէ զմիակրօնս 'ի տան, և հանէ զկապեալսն քաջութի՛ւն իւրով. սոյնպէս և զդառնացօղս որ բնակեալ են 'ի գերեզմանս։

Ա.Ծ ընդ ելանել քեզ առաջի ժողովրդեան քո, ընդ անցանել քեզ ընդ անապատ երկիր շարժեցաւ։

Երանգի և երկինք ցօղեցին յերեսաց Ա.Յ 'ի Սինէ, առաջի Ա.Յ Իսրայէլի։

Անձրև կամաց պատրաստեցեր Ա.Ծ ժառանգութի՛ւն քում, թէպէտ հիւանդացաւ սակայն դու հաստատեցեր զնա, և գազանք քո բնակեսցեն 'ի նմա։

Պատրաստ արարեր քաղցրութի՛ւն քով աղքատի Ա.Ծ, Տէր տացէ զբան ոյք աւետարանեն զօրութի՛ւն բազմաւ։

Թագաւոր զօրութեց սիրելւոյ, զգեղեցկութի՛ւն

տան քո բաժանեալ յաւարի, թէպէտ և ննջեսջիք 'ի մէջ վիճակաց։

Թռչք աղաւնւոյ արծաթապատ, և թիկնամէջք նր 'ի գոյն ոսկւոյ։

Ի գումարել երկնաւորին զթագաւորս 'ի վր նր, ձիւնասցին 'ի Սաղմոն։

Լեառն Աստ լեառն պարարտ լեառն մածեալ և լեառն պարարտ, և զի՞նչ կարծէք լերինք հպարտացեալք։

Լեառն ընդ որ հաճեցաւ Աստ բնակիլ 'ի նմա, քանզի և Տէր իսկ բնակեսցէ 'ի նմա 'ի սպառ։

Կառք Աստ բիւրապատիկ հազարք ուղղիչք, և Տէր 'ի նս 'ի Սինէ սրբութէ իւրմէ։

Եւ 'ի բարձունս գերեաց զգերութիւն, առ աւար բաշխեաց պարգևս և ետ որդւոց մարդկան, քանզի և թերահաւատից ևս բնակեալ եղիցի 'ի նմա։

Տէր Աստ օրհնեալ, օրհնեալ Տէր զօրհանապազ առաջնորդեսցէ մեզ Աստ փրկիչ մեր։

Աստ մեր կենարար, և 'ի Տեառնէ են ելք մահու։

Բայց սակայն Աստ փշրեսցէ զգլուխս թշնամեաց մերոց, և զհերն կարճովին, որ գնան յանօրէնութիւնս իւրեանց։

Ասաց Տէր՝ 'ի խորոց անդնդոց դարձուցից, և 'ի միջոյ ժանեաց զնմն 'ի դուրս կորզեցից։

Ոչ թացցի ոտն քո յարեան, և լեզուք շանց քոց յարենէ թշնամեաց քոց։

Երևեցան գնացք քո Աստ, գնացք Աստ թագաւորին մերոյ սրբոյ։

Կանխեցին իշխանք հանել զօրհնութիւն, 'ի մէջ դուսանաց և գովչաց։

Յեկեղեցիս օրհնեցէք զԱստ, և զՏէր յաղբերացն Իսրայելի։

Ընդ Բենիամին 'ի տղայութիւն զարմանալի իշխանք Յուդայ առաջնորդք նր, իշխանք Զաբուղոնի և իշխանք Նեփթաղիմայ։

Հրամայեա Ս.Ծ զօրութիւն քով. զօրացո զայս զոր հաստատեցեր 'ի մեզ։

Ի տաճարի քում Յերուսաղէմ, քեզ մատուցեն թագաւորք զպատարագս։

Աստեա 'ի գազան եղեգան, 'ի ժողովս զուարակաց և 'ի դասս երնջոց։

Խոտեսցին այնոքիկ որ ընտրեալ են արծաթով, ցրուեա զՀեթանոսս և զայք կամին ընդ պատերազմ։

Եկեսցեն հրեշտակք Յեգիպտոսէ, Հնդիկք յառաջագոյն ձեռնտու լիցին առ Ս.Ծ։

Թագաւորութիւնք երկրի օրհնեցէք զՍ.Ծ. և սաղմոս ասացէք Տեառն։

Ո՛անապարհ արարէք այնմիկ, որ նստի յերկինս երկնից ընդ յարևելս։

Ս.Հա տացէ զձայն իւր ձայն զօրութեան, և տո՛ւք փառս Ս.Յ։

Ի վե՛ր Իսրայելի մեծվայելչութի՛ն նո՛ր, զօրութի՛ն նո՛ր մինչև յամպս երկնից։

Սքանչելի է Ս.Ծ 'ի վե՛ր սրբոց իւրոց, Ս.Ծ Իսրայելի։

Նա տացէ զօրութի՛ն հաստատութի՛ն ժողովրդեան իւրոյ, օրհնեալ է Ս.Ծ։

Ընթերցուած Յառակաց։ Գ. 9։

Պատուեա զՏէր 'ի քոց արդար վաստակոց, և հան նմա պտուղ 'ի քոց արդարութեանդ արմտեաց։ Օ՛ի լցցին շտեմարանք քո լիութեամբ ցորենոյ, և գինեաւ հնձանք քո առաւել ևս բղխեսցեն։ Որդեակ՝ մի՛ լքանիր 'ի խրատու Տեառն, և մի՛ լուծանիցիս յանդիմանեալ 'ի նմանէ։ Օ՛ի զոր սիրէ Տէր՝ խրատէ տանջէ զամենայն որդի զոր ընդունի։ Երանեալ է այր որ եգիտ զիմաստութի՛ն, և մահկանացու որ ետես զհանճար։ Օ՛ի լաւ է զվաճառն զայն գտանել՝ քան զգանձս ոսկւոյ և արծաթոյ։ Պատուականագոյն է քան զականս պատուականս և ոչ ինչ է չար որ հակառակ կայցէ նմա։ Յայտնի

է ամենեցուն որ մերձ են 'ի նա, և ամ ինչ որ պատուական է՝ չարժէ զնա։ Զի երկայն աւուրք և ամք կենաց յաջմէ իւրմէ, և յահեկէ իւրմէ փառք և մեծութի։ Ի բերանոյ նր բղխէ արդարութի, զօրէնս և զողորմութիւն 'ի լեզուի իւրում կրէ։ Ո՛անապարհք նորա ճանապարհք բարեաց՝ և ամ շաւիղք նր խաղաղութք։ 18։

Ընթերցուած Յեսայեայ Մարգարէէ։ ԿԶ. 12։

Զի այսպէս ասէ Տէր, ահաւասիկ ես դարձուցանեմ 'ի դոսա իբրև զգետ զխաղաղութի, և իբրև զհեղեղատ յորդեալ զփառս հեթանոսաց. զմանկունս դոցա 'ի վր ուսոց իւրեանց բարձեալ բերիցեն, և 'ի վր ծնգաց իւրեանց գգուիցեն։ Որպէս մայր որ զմանուկ իւր գգուիցէ, այնպէս գգուեցից զձեզ, և Յերուսաղէմ մխիթարեսջիք, և տեսջիք և խնդասցեն սիրտք ձեր, և ոսկերք ձեր իբրև զդալարի զուարճասցին. և ծանիցի ձեռն Տեառն երկիւղածաց իւրոց, և սպառնասցի անհաւատիցն։ Զի ահաւասիկ Տէր իբրև զհուր եկեսցէ, և կառք նր իբրև զմրրիկ հատուցանել սրտմտութ զհատուցումն իւր, և բոցով հրոյ զարհամարհանս իւր։ 15։

Պօղոսի առաքելոյն 'ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս։ Գ. 14։

Այս գրեմ առ քեզ, զի ակն ունիմ 'ի մօտոյ գալ, ապա թէ յամեցիս, զի գիտասցես. թէ ոչ պարտ իցէ քեզ 'ի տան Աստուծոյ շրջել, որ է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ, սիւն և հաստատուն ճշմարտուն։ 16։

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։

Հիմունք նր 'ի լեառն սրբ նր, սիրէ Տէր զդրունս Սիովնի քան զամ յարկսն Յակովբայ։

Ա-Էպիստոլն ըստ Մատթէոսի։ ԺԸ. 13։

Տէրն մեր Յս Քս

Եւ եղեալ (Յս) 'ի կողմանս փիլիպեայ կեսարիայն

հարցանէր ցաշակերտսն և ասէր, զո՞ ոք ասեն զի-
նէն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ։ Եւ նոքա
ասեն. ոմն զՅովհաննէս մկրտիչ. և այլք զԵղիա,
և կէսք զԵրեմիա, կամ զմի ոք 'ի մարգարէիցն։
Ասէ ցնա Յս. իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն թէ
իցեմ։ Պատասխանի ետ Սիմովն Պետրոս՝ և ասէ.
դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանւոյ։
Պատասխանի ետ Յս՝ և ասէ ցնա, երանի՛ քեզ
Սիմովն որդի Յովնանու, զի մարմին և արիւն ոչ
յայտնեաց քեզ՝ այլ Հայր իմ որ յերկինս է։ Եւ
ես քեզ ասեմ, զի դու ես վէմ, և 'ի վի՛ այդր
վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց
զնա մի՛ յաղթահարեսցեն։ Եւ տաց քեզ զփականս
արքայութեանն երկնից, և զոր միանգամ կապեսցես
յերկրի, եղիցի կապեալ յերկինս, և զոր արձա-
կեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս։ 19։

Եւ փութանացուցեն պանդուխտքն, և գտին
ուշնորհն։

Բարդ. Մի՛ խաչիւս։ Աղօթ. Պահպանեա։

Եւ 'ի դառնալն ոչխարին Սողոմ Զ։

Կգ. Յոյց մեզ Տէր։ Փխ. Հաճեցար Տէր. 191։
Ուխտքն ըստ Ղուկասու։ Ջ. 12։

Տէրն մեր Յս Քս

Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել 'ի լեառն
կալ յաղօթս, և հանէր զգիշերն 'ի գլուխ յա-
ղօթսն Աստ։ Եւ իբրև այդ եղև՝ կոչեաց զաշակերտսն
իւր, և ընտրեաց 'ի նոցանէ երկոտասանս. զորս և
առաքեալս անուանեաց. զՍիմովն՝ զոր և Պետրոս
անուանեաց, և զԱնդրէաս զեղբայր նորին, և զՅա-
կովբոս և զՅովհաննէս, և զՓիլիպպոս և զԲարթո-
ղոմէոս, և զՄատթէոս և զԹովմաս, և զՅակով-
բոս Ալփեայ, և զՍիմովն զկոչեցեալն Նախանձայոյզ,
և զՅուդա Յակոբայ, և զՅուդա Իսկարիովտացի՝
որ եղև իսկ մատնիչ։ Եւ իջեալ նոքօք հանդերձ

'ի տեղի մի տափարակ. և ժողով աշակերտացն նո-
ցա՝ և բազմութիւն յոյժ ժողովրդեանն, յամ
Ի՛ր Էրէաստանէ և յԵրուսաղէմէ՝ և յայնմ կողմանէ՝
և 'ի ծովեզերէն Տիւրոսի և Սիդոնի. որ եկին լսել
'ի նմանէ՝ և բժշկել 'ի հիւանդութէ իւրեանց. և
նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին։ Եւ ամ ժո-
ղովուրդն խնդրէր մերձենալ 'ի նա, զի զօրութի
բաղում ելանէր 'ի նմանէ՝ և բժշկէր զամենեսին։
Եւ նա ամբարձ զաչս իւր յաշակերտսն իւր՝ և ա-
սէ։ Երանի աղքատացդ հոգւով, զի ձեր է ար-
քայութիւն Ա.Յ։ Երանի որ քաղցեալ են այժմ,
զի յագեսցին։ Երանի որ լան այժմ, զի ծիծա-
ղեսցին։ Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ
մարդիկ, և յորժամ որոշիցեն զձեզ և նախատի-
ցեն, և հանիցեն անուն չար զձէնջ վասն որդւոյ
մարդոյ։ Ուրախ լիջիք յաւուր յայնմիկ և ցնծաս-
ջիք, զի ահա վարձք ձեր բազում են յերկինս.
ըստ դմին օրինակի առնէին մարգարէիցն հարք իւ-
րեանց։ Բայց վա՜յ ձեզ մեծատանցդ՝ զի ընկալայք
զմխիթարութիւն ձեր։ Վա՜յ ձեզ որ յագեալդ էք
այժմ՝ զի քաղցիցէք. վա՜յ ձեզ որ ծիծաղիքդ այժմ,
զի սգայցէք և լայցէք։ Վա՜յ ձեզ՝ յորժամ բարի
ասիցեն զձէնջ ամ մարդիկ, զի այդպէս առնէին
սուտ մարգարէիցն հարք նոցա։ Ա.յլ ձեզ ասեմ
որ լսէքդ. սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արա-
րէք ատելեաց ձերոց։ Օրհնեցէք զանիծիչս ձեր.
աղօթս արարէք 'ի վերայ նեղչաց ձերոց։ Որ հար-
կանէ զծնօտ քո՝ մատո՛ նմա և զմիւսն. և որ հանէ
'ի քէն զբաճկոն քո՝ մի արգելուր 'ի նմանէ և զշա-
պիկս։ Ամենայնի՝ որ խնդրէ 'ի քէն՝ տո՛ւր, և զոր
ինչ հանէ զք 'ի քէն՝ մի պահանջեր։ Եւ որպէս
կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արաս-
ջիք և դուք նոցա։ Եւ եթէ սիրէք դուք զսիրելիս
ձեր՝ զի՞նչ շնորհ է ձեր, զի և մեղաւորք սիրեն
զսիրելիս իւրեանց։ Եւ եթէ բարի առնէք բարե-

բարաց ձերոց՝ ո՞ր շնորհ է ձեր, զի և մեղաւորք զնոյն գործեն։ Եւ եթէ տայք փոխ այնոցիկ՝ յորոց ակն ունիցիք առնուլ՝ ո՞ր շնորհ է ձեր. քանզի և մեղաւորք մեղաւորաց փոխ տան, զի առցեն անդրէն զկշիռն։ Բայց սիրեցէք զթշնամիս ձեր, և բարի արարէք ատելեաց ձերոց. և տո՛ւք փոխ՝ ուստի ոչ ակն ունիցիք առնուլ. և եղիցին վարձք ձեր բազում, և եղիջիք որդիք Բարձրելոյ. զի նա քաղցր է 'ի վերայ չարաց և ապաշնորհաց։ Եղերո՛ւք գթածք՝ որպէս և Հայրն ձեր գթած է։ Մի՛ դատիք՝ և ոչ դատիցիք. մի՛ պատժէք՝ և ոչ պատժիցիք, արձակեցէք և արձակիցիք։ Տո՛ւք՝ և տացի ձեզ. չափ բարւոք՝ թաթաղուն շարժուն զեղուն՝ տացեն 'ի գոգս ձեր. նովին չափով որով չափէք՝ չափեսցի ձեզ։ Ասաց և առակ մի առ նս. մի՛ թէ կարիցէ՞ կոյր կուրի առաջնորդել, ո՞չ ապաքէն երկոքին 'ի խորխորատ անկանիցին։ Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ իւր. ա՛մ կատարեալն եղիցի իբրև զվարդապետ իւր։ Զի՞ տեսանես զշիւղ յականն եղբօր քո, և 'ի քում ական զգերանդ ոչ նշմարես։ Կամ զիա՞րդ կարես ասել ցեղբայր քո. եղբայր՝ թո՛ղ հանից զշիւղդ յականէ քումմէ, և դու 'ի քում ական զգերանդ ոչ տեսանես. կե՛ղծաւոր՝ հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսջիր հանել զշիւղ յականէ եղբօր քո։ Զի ոչ է ծառ բարի՝ որ առնէ պտուղ չար, և ոչ դարձեալ ծառ չար՝ որ առնէ պտուղ բարի. զի իւրաքանչիւր ծառ 'ի պտղոյ իւրմէ ճանաչի։ Զի ոչ եթէ 'ի փշոց քաղեն թուզ, և ոչ 'ի մորենւոյ կթեն խաղող։ Մարդ բարի՝ 'ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարի, և մարդ չար՝ 'ի չարէն բղխէ զչար. քանզի 'ի յաւելուածոյ սրտին խօսի բերան նո՛ր։ Զի՞ կոչէք զիս՝ Տի՛ր, Տի՛ր, և զոր ասեմն ոչ առնէք։ Ամենայն որ գայ առ իս, և լսէ զբանս իմ՝ և առնէ զնոսա, ցուցից ձեզ ում նման

է։ Նման է առն, որ շինիցէ տուն. որ փորեաց և խորեաց, և եդ հիմն 'ի վերայ վիմի. 'ի յառնել հեղեղաց՝ բախեաց գետ զտունն, և ոչ կարաց շարժել զնա. զի հաստատեալ էր հիմն 'ի վերայ վիմի։ Իսկ որ լսէ զբանս իմ՝ և ոչ առնէ, նման է առն՝ որ շինիցէ տուն 'ի վը հողոյ առանց հիմանն. զոր բախեաց գետ, և վաղվաղակի անկաւ. և եղև կործանումն տանն այնորիկ մեծ։ 49։

Եր Նորաստեղծեալ։

Բ՚ Ի. Խնդրեսցուք։ Կեցո։ Ա՚Ը. Ամեն։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Առաջին Սաղմոս Ամսոյ։

Որ հնեցէք զՏէր յօրհնութիւնի նոր. 193։

Ա՚Էպոպոն ըստ Մատթէոսի։ Բ. 18։

Ցն մերոյ Յեսի Քրիստի

Տեսեալ (Յեսի) ժողովուրդս բազումս զիւրեն, հրամայեաց երթալ յայն կոյս։ Եւ մատուցեալ դպիր մի ասէ ցնա. վարդապետ՝ եկիր և ես զկնի քո յոր վայր և երթիցես։ Ասէ ցնա Յս. աղուեսուց որջք գոն՝ և թռչնոց երկնից բոյնք, այլ որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր գիցէ զգլուխ իւր։ Եւ մի ոմն յաշակերտաց նոր ասէ ցնա. Տէր՝ տուր ինձ հրաման՝ զի երթայց նախ թաղեցիս զհայր իմ։ Ասէ ցնա Յս. Եկ զկնի իմ, և թող զմեռելսն թաղել զմեռեալս իւրեանց։ Եւ իբրև եմուտ 'ի նաւն, գնացին զկնի նոր աշակերտքն նորա։ Եւ ահա շարժումն մեծ եղև 'ի ծովուն՝ մինչ նաւին ծածկել յալեաց անտի, և ինքն ննջէր։ Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա և ասեն. Տէր՝ փրկեա զմեզ՝ զի կորնչիմք։ Եւ ասէ ցնս. ընդէր վատասիրտք էք սակաւահաւատք. յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոցն և ծո-

վուն, և եղև խաղաղութի մեծ։ Եւ մարդիկն զարմացան՝ և ասէին. որպիսի ոք իցէ սա՝ զի և հողմք և ծով հնազանդին սմա։ Եւ իբրև անց յայն կողս յերկիրն Գերգեսացւոց, պատահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք 'ի գերեզմանացն, չարաչարք յոյժ. ոչ զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ։ Եւ ահա աղաղակեցին և ասեն. զի՞ կայ մեր և քո Յե Որդի Աստուծոյ, եկիր տարաժամ տանջել զմեզ։ Եւ էր հեռագոյն 'ի նոցանէ երամակ մի խոզից արօտական։ Եւ դևքն աղաչէին զնա և ասէին. եթէ հանես զմեզ աստի, հրամայն տուր մեզ երթալ յերամակ խոզիցն։ Եւ ասէ ցնոսա. երթայք։ Եւ նոքա ելեալ գնացին յերամակն խոզից. և դիմեաց ամ երամակն 'ի դարէ անտի 'ի ծով, և մեռան 'ի ջուրսն։ Եւ խոզարածքն փախեան, և երթեալ 'ի քաղաքն պատմեցին զամ, և զկրս դիւահարացն։ Եւ ահա ամ քաղաքն ել ընդ առաջ Յեի. իբրև տեսին զնա՝ աղաչեցին զի գնասցէ 'ի սահմանաց նոցա։ Եւ մտեալ 'ի նաւ անց յայն կողս, և եկն 'ի քաղաք իւր։ Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի, որ դնէր 'ի մահիճս. և տեսեալ Յեի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ ահա ոմանք 'ի դպրացն ասեն ընդ միտս. հայհոյէ դա։ Եւ ծանուցեալ Յեի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. ընդէ՞ր խորհիք դուք չարիս 'ի սիրտս ձեր։ Օ՞ինչ դիւրին է. ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել արի և շրջեաց։ Այլ զի դիտասջիք՝ եթէ իշխանութի ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս. յայնժամ ասէ ցանդամալոյծն. արի՛ առ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո։ Եւ յարուցեալ գնաց 'ի տուն իւր։ Իբրև տեսին ժողովուրդքն՝ զարմացան. և փառաւոր առնէին զԱստուծն զտուիչն այնպիսի իշխանութեան՝ մարդկան։ Թ. 8։

Եւ ելանէն խաչէ 'ի դուրս։

Հ. Պօղոսեան խաչէ 'ի յայնէն Դ։

Օ՜ զօրութիւն ե՞ր խաչի՝ քո Ք՝ե որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի. սա՜՛ռ պահե՛սցէ զմեզ յամենայն փորձութենէ։ Դանելի ի սմա բարձրացար Աստուած, եւ ի սմա՛ հեղեր ընդպատուական ե՛ր զարիւնդ. սա՜՛ռ պահե՛սցէ զմեզ յամենայն փորձութենէ։ Եւ ընդքո՛ միւսանգամ ընդգալուստդ ներշանա՛ւ խաչի՝ քո՛ ցուցեր աշխարհի. սա՜՛ռ պահե՛սցէ զմեզ յամ փորձուէ։

Սոկրատ Դ։

Կ3. Նշանեցաւ։ Փե. Ի կարդալ իմում. 195։

Ա-Էպոլոն ըստ Սոկրատի։ ԺԵ. 22։

Ոչ տէրն մեր Յն Քն

Եւ ածեն զնա 'ի Գողգոթա տեղի մի, որ թարգմանի տեղի կառափելոյ։ Եւ տային նմա գինի զմռսեալ, և նա ոչ առ, և հանեն զնա 'ի խաչ։ Եւ բաժանեցին զհանդերձս նր, արկեալ վիճակս 'ի վր՝ թէ ո՞ զինչ առնուցու։ Էր ժամ երրորդ, և հանին զնա 'ի խաչ։ Եւ էր գիր վերասու նորա գրեալ, թէ թագաւոր է հրէից։ Եւ ընդ նմա հանին 'ի խաչ երկուս աւազակս, մի ընդ աջմէ և մի ընդ ահեկէ նր։ Եւ լցաւ գիրն որ ասէ, թէ ընդ անօրէնս համարեցաւ։ Եւ որք անցանէին հայհոյէին զնա շարժեալ զգլուխս իւրեանց, և ասէին. վա՛հ որ քակէիր զտաճարն՝ և զերիս աւուրս շինէիր, ապրեցո՛ զանձն քո՝ և էջ 'ի խաչէդ։ Նոյնպէս քահանայապետիցն այպն արարեալ՝ ընդ միմեանս հանդերձ դպրօքն՝ և ասէին. զայլս ապրեցոյց՝ զանձն ոչ կարասցէ ապրեցուցանել, Քն թագաւոր Իսրայելի, իջցէ այժմ 'ի խաչէ այտի, զի տեսցուք և հաւատասցուք դմա։ Եւ որ ընդ նմա 'ի խաչն ելեալ էին՝ նախատէին զնա։ Եւ իբրև

վեց ժամ եղև՝ խաւար կալաւ զամ երկիր մինչև ցինն ժամն։ Եւ յիններորդ ժամուն աղաղակեաց Յն 'ի ձայն մեծ՝ և ասէ. Էլի, Էլի, լամա սաբաքթանի. որ թարգմանի Աստ իմ, Աստ իմ. ընդէր թողեր զիս։ Եւ ոմանք 'ի նոցանէ՝ որ շուրջն կային զնովաւ, իբրև լուան, ասէին թէ զԵղիա կարդայ։ Եւ ընթացեալ մի ոմն ելից սպունգ մի քացախով, և հարեալ յեղեգան՝ տայր ըմպել նմա. և ասէ, թոյլ տուր, տեսցուք գայ Եղիա իջուցանել զդա։ Եւ Յն արձակեաց ձայն մեծ և եհան զոգի։ 37։

Ե— ԹԵՈՒՆՈՒԳԻԼԷՆ ԸՆԴՈՒՍՊՈՆՆ։

ՎԷՊ. Մի խաչիւս։ Ամէն. Պահպանեա։

Ե— 'ի ԹՈՒՆԱԼԷ ՍՈՒԿԻՈՒԳԷՆ ԽՈՐՈՆԷ. Եւ ևս խաղաղութիւն։ Քահանայն. Օրհնութիւն և փառք։

Ամա՝ Լսոնարհեցո, Ե— Ամբրեցո։

ՍԷՆԷԳԻ ՅՈՐՈՒԹԵՆ ԴԶ։ ՎԷՊ. Ասասցուք։

ՀԱՄԷՍԻՆ ԴԶ։

Փառաբանակից Հօր Ո՛րդի որ վասն մե՛ր խաչեցա՛ր. զդիժոխս աւերեալ յարեար յաւուր երրորդի. փա՛՛ռք յարութեան քո Տէր։ Հրեշտակապետին իջումն որ ընդպահապանեն երկիւղի՛՛ւ. զարհուրեցոյց առ դրանն գերեզմանին. փա՛՛ռք յարութեան քո Տ՛ր։ Եւ ըսքանչելի՛ նբ կանանցն աւետարանէ՛՛ր ասելո՛՛վ. յարեաւ Քն յարուցիչն մեռելոց. փա՛՛ռք յարութեան քո Տ՛ր։

Կանանցն կանխելով ի թաղումն կենդանւոյն տեսին ըզվէմն ի դրանցն ի բաց մերժեալ։ Թափուր ըզգերեզմանն եւ ունայն տեսանէին եւ

տրտմութիւն լայն յուսահատեալք։ Այլ խաչեցեալն զի լաւ տրտմագեցեալ. քանզի Քրիստոս փառօք մեծաւ յարեաւ։

Եւթներորդ Սաղմոս ՃՕ։ Օրհնեցէք զՏ. 197։

Ա-Եպիսկոպոսն ըստ Մարկոսի։ Գ. 6։

Կ՚ Տն մերոյ Յեսի Քրիստի

Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն հերովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ առնէին վասն նորա՝ թէ զիարդ կորուսցեն զնա։ Իսկ Յիսուս աշակերտօքն իւրովք գնաց 'ի ծովեզրն. և բազում ժողովուրդ 'ի Գալիլեացւոց երթային զհետ նր. և 'ի Իրէաստանէ, և Յերուսաղեմէ, և յայն կողմ Յորդանանու, և որք 'ի Տիւրոսէ և 'ի Սիդոնէ, բազում ժողովուրդ իբրև լսէին՝ որչափ ինչ առնէր, գային առ նա։ Եւ ասէ ցաշակերտսն իւր, զի նաւակ մի պատրաստական կայցէ նմա վասն ամբոխին՝ զի մի նեղեսցեն զնա։ Քանզի զբազումս բժշկեաց. մինչ գալ խռնել զնովաւ՝ զի մերձեսցին առ նա, որք ունէին ախտս ինչ։ Եւ այսք պիղծք յորժամ տեսանէին զնա. անկանէին առաջի նորա, աղաղակէին և ասէին. թէ դու ես Որդին Աստ. և նա յոյժ սաստէր նոցա, զի մի յայտնի առնիցեն զնա։ 12։

Քրիստ. Խնդրեսցուք։ Կեցո։ Աղօթ. Ծագաւոր։

Պ. ԿԻՐԿՈՐԵԱՆՑ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն։

Յաղթական քեզ օրհնութիւնք տէր. 179։
Ելեալ-ի Յարութենէ։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Ռշ։

Անապական Թանգ Աստուած. որ ի՝ջեր ի մէջ հնոցին. փրկեցեր զերիս մանկունսըն ցողովն օրհնեալ. օրհնեալ ես տէր Աստուած։ Որ ի՝ Բաբելովնի ըզբոց հրոյն շի՛ջուցեր. և զմանկունսն ապրեալ ցուցեր. եւ նոքա երգեցեալ գովէին զասելով. օրհնեալ ես տէր Աստուած։ Որ յարգանդի կուսին բնակեցար. եւ ծընար որպէս մանուկ. որ ըզմահ կոխեցեր և զյարութիւն քո ցուցեր. օրհնեալ ես տէր Աստուած։

Գ. Ը՝զՏէր օրհնեցէք եւ բարձրացարարք։ Յանբսկիզբն զամենասուրբ զՏրրոդութիւն. որ նոյն ի՝նքն ի՝ւր ա՛նեղ բընութիւնն գոյացոյց յոչընչէ զա՛մ արարածս. ընդ՝նա հոգևոր երգով օրհնեցէք եւ բարձրացարարք։ Փառք Հօր։ Համագոյակա՛ն էութիւն Թանգ Բանն ի՝ Հօրէ. որ լոյս մեծ ծագեաց անճառելի՝ ծագմանմբ. որ հաստատեաց զերկինս եւ զի՝մանալի՝ զօրրս հրեշտակաց. ընդ՝նա հոգևոր երգով օրհնեցէք եւ բարձրացարարք։ Այժմ և միշտ։ Յանմահ զերկնաւոր զթագաւո-

րուին. որ արարչագործ ստեղծմամբ վայելչացոյց զերկինս եւ զերկիր. ի փառս ամենայնն Երրորդութեան. երեքսրբեան հրեշտակային օրհնութեամբ. ընդ որս հոգեւոր երգով օրհնեցէք եւ բարձր արարէք յաւիտեան:

Մեծացուսցէ ԲՁ:

Ընդ քեզ կոյս եւ մայր և բնակարան անծայրին ներմարդութեանն. գոհաբանեմք և վերօրհնեմք զեղեալ փրկող կենդանութեան ազգի մարդկան. վասն որոյ ընդ քեզ Աստուածածին և կոյս. բարեբանեմք զմայր և զաղախին փրկչին մերոյ: Ծնունդն Հօր և հինաւուրց անժամանակն յաւիտենից. ժամանակաւ յորովայնի քում բնակեցաւ և ի Հօրէ ոչ մեկնեցաւ. վասն որոյ ընդ քեզ Աստուածածին և կոյս. բարեբանեմք զմայր և զաղախին փրկչին մերոյ: Փառք Հօր: Ծնեալն ի քէն ի խաչ ելեալ եւ ի յաթոռ փառաց ընդ Հօր. անարգեալ ի մարդկանէ փառաւորութեամբ էութեամբ երկրպագեալ. վասն որոյ ընդ քեզ Աստուածածին և կոյս. բարեբանեմք զմայր և զաղախին փրկչին մերոյ: Այժմ և միշտ: Ընդ քեզ ոչ միայն որդիք մարդկան այլ եւ վերին զօրութիւնք. դասք անմարմնոց հոգեղինաց հրեղինաց զուարթնոց եւ հրեշտակաց. գոհաբանեն և վերօրհնեն եւ փառաւորեն զմայր և զաղախին փրկչին մերոյ:

Ողորմեա ԲՁ:

Առաջին պտուղ առաջին ծառոյն ընդ նախաստեղծն մահացոյց. իսկ Որդին միածին եկն և փրկեաց զմեզ: Փառք Հօր: Զչարչարանս ի

յանձն առեր ընդեսանչի յարուցիչդ մեռելոց. ջնջելիա զձեռագիրդ ի մոյ յանցանաց։ Ամէն և միշտ։ Կենդանութի՞ն ի գերեզմանի եդար վասն ի հողոյ ստեղծեալ մարդոյն. զմեղօք մեռեալ զանձն իմ կենդանացո։

ՏԷՐ ՅԵՐԻՆԿՑ ՌՁ։

Անկին ի գերեզմանն առաւօտեան եբ կանայքն. յօծանեալ խընկեալ զանապական մարմինն։ Պառք Հօր։ Պոչիւմբն հրեշտակին քարալերէր ըզնոսա ասելով. ցընծացէք յարեաւ որպէս յառաջն ասաց։ Ամէն և միշտ։ Լուեալ ի հրեշտակէն զաւետիս յարութեն. պատմէին աշակերտացն ելթէ յարեաւ Քրիստոս։

Ամ-ա-օրո- Էրգ Յարու-թէ Դկ։ Քէպ. Ամասցուք։

Ամ-ա-օրո- Սաղմոս ՁԴ։

ԿՅ. Ցոյց մեզ Տր։ Փխ. Հաճեցար Տր. 191։

Ամ-էպարան ըստ Ղու-կասու-։ Ի. 1։

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԵ ՔՆ

Եւ իբրև կատարեաց զնամ զբանս իւր 'ի լսելիս ժողովրդեանն, եմուտ 'ի Կափառնաում։ Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր 'ի վախճանել, որ էր նմա պատուական։ Իբրև լուաւ զՅնէ, առաքեաց զծերսն 'ի Հրէից, աղաչէր զնա՝ զի եկեսցէ ապրեցուսցէ զծառայն նր։ Եւ նոքա եկեալ առ Յե՝ աղաչէին զնա ասէպ՝ և ասէին, թէ արժանի է՝ որում զշնորհս զայս առնես։ Զի սիրէ զազգս մեր, և զժողովրդանոցն նա շինեաց մեզ։ Եւ Յե գնաց ընդ նս. իբրև ոչ ինչ կարի հեռի էր 'ի տանէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկոմն, և ասէ ցնա. Տէր՝ մի ինչ աշխատ լինիր, զի չեմ բաւական ելթէ ընդ յարկաւ իմով մտա-

նիցես։ Ա՛ռ որդ և ոչ զանձն համարեցայ արժանի առ քեզ գալոյ. այլ ասա բանիւ՝ և բժշկեսցի մանուկս իմ. քանզի և ես այր մի եմ կարգեալ ընդ իշխանութիւն. ունիմ ընդ ինեւ զինուորս, և ասեմ սմա՝ երթ, և երթայ. և այլում թէ եկ, և գայ. և ծառայի իմում թէ արա զայս, և առնէ։ Եւ իբրև լուաւ զայս Յի՝ զարմացաւ, դարձաւ առ ժողովուրդն որ երթային զհետ նորա՝ և ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ և ոչ Իսրայելի այսչափ հաւատս գտի։ Եւ դարձան անդրէն պատգամաւորքն 'ի տուն, և գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ։ 10։

ՎԵՊ. Խնդրեսցուք։ Կեցո։ Ողբ. Վրում ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ա՛ռաջին Պօղոս ՈՂԽԹ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. 193։

Ա՛ստուածն ըստ Պաւղոսի։ Թ. 9։

Տն մերոյ Յեսի Քրիստի

Եւ անցեալ ընդ այն (Յեսի՝) ետես զայր մի, զի նստէր 'ի մաքսաւորուն՝ Մատթէոս անուն. և ասէ ցնա՝ եկ զկնի իմ։ Եւ յարուցեալ գնաց զկնի նր։ Եւ եղև իբրև բազմեալ էր նա 'ի տանն, և ահա բազում մաքսաւորք և մեղաւորք եկեալ և բազմեալ էին ընդ Յեսի՝ և ընդ աշակերտս նր։ Իբրև տեսին փարիսեցիքն՝ ասեն ցաշակերտս նր. ընդէր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր։ Լսէ Յեսի իբրև լուաւ՝ ասէ ցնա. ոչ է պիտոյ բժիշկ կարողաց՝ այլ հիւանդաց։ Երթայք՝ ուսարուք զի՞նչ է. զողորմութիւն կամիմ, և ոչ զզոհ. զի ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։ Յայնժամ մատեան առ նա աշակերտքն Յովհաննու՝ և ասեն. ընդէր մեք և փարիսեցիքն պահեմք յաճախ, և քո աշակերտքդ ոչ պահեն։ Ասէ ցնա Յեսի. մի թէ

մարթ ինչ իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ նա իցէ. այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի 'ի նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն։ Ոչ ոք արկանէ կապերտ անթափ 'ի վերայ հնացեալ ձորձոյ. զի առնու ելանէ զլրութիւնն 'ի հանդերձէն, և ևս չար պատառումն լինի։ Եւ ոչ արկանեն գինի նոր 'ի տիկս հինս, ապա թէ ոչ՝ տիկքն պատառին՝ և գինին հեղու, և տիկքն կորնչին. այլ արկանեն զգինի նոր 'ի տիկս նորս, և երկոքին պահին։ 17։

Սէ՛ոէ՛ոէ՛ Յոր՝ոլ՝ Դ։ Ռ՝ԷՊ. Ասասցուք։

Համբարձիչ Դ։

Ո՞՛չ հրեշտակն յերկնի՞ց աւետաւո՞՛ր երջանիկ և ե՞՛ր կանանցըն քարոզէր ասելով. Է՛ ձեզ՛զ վերստին լոյսըն ծագեա՛լ ի՞ յաշխարհ։ Փառք Հօր։ Այսօր տեսի՛լ ահեղակերպ հրեշտակապետի՞ն մերձեալ ի գո՛ւնդ զենուորացն. այսօ՛ր սրբոտաբերկեա՛լ պահապանացըն զարհուրեա՛լ մեռանէին. Է՛ ձեզ՛զ վերստի՛ն լոյսըն ծագեա՛լ ի՞ յաշխարհ։ Այժմ և միշտ։ Այսօր ցընծա՛յ Երուսաղէմըն վերին. այսօ՛ր ցընծայ Սիո՛ն մայր եկեղեցի՛. քանզի փրկի՛չըն մեր յարեա՛ւ և աւերեա՛ց ըզդըժոխս. ե՛ւ մեզ՛զ վերստի՛ն լոյսըն ծագեա՛լ ի՞ Հօրէ։

Աբիոկիան Սոլոս ՀՕ։ Որհնեցէք զԱ՛ծ. 197։

Ա՛ենոսոն ըստ Մարկոսի։ Գ. 13։

Տէրն մեր Յե՞ Ռ՞

Ելանէ 'ի լեառն՝ և կոչէ առ ինքն զորս ինքն կամեցաւ, և չոքան առ նա։ Եւ արար երկոտասանս՝ զի իցեն զնովաւ, և զի առաքեսցէ զնոսա քարոզել. և ունել իշխանութիւն բժշկելոյ զցաւս՝ և հանելոյ

զգեաս։ Եւ եդ անուն Սիմոնի՝ Պետրոս. և Յակովբու Զեբեդեայ՝ և Յովհաննու եղբօրն Յակովբայ, եդ նոցա անուանս Բաներեգէս, որ է՝ որդիք որոտման, և զԱնդրէաս, և զՓիլիպպոս, և զԲարթուղիմէոս, և զՄատթէոս զմնդեսաւորն, և զԹովմաս, և զՅակովբոս Ալփեայ, և զԹադէոս, և զՍիմոնն Կանանացի. և զՅուդա Իսկարիովտացի, որ և մատնեացն զնա։ 19։

ՌԷՊ. Խնդրեսցուք։ Կեցո՛։ Ողորմ. Թագաւոր։

Գ. ԿԻՐԿԵՍԱՐԱՔԱՅԻ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն։

ՅՈՒՆՈՅՆՈՒՔ երգ նոր Ամ փրկչին մերոյ. 153։
Ալէլուիա Յարութիւն Ամ։

ՅԱՌԱՔԻՍՏՈՒՆ

Հարց Ամ։

Որ թանգաւորդ ես յաւիտենից Տէր և արարիչ ամենայնի՝ լինելոյնք. օրհնեալ ես Տէր Ամենակալ հայրցն ըմբերոց։ Որ սպասաւորեալդ ես իսերովբէից և փառաւորեալ յանմարմնական բանակմունից. այսօր ի դանդաղեցն մերկացեալ և ի զինաւորաց բաժանեցար վասն մերոյ փրկութեան. օրհնեալ ես Տէր Ամենակալ հայրցն ըմբերոց։ Այսօր ըղկենարարքն մեր ի բազխաչն օրհնեսցուք. քանզի ի վերայ նորա բաշխեցաւ մեզ պարգեւք անմահութեան. Տէր Ամենակալ հայրցն ըմբերոց։

Գ. Ոչ զՏէր օրհնեսցէք եւ բարձր արարէք ընդ-

զքնաւ յաւիտեան։ Փառք Հօր։ Այսօր նշան սուրբ խաչին ի յեւ՛ծ՛ երկրի՛ երեւեալ. օրհնեա՛ցէք եւ բարձր արարէք զքնաւ յաւիտեան։ Այժմ և միշտ։ Այսօր ընդդէմ թշնամւոյն զէն անպարտելի՛ ցուցա՛ւ մեզ. օրհնեա՛ցէք եւ բարձր արարէք զքնաւ յաւիտեան։

Մեծացո՛ւցէ Ռ։

Ո՛ քեզ Հայր յառաջ քան զյաւիտեանս բարեբանեն դասք անմարմնոց հրեշտակաց. ձայնիւ երգով գոչեն և աղաղակեն. Սո՛ստուած անսո՛ւծոց և Տ՝ր տերանց փրկի՛չ գոլով։ Փառք Հօր։ Առաքեցեր զքո միածինըդ մարմնանալ ի սբ կուսէն. եւ անարատ ծընանիլ յորովայնէ անապական. բառնալով զմեր նեղութիւնս. Սո՛ստուած անսո՛ւծոց և Տ՝ր տերանց փրկի՛չ գոլով։ Այժմ և միշտ։ Շնորհք բարի յերուսաղէմ երևեցան հեթանոսաց, զի արարի՛ն յաւիտենից տրղայ եզեալ յորդեգրութի՝ կենաց կոչէ. Սո՛ստուած անսո՛ւծոց և Տ՝ր տերանց փրկի՛չ գոլով։

Ողորմեա՛ Ռ։

Որ կամաւոր խաչելուբ՝ քո՛ Տէր բարձեր զմեզ. զքեզ բարեբանեմք ամենեցո՜ւն յարո՛ւթի։ Փառք Հօր։ Որ երեքօրեայ թաղմամբ քո՛ Տէր մեռուցեր զմա՛հ. զքեզ բարեբանեմք ամենեցո՜ւն յարո՛ւթի։ Այժմ և միշտ։ Որ լուսափա՛յլ յարութիւնքբ՝ քո՛ Տէր կենագործեցեր զաշխարհս. զքեզ բարեբանեմք ամենեցո՜ւն յարո՛ւթի։

Տէր յերկնից Ռ։

Զայն աւետաւոր հրեշտակին զքաւարձացոյց զա-

ու

՞ՀՏեան կանանչան զՐ՚ՏԻ պատմելով ըզյարուն՝։ Փառք Հօր։ ԱՄ՚ յուսահատի՛ք տըրտմե՛ք այլ ցընծացէ՛ք բերկրեցեալ՝վ. խընկանգեսցք ՏԾայնոյն և փառաքաջեցք յարութեանն։ Ամէն և միշտ։ Փութացարուք ի Գալիլեա աւետարանեցէ՛ք աշակերտացն. եթէ յարեաւ Քրիստոս Եւ խափանեաց ըզմահ։

Ամաւոր երգ Յարութեան։ ՔՐՊ. Ասացուք։

Ամաւոր Սաղմոս ՁԴ։

ԿՅ. Յոյց մեզ Տէր։ Փխ. Հաճեցար Տէր. 191։

Ամենայն ըստ Ղուկասու։ Ի. 11։

Տէրն մեր Յս Քս

Եւ եղև 'ի վաղիւն երթայր 'ի քաղաք մի, որում անուն էր Նային. երթային ընդ նմա և աշակերտք նորա և ժողովուրդ բազում։ Իբրև մերձ եղև 'ի դուռն քաղաքին, և ահա ելանէր մեռեալ մի՝ որդի միամօր մօր իւրոյ, և նա էր այրի, և ժողովուրդ բազում քաղաքին էր ընդ նմա։ Իբրև ետես զնա Տէր՝ գթացաւ 'ի նա և ասէ. մի լար։ Եւ մատուցեալ մերձեցաւ 'ի դագաղն. և ոքք բարձեալն տանէին՝ զտեղի առին. և ասէ. պատանի դու՝ քեզ ասեմ՝ արի։ Կանգնեցաւ նստաւ մեռեալն, և ըսկսաւ խօսել. և ետ զնա ցմայր իւր։ Եւ ահ կալաւ զամենեսին, և փառաւոր առնէին զԱ՚Ծ՝ և ասէին, թէ մարգարէ ոմն մեծ յարուցեալ է՚ի միջի մերում, և թէ այց արար Ա՚Ծ ժողովրդեան իւրում՝ 'ի բարութի։ Եւ ել զրոյցս այս ընդ ամ Հրէաստան վ՚ն՝. և ընդ ամ կողմանս աշխարհին։ Եւ պատմեցին Յովհաննու աշակերտքն իւր վասն ամենայնի այսորիկ։ Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակերտացն իւրոց Յովհաննէս, առաքեաց առ Տէր և ասէ. դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում՝ ակն կալցուք։ Եւ եկեալ արքն առ նա՝ ասեն, Յովհան-

նէս մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ՝ և ասէ. դո՞ւ
ես որ գալոցն ես՝ եթէ այլում ակն կալցուք։
Նա 'ի նմին ժամու բժշկեաց զբազումս 'ի հիւան-
դութեանց և 'ի հարուածոց և յայսոց չարաց,
և կուրաց բազմաց շնորհեաց տեսանել։ Պատաս-
խանի ետ նոցա և ասէ. երթայք պատմեցէք Յովհան-
նու՝ զոր տեսէքդ և լուայք. զի կոյրք տեսանեն, և
կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք
յառնեն, աղքատք աւետարանին. և երանի իցէ՝
որ ոչ գայթագղեսցի յիս։ Նա իբրև գնացին հրեշ-
տակքն Յովհաննու. սկսաւ խօսել ընդ ժողո-
վուրդսն վասն Յովհաննու. զի՞ ելէք յանապատն
տեսանել, եղէգն շարժուն 'ի հողմոյ։ Այլ զի՞նչ
ելէք տեսանել, այր 'ի հանդերձս փափկութեան զար-
դարեալ. ահաւասիկ որ 'ի հանդերձս երևելիս և
'ի փափկութեան են՝ յարքունիս են։ Այլ զի՞նչ ելէք
տեսանել, մարգարէ. այո՛, ասեմ ձեզ՝ առաւել
ևս քան զմարգարէ։ Զի սա է՝ վասն որոյ գրեալն
է, թէ ահա առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո՝
որ յարդարեսցէ զճանապարհ քո առաջի քո։
Ամէն ասեմ ձեզ. մեծ 'ի ծնունդս կանանց մար-
գարէ քան զՅովհաննէս ոչ ոք է, բայց փոքրիկն
յարքայութեան Աստուծոյ մեծ է քան զնա։ Նա ամ ժո-
ղովուրդն իբրև լուան՝ և մաքսաւորքն, արդարա-
ցուցին զԱստուծ, զի մկրտեցան 'ի մկրտութիւնն Յովհան-
նու։ Իսկ փարիսեցիքն և օրինականք զխորհուրդն
Աստուծոյ անարգեցին յանձինս իւրեանց, զի ոչ մկրտե-
ցան 'ի նմանէ։ Արդ՝ ո՞ւմ նմանեցուցից զմարդիկ
ազգիս այսորիկ. և ո՞ւմ իցեն նմանօղք։ Նման են
մանկտուց՝ որ 'ի հրապարակս նստիցին, կարդայցեն
զմիմեանս և ասիցեն. փողս հարաք ձեզ՝ և ոչ կա-
քաւեցէք, ողբացաք՝ և ոչ լացէք։ Նկն Յովհան-
նէս մկրտիչ՝ ոչ ուտէր և ոչ ըմպէր, և ասէիք.
դև գոյ 'ի նմա։ Նկն որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ,
և ասէք. ահա այր կերօղ և արբեցօղ՝ բարեկամ

մաքսաւորաց և մեղաւորաց։ Եւ արդարացաւ իմաստութեան յորդւոց իւրոց։ 35։

Գրք. Խնդրեսցուք։ Կեցո։ Ալ. Գրում ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Աւետեան Սաղմոս Ճոխութ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութեան նոր. 193։

Առաքեալն Պօղոսի։ Թ. 18։

Տէրն մեր Յս Գրս

Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մատուցեալ երկիր պագանէր նմա՝ և ասէր. դուստր իմ արդ ևս վախճանեցաւ. այլ եկեալ դիցես զձեռն քո 'ի վրայ նր՝ և կեցցէ։ Յարեաւ Յս՝ և գնաց զկնի նորա աշակերտօքն հանդերձ։ Եւ ահա կին մի տեռատես երկոտասանամեայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ 'ի դրօշակ հանդերձի նորա։ Գրանզի ասէր 'ի մտի իւրում. թէ միայն մերձենամ 'ի հանդերձս նր՝ փրկիմ։ Իսկ Յս իբրև դարձաւ և ետես զնա՝ ասէ. քաջալերեաց դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ. և փրկեցաւ կինն 'ի ժամէն յայնմանէ։ Իբրև եկն Յս 'ի տուն իշխանին, և ետես զփողարան և ամբոխ յոյժ, ասէ ցնս. 'ի բաց գնացէք. զի ոչ՝ եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ։ Եւ ծաղր առնէին զնա։ Եւ իբրև եղ ամբոխն 'ի բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ նորա, և յարեաւ աղջիկն։ Եւ ել համբաւս այս ընդ ամ երկիրն ընդ այն։ 26։

Մեսեղի Յարութեան Ա։ Գրք. Ասասցուք։

Հոմիլիայի Ա։

Ընդ կանայսն իւղարերսն առ քեզ առաւօտեմբք կենդանիդ յաւիտենից Գս ընկալ և ըզմերս. փոխանակ խրնկոցն զօրհնաբանութիւնս։ Փառք

ՀՕՐ։ Փոխանակ ե՞ք աւետաւոր զբաւարթնոյն գի-
թուլթի՛ քո մեզ հանդի՛պեսցի՝ յուսով գիտու-
թեան. մխիթարել ըզհոգի՛ս եւ լուսաւորել։
Ամէն եւ միշտ։ Ընդ նոսի՛ն աւետարանութեամբ
քարոզեցէ՛ք սցո՛ւք. ըզքո՛ Աբրահամ միայն ըզսքան-
ելիսն՝ լինսդ. որ յարեալդ ի մեռելոց ամենազօր թա-
գաւոր անմահ։

Ամենայն Սաղմոս ՃՀԱ։ Օրհնեցէք զԱ. 197։
Ամենայն ըստ Մարկոսի։ Գ. 20։
Տերամբ մերով Յեսու Քրիստոս

Գան 'ի տուն, և գայ միւսանգամ ընդ նոսա ժո-
ղովուրդն. մինչ զի և հաց ևս ոչ ժամանել ու-
տել նոցա։ Եւ իբրև լուան որ իւրքն էին՝ ելին
ունել զնա, զի համարէին թէ մոլեգնեալ իցէ։
Եւ դպիրքն՝ որ յԵրուսաղեմէ իջեալ էին, ասէին
թէ բէեղզեբուղ գոյ 'ի դմա, և իշխանաւ դիւացն
հանէ դա զդեւս։ Եւ կոչեցեալ զնա առ ինքն, ա-
ռակօք խօսէր ընդ նա. զիա՞րդ կարէ սատանայ ըզ-
սատանայ հանել։ Եւ արդ՝ եթէ թագաւորութիւն
յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ կալ թագաւո-
րութիւն այն։ Եւ եթէ տուն յանձն իւր բաժա-
նեսցի, ոչ կարէ կալ տունն։ Եւ եթէ սատանայ
'ի վերայ անձին իւրոյ յարեաւ՝ և բաժանեալ է,
ոչ կարէ կալ, այլ վախճանեալ է։ Այլ ոչ ոք
կարէ զկարասի հզօրի մտեալ 'ի տուն նո՝ աւար
հարկանել, եթէ ոչ նախ զհզօրն կապիցէ, և ապա
զտուն նո՝ աւար հարկանիցէ։ Ամէն ասեմ ձեզ,
զի ամ թողցի որդւոց մարդկան մեղք և հայհոյու-
թիւք՝ որչափ և հայհոյիցեն. բայց որ հայհոյեսցէ
զՀոգին սո՝, ոչ ունիցի թողութիւն յաւիտեան.
այլ պարտապան լիցի յաւիտենիցն մեղաց։ Զի
ասէին թէ այս պիղծ գոյ 'ի նմա։ 30։

Քրիստոս. Խնդրեսցուք։ Կեցո՛։ Աղօթ. թագաւոր։

Պ. ՁԱՐԵՀԱՏԱՍԱՐԻ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն։

ՑՐԳԻՑԻՐ Տ՚ն երգ նոր, և օրհնեցէք. 157։
Ալէլուիա Յարութիւն։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Ռ։

Ա՛յսօր բեւեռեալ քո՛ի խաչին եւ զի՛նաւո՛ւրին խոցեալ զանարատ ըզկողդ. Տ՚ր Ա՚ստ՚ծ հա՛ւրցըն ըմեր։ Խակ բիղխումըն ա՛ռ արեան քո՛՛ լուսոյ ըզտիեզերս յանիծիցն Ադա՛մայ. Տ՚ր Ա՚ստ՚ուած հա՛՛ւրցըն ըմեր։ Պարգեւատու բարեա՛՛ց եւ տրօղ ողորմութեան եղա՛՛ր ի գերեզման՛՛ն. Տ՚ր Ա՚ստ՚ուած հա՛՛ցըն ըմեր։

Գ. Ի՛զՏ՚ր. Ամենայն գո՛՛ւրծք օրհնեցէք։ Որ յանէ՛ից գոյա՛՛ցոյց արարողն իւր կերպմամբ. զգաստացեալ օրհնաբանի՛՛ք եղայք. ամենայն գո՛՛ւրծք օրհնեցէք։ Փառք Հօր և։ Որ զդատա՛՛կնիք մահու եւ լոյծ ի՛՛ւրով անշընչացեալ մարմնոյն ըզհոգացեալ մարդոյն. ամենայն գո՛՛ւրծք օրհնեցէք։ Այժմ և միշտ։ Որ զառաջնաձաշակն քաղցրա՛՛ցոյց ճաշակմամբ դառնընո՛՛ւն զի հաղորդեսցուք մարմնոյ եւ արեանն Տ՚ն. ամենայն գո՛՛ւրծք օրհնեցէք։

Մեծացուցէ Ռ։

Ասեն առաքեալ ի Հոգի՛՛ սուրբ վասն մեր մարմնացա՛՛ւ. եւ ցընծութի աշխարհի յայտնեցաւ. ըզքեզ բարեբանեմք Ա՚ծածին կոյս։ Փառք Հօր։

Օ՜ի՛ որո՛ւմ ո՛չըն հանդո՛ւրժէ՛՞ն բո՛ցանըշոյլ սե՛-
րովբէ՛՞քն. նա՛ բնակեցաւ ի քո՛ւմ յորո՛վայնի.
ը՛զքե՛զ բարե՛բանե՛մք Ս՛ծածին կոյս։ Այժմ և
միշտ։ Յո՛րմէ սարսեալ դո՛ղայի՛՞ն փա՛յլակնա-
ցայտ ի՛ լուսո՛՞յն. ի՛ գի՛րկըս քո ընդնա՛ ընկալա՛ր
ը՛զքե՛զ բարե՛բանե՛մք Ս՛ծածին կոյս։

Ողբերգ Ռ։

Հայր անբասկի՛զբն որ վերօ՛ր հնեա՛լդ ես ի դասուց
քերո՛վբէից. ը՛զքե՛զ աղաչե՛՞մք ո՛ղորմեա քոյոց
հաւատացելոց։ Փառք Հօր։ Բանդ ի Հո՛՞ր է՛ որ
յառաջ քան զյաւիտեանս Որդի՝. փառակից Հո՛՞ր.
ո՛ղորմեա քոյոց հաւատացելոց։ Այժմ և միշտ։
Որ նստիս ի քրովբէս. եւ տեսչութի՛ւն խընամես
զարարածըս քո՝. ճշմարիտ ե՛ր Հոգի՛՞. ո՛ղորմեա
քոյոց հաւատացելոց։

Տէր յերկինից Ռ։

Ա՛յսօր զուարճացան տիե՛զերք ամենայն ճշմա-
րիտ յարութեամբ Ս՛ծորդւոյն. քանզի զդրժոխս
աւերեաց եւ գերեաց զանրդելեալս ի նմա։ Փառք
Հօր։ Ա՛յսօր լուսափայլեա՛լ մեծապայծառ ծագ-
մամբ. հրեշտակապետն ի վերայ վիմին կանանցն
աւետէր ասելով. զի խընդրէ՛ք ըզկենդանի՛ն ընդ
մեռեալս։ Այժմ և միշտ։ Ա՛յսօր բերկրեցան կա-
նանքն իւղաբերք. աւետեա՛ք յարութի՛ւն Ս՛ծորդ-
ւոյն. դարձա՛ն յառաքեա՛լսն ասելով յարեաւ
Ս՛տեւած։

Ա՜՜՜օրհ՜՜՜ Երգ Յարու՜թի՛ւն Ա։ Ռ։ Ասասցուք։

Ա՜՜՜օրհ՜՜՜ Սաղմոս Զ։

Կ3. Յոյց մեզ Տէր։ Փխ. Հաճեցար Տէր. 191։

Ա-ԷՊՈՊԱՆ ԸՍՊ Ղ-ԽՍՈՍ։ Ի. 36։

ՕՏԷՐՆ ՄԵՐ ՅԻ ՏԻ

Աղաչէր զնա ոմն 'ի փարիսեցւոցն՝ զի կերիցէ ճաշ ընդ նմա. և մտեալ 'ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ։ Եւ կին մի էր 'ի քաղաքին մեղաւոր. իբրև գիտաց թէ բազմեալ է 'ի տան փարիսեցւոյն, բերեալ շիշ մի իւղոյ աղնուի. կայր յետոյ առ ոտս նորա, լայր, և արտասուօքն սկսաւ թանալ զոտս նորա, և հերովք գլխոյ իւրոյ ջնջէր, և համբուրէր զոտս նորա, և օծանէր իւղովն։ Եւ տեսեալ փարիսեցւոյն՝ որ կոչեացն զնա, ասէր ընդ միտս իւր. սա թէ մարգարէ ոք էր, ապա գիտէր թէ ո՞վ՝ և որպիսի՞ ոք կին մերձենայ 'ի սա. զի մեղաւոր է։ Պատասխանի ետ Յի և ասէ ցնա, Սիմովն՝ ունիմ ինչ ասել քեզ. և նա ասէ, ասա՛ վարդապետ. և ասէ։ Երկու պարտապանք էին ուրումն փոխատուի. մինն պարտէր հինգ հարիւր դահեկան, և միւսն յիսուն։ Եւ իբրև ոչ գոյր նոր հատուցանել, երկոցունցն շնորհեաց. արդ ասա՛ ո՞վ առաւել սիրեսցէ զնա։ Ասէ Սիմովն. ինձ այսպէս թուի եթէ որում զբաղումն շնորհեաց։ Եւ նա ասէ ցնա. ուղիղ դատեցար։ Եւ դարձեալ 'ի կինն կողմն, ասէ ցՍիմովն. տեսանե՞ս զայս կին, մտի 'ի տուն քո՝ ջուր ոտից իմոց ոչ ետուր, իսկ սա արտասուօք իւրովք եթաց զոտս իմ, և հերովք իւրովք ջնջեաց։ Համբոյր մի գոյ ոչ ետուր ինձ, սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ՝ ոչ դադարեաց 'ի համբուրելոյ զոտս իմ։ Իւղով զգլուխս իմ ոչ օծեր, սա իւղով անուշիւ օծ։ Վասն որոյ ասեմ քեզ. թողեալ լիցին սմա մեղք իւր բազումք, զի յոյժ սիրեաց. զի որում շատ թողուցու՝ շատ սիրէ, և որում սակաւ՝ սակաւ։ Եւ ասէ ցնա. թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ սկսան՝ որ բազմեալն էին ընդ նմա, ասել ընդ միտս իւրեանց. ո՞վ է սա՝ որ զմեղս թողու։ Եւ

նա ասէ ցկինն. հաւատք քո կեցուցին զքեզ, երթ
'ի խաղաղութի: 50:

ԲՇՊ. Խնդրեսցուք: Կեցո: Ողջ. Տ. ում ամենա:

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Առաջին Սաղմոս Օրհնութ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութի նոր. 193:

Աւետարան ըստ Մատթէոսի: Թ. 27:

Տէրն մեր Յս Բն

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն (Յս), զհետ եղեն
նի կոյրք երկու, աղաղակէին՝ և ասէին. ողորմեաց
մեզ որդի Դաւթի: Եւ իբրև եկն 'ի տուն, մա-
տեան առ նա կոյրքն. և ասէ ցնս Յս. հաւատայք՝
եթէ կարօղ եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա՝ այո՛
Տէր: Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա՝ և ասէ.
ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ: Եւ բացան աչք
նց. և սաստեաց նոցա Յս՝ և ասէ, զգոյշ կացէք՝
մի ոք գիտասցէ: Եւ նոքա ելեալ համբաւեցին
զնա ընդ ամ երկիրն ընդ այն: Եւ յելանելն նո-
ցա արտաքս, ահա մատուցին առ նա այր մի՝ համր
դիւահար: Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն.
և զարմացան ժողովուրդքն՝ և ասեն. թէ և ոչ
երբէք երևեցաւ այսպիսի ինչ յԻսրայելի: Իսկ
փարիսեցիքն ասէին, թէ իշխանաւն դիւաց հանէ
դա զդևս: 34:

Մեծեցի Յոհան Ակ: Բարող. Ասասցուք:

Հոմբարձին Ակ:

Աքանչելի՛ հրեշտակքն Տն ցընծութեամբ իջեալ
ի գերեզմանքն հարկանէ՛ին՝ փո՛ղ յարութեանն
Տն: Ի՛ հարկանել փողոցն պահապանքքն զար-
հուրեցան՝ և եղեն՝ ի յահէն որպէս մեռեալ:
Փառք Հօր: Զայն եղեալ ի հրեշտակէն բարբառ

Եղեւ ուրախութեան տէր յարեաւձաւ. փառք յարութեանն տեառն։ Ամէն և միշտ։ Դրօքքն փակելովք երեւեալ Յ՚ս աշակերտացն եւ ասէձր. խաղաղութիւն ընդ ձեզ։

Աբիմելեքն Սոլոմոն ՀՀ։ Օրհնեցէք զՄ. 197։

Ա-Եպիսկոպոսն ըստ Մարկոսի։ Գ.. 31։

Տն մերոյ Յեսի Քրիստի

Գան եղբարքն և մայր նր, և արտաքոյ կացեալ յղեցին և կոչէին զնա։ Եւ անդ ժողովուրդն շուրջ զնովաւ նստէր. և իբրև ասացին ցնա, ահաւասիկ մայր քո և եղբարք քո կան արտաքոյ, և խնդրեն զքեզ։ Պատասխանի ետ նց և ասէ. ո՞վ է իմ մայր, կամ եղբարք։ Հայեցաւ շուրջ զնրա յաշակերտսն զի նստէին, և ասէ. ահաւասիկ մայր իմ, և եղբարք իմ։ Զի որ առնիցէ զկամն Ա.Յ, նա է իմ եղբայր և քոյր և մայր։ 35։

Քարոզ. Խնդրեսցուք։ Կեցո։ Ամ. Թագաւոր։

Գ. ՀԻՆԳՇԱԲԱԹ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն։

Օրհնութիւն զՏէր, որ օրհնեացն. 160։

Ամէնայնոցն Յարութիւն։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց։

Ո՞ր գրթացար ի ն՝ը մանկունսն եւ իջեալ փրկեցեր ի բորբոքեալ բոցոյն. ըզքեզ միշտ օրհնեմք Ամէն հարցն մերոց։ Ո՞ր ոչնչացար աղգի մարդկան և իջեալ մարմնացար ի՞ նը կուսէն. ըզ-

քեզ միշտ օրհնեմք Աստծ հարցըն մերոց։ Որ երեք-
օրեայ թաղմանմբ քո ցէր շարժեցան հիմունք եր-
կրի. ըզգերեզմանս բացեր ըզմեռեալսըն յարու-
ցեր. ըզքեզ միշտ օրհնեմք Աստծ հարցըն մերոց։
Գ. Աչքէք։ Որ պայծառացոյցն ըզփայտ խաչին՝
տարածանելով զիւր զանարատ բազուկսն. եւ ետ
զէն յաղթութեան արանրածոց իւրոց. ամենայն
գո�Րծք օրհնեցէք։ Փառք Հօր։ Ելանելով ի
ստորին կողմ երկրի. և գողալով ասսանեցան դը-
ժոխք. քանզի որ ի նմա արգելեալքն աղաղակէին
առ ցէր. ամենայն գոՐծք օրհնեցէք։ Այժմ և
միշտ։ Եւ զարգելեալսն ի բրոնութենէ մահու.
ազատեցոյց երեքօրեայ յարութեամբն իւրով. ա-
մենայն գոՐծք օրհնեցէք։

Մեծացուցանէ Զ։

Ըզկուսութիւնըդ քո Աստծին անարատ. զոր ոչ
բոցակիզեաց հուր ածութեանըն. մեծացուցանեմք։
Փառք Հօր և։ Որ յարգանդի քում անապակա-
նաբար բնակեցաւ Որդի Աստծ. եւ փրկիչ անձանց
մերոց. մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Ընհա-
սանելի տէրունական յայտնութիւնն աշխարհի
ծագեցաւ. անմատոյց լուսոյն երկրպագեսցուք։

Ողորմեա Զ։

Որ խաչեցար և թաղեցար վասըն մերոյ փրկու-
թեան. եւ յարեար ի մեռելոց. խնայեա ի ժողովուր-
դըս քո միայն մարդասէր։ Փառք Հօր։ Որ ըզդի-
ժոխս աւերեցեր և ըզգերեալսըն փրկեցեր. եւ
մեզ կեանըս շնորհեցեր. խնայեա ի ժողովուրդըս
քո միայն մարդասէր։ Այժմ և միշտ։ Որ ի յեր-

կինըս համբարձար և ընդ աջմէ Հօր նըստար. ի միւսանգամ քո գալըստեանն. խնայեա ի ժողովուրդըս քո միայն մարդասէր։

ՏԷՐ ՅԵՐԻՆԷՑ ՐԶ։

Աքանչելի կանայքն աներկիւղ եկին ի տեսանել ըզգերեզմանն. զի կատարեալ սէրըն մերժեաց զերկիւղն։ Փառք Հօր։ Անկին ի խընկել ըզտէրունեան մարմինն եւ տեսին յարուցեալ ի գերեզմանէն. եւ վերըստին ըմբսըն ծագեաց յաշխարհս։ Այժմ և միշտ։ Բարձրեաց հրեշտակըն զյարութիւնն Տ՝ն. և բացան գերեզմանըք նընջեցելոց. եւ յարութիւն Տ՝ն յաղթեաց մահու։

Առաւօտու երգ Յարութեան ՐԶ։ Ձայն. Ասացուք։

Առաւօտու Սաղմոս ՁԴ։

ԿՅ. Յոյց մեզ Տէր։ Փխ. Հաճեցար Տէր. 191։

Առաքելական ընթերցուած։ Ր. 1։

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍ ՔՍ

Եւ եղև յետ այնորիկ՝ և ինքն շրջէր ընդ քաղաքս և ընդ գեօղս, քարոզէր և աւետարանէր զարքայութիւն Աստուծոյ. և երկոտասանքն ընդ նմա. և կանայք ոմանք՝ որ բժշկեալ էին յայսոց չարաց և 'ի հիւանդութեանց. Մարիամ՝ որ կոչէր Մագդաղենացի, յորմէ եօթն դևն ելեալ էր. և Յովհաննա կին Ռուզայ՝ հաղարապետին Հերովդի, և Շուշան՝ և այլք բազումք, որք պաշտէին զնա յընչից իւրեանց։ Եւ 'ի ժողովել բազում ժողովրդոց, և ըստ քաղաքաց քաղաքաց եկելոց առ նա, ասէ առակաւ։ Ել սերմանացան սերմանել զսերմանիս իւր. և 'ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ՝ և եղև կոխան, և թռչունք երկնից կերան զնա։ Եւ այլն անկաւ յապառաժի, և ընդ բուսանելն չորացաւ, առ 'ի չգոյէ հիւթոյ։ Եւ այլն

անկաւ 'ի մէջ փշոց, և ընդ նմին բուսեալ փշոցն՝ հեղձուցին զնա։ Եւ այլն անկաւ յերկիր բարի և պարարտ, և բուսեալ՝ արար պտուղ հարիւրապատիկ։ Այս իբրև խօսեցաւ, ասէ. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ Հարցանէին զնա աշակերտքն, թէ զի՞նչ իցէ առակն։ Եւ նա ասէ. ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեանն Աստուծոյ, բայց այլոցն առակօք. զի տեսցեն՝ և մի՛ տեսցեն, և լուիցեն՝ և մի՛ իմասցին։ Բայց առակն այս ինչ է. սերմն բանն Աստուծոյ է։ Եւ որք առ ճանապարհաւն, այնոքիկ են որ լսենն. և ապա գայ սատանայ՝ հանէ զբանն 'ի սրտից նոցա, զի մի՛ հաւատասցեն՝ և ապրեսցին։ Եւ որք յապառաժին, որք յորժամ լսիցեն խնդութեամբ ընդունին զբանն, և արմատս ոչ ունիցին՝ որք առ ժամանակ մի հաւատան, և 'ի ժամանակի փորձութեան հեռանան։ Իսկ որ 'ի մէջ փշոցն անկաւ՝ նոքա են, որ իբրև լսեն զբանն՝ և 'ի հոգս և 'ի մեծութի և 'ի ցանկութի աշխարհիս զբաղեալ հեղձնուն՝ և անպտուղ լինին։ Իսկ որ յերկիրն պարարտ, որոց բարուք և զուարթագին սրտիւ լուեալ զբանն՝ ընդունին, և տան պտուղ համբերութեամբ։ Ոչ ոք լուցանէ ճրագ և թաքուցանէ ընդ կարասեաւ՝ կամ դնէ ընդ մահճաւք. այլ 'ի վերայ աշտանակի դնէ, զի որ մտանեն՝ զլոյս տեսցեն։ Չիք ինչ ծածուկ՝ որ ոչ յայտ լիցի. և ոչ գաղտնի՝ որ ոչ ծանիցի, և եկեսցէ 'ի յայտ։ Տեսէք այսուհետև զի՞արդ լսէքդ. զի որ գուցէ՝ տացի նմա, և որ ոչն գուցէ՝ և զոր կարծէն թէ ունիցի՝ բարձցի 'ի նմանէ։ Եկին առ նա մայրն և եղբարքն իւր, և ոչ կարէին հասանել 'ի նա վասն բազմութեան։ Ազդ եղև նմա և ասեն. մայր քո և եղբարք քո կան արտաքոյ՝ և կամին զքեզ տեսանել։ Եւ ասէ ցնոսա. մայր իմ և եղբարք իմ սոքա են, որ զբանն Աստուծոյ լսեն և առնեն։ 21։

ՌՃԾ. Խնդրեսցուք։ Կեցո՛։ Ամ. Փառք ամենայն։

ՑԵՐԵԿՈՅԻՆ

Ա՛ռաջին Պողոս Ճոխթ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. 193։

Ա՛ռ Էպիսկոպոսն ըստ Պ՛ապ՚Ի՚էոսի։ թ. 35։

Տէրն մեր Յ՚ս՚ Ք՚ս՚

Ա՛ռ շրջէր (Յ՚ս՚) ընդ ամ՚ քաղաքս և ընդ գիւղս. ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա, և քարոզէր զաւետարանն արքայութեան. և բժշկէր զամ՚ ախտս և զամ՚ հիւանդութիս 'ի ժողովրդեանն։ Ա՛ռ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ 'ի նոսա. զի էին աշխատեալք և ցրուեալք իբրև զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ։ Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր. հունձք բազում են՝ և մշակք սակաւ։ Արդ՝ աղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս 'ի հունձս իւր։ Ա՛ռ կոչեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր, ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնս, և բժշկել զամ՚ ցաւս և զամ՚ հիւանդութիս։ Ա՛ռ առաքելոցն երկոտասանից էին անուանք այսոքիկ. առաջին Սիմովն՝ անուանեալն Պետրոս, և Անդրէաս եղբայր նր։ Յակովբոս Զեբեդեայ, և Յովհաննէս եղբայր նորա, Փիլիպպոս և Բարթողիմէոս, Թովմաս և Մատթէոս մաքսաւոր, Յակովբոս Ալփեայ և Ղէբէոս՝ որ անուանեցաւ Թադէոս։ Սիմովն Կանանացի և Յուդայ Իսկարիովտացի՝ որ և մատնեացն զնա։ Զնս երկոտասանեսին առաքեաց Յ՚ս՚, պատուիրեաց նոցա՝ և ասէ, 'Ի ճանապարհ հեթանոսաց մի երթայցէք, և 'ի քաղաք Սամարացւոց մի մտանիցէք։ Այլ երթայք առաւել առ ոչխարսն կորուսեալս տանն Իսրայելի։ Ա՛ռ իբրև երթայցէք՝ քարոզեցէք և ասացէք, թէ մերձեալ է արքայութիւն երկնից։ Զհիւանդս բժշկեցէք, զբորոտս սրբեցէք, զդևս հանէք, ձրի առէք՝ և ձրի տուք։ Մի ստանայք ոսկի՝ և մի արծաթ՝ և մի պղինձ 'ի գօտիս ձեր։ Մի պարկ 'ի ճանապարհ, և մի երկուս հանդերձս, մի կօշիկս,

մի ցուպ. զի արժանի է մշակն կերակրոյ իւրոյ։ Յոր քաղաք մտանիցէք կամ 'ի գեօղ, հարցանիցէք՝ թէ ո՞ է 'ի նմա արժանի. և անդ լինիջիք՝ մինչև ելանիցէք անտի։ Եւ իբրև մտանիցէք 'ի տունն, ողջոյն տայջիք նմա՝ և ասասջիք. ողջոյն տանս այս-միկ։ Եթէ իցէ տունն արժանի, եկեսցէ ողջոյնն ձեր 'ի վրա նր. ապա թէ ոչ իցէ արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի։ Եւ որ ոչ ընկալցի զձեզ՝ և ոչ լուիցէ բանից ձերոց, իբրև ելանիցէք 'ի տանէն՝ կամ 'ի քաղաքէն յայնմանէ, թօթափեսջիք զփո-շին յոտից ձերոց։ Ամէն ասեմ ձեզ՝ դիւրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց և Գոմորացւոց յաւուրն դատաստանի, քան քաղաքին այնմիկ։ Ժ. 15։

Մեծեցի Յոյսոնէ Ռշ։ Բոյսոց. Ասասցուք։

Հոմէոպէյի Ռշ։

Զայն աւետաւոր հրեշտակին զբ՛ւարճացցոյց զա-ռաւ՛օտեան կանայն զԲ՛ՆԻ պատմելով ըզյարութի՛։ Փառք Հօր։ Մի՛ յուսահատի՛ք տըրտմուք՛ այլ ցընծա՛ցէք բերկրրելո՛վ. խընկանգեսա՛ցք ուծայնոյն և փափաքողք յարութեանն։ Այժմ և միշտ։ Փութա՛ցարուք ի Գալիլեա՝ աւետարանեցէք աշա-կերտացն. Եթէ յարեաւ Քրիստոս Եւ խաչեանեաց ընդմա՛հ։

Ադիոկման Սողոս ՀՕ։ Օրհնեցէք զԱ՛Ծ. 197։

Ա-Եպոսքոն ըսոք Մոսկոսի։ Գ. 1։

Տէրն մեր Յս Քս

Դարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովեզերբն. և խռնեցան զնովաւ ժողովուրդք բազումք, մինչև 'ի նաւ մտանել նմա, և նստել 'ի ծովուն. և ամ ժո-ղովուրդն զծովեզերբն զցամաքն ունէին։ Եւ ու-սուցանէր զնոսա առակօք բազում ինչ. և ասէր նց 'ի վարդապետութե իւրում։ Լուարուք. ահա ել սեր-

մանօղ սերմանել։ Եւ եղև 'ի սերմանելն, ոմն անկաւ առ ճանապարհաւ, և եկն թռչուն և եկեր զնա։ Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում. և վաղվաղակի բուսաւ. քանզի ոչ գոյր հիւթ երկրին. և յորժամ ծագեաց արև՝ ջեռաւ, և զի ոչ գոյին արմատք՝ ցամաքեցաւ։ Եւ այլն անկաւ 'ի մէջ փշոց. ելին փուշքն և հեղձուցին զնա, և պտուղ ոչ ետ։ Եւ այլն անկաւ յերկիր բարւոք, և ելեալ աճեցեալ տայր պտուղ, և բերէր ընդ միոյ երեսուն՝ և ընդ միոյ վաթսուն՝ և ընդ միոյ հարիւր։ Եւ ասէր. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ 9։

ՎԵՊ. Խնդրեսցուք։ Կեցո։ Ողորմ. Թագաւոր։

Պ. Ա Ի Ր Ք Ա Ր

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն։

ԱՐԱՒՈՎՆ հանդերձ կառօքն ընկղմեցաւ. 164։
Ալելուիա Յարութիւն։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Ռշ։

Ո՛ր զարդարեալ նորանցուցեր զարարածոց գոյացութի՛ւն համագոյ Հօր և Հոգւոյն. ընդքե՛զ միշտ օրհնեմք Ա՛ծ հարցըն մերոց։ Ո՛ր կամաւոր խոնարհութի՛ւրդ քո՛ յանձն առեր ըզչարչարանս ի խաչին բեւեռեցար. ընդքե՛զ միշտ օրհնեմք Ա՛ծ հարցըն մերոց։ Ո՛ր զմահացու մեր ըբնութիւնս վերաստեղծեր կենդանութի՛ւն հրաշափառ քո՛ յարութի՛դ. ընդքե՛զ միշտ օրհնեմք Ա՛ծ հարցըն մերոց։

Գ. Ընդ՝ զՏէր օրհնեցէք գովեցէք և բարձր արարէք ընդ՝ յաւիտեան։ Փառք Հօր։ Որ էջն ի գերեզմանն եւ աւերեաց ընդ՝ դժոխս. մեծ եւ հրաշք զօր զօրութիւնք եւ յարեաւ ի մեռելոց. օրհնեցէք գովեցէք և բարձր արարէք ընդ՝ յաւիտեան։ Այժմ և միշտ։ Լուսաւորիչն աշխարհի որ ազատեաց ի մեղաց ընդ՝ ի՛ եղերս ա՝մ. Նորահրաշ յարութիւն իւրով. օրհնեցէք գովեցէք և բարձր արարէք ընդ՝ յաւիտեան։

Մեծացուցէք Զ։

Ընդ՝ քեզ ամենօրհնեալ Աստուածածին. մաշրդ լուսոյ և առաքաստ Աստուծոյ Բանի՛ն մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Ընդ՝ քեզ պայծառ երկի՛նք և ամպ լուսեղէն. ծնողաւ արարչին և մորենի՝ անկի՛ղելի՛. մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Ընդ՝ քեզ դուռն երկնից և ճանապարհ արքայութեան. բարձող անի՛ծից և սրովբէ՛ հոգեղէն. մեծացուցանեմք։

Ողորմեա՛ Զ։

Ո՛կեր ի չարչարանսն չարչարանացն լուծիչ. բեւեռեցար ի խաչին. լուծեր ընկանպանսն մեղաց մերոց. Ո՛ւ յոյս յարութեան մերոյ ողորմեա՛։ Փառք Հօր։ Ոչնչեր ի գերեզմանն աւերեցեր ընդդիմակս. եւ յարուցեալ յերրորդ աւուր զանշխարհս ըցուցեր խընդութիւն՝. Ո՛ւ յոյս յարութեան մերոյ ողորմեա՛։ Այժմ և միշտ։ Ապրեր առ աշակերտսն քանչելերեալ ընդնոսա. եւ խոստացար լինել ընդ մեզ զա՝մ աւուրս կենաց մերոց. Ո՛ւ յոյս յարութեան մերոյ ողորմեա՛։

ՏԷՐ ՅԵՐԻՆԷՑ ԲԶ։

Պանխելով եբ կանանցն ընդ առաւօտն ի գերեզմանն. և զահաւոր յարութիւն ըզձայն ի հրեշտակէն լուեալ. ԵԹԷ յարեաւ Ա՛ՐԾ։ Փառք Հօր։ Մոռնալ ըզտնրտմուն երջանիկ և եբ կանանցն. Եւ խընդութիւն ընթանային պատմել աշակերտացն. ԵԹԷ յարեաւ Ա՛ՐԾ։ Ամէն և միշտ։ Օգքանչելի և ըզհրաշագործ ըզյարութիւնն Ք՚ի. առաքելոցն ստուգապէս տեսեալ. ընդ հանուր քարոզէին. ԵԹԷ յարեաւ Ա՛ստուած։

Ա՛ռաւօտու Երգ Յարութիւն Բկ։ Ձ՚ՁՊ. Ամասցուք։

Ա՛ռաւօտու Սաղմոս ՁԳ։

ԿՅ. Յոյց մեզ Տէր։ Փխ. Հաճեցար Տի. 191։

Ա՛Եպիսկոպոս ըստ Ղուկասու։ Բ. 22։

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻ ՎԱ

Եւ եղև 'ի միում աւուրց ինքն եկ 'ի նաւ՝ և աշակերտքն նր, և ասէ ցնա. եկայք անցցուք յայն կոյս ծովակիս. և գնացին։ Եւ մինչդեռ նաւէին՝ 'ի քուն եմուտ. և էջ մրրիկ հողմոյ 'ի ծովակն՝ և ուռնոյր, և տագնապէին։ Մատուցեալ զարթուցին զնա և ասեն. վարդապետ վարդապետ՝ կորընչիմք աւասիկ։ Եւ նա յարուցեալ սաստեաց հողմոյն և խռովութիւն ջուրցն՝ և հանդարտեցին, և եղև խաղաղութիւն։ Ասէ ցնա. ո՞ւր են հաւատք ձեր. և զահի հարեալ զարմացան, և ասէին ցմիմեանս. ո՞վ արդեօք իցէ սա՝ զի և հողմոց և ջրոց հրաման տայ, և հնազանդին սմա։ Եւ նաւեցին իջին յաշխարհն Գերգեսացւոց, որ է յայն կոյս հանդէպ Գալիլեայ։ Եւ ընդ ելանելն նր 'ի ցամաք, պատահեաց այր մի 'ի քաղաքէն՝ յորում էին դևք, և բաղում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ՝ և ոչ 'ի տան բնակեալ, այլ 'ի գերեզմանս։

Եւ տեսեալ զՅՆ, աղաղակեաց և անկաւ առաջի
նր, և ասէ մեծաձայն. զի՞ կայ իմ և քո ՅՆ որդի
Աստուծոյ բարձրելոյ, աղաչեմ զքեզ մի տանջեր զիս։
Թանզի հրաման տայր այսոյն պղծոյ ելանել 'ի
մարդոյ անտի. զի բազում ժամանակս յափշտա-
կեալ էր զնա, և կապէր 'ի շղթայս, և պահէր
յերկաթս, և խզէր զկապանսն, և վարէր 'ի դիւէն
յանապատս։ Եհարց ցնա ՅՆ և ասէ. զի՞նչ անուն
է քեզ. և նա ասէ, լեգէոնն. զի դեւք բազումք
մտեալ էին 'ի նա։ Եւ աղաչէին զնա՝ զի մի հրա-
ման տացէ նոցա երթալ յանդունդս։ Եւ էր անդ
երամակ մի խոզից բազմաց արօտական 'ի լերինն.
և աղաչեցին զնա զի հրաման տացէ նոցա մտանել 'ի
նոսա. և հրամայեաց նոցա։ Եւ ելեալ դեւքն յառնէին՝
մտին 'ի խոզեանսն. և դիմեաց երամակն 'ի գահէ
անտի 'ի ծովակն՝ և հեղձաւ։ Իբրև տեսին խոզա-
բածքն զիրսն որ եղեն՝ փախեան, և պատմեցին 'ի
քաղաքին և յագարական։ Եւ իբրև ելին տեսանել
զգործսն, և եկին առ ՅՆ, և գտին զայրն՝ ուստի
դեւքն ելեալ էին, զգեցեալ և զգաստացեալ նստէր
առ ոտսն ՅՆի, և երկեան։ Պատմեցին նոցա որոց
տեսեալն էր՝ թէ զիարդ փրկեցաւ դիւահարն։ Եւ
աղաչէր զնա ամ բազմութին շուրջ զկողմամբքն
Գերգեսացւոց՝ գնալ 'ի սահմանաց նոցա, քանզի ահիւ
մեծաւ տագնապէին. և նա մտեալ 'ի նաւ՝ դարձաւ
անդրէն։ Աղաչէր զնա այրն՝ ուստի դեւքն ելեալ
էին, շրջել ընդ նմա. արձակեաց զնա՝ և ասէ.
դարձ 'ի տուն քո, և պատմեա՝ զոր միանգամ ա-
րար քեզ Աստուծ. գնաց 'ի քաղաքն՝ և քարոզէր զոր
ինչ արար նմա ՅՆ։ Եւ իբրև դարձաւ անդրէն
ՅՆ, ընկալաւ զնա ժողովուրդն. քանզի ամենե-
քեան ակն ունէին նմա։ Եւ ահա եկն այր մի՝ որում
անուն էր Յայրոս, և նա էր իշխան ժողովրդեանն.
անկեալ առ ոտսն ՅՆի՝ աղաչէր զնա մտանել 'ի
տուն նր. զի դուստր միամօր էր նր՝ ամաց իբրև

երկոտասանից, և էր մերձ 'ի մահ. և ընդ երթալն նր՝ ժողովուրդքն նեղէին զնա։ Եւ կին մի էր 'ի տեռատեսութեանէ արեան յամաց երկոտասանից, որ 'ի բժիշկս ծախեալ էր զամ ինչս իւր, որում ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկիլ։ Մատուցեալ յետոյ մերձեցաւ 'ի քղանցս հանդերձի նր. և նոյն-ժամայն եկաց բղխումն արեան նր։ Եւ ասէ Յն. ո՞վ է՝ որ մերձեցաւն յիս։ Իբրև ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս՝ և որ ընդ նմա էին. վարդապետ՝ ժողովուրդք պնդեն և նեղեն զքեզ։ Եւ ասէ Յն. ոմն մերձեցաւ յիս. քանզի գիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն։ Իբրև ետես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ 'ի նմանէ, եկն դողալով՝ և անկաւ առաջի նր, թէ վասն որոյ իրաց մերձեցաւ 'ի նա՝ պատմեաց առաջի ամ ժողովրդեանն. և թէ ո՞պ բժշկեցաւ առժամայն։ Եւ ասէ. քաջալերեաց դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ, երթ 'ի խաղաղութի։ Եւ մինչդեռ նա խօսէր, գայ ոմն 'ի տանէ ժողովրդապետին՝ և ասէ ցնա. մեռաւ դուստրն քո, մի՛ ինչ աշխատ առներ զդա։ Լսեալ Յն իբրև լուաւ, պատասխանի ետ նմա՝ և ասէ. մի՛ երկնչիր, միայն հաւատա՛՝ և կեցցէ։ Եւ մտեալ 'ի տունն՝ ոչ զոք եթող մտանել, բայց միայն զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս, և զհայր մանկանն և զմայր նր։ Լային ամենեքեան՝ և կոծէին զնա։ Եւ նա ասէ. մի՛ լայք զի չէ մեռեալ՝ այլ ննջէ։ Եւ նոքա ծաղր առնէին զնա, զի գիտէին թէ մեռաւ։ Եւ նր հանեալ զամենեսին արտաքս, կալաւ զձեռանէ նր՝ բարբառեցաւ և ասէ. արի՛ կա՛ց մանո՛ւկ դու։ Եւ դարձաւ ոգի նր, և կանգնեցաւ վաղվաղակի. և հրամայեաց տալ նմ՞ ուտել։ Եւ զարմացան ծնողքն նր։ Եւ նա պատուիրէր մի՛ ումեք ասել՝ որ ինչ եղևն։ 57։

ՎԵՊ. Խնդրեսցուք։ Կեցո՛։ ԵՂ. ՎՐՈՒՄ ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Առաջին Պողոս Հոմի։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. 193։

Եպիսկոպոս ըստ Պողիկարպոսի։ Յ. 16։

Տէրն մեր Յս Քս ասէ.

Ամհաւասիկ ես առաքեմ զձեզ իբրև զոչխարս 'ի մէջ գայլոց. եղերուք այսուհետև խորագէտք իբրև զօձս, և միամիտք իբրև զաղաւնիս։ Զգոյշ լինիջիք 'ի մարդկանէ. զի մատնեսցեն զձեզ յատեանս. և 'ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ։ Եւ առաջի դատաւորաց և թագաւորաց տանիցին զձեզ վասն իմ 'ի վկայութիւն նոցա, և հեթանոսաց։ Այլ յորժամ մատնիցեն զձեզ, մի հոգայցէք՝ թէ ո՞ւր կամ զի՞նչ խօսիցիք. զի տացի ձեզ 'ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք։ Զի ոչ եթէ դուք իցէք՝ որ խօսիցիքն, այլ Հոգին Հօր ձերոյ՝ որ խօսիցի 'ի ձեզ։ Մատնեսցէ եղբայր զեղբայր 'ի մահ, և հայր զորդի. և յառնիցեն որդիք 'ի վերայ հարց՝ և սպանանիցեն զնոսա։ Եւ եղիջիք ատելեալք յամենեցունց վասն անուան իմոյ. իսկ որ համբերեսցէ 'ի սպառ, նա կեցցէ։ Եւ յորժամ հալածիցեն զձեզ 'ի քաղաքիս յայսմիկ՝ փախիջիք յայլ. և եթէ յայնմանէ հալածիցեն զձեզ՝ փախիջիք 'ի միւս։ Ամէն ասեմ ձեզ՝ ոչ սպառեսջիք զքաղաքս Իսրայելի, մինչև եկեսցէ որդի մարդոյ։ Ոչ է աշակերտ առաւել քան զվարդապետ, և ոչ ծառայ քան զտէր իւր։ Հա՛ատ իցէ աշակերտին՝ եթէ եղիցի իբրև զվարդապետ իւր, և ծառային՝ իբրև զտէր իւր։ Եթէ զտանուտէրն բէեղզեբուղ կոչեցին, ո՞րչափ ևս առաւել զընտանիս նո՛ր։ Մի՛ այսուհետև երկնչիցիք 'ի նոցանէ. զի ոչ ինչ է 'ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ ծանիցի։ Զոր ասեմ ձեզ 'ի խաւարի՝ ասացէք 'ի լոյս. և զոր լսէք յունկանէ՝ քարոզեցէք 'ի վերայ տանեաց։ Եւ մի երկնչիք յայն-

ցանէ՝ որ սպանանեն զմարմին, և զոգի ոչ կարեն սպանանել. այլ երկերուք դուք առաւել յայնմանէ՝ որ կարօղն է զոգի և զմարմին կորուսանել 'ի գեհենի։ Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանգի միոջ վաճառին, և մի 'ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց Հօր ձերոյ։ Այլ ձեր և ՝ամ իսկ հեր գլխոյ թուեալ է։ Այս արդ՝ մի երկնչիցիք՝ զի լաւ էք քան զբազում ճնճղուկս։ Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցից և ես զնմանէ առաջի Հօր իմոյ որ յերկինսն է։ Այս որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս է։ Մի համարիք եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր. ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր։ Զանգի եկի քակել զայր 'ի հօրէ իւրմէ, և զդուստր 'ի մօրէ իւրմէ, և զհարսն 'ի սկեսրէ իւրմէ։ Այս թշնամիք առն ընտանիք իւր։ Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ արժանի. և որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի։ Այս որ ոչ առնու զխաչ իւր՝ և գայ զկնի իմ, չէ ինձ արժանի։ Որ գտանէ զանձն իւր, կորուսցէ զնա՝ և որ կորոյս զանձն իւր վասն իմ, գտցէ զնա։ Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, և որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ։ Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի՝ զվարձս մարգարէի առցէ. և որ ընդունի զարդար յանուն արդարոյ՝ զվարձս արդարոյ առցէ։ Այս որ արբուսցէ միում 'ի փոքրըկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն՝ յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ. ոչ կորուսցէ զվարձս իւր։ 42։

Մէսէրի Յարութիւն Ռկ։ Յարոպ. Ասասցուք։

Հոմէարդի Ռկ։

Աւաւօտեա՜ն ս՝ք կանայք հանդե՜ր ի՛ւղով և խընկով. եկի՛ն ի՝ ս՝ք գերեզմանն. ե՛ւ ո՞՛ղբա-

լով խընդրէին զանմա՞հ փառաց Թագաւորն։ Փառք Հօր։ Եւ ի ձայնէ հրեշտակին զբա՞րձանցն տրրտմագեանցք. առաւօտեան սքանայք. զի՞ խընդրէք ըզկենդանին ընդ մեռեալս. յարեա՞ւ փառաց Թագաւորն։ Այժմ և միշտ։ Աչքասէր ս՝ք կանայք փութա՞ցարուք հետևեալ. պատմող լինել Պետրոսի՝ եւ Յո՛վհաննու սիրելւոյ. յարեա՞ւ փառաց Թագաւորն։

Աբեղեան Սաղմոս ՃՀ։ Որհնեցէք զԱ. 197։

Ա-Էպոլոն ըստ Մարկոսի։ Գ. 10։

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ

Եւ իբրև եղև առանձինն՝ հարցին ցնա, որ զնովաւն էին աշակերտաքն հանդերձ՝ զառակսն։ Եւ ասէ ցնա. ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան Աստուծոյ, բայց նոցա որ արտաքինքն են՝ ամենայն առակաքն լինի. զի տեսանելով տեսցեն՝ և մի տեսցեն, և լսելով լուիցեն՝ և մի իմասցին. զի մի երբէք դարձցին՝ և թողցի նոցա։ Եւ ասէ ցնոսա. ոչ գիտէք զառակս զայս, և զիա՞րդ զամենայն առակսն գիտիցէք։ Որ սերմանէն՝ զբանն սերմանէ։ Եւ նոքա են որ առ ճանապարհաւն, ուր բանն սերմանի. և յորժամ լսեն զնա, գայ սատանայ՝ և հանէ զբանն սերմանեալ 'ի սիրտս նոցա։ Եւ նոքա են որ յապառաժին սերմանեցան. որք յորժամ լսիցեն զբանն, վաղվաղակի խնդութիւ ընդունին. և զի ոչ ունին արմատս յանձինս, այլ առ ժամանակ մի են. ապա 'ի հասանել նեղութեան կամ հալածման վասն բանին, վաղվաղակի գայթագղին։ Իսկ որ 'ի մէջ փշոցն սերմանեցան՝ նոքա են, որ իբրև զբանն լսեն, և հոգք աշխարհիս և պատրանք մեծութեան մտանեն, և հեղձուցանեն զբանն՝ և անպտուղ լինի։ Եւ նոքա են որ յերկիրն բարիոք սերմանեցան,

ողք լսեն զբանն՝ և ընդունին, և տան պտուղ՝ ընդ միոյ երեսուն՝ և ընդ միոյ վաթսուն՝ և ընդ միոյ հարիւր։ 20։

ՎԵՊ. Խնդրեսցուք։ Կեցո։ Ալ. Թագաւոր։

Գ. ԵՍՔՍՔ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն գ։

ՕԳՆԱԿԱՆ ընդունելի եղև իմ տէր. 168։

Ալելուիա Յարութիւն գ։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Ռկ։

Ո՞ր յերկնայի՛ն զինուորութե՛ցըդ միշտ երկրապագի՛ս Ք՛ն թագաւո՛ր. ընդ հո՛ր եւ ե՛ւ հոգւոյն. օրհնեա՛լ ես տէր Ա՛ստ հարցո՛ւն մերոց։ Ո՛ր խոնարհեցա՛ր յանձա՛ռ փառաց ե՛կեալ իշխանութի՛ւն ի մահ խաչին. դըղե՛ըդեցա՛ն դի՛ժոխք. յա՜՛հեղ փառաց քո՛ց. օրհնեա՛լ ես տէր Ա՛ստ հարցո՛ւն մերոց։ Ա՛ւ հրաշափա՛ռ քո՛ յարութի՛ւնըդ կենագործեցեր զմե՛ս զմեղաց ըզմեռեալս. եւ համբարձա՛ր փառաւ՛ք ի յե՛՛ր-կինս. օրհնեա՛լ ես տէր Ա՛ստ հարցո՛ւն մերոց։

Գ. Ը՛զտէր. Ը՛զբ՛ն թագաւորըն քաղցրաձա՛յն երգով օրհնեցէ՛ք եւ բարձր ա՛ղաղակ՛՛ք ըզնա յաւիտեա՛ն։ Փառք հօր և։ Ո՛ր պատուա՛կան խաչելութեամբ հրաշագործեա՛ց ըզփրկութի՛ւն յաւիտենի՛ց ներելեցելոցն. քաղցրաձա՛յն երգով օրհնեցէ՛ք եւ բարձր ա՛ղաղակ՛՛ք ըզնա յաւիտեա՛ն։ Այժմ և միշտ։ Ո՛յարուցեա՛լն իշխանութեամբ զփառակի՛ց

Հօր և սրբ Հոգւոյն. ընդ վեցթեւեանն սրովբէա-
գունդ դասս. գովեցէք եւ բարձր արարէք ըզնա
յաւիտեան։

ՄԷՋՏՈՒՈՅԷ ՌԿ։

Ըզքեզ Աստծին որ վերօրհնիս ի զօրաց հրեշ-
տակաց. ազգ մարդկան կենդանեաց մեծացուցա-
նեմք։ Փառք Հօր։ Ըզքեզ բնակ հրեղէն աթոռ
թեանն. յիմանալի զօրացն երանեալ. ազգ մարդ-
կան կենդանեաց մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։
Ըզքեզ մայր Անմանուէլի. մարգարէին յառաջ
գուշակեալ. ազգ մարդկան կենդանեաց մեծա-
ցուցանեմք։

ՈՂՈՐՄԵԱ Ռկ։

Ողորմեա՛ ինձ Աստո՛ւած ի մեղա՛ւորմեա։ Որ
ի յերկնից իջեր Սա՛նդ Աստո՛ւած եւ վասըն
մե՛ր մարմնացար ի սրբոյն կուսէն. ողորմեա
ինձ Աստո՛ւած ի մեղա՛ւորմեա։ Որ ի խաչին
տարածեցեր զանարատ բազուկըս քո՝. եւ վասըն
մե՛ր հեղեր զարիւն քո՝ սուրբ. ողորմեա՛ ինձ
Աստո՛ւած ի մեղա՛ւորմեա։ Փառք Հօր։ Որ ի գե-
րեզմանի՛ եդար անապական և յարուցեա՛լ նո-
րոգեցեր զաշխարհս. ողորմեա՛ ինձ Աստո՛ւած ի մ
եղա՛ւորմեա։ Այժմ և միշտ։ Որ ի յերկինս համ-
բարձար ամենակարող. և ընդ աջմէ՛ Հօր նստար
յամենայն փառաց. ողորմեա՛ ինձ Աստո՛ւած ի մ-
եղա՛ւորմեա։

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՆՑ Ռկ։

Վասն յարութեանդ փառաբ վայելէ երկայնամիտ
Տէր։ Փառք Հօր։ Օրհնեալ է քո յարութիւնդ

Աստուած որ ըզմահ մահու ծանուցեր քոյին կանմաւոր մահուամբդ. քո յարութեանդդ փառքք վայելէ երկայնամիտ տէր: Այժմ և միշտ: Զոչումն ահեղ հրեշտակին ի վերին. որ քարոզէր առեալ կանայսն յարեաւ տէրն ի մեռելոց. քո յարութեանդդ փառքք վայելէ երկայնամիտ տէր:

Առաւօտու Էջք Յուրբաթ Զ: Քրիստ. Ասացուք:

Առաքելական ընթերցուածք: թ. 1:

Տէն մերոյ Յեսի Քրիստի

Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն, ետ նոցա զօրութիւն և իշխանութիւն 'ի վերայ ամենայն դիւաց, և բժշկել զհիւանդութիւնս: Եւ առաքեաց զնոսա քարոզել զարքայութիւն Աստուծոյ, և բժշկել զախտաժէտս: Եւ ասէ ցնոսա. մի ինչ բառնայք 'ի ճանապարհս, մի գաւազան և մի մախաղ, մի հաց և մի արծաթ, մի երկուս հանդերձս ունիցիք: Եւ յորս տուն մտանիցէք՝ անդ ագջիք, և անտի գնայցէք: Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յորժամ ելանիցէք 'ի քաղաքէն յայնմանէ, զփոշի ոտից ձերոց թօթափեսջիք 'ի վկայութիւն նոցա: Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս և ընդ գեօղս՝ աւետարանէին, և բժշկէին ընդ ամենայն տեղիս: Լուաւ Հերովդէս չորրորդապետ զգործսն ամենայն. և զարմանայր վասն ասելոյն յոմանց, թէ Յովհաննէս յարեաւ 'ի մեռելոց, և յոմանց՝ թէ Եղիա յայտնեցաւ, և յայլոց՝ թէ մարգարէ ոմն յառաջնոցն յարեաւ: Ասէ Հերովդէս. զՅովհաննէս ես գլխատեցի. իսկ սա ո՞վ իցէ՝ զորմէ զայսպիսի իրս լսեմ. և խնդրէր տեսանել զնա: Դարձեալ առաքեալքն, և պատմեցին նմա զամենայն զոր արարին: Եւ առեալ զնոսա՝ խուսեաց առանձինն 'ի տեղի անապատ քաղաքի միոյ, որում անուն էր Բեթսայիդա: Եւ ժողովուրդքն իբրև գիտացին, գնացին զհետ նոցի. և ընկալեալ զնոսա՝ խօսէր ընդ նոսա վասն արքայութե

Ամ, և որոց պէտք էին բժշկութիւն բժշկէր։ Եւ օրն սկսաւ տարաժամել. մատեան երկոտասանքն և ասեն ցնա. արձակեա զժողովուրդսդ, զի երթեալ շուրջ 'ի գիւղսն և յագարակս՝ հանգիցեն, և գտցեն կերակուր. զի աստ յանապատ տեղւոջ եմք։ Ասէ ցնա. դո՛ւք տուք դոցա ուտել։ Եւ նոքա ասեն. ոչ գոյ մեր աւելի քան զհինգ նկանակ և զերկուս ձկունս, բայց եթէ երթիցուք գնեսցուք բաւական ժողովրդեանդ կերակուր։ Որանզի էին արք իբրև հինգ հազար։ Ասէ ցաշակերտսն. բաղմեցուցէք զդոսա դասս դասս՝ յիսուն յիսուն։ Եւ արարին այնպէս, և բազմեցուցին զամենեսեան։ Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց և եբեկ՝ և տայր ցաշակերտսն արկանել ժողովրդեանն։ Կերան և յագեցան ամենեքեան. և բարձին զնշխարս կոտորոցն՝ երկոտասան սակառի։ 17։

ՎԵՊ. Լսնդրեսցուք։ Կեցո՛։ Աղ. Որում ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Աւետեան Սաղմոս ԿԲ։

Ընծ ողորմեա՛ մեզ և օրհնեա՛ զմեզ. 229։

Աւետարան ըստ Մատթէոսի։ ԺԱ. 1։

Տէրն մեր Յն Վն

Եւ եղև իբրև կատարեաց Յն զպատուէր երկոտասանից աշակերտացն իւրոց, գնաց անտի քարոզել և ուսուցանել 'ի քաղաքս նց։ Լսակ Յովհաննէս իբրև լուաւ 'ի բանտին զգործսն Քրիստոսի, առաքեաց 'ի ձեռն աշակերտացն իւրոց, և ասէ ցնա. դո՞ւ ես՝ որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք։ Պատասխանի ետ Յն՝ և ասէ ցնս. գնացէք պատմեցէք Յովհաննու, զոր լուայք և տեսէք։ Կոյրք տեսանեն, կաղք գնան, բորոտք սրբին, և խուլք լսեն, և մեռեալք յառնեն, և աղքատք աւետա-

րանին։ Այլ երանեալ է՝ որ ոչ գայթակղեսցի յիս։ Այլ իբրև նոքա գնացին, սկսաւ Յն ասել ցժողովուրդսն զՅովհաննէ. զի՞նչ ելէք տեսանել յանապատին, եղէգն շարժուն 'ի հողմոյ։ Այլ զի՞նչ ելէք տեսանել, մարդ 'ի հանդերձս փափկուն զարդարեալ. ահաւասիկ որ զփափուկսն զգեցեալ են՝ 'ի տունս թագաւորաց են։ Այլ զի՞նչ ելէք տեսանել. մարգարէ. այո՝ ասեմ ձեզ, և առաւել ևս քան զմարգարէ։ Զի նա է՝ վասն որոյ գրեալն է. ահա ես առաքեցից զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց՝ որ պատրաստեսցէ զճանապարհս քո առաջի քո։ Ամէն ասեմ ձեզ՝ չէ յարուցեալ 'ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս մկրտիչ. բայց փոքրիկն յարքայութեան երկնից մեծ է քան զնա։ Բայց յաւուրցն Յովհաննու մկրտչի մինչև ցայժմ՝ արքայութիւն երկնից բռնադատի, և բռունք յափշտակեն զնա։ Զանազի՝ եամ օրէնք և մարգարէք մինչև ցՅովհաննէս մարգարէացան. և եթէ կամիք ընդունել՝ նա է Եղիա՝ որ գալոցն է։ Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ։ Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս. նման է մանկտուոյ՝ որ նստիցին 'ի հրապարակս, կարդայցեն զընկերս իւրեանց, և ասիցեն. փողս հարաք ձեզ՝ և ոչ կաքաւեցէք, ողբացաք ձեզ՝ և ոչ կոծեցարուք։ Եկն Յովհաննէս, ոչ ուտէր և ոչ ըմպէր. և ասեն՝ դև գոյ 'ի նմա։ Եկն որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ. և ասեն, ահա այր կերօղ և արբեցօղ, բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց. և արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց։ Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն՝ յորս եղեն բազում զօրութիւնք նր, և ոչ ապաշխարեցին։ Վայ քեզ Քորազին, վայ քեզ Բեթսայիդա. զի եթէ 'ի Տիւրոս և 'ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն՝ որ 'ի ձեզ եղեն, վաղու ևս արդեօք խորգով և մեխրով ապաշխարեալ էր։ Բայց ասեմ ձեզ. դիւրագոյն լիցի երկրին Տիւրոսի և Սիդոնի

յաւուրն դատաստանի՝ քան ձեզ։ Եւ դու Կա-
փառնաում, մի մինչև յերկինս բարձրասցիս. այլ
մինչև 'ի դժոխս իջցես. զի եթէ 'ի Սոդոմ եղեալ
էին զօրութիքն՝ որ 'ի քեզ եղեն, ապաքէն կային
ևս մինչև ցայսօր։ Բայց ասեմ ձեզ՝ եթէ երկրին
Սոդոմացւոց դիւրագոյն լիցի յաւուրն դատաստա-
նի՝ քան քեզ։ 24։

Մէաւելի Գալիլեան։

Օրհնեալ որ գաս յանուն Տ՝ն, օրհնեալ որ գալոց ես։
Տէր Ա՛ծ մեր երևեցաւ մեզ. արարէք տօնս ուրա-
խութեամբ կանխաւ՝ մինչև յանկիւնս սեղանոյ։

Ժամէտքին Ա.Զ։

Ո՛ր վերօրհնիս յանթոռիս քերովբէի՛ց. ի վերայ
նըստիլ յաւանակի՝ հաճեցար. բարեբանեալ ո՛ր
եկի՛ր դ ի կենցո՛ւցանել։ Ուստի և մեք զյաղթական
օրհնութեանցն ըզձայն. մատուցանե՛մք քեզ թա-
գաւո՛ր փառաց ընդ տղայն օրհնաբանելով. բարե-
բանեալ ո՛ր եկի՛ր դ՝ կենցո՛ւցանել։ Ո՛վսանանա՛ ի
բարձունս ալէլո՛ւիա. բարեբանեա՛լ եկեա՛լ ա-
նուամբ Տ՝ն ալէլո՛ւիա. և օ՛րհնութի՛ւն ո՛ր գալո՛ցդ
ես անուամբ Տ՝ն ալէլո՛ւիա։

Այսօր զանընկի՛զելն Ռա՛ն ո՛ր յանթոռ փառաց
ընդ Հօր յերկրի՛ երևեալ տեսա՛ք. քրովբէական
ձայնիւ օ՛րհնե՛ացո՛ւք. օ՛րհնեա՛լ եկեա՛լ ա՛նուա՛մբ
Տեառն։ Փառք Հօր։ Այսօր յաւանա՛կ քերովբէ՛
և տընդա՛ք երբայեցւոց բարեբանեն. օ՛րհնութի՛
որդւո՛յ Դաւթի՛. օ՛րհնեա՛լ եկեա՛լ ա՛նուա՛մբ Տեառն։
Ա.յժմ և։ Այսօր զուարճանա՛ն տիեզերքք գալըս-
տեամբ Ա՛ծորդւո՛յն յԵրուսաղէմ. և գոչէ՛ին հընչմամբ
երգով. օ՛րհնեա՛լ եկեա՛լ ա՛նուա՛մբ Տեառն։

Էջիսկոպոս Սարգիս Զ։ Յնծացէք առ Աստ. 233։

Եպիսկոպոս ըստ Մարկոսի։ Դ. 21։

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍ ՔՍ

Եւ ասէ ցնա. Մի թէ գայ ճրագ, զի ընդ գրուանաւ դնիցի կամ ընդ մահճաւք. ոչ ապաքէն 'ի վերայ աշտանակի դնիցի։ Զի չէ ինչ 'ի ծածուկ՝ որ թէ ոչ յայտնեսցի. և ոչ եղև ինչ գաղտնի, եթէ ոչ 'ի յայտ գայցէ։ Եթէ ոք ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ Եւ ասէ ցնոսա. տեսէք զինչ լսէքդ, և յաւելցի ձեզ որոց լսէքդ։ Որով չափով չափէք՝ նովին չափեսցի ձեզ։ Որ ոք ունիցի՝ տացի նմա. և որ ոչն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի 'ի նմանէ։ 25։

ՔԷՊ. Խնդրեսցուք։ Կեցո՛։ Աղօթք. Ամ.ագաւոր։

ԴԻ. ԱՅԲՔԱՆԱՆ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնո՛ւթիւն Գկ։

ԲՈՒՆՑԷՐԲ ՅԻՍ երգ նոր ձայնիւ ցնծութիւն. 171։

Ամէնայնոցս Յարութիւն Գկ։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Ռկ։

Ո՞նչ սկիզբն Աստ. եւ ամենաշնորհ. որ առաքեցեր զմիածին՝ ո՞ր դիդ քո՞ի փրկութիւն մեզ. օրհնեմք զքեզ Աստ. հարցն մերոց։ Օրհնեալ ի Հօրէ անճառ մտութիւն ի կուսական որովայնէ երեւեալ մարմնով ի փրկութիւն մեզ. օրհնեմք զքեզ Աստ. հարցն մերոց։ Որ ընդ ստին ի քրովբէս և յան-

մարմնոց վերծրհնիս Քրիստոս սրբութեանց ճանիս. համբերելով չարչարանաց ի խաչի՝ն բարձրացա՛ր խորտակեցեր ըզզօրութի մահու. օրհնե՛մք ըզքեզ Ա՛ստ հարցքն մերոց։

Գ. Ո՛զՏէր ամենայն ազգի՛նք զՔե՝ գովեցէք. զյարուցեա՛ն ի գերեզմանէն անապական մարմնով։ Փառք Հօր։ Օ՛քարոզ հրեշտակին լուեա՛լ կանանցն ընթացեա՛լ. պատմէին աշակերտացն ասելով. յարեաւ Ա՛ստ. ամենայն ազգի՛նք զՔե՝ գովեցէք. զյարուցեա՛ն ի գերեզմանէն անապական մարմնով։ Այժմ և միշտ։ Նո՛ւ մեք ընդ նոսին երգակցեա՛լ հանցո՛ւք զօրհնութի՛ն. փրկողին ըզմեզ ասելով յարեաւ Ա՛ստ. ամենայն ազգի՛նք զՔե՝ գովեցէք. զյարուցեա՛ն ի գերեզմանէն անապական մարմնով։

Մեծացուցէ Ռկ։

Սիւն լուսոյ և ամպ հովանի ե՞ր կոյս. որ ցօղեցեր ի մեզ ըզցօղն երկնային. զքեզ բարեբանեմք Ա՛ծածին կոյս։ Փառք Հօր։ Ա՛նկէզ մորենի եւ սրովբէ հողեղէն ե՞ր կոյս. քանզի պըտուղըն կենաց ի քէն տրւաւ մեզ. զքեզ բարեբանեմք Ա՛ծածին կոյս։ Այժմ և միշտ։ Ա՛նիծից լուծիչ և քաւիչ մեղաց ե՞ր կոյս. որ զանտանելին յէից ի գիրկս քո բարձեր. զքեզ բարեբանեմք Ա՛ծածին կոյս։

Գնչերեկ Զատիկն ասա. Լուսապայծառ։

Ողբերգ Ռկ։

Ինչեր տ՛ր եւ մարմնացար ի կուսէն. եւ զհողեղէն բընութիւնս ազատեցեր ի մեղաց։ Նչեր տ՛ր բեւեռ-

ռեցար ի խաչին. ըզմեռանիլ յանձն առեր կենդանատու մեռելոց։ Փառք Հօր։ Այդար տ՛ր ի նորափոր ի վիմի. և մատանեաւ կընքեցար գանձիդ կենաց աշխարհի։ Այժմ և միշտ։ Յաւրեար տէր աւերեցեր ըզդրժոխս. ի յերկինս համբարձար եւ ընդ աջմէ Հօր նըստար։

Տէր յերկինից։

Քրիստոս յարեաւ ի մեռելոց։ Ընդ արշալոյսն առաւօտուն կանխեալ կանանցն ի գերեզմանն ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց։ Փառք Հօր։ Եւ առ նոսա ասէր հրեշտակն. զի՞ խընդրէք ըզկենդանին ընդ մեռեալս. Քրիստոս յարեաւ ի մեռելոց։ Այժմ և միշտ։ Փութացարուք ով սքանչելք եւ պատմեցէք աշակերտացն ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

Առաւօտու երգ Յարութեան։ Քրիստոս։ Ասացուք։

Առաւօտու Սաղմոս։

Կգ. Յոյց մեզ տէր։ Փխ. Հաճեցար տէր. 191։

Առ Եփեսոսն ըստ Ղուկասու։ Թ. 18։

Տն մերոյ Յեսի Քրիստի

Եւ եղև 'ի կալն նոր յաղօթս առանձինն, էին ընդ նմա և աշակերտքն նոր. եհարց զնոսա և ասէ. զո՞ ոք ասեն զինէն ժողովուրդքն թէ իցեմ։ Եւ նոքա պատասխանի տուեալ ասեն. զՅովհաննէս մկրտիչ, և այլք զԷղիա, իսկ այլք թէ մարգարէ ոք յառաջնոցն յարեաւ։ Ասէ նոսա. դուք զո՞վ ոք ասէք զինէն, թէ իցեմ. պատասխանի ետ Պետրոս և ասէ. զՔրիստն Աստուծոյ։ Նա սաստեաց 'ի նոսա, և պատուիրեաց մի ումեք ասել զայն. և ասէ, թէ պարտ է որդւոյ մարդոյ բազումս չարչարել և անարգել 'ի քահանայապետից և 'ի ծերոց և 'ի դպրաց, և

սպանանել՝ և յերիր աւուր յառնել։ Եւ ասէր առ ամենեսին. եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն՝ և առցէ զխաչ իւր հանապազ՝ և եկեսցէ զհետ իմ։ Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա, և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ կեցուսցէ զնա։ Զի՞նչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհ շահեսցի, և զանձն իւր կորուսցէ կամ տուժեսցի։ Զի որ ամօթ համարեսցի զիս և զբանս իմ, զնա և որդի մարդոյ յամօթ արասցէ՝ յորժամ գայցէ փառօք իւրովք՝ և Հօր՝ և հրեշտակաց սրբոց։ Բայց արդարև ասեմ ձեզ, եթէ են ոմանք 'ի դոցանէ որ այդր կան՝ որք մի ճաշակեսցեն զմահ, մինչև տեսցեն զարքայութի Աստ։ Եւ եղև յետ այսց բանից իբրև աւուրք ութ, առեալ զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս՝ եկ 'ի լեառն կալ յաղօթս։ Եւ 'ի կալ նմա յաղօթս՝ եղև տեսիլ երեսաց նր այլակերպ. և փոխեցաւ հանդերձ նր՝ և եղև սպիտակ փայլուն։ Եւ ահա արք երկու խօսէին ընդ նմա. որ էին Մովսէս և Եղիա, երևեալ փառօք. և ասէին զելիցն նր՝ զոր կատարելոց էր յԵրուսաղէմ։ Իսկ Պետրոս՝ և որ ընդ նմայն էին՝ ծանրացեալք 'ի քնոյ՝ զարթեան, տեսին զփառսն նր՝ և զերկուս արսն որ կային առ նմա։ Եւ եղև 'ի մեկնելն նց 'ի նմանէ, ասէ Պետրոս ցՅն. վարդապետ՝ բարւոք է մեզ աստ լինել, և արասցուք երիս տաղաւարս, մի քեզ՝ և մի Մովսէսի՝ և մի Եղիայի. և ոչ գիտէր զինչ խօսէր։ Եւ իբրև զայս ասաց, եկն ամպ և հովանի եղև 'ի վրն նց. և երկեան 'ի մտանելն նց ընդ ամպովն։ Զայն եղև յամպոյն և ասէ. դա է որդի իմ ընտրեալ, դմա լուարուք։ Եւ ընդ լինել բարբառոյն՝ գտաւ Յն միայն. և ինքեանք լռեցին, և ոչ ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ և ոչ ինչ՝ յորոց տեսին։ 36։

Եր Նորաստեղծեալ։

Գ. Խնդրեսցուք։ Կեցո։ Աղ. Գ. Ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Առաջին Պողոս Ճիսթ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. 193։

Ա-Է-պոլսոյ ըսպ Պոպլէոսի։ ԺԱ. 25։

Տէրն մեր Յս Քս

Յայնմ ժամանակի պատասխանի ետ (Յս) և ասէ. գոհանամ զքէն Հայր՝ Տէր երկնի և երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց և 'ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց։ Այո՛ Հայր. զի այսպէս հաճոյ եղև առաջի քո։ Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի Հօրէ իմմէ։ Եւ ոչ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր, և ոչ զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի, և ում Որդին կամիցի յայտնել։ Եկայք առ իս ամ վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։ Առէք զլուծ իմ 'ի ձեզ, և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց։ Զի լուծ իմ քաղցր է. և բեռն իմ փոքրագի։ 30։

Ե- Ելանեն խաչն ի ա-Է-պոլսոյ- ի ամ պարպ-ՀՆ 'ի պ-ոլս, ասելով Հ-ոլոյն խաչն յա-ա-ս Հայնէն Գ.Կ։

Ո՛վ քառաթեւ լուսածին գերապանծ նի՛շ կառուցող կենացն ամենի՛ց. միշտ բազկատարած առ քեզ ի՛ն։ Բառակուսի՛ աղանց հովանի և պահապա՛ն ի՛ յերս և ի մուտս. փրկութի՛ի յայսո՛ց եւ պարի՛սպ ամրութե՛։ Գրոշմ ըզգայութե՛ եւ կնի՛ք ի դէմն ամենից. դու և յաւ՛ծայի՛նսըն կատարի՛ս խորհո՛ւրդ. յորմէ՛ արե՛գակնայի՛ն փայլեն ճառագայթք։

Ա-ոպ Պողոս Գ։

Կ3. Աշանեցաւ։ Փս. Ի կարդալ իմում. 195։

Ե- Խրոմն ա-Է-պոլսոյ խաչ-ը-ի՛ 'ի Հայնէն։

Ա-Է-պոպոն ըստ Ղ-ուկասու։ ԻԳ. 32։

Կ՝ասն խաչելութեան Տն մերոյ Յեսի Քրիստոսի։

Ընդ ին և այլ երկուս չարագործս՝ սպանանել ընդ նմա։ Իբրև հասին 'ի տեղին՝ կոչեցեալ գագաթն, անդ հանին զնա 'ի խաչ. և զչարագործսն զոմն ընդ աջմէ՝ և զոմն ընդ ձախմէ խաչեցին։ Եւ Յեսու ասէ. Հայր՝ թող դոցա, զի ոչ գիտեն՝ զինչ գործեն։ Եւ 'ի բաժանել զհանդերձս նր, արկին վիճակս։ Եւ կայր ժողովուրդն հայեցեալ. անդրանիկին զնա իշխանքն հանդերձ նոքօք՝ և ասէին. զայլս ապրեցոյց, ապրեցուսցէ և զանձն՝ եթէ դա է Քրիստոս Որդի Աստուծոյ ընտրեալն։ Այպն առնէին զնա և զինուորքն, եկեալ առաջի մատուցանէին նմա քացախ. և ասէին. եթէ դու ես թագաւորն Հրէից՝ փրկեա զանձն քո։ Եւ էր գիր գրեալ 'ի վր նր՝ յունարէն և դաղմատերէն և եբրայեցերէն գրով, եթէ սա է արքայն Հրէից։ Իսկ մի ոմն 'ի կախելոց չարագործացն հայհոյէր զնա, և ասէր. ո՞չ դու ես Քրիստոս՝ փրկեա զանձն քո և զմեզ։ Պատասխանի ետ ընկերն սաստելով նմա և ասէ. չերկնչի՞ս դու յԱստուծոյ՝ զի 'ի նմին պատժի կաս։ Եւ մեք յիրաւի, զի արժանի՝ որոց գործեցաքն՝ առնումք զհատուցումն. և սա ապիրատ ինչ ոչ գործեաց։ Եւ ասէ ցՅեսու. յիշեա զիս Տր՝ յորժամ գայցես արքայութիւնքդ։ Եւ ասէ ցնա Յեսու. ամէն ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես 'ի դրախտին։ Եւ էր իբրև վեցերորդ ժամ. և խաւար եղև 'ի վր ամենայն երկրի մինչև ցիններորդ ժամ. խաւարեցաւ արեգակն։ Եւ հերձաւ վարագոյր տաճարին ընդ մէջ։ Եւ կարդաց Յեսու 'ի ձայն մեծ՝ և ասէ. Հայր՝ 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ։ Այս իբրև ասաց, եհան զոգի։ 46։

Ա- պեռոնոգրէն ղանդասպոնն։

Քրիստ. Մի խաչիս։ Ադամ. Պահպանեա։

Ա- 'ի պոռնոնն ժամանակ սրիսոգն։ Եւ ևս խա-

զաղուԹԵ զՏՐ աղա։ Ռահանայն. ՕրհնուԹի և փառք Հօր։

Ե- ակսանին Լսոնարհեցո Ե- Ամբրեցո։

ՍԵՍԵԳԻ ՅՈԳՈ-ԼԵ Գ.Կ։ Ռոգոզ. Ամսացուք։

Հոմքոգյի Գ.Կ։

Օ՜ծային ըզգերեզմանաւըն բոլորեա՛՝՝Լ գամբք հրեշտակաց տեսանէի՛ն ըզՏէրըն յա՛՝՝ՄՄ րուցեալ ի գերեզմանէ՛ն։ Փառք Հօր։ Ա՛ծամէր կանայքն եկի՛ն ի գերեզման փըրկչի՛՝ՄՄ՝ն անո՛՝՝շ ի՛ւղոք եւ խընկօ՛ք. յօ՛ծանեա՛՝՝ՄՄ՝Լ զմարմինըն տէրո՛ւնական։ Ամէն և միշտ։ Լո՛ւսապայծա՛ռ հրեշտակն. Ներ-տէր ի վը՝ վի՛մի՛՝՝ՄՄ՝ն աւետարանէր կանանցն. յարեա՛՝՝ՄՄ՝Լ փըրկիչըն տիեզերաց։

Ամէն Սողոմ ՃՀ։ Օրհնեցէք զԱ՛ծ. 197։

Ամ-Եպիսկոպոսն ըսաց Մարկոսի։ Գ. 26։

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԵ ՌԵ

Ե՛ւ ասէր. այսպէս է արքայութիւն Ամ՝. որպէս զի այր մի արկանիցէ սերմանիս յերկիր. և ննջիցէ և յառնիցէ զցայգ և զցերեկ. և սերմանիքն բուսանիցին և աճիցեն. և նա ոչ գիտէ՝ թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ զխոտն՝ և ապա զհասկն, ապա զցորեանն ատոք 'ի հասկին։ Ամէն յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքի մանգաղ. զի հասեալ են հունձք։ Ե՛ւ ասէր. ո՞ւմ նմանեցուսցուք զարքայութիւնն Ամ՝, կամ որո՞վ առակաւ առակեսցուք զնա։ Որպէս հատն մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան զամ սերմանիս՝ որ են յերկրի. և յորժամ սերմանիցի, բուսանի և լինի մեծ քան զամ բանջար, և արձակէ ոստս մեծամեծս, մինչև բաւական լինել ընդ հովանեաւ նր թռչնոց երկնից բնակել։ Ե՛ւ այնպիսի առակօք խօսէր ընդ նե զբանն, ոգ կարող լինէին

լսել. և առանց առակի ոչ ինչ խօսէր ընդ նս, բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամ: 34:
ՏԷՊ. Խնդրեսցուք: Կեցո: Ողորմ. Մատաւոր:

Դ. ԿԻՐԱԿՈՍ ԵՊԻՍԿՈՊԻ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն:

ՕՐՀՆԵՍՑՈՒՐ զՏՐ և զյաղթող զօրութիւն. 175:
Ալելուիա Յաւելութիւն:

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հայց Բկ:

Ո՛ր զծառայի ըզկերպարանս յանձն առեր վասն մեր. եւ խոնարհեալ քո կամաւ ի մեր բնութիւնս. օրհնեալ ես Տի՝ Ա՛ծ հարցն մերոց: Ո՛ր խաչեցար հաճութի՛ւ հօր միածին Որդի՛. և թաղմամբն երեքօրեայ ըզբնութիւն՝ մահու լուծեր. օրհնեալ ես Տի՝ Ա՛ծ հարցն մերոց: Ո՛ր փառաւոր յարութի՛ւնդ քո՛ կանգնեցեր ըզմահացեալսն. ի յերկինս համբարձար ընդ աջմէ հօր նստար. օրհնեալ ես Տ՝ի Ա՛ծ հարցն մերոց:

Գ. Ը՝զՏ՝ի օրհնեա՛՛՛ցէ՛՛՛ք եւ բարձր արարէ՛՛՛ք ըզնա յաւիտեան: Փառք հօր: Հրաշալի յարութի՛ւն փրկչին Նորոգեցեալն արարածք. միաբանութի՛ւն՝ օրհնեա՛՛՛ցէ՛՛՛ք եւ բարձր արարէ՛՛՛ք ըզնա յաւիտեան: Ամէն և միշտ: Պոռոզալով սարսեցին դիւոքն տեսանելով ըզթագաւորն անմահ. միաբանութի՛ւն՝ օրհնեա՛՛՛ցէ՛՛՛ք եւ բարձր արարէ՛՛՛ք ըզնա յաւիտեան:

ՄԷԾԱՑՈՒՍՔԷ ՌԿ։

Ո՛ր ողորմեցար ի մեզս ծնեալ մարդկան Հայր երկնաւոր ըստ մարգարէին եւ ետուր բնութեանս այսօր պարգեւ ըզկոյսն սուրբ ըզծնող Որդւոյդ միածնի. մաղթանօք սորա՝ տէր մեզ ողորմեա։ Փառք Հօր։ Ո՛ր ցօղեցեր ի մեզ յամպոյ օրինացս Որդի՛դ այսօր զկոյսն Մարիամ, յորմէ ծընար մարմնով և բարձեր նովաւ ըզմեզս նախաստեղծին Ադամայ. մաղթանօք սորա՝ տէր մեզ ողորմեա։ Այժմ և միշտ։ Ո՛ր մաքրեցեր Հոգիդ սուրբ ըզսիրտ և զարգանդ մօր քո փառակցին. այսօր ամուլ ծնողաց նորին ետուր ըզմայր Բանի՛ն զօրհնիչն Եւայի. մաղթանօք սորա՝ տէր մեզ ողորմեա։

ՈՂՈՐՄԵԱՅ ՌԿ։

Որ ի՛ջեր յերկրնից Բա՛նդ Ա՛ստուած առեր մարմի՛ն ըստ մերոյ բընութեան. վասն՝ յանցանաց նա՝խաստեղծի՛ն ողորմեա՝ մե՛զ Ա՛ստուած։ Փառք Հօր։ Ի՛ խաչին բեւեռեցար կամաւորապէս փրկի՛չ եւ զխոցումն յանձն առեր ի զինուորսն՝ խոյ՛ն. վասն՝ յանցանաց նա՝խաստեղծի՛ն ողորմեա՝ մե՛զ Ա՛ստուած։ Այժմ և միշտ։ Ի՛ գերեզմանի՛ եղար անապականաբար փրկի՛չ եւ զթաղումն յանձն առեր զերեքօրեայ՝ ոյ՛ժ. յարուցեալ լոյս ծագեցար ստուերանի՛ստա՝ծոցս. ողորմեա՝ մե՛զ Ա՛ստուած։

ՏԷՐ ՅԵՐԻՆԷՑ ՌԿ։

Ա՛ռաւօտեան՝ ս՝ը կանանքն հանդե՛՝ր ի՝ւղովք և խընկովք. եկի՛ն ի՝ ս՝ը գերեզմանն. եւ ո՛՝ղբաւով խընդրէին զանմա՛՝հ փառաց թագաւորն։

փառք Հօր։ Այլ ի ձայնէ հրեշտակին զլուա՞ր ճանցան տրրտմագգեանցք. առաւօտեան սքանչելք. զի՞ խընդրէք զկենդանին ընդ մեռեալս. յարեա՞ւ փառաց Թագաւորն։ Այժմ և միշտ։ Ածասէր սքանչելք փո՞ւթա՞ցարո՞ւք հետևեալ. պատմող լինել Պետրոսի՝ եւ Յո՛վհաննու սիրելւոյ. յարեա՞ւ փառաց Թագաւորն։

Ա-ա-օպո- Երգ Յարութեան Դշ։ Ռէպ. Ասասցուք։

Ա-ա-օպո- Սաղմոս Զդ։

Կն. Յոյց մեզ Տէր։ Փխ. Հաճեցար Տէր. 191։

Ա-Էպոլան ըստ Ղուկասու։ Թ. 37։

Տերամբ մերով Յեսու Քրիստոս

Եւ եղև՝ ի վաղիւն մինչ իջանէին նոքա՝ ի լեռնէ անտի, ընդ առաջ եղև նմա ժողովուրդ բազում։ Եւ ահա այր մի՝ ի ժողովրդենէ անտի աղաղակեաց և ասէ. վարդապետ՝ աղաչեմ զքեզ հայեաց յորդի իմ, զի միամօր է ինձ։ Եւ ահա այս հարկանի՝ ի նմա, և յանկարծ գոչէ՝ և զարկուցանէ և թաւալեցուցանէ զնա և փրփրեցուցանէ, և հազիւ մեկնի՝ ի նմանէ խորտակեալ զնա. և աղաչեցի զաշակերտսն քո զի հանցեն զնա, և ոչ կարացին։ Պատասխանի ետ Յս և ասէ. ո՞վ ազգ անհաւատ և թիւր, մինչև յե՞րբ եղէց ընդ ձեզ՝ և անսայցեմ ձեզ. մատո՛ այսր զորդին քո։ Եւ մինչդեռ մատչէր, զարկոյց զնա դևն՝ և շարժեաց։ Սաստեաց Յս այսոյն պղծոյ, և բժշկեաց զմանուկն. և ետ զնա ցհայր իւր։ Եւ զարմանային ամենեքեան՝ ի վերայ մեծամեծացն Աստ։ Եւ՝ ի զարմանալն ամենեցուն՝ ի վր՝ ամի զոր առնէր, ասէ ցաշակերտսն իւր. դի՞ք դուք՝ ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ. զի որդի մարդոյ մատնելոց է՝ ի ձեռս մարդկան։ Եւ նոքա ոչ գիտէին զբանն, և էր ծածկեալ՝ ի նոցանէ՝ զի մի

գիտասցեն. և երկնչէին հարցանել ցնա վՆ բանին պՆՆորիկ։ Ամուտ խորհուրդ 'ի նՆ՝ թէ ո՞ արդեօք մեծ իցէ 'ի նոցանէ։ ՅՆ իբրև ծանեաւ զխորհուրդս սրտից նՆ, առ մանուկ մի՝ կացոյց 'ի մէջ նՆ առ իւր, և ասէ ցնՆ. որ ոք ընկալցի զմանուկս զայս յանուն իմ՝ զիս ընդունի, և որ զիս ընդունիցի՝ ընդունիցի զառաքիչն իմ. զի որ փոքրիկն է յամենեսին 'ի ձեզ՝ նա եղիցի մեծ։ Պատասխանի ետ Յովհաննէս և ասէ. վարդապետ՝ տեսաք զոմն որ յանուն քո դևս հանէր՝ և արգելաք զնա, զի ոչ շրջի ընդ մեզ։ Ասէ ցնՆ ՅՆ. մի արգելուք, զի որ ոչն է ձեր թշնամի՝ 'ի ձեր կողմն է։ 50։

ՎԵՊ. Խնդրեսցուք։ Կեցո՛։ Աղ. Փրկում ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ա-ՈՒՋԻՆ ՍՈՂՄՈՍ ՈՐԽԹ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. 193։

Ա-ԵՊՈՊԱՆ ԸՍՊ ՄՈՊԼԷՈՍԻ։ ԺՐ. 1։

ՏԻՆ մեր ՅՆ ՎՆ

Յայնժամ գնաց ՅՆ ընդ արտորայսն նՆ 'ի շաբաթու. և աշակերտքն նՆ քաղցեան, և սկսան հասկ կորզել և ուտել։ Փարիսեցիքն իբրև տեսին՝ ասեն ցնա. ահաւանիկ աշակերտքն քո գործեն, զոր ոչ է արժան գործել 'ի շաբաթու։ Եւ նա ասէ ցնՆ. ո՞չ իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արար Դաւիթ, յորժամ քաղցեաւն. և որ ընդ նմայն էին։ Օ՞ի՝ մտեալ եմուտ 'ի տունն Աստուծոյ՝ և եկեր զհացն զառաջաւորութեանն. զոր ոչ էր օրէն նմա ուտել, և ոչ՝ որոց ընդ նմայն էին, բայց միայն քահանայից։ Կամ թէ չիցէ՞ ընթերցեալ յօրէնս՝ զի 'ի շաբաթս քահանայքն 'ի տաճարին պղծեն զշաբաթն, և անմեղք են։ Բայց ասեմ ձեզ՝ զի մեծ քան զտաճարն է աստ։ Եւ եթէ գիտէիք զինչ է՝ զողորմութի կամիմ և ոչ զզոհ. ապա ոչ դատապարտէիք դուք զան-

պարտսն։ Զի տէր է շաբաթու՝ որդին մարդոյ։ Եւ գնացեալ անտի ՅՍ եկն 'ի ժողովուրդն նոցա։ Եւ անդ էր այր մի որոյ ձեռն իւր գօսացեալ էր. հարցին ցնա՝ և ասեն, եթէ պա՞րտ իցէ 'ի շաբաթու բժշկել. զի չարախօսեսցեն զնմանէ։ Եւ նա ասէ ցնոսա. ո՞վ է 'ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, և անկանիցի այն 'ի խորխորատ 'ի շաբաթու. մի թէ ո՞չ ունիցի և յարուցանիցէ զնա։ Իսկ արդ՝ ո՞րչափ ևս առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ է 'ի շաբաթու բարիս գործել։ Յայնժամ ասէ ցայրն, ձգեա՛ զձեռն քո, և նա ձգեաց՝ և եղև ողջ իբրև զմիւսն։ Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ առին զնմանէ՝ թէ ո՞ւր կորուսցեն զնա։ Եւ ՅՍ իբրև գիտաց, մեկնեցաւ անտի. և գնացին զհետ նո՛ր ժողովուրդք բազումք, և բժշկեաց զամենեսեան։ Եւ սաստեաց նոցա՝ զի մի յայտնեսցեն զնմանէ ումեք։ Զի լցցի, որ ասացաւն 'ի ձեռն Եսայեայ մարգարէի։ Ահա մանուկ իմ՝ զոր ընտրեցի, և սիրելի իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ. եդից զոգի իմ 'ի վրա՛ նո՛ր, և իրաւունս հեթանոսաց պատմեսցէ։ Ոչ հակառակեսցի՝ և ոչ աղաղակեսցէ, և ոչ ոք լուիցէ 'ի հրապարակս զբարբառ նո՛ր։ Զեղէգն ջախջախեալ ոչ փշրեսցէ, և զպատրոյկն առկայծեալ ոչ շիջուսցէ, մինչև հանցէ 'ի յաղթութի զդատաստան։ Եւ յանուն նորա հեթանոսք յուսասցին։ 21։

Ամենեքին ՅՍՈՒՆ Դ։ Քարոզ. Ասացուք։

Համբարձին Դ։

Ո՛ր ի վե՛րդ ես քան ընդմիտս և զխորհո՛ւրդս համագոյակա՞ն ե՞ղեալ ոչ արարող. ի Հ՚օրէ՛ առաքեցար վասն մե՛ր և մարմնացար ի ն՚ր ի՛ կո՞ւսէն։ Փառք Հ՚օր։ Ընդ ընդնի՛ն ի յԵութե՛ Ա.Ի՚Ծ. տնօրինեցա՛ր յարգանդի՛ կուսին. ապրեցուցանե՛լ զնա-

խաստեղծին ծընունդն. և վերջստի՞՝ն նորոգել ի փառս։ Այժմ և միշտ։ Մէջ շատացար մարդ եղանել Աստ. այլ և խաչի համբերեալ ըզթաղումն յանձն առեր զերեքօրեայ. և յարուցեա՞՝լ նորոգեցեր զաշխարհս։

Աբիմելեքն Սաղմոս ՃԾ։ Օրհնեցէք զԱստ. 197։

Ա-Էպոլոն ըստ Մարկոսի։ Դ. 35։

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ

Եւ ասէ ցնա յաւուրն յայնմիկ՝ իբրև ընդ երեկս լինէր. եկայք անցցուք յայն կողմն։ Մո

զոմանք զժողովուրդն. և առնուն զնա նաւաւն հանդերձ, և զայլ ևս նաւսն որ էին ընդ նմա։ Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ. և զալիսն 'ի նաւն զեղոյր, մինչ գրեթէ լի իսկ լինել։ Եւ ինքն ննջէր 'ի խելս նաւին, 'ի վի բարձի. զարթուցանէին զնա և ասէին. վարդապետ՝ ոչ ինչ է քեզ փոյթ, զի կորնչիմք աւասիկ։ Եւ զարթուցեալ սաստեաց հողմոյն և ծովուն, ասէ. դադարեա՛ կարկեաց, և դադարեաց հողմն՝ և եղև խաղաղութի մեծ։ Եւ ասէ ցնոսա. ընդէ՞ր այդպէս վատասիրտք էք, չև և՞ս ունիք հաւատս։ Եւ երկեան երկիւղ մեծ, և ասէին ցմիմեանս. ո՞ ոք արդեօք իցէ սա, զի և հողմ և ծով հնազանդին սմի։ Եւ եկն յայն կոյս ծովուն յաշխարհն Գերգեսացւոց։ Եւ ընդ ելանելն նր 'ի նաւէ անտի, պատահեաց նմ այր մի 'ի գերեզմանացն՝ զոր ունէր այս պիղծ. որոյ և բնակութի իւր իսկ 'ի գերեզմանս էր. և ոչ շղթայիւք ոք ևս կարէր կապել զնա. վասն բազում անգամ ոտնկապօք և շղթայիւք կապելոյ, և խզելոյ 'ի նմանէ զշղթայսն, և զոտնկապսն խորտակելոյ. և ոչ ոք կարէր պարտել զնա. քանզի հանապազ զցայգ և զցերեկ 'ի գերեզմանս և 'ի լերինս աղաղակէր, և կոծէր զանձն իւր քարամբք։ Իբրև ետես զՅն 'ի հեռաստանէ, ընթացաւ և եր-

կիր եպագ նմա։ Աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ և ասէ, զի կայ իմ և քո՝ Յե որդի Աստ Բարձրելոյ. երդմնեցուցանեմ զքեզ յԱստծ, մի տանջեր զիս։ Զան զի ասէր ցնա. Եկ այսդ պիղծ 'ի մարդոյ այսի։ Եւ հարցանէր ցնա՝ թէ զի՞նչ անուն է քո. և ասէ ցնա. լեգէոն անուն է իմ, քանզի բազումք եմք։ Եւ աղաչէին զնա յոյժ. զի մի առաքեսցէ զնոսա արտաքս քան զաշխարհն։ Եւ անդ էր առ լերամբն երամակ մի խոզաց արօտական մեծ։ Աղաչեցին զնա ամ դևքն և ասեն, առաքեա զմեզ 'ի խոզսն, զի մտցուք 'ի նս։ Եւ հրամայեաց նց. և իբրև ելին այսքն պիղծք՝ մտին 'ի խոզսն, և դիմեաց երամակն 'ի դարէ անտի 'ի ծովն. էին իբրև երկու հազարք, և հեղձնուին 'ի ծովուն։ Եւ խոզարածքն փախեան, և պատմեցին 'ի քաղաքին և յագարակս, և ելին տեսանել զի՞նչ իցէ՝ որ գործեցաւն։ Գան առ Յե, և տեսանեն զդիւահարն զի նստէր զգեցեալ և զգաստացեալ, որ ունէր զլեգէոնն, և զահի հարան։ Եւ պատմեցին նոցա՝ որոց տեսեալն էր, թէ զի՞նչ եղև այսահարին, և զի՞նչ վս խոզիցն։ Եւ սկսան աղաչել զնա գնալ 'ի սահմանաց նց։ Եւ իբրև եմուտ նա 'ի նաւն, աղաչէր զնա դիւահարն՝ զի ընդ նմա իցէ. և Յե ոչ ետ նմա թոյլ, այլ ասէ ցնա. Երթ 'ի տուն քո առ ընտանիս քո, և պատմեա նց, որ ինչ միանգամ Տր արար քեզ՝ և ողորմեցաւ քեզ։ Եւ չոքաւ՝ և սկսաւ քարոզել 'ի Դեկապոլին, զոր ինչ արարն Յե. և ամենեքին զարմանային։ Ե. 20։

Բեթ. Խնդրեսցուք։ Կեցո։ Աղմ. Միագաւոր։

Դ. ԿԻՐԱԿԷ ՏԱՃԱՐԻ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն Դկ։

ՅԱՂԹԱԿԱՆ քեզ օրհնութիւնք Տէր. 179։

Ալէլուիա Յարութեան Դկ։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Բկ։

Որ էիր յառաջ քան ըզյաւիտեանս Բանդ Աստուած. վասն մերոյ փրկութեան առեր մարմին ի սուրբ կուսէն. ըզքեզ օրհնեմք Աստուած հարցըն մերոց։ Որ ըզկերպարանս ծառայի ճշմարտապէս յանձն առեր. եւ խաչի եւ մահու համբերելով եդեր ի գերեզմանին. ըզքեզ օրհնեմք Աստուած հարցըն մերոց։ Որ երեքօրեայ թաղմամբ փրկիչ ու ք զյարութիւն քո ցուցեր եւ վերստին նորոգեալ կեցուցեր ըզհընացեալըս մեղօք. ըզքեզ օրհնեմք Աստուած հարցըն մերոց։

Գ. Ալէ օրհնեցէք. ամենայն ազինք բարձր արարէք։ Փառք Հօր։ Զխաչեալն ի մէջ երկրի և զթաղեալն ի նոր գերեզմանի. ամենայն ազինք բարձր արարէք։ Այժմ և միշտ։ Զյարուցեալն իշխանութբ և զաւերողըն դժոխոց. ամենայն ազինք բարձր արարէք։

Մեծացուսցէ Բկ։

Ուրախ լեր մայր լուսոյ Մարիամ. երկիր բանաւոր արեգականն օթարան. լեր բարեխօս վասն

անձանց մերոց։ Փառք Հօր։ Խընդա՜ տաճար Բանի՛ն Աստուծոյ. բարձօղ տըրտմութեան՝ նախամօրն Եւայի. լեր բարեխօս վասն անձանց մերոց։ Այժմ և միշտ։ Յընծա՜ իմա՛նալի արեւ ելք. քանզի քեզ ծագեաց մեզ լոյս երեսաց Քրիստոս. լեր բարեխօս վասն անձանց մերոց։

Ողորմեա՜ Ըկ։

Որ համբագոյդ ես Հօր և որ Հոգւոյն. անբաժանելի էակ միութեամբ խոնարհեցար ի բարձանց. և առեր մարմին ի կուսէն. յաղագս անկելոյն. յանլուծիչ կենաց բանսարկուին խաբմամբ։ Փառք Հօր։ Որ դատաւորդ ես ծածկելոց գիտօղ. այսօր ի հողոյ դատապարտեալ բարձար ի խաչ և լեղեաւ կերակրեցար. յաղագս անկելոյն. ի ճաշակմանէ մահաբեր պըտղոյն։ Այժմ և միշտ։ Որ կենդանութիւդ ես ամենեցուն. այսօր ըզմահ խաչի ի յանձն առեր եդար ի սիրտ երկրի. և յերրորդ աւուր յարեար. շնորհեա՜ մեզ վերածիլ ընդ քեզ յանապատում ի կեանս։

Տէր յերկնից Ըկ։

Պանխեցին կանայքն ընդ առաւօտն ի գերեզմանն հանդերձ խընկովք։ Փառք Հօր։ Բերելով զիւղս անուշունս ի յօծումն կենարար մարմնոյ փրկչին մերոյ։ Այժմ և միշտ։ Նա՛ հրեշտակքն զօրութիւբ գոչելով աղաղակէր յարեաւ Քրիստոս։

Աւետարան Երգ Յարութեան Ըկ։ Քեզ. Աստուած։

Աւետարան Սաղմոս 27։

կց. Յոյց մեզ Տէր։ Փխ. Հաճեցար Տէր. 191։

Ա-Էպիստոլն ըստ Ղուկասայ։ Թ. 51։

Տն մերոյ Յեսի Քրիստոսի

Եւ եղև 'ի կատարել աւուրց վերանալոյ նր՝ և ինքն զերեսս հաստատեաց երթալ Յերուսաղէմ։ Եւ առաքեաց հրեշտակս առաջի երեսաց իւրոց. և իբրև չոգան՝ մտին 'ի գիւղ մի Սամարացւոց պատրաստել ինչ նմա։ Եւ ոչ ընկալան զնա, զի դէմ եդեալ էր նր երթալ Յերուսաղէմ։ Իբրև տեսին աշակերտքն Յակովբոս և Յովհաննէս, ասեն. Տր՝ կամիս զի ասասցուք, և իջցէ հուր յերկնից՝ և սատակեսցէ զնս։ Դարձաւ սաստեաց 'ի նս՝ և ասէ. ոչ գիտէք՝ որոյ հոգւոյ էք դուք։ Օրի որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան կորուսանել՝ այլ կեցուցանել։ Եւ գնացին յայլ գեօղ։ Եւ մինչդեռ երթային նոքա 'ի ճանապարհի, ասէ ոմն ցնա. եկից զկնի քո՝ յոր վայր և երթայցես։ Ասէ ցնա Յս. աղուեսուց որջք գոն, և թռչնոց երկնից դադարք. և որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ։ Ասէ ցմիւս ևս. եկ զկնի իմ։ Եւ նա ասէ. Տէր՝ հրամայն տուր ինձ՝ երթալ նախ թաղել զհայր իմ։ Ասէ ցնա Յս. թող զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց, և դու երթ պատմեա զարքայութիւն Աստուծոյ։ Ասէ և այլ ոմն. եկից զկնի քո Տէր, բայց նախ հրամայն տուր ինձ հրաժարել 'ի տանէ իմմէ։ Ասէ ցնա Յս. ոչ ոք արկանէ ձեռն զմանով. և հայիցի յետս, եթէ յաջողեալ իցէ արքայութեանն Աստուծոյ։ 62։ Քրիստ. Խնդրեսցուք։ Կեցո։ Աղօ. Քրիստ ամենայ։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ա-ոջին Սաղմոս Ոլսթ։

Օրհնեցէք զՏր յօրհնութիւն նոր. 193։

Ա-Էպիստոլն ըստ Պօղոսի։ ԺԲ. 22։

Առ Տէրն մեր Յս Քրիստոս

Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր և

համբ, և բժշկեաց զնա. ոչ զի համբն և կոյրն խոսիցի և տեսանիցէ։ Զարմացան ամ ժողովուրդքն՝ և ասէին. մի թէ սա՞ իցէ Որդի Դաւթի։ Բայց փարիսեցիքն իբրև լուան՝ ասեն. ոչ իւիք հանէ դա զդեւս՝ եթէ ոչ բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց։ Իբրև գիտաց Յն զխորհուրդս նց՝ ասէ ցնս. ամ թագաւորութի բաժանեալ յանձն իւր՝ աւերի. և ամ քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ։ Եւ եթէ սատանայ զսատանայ հանէ, յանձն իւր բաժանեցաւ. արդ՝ զիա՞րդ կացցէ թագաւորութի նր։ Եւ եթէ ես բէեղզեբուղաւ հանեմ զդեւս՝ որդիքն ձեր ի՞ւ հանիցեն. վ՞ այնորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք։ Ապա թէ հոգւով Ա՚Ի հանեմ ես զդեւս. ուրեմն հասեալ է 'ի վրն ձեր արքայութի Ա՚Ի։ Կամ զիա՞րդ կարէ ոք մտանել 'ի տուն հզօրի՝ և զգործիսն նր յափշտակել. եթէ ոչ նախ կապիցէ զհզօրն. և ապա զտունն նր յափշտակիցէ։ Որ ոչ ընդ իս է, հակառակ իմ է. և որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ։ Վ՞ այդորիկ ասեմ ձեզ. ամ մեղք և հայհոյութիք թողցին մարդկան, բայց զ՚ոգւոյն հայհոյութի մի թողցի։ Եւ որ ոք ասիցէ բան զորդւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զ՚ոգւոյն սրբ՚ ասիցէ՝ մի թողցի նմա, մի յայսմ աշխարհի՝ և մի 'ի հանդերձելումն։ Կամ արարէք զծառն բարի՝ և զպտուղ նր բարի, կամ արարէք զծառն չար՝ և զպտուղ նր չար. քանզի 'ի պտղոյ անտի ծառն ճանաչի։ Ծնո՛ւնդք իժից, զիա՞րդ կարիցէք բարիս խօսել՝ որ չարքդ էք, քանզի 'ի յաւելուածոյ սրտի խօսի բերան։ Մարդ բարի՝ 'ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս. և մարդ չար՝ 'ի չար գանձուց սրտի իւրոյ հանէ զչարիս։ Բայց ասեմ ձեզ. թէ ընդ ամ դատարկ բանի զոր խօսիցին մարդիկ, տացեն համար յաւուրն դատաստանի։ Զի 'ի բանից քոց արդարասցիս. և 'ի բանից քոց պարտաւորեսցիս։ 37։

Մէսէդի Յարութիւն Դկ։ Քարոզ. Աստուած։

Հոմիլիայի Դկ։

Հրեշտակացքն գանգն. յերկնից ի յերկիր վայրաբերեալ ի սպաս Ուրուծոյն Աստուծոյ։ Փառք Հօր։ Հրեշտակին ձայնիւ. ցընծայր կոյսն սուրբ եւ ընթանցեալ առ աշակերտսն պատմէր։ Այժմ և միշտ։ Կենդանին յարեաւ. զերկուսներս մահու ելոյծ և կեանքս պարգեւեաց աշխարհի։

Աբիմելեքն Սոլոմոն ՈՀ։ Օրհնեցէք զԱծ. 197։

Աբեղոքոն ըստ Մարկոսի։ Ե. 21։

Տէրն մեր Յս Քս

Եւ իբրև անց (Յս) միւսանգամ յայն կողմն՝ ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր առ ծովեզերքն։ Եւ ահա մի 'ի ժողովրդապետացն գայր, որում անուն էր Յայրոս. և իբրև եռես զնա՝ անկաւ առ ոտս նորա. աղաչէր զնա յոյժ և ասէր, թէ դուստր նորա մերձ է 'ի մահ, զի եկեալ գնիցէ նմա ձեռն, որպէս զի ապրեսցի և կեցցէ։ Եւ գնաց ընդ նմա. երթայր և ժողովուրդ բազում զհետ նորա, և նեղէին զնա։ Եւ կին մի էր 'ի տեառատեսուէ արեան զերկոտասան ամ. և յոյժ վշտացեալ 'ի բազում բժշկաց, և ծախեալ զինչս իւր զամ՝ և չէր ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայրացեալ։ Իբրև լուաւ զՅն՝ եկն 'ի մէջ ամբոխին յետոյ՝ և բուռն եհար զհանդերձէ նորա. քանզի խորհէր 'ի մտի, թէ միայն մերձեցայց 'ի հանդերձս նորա, փրկեցայց։ Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան նորա. և գիտաց 'ի մարմին իւր թէ բժշկեցաւ 'ի տանջանացն։ Եւ անդէն վաղվաղակի գիտաց Յն յանձն իւր զզօրութին որ ել 'ի նմանէ, դարձաւ յամբոխն և ասէ. ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս իմ։ Եւ ասեն ցնա աշակերտքն. տեսանես՝ զի ամբոխդ նեղէ զքեզ, և ասես՝ թէ ո՞վ

մերձեցաւ 'ի հանդերձս իմ : Եւ շուրջ հայէր տեսանել՝ թէ ո՛վ զայն արար : Եւ կինն զարհուրեալ և դողացեալ վասն որոյ գաղտն արար . քանզի գիտէր զինչ եղև նմա, եկն անկաւ առաջի նորա, և ասաց զա՛մ իրսն ստուգութբ : Եւ Յս ասէ ցնա. դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ . երթ 'ի խաղաղութի, և եղիջիր ողջ 'ի տանջանաց քոց: 34:

Քրզ. Խնդրեսցուք: Կեցո: Աղօթք. Թագաւոր:

Դ. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն ԱՁ:

ԵՐԳԵՍՑՈՒՔ երգ նոր Այ փրկչին մերոյ . 153:

Ալէլուիա Յորդորակ ԱՁ:

ՑԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց ԲԿ:

Կամաւորութբ եկիր ի չարչարանս եւ ի ծառայէ ապտակեցար . օրհնեմք զքեզ Ած հարցն մերոց: Տարածեցեր զձեռս քո ի վերայ խաչին եւ ընդ անօրէնս համարեցար . օրհնեմք զքեզ Ած հարցն մերոց: Որ զմեռանիլ յանձն առեր վասն արարածոց . եւ ի զինաւորէն գեղարդեամբըն խոցեցար . օրհնեմք զքեզ Ած հարցն մերոց:

Գ. Ազգէր Ազնա հոգեւոր երգով բարձր արարէք: փառք Հօր: Որ ձրիաբար յօժարութբ եկեալ ի նորոգումն եղծեալ մարդոյն . եւ խաչի յանձն առնու զմահ . ընդ նմա հոգեւոր երգով բարձր արարէք: Այժմ և միշտ: Որ էջն ի ստորին կողմ

երկրի եւ դողալով սասանեցան դժոխք. այսօր յարուցեալ վերածնեալ ընդ ննջեցեալսն. ընդ նմա հոգեւոր երգով բարբառ արարէք:

Մեծացուսցէ Բկ:

Մայր լուսոյն Մարիամ ամենօրհնեալ օրհնեալդ ի կանայս: փառք Հօր: Զլոյսն անստուեր յարգանդի կրեցեր օրհնեալդ ի կանայս: Այժմ և միշտ: Մի դադարեր վասն մեր բարեխօսել օրհնեալդ ի կանայս:

Ողորմեա Բկ:

Որ յաթոռ փառաց նստիս Բանդ Ած. խոնարհեցար ի հայրական ծոցոյ առեալ մարմին ի կուսէն. վերականգնելով ի տեղի ըստորանկեալ լուսոյն զհողացեալ բնութիւս: փառք Հօր: Որ կանգնեցեր ըզխաչ քո ի մէջ երկրի. եւ սովաւ ըզսրովբէական գունդն գրաւեալն բացեր նախաստեղծին. կենագործելով ի ճաշակմանէ մահաբեր պտղոյն: Այժմ և միշտ: Աւ զօրութեամբ խաչին քո Քս հիմնեցուցեր զկաթուղիկէ եկեղեցի բնակարան որ Նորոգութեանդ լուսաւորելով ըզհեթանոսս ի սմա կրկնակի ծնընդեամբ:

Տէր յերկնից Բկ:

Ըզյարութիւն Քսի ամենեքեան օրհնեսցուք. զի նա միայն Ած փառաւորեալ յաւիտեան: Ըզճառագայթ յարութեան տեսանելով հրեշտակին. նա զօրանայր ի պատմել ըզկենսաբեր յարութին: Ձայն աւետեաց լուէին առաւօտեան որ կանայքն. ի հրեշտակէն դառնային ուրախութեամբ յառաքեալսն:

Օտիեզերական խընդութիւն ամենայն երանելի կանանց ուսեալք ի հրեշտակէն. աներկիւղ խընդութիւն և բերկրանաց ուրախութեամբ ընթանային պատմել աշակերտացն ամենայնիվ։ Փառք Հօր։ Օրը մանուն երկիւղիւ ընդ մեռեալսս համարեալ կարծէաք. նա ի նքնիշխանութենն յարուցեալ զմահու ելոյծ զիշխանութիւն պարգեւեաց ամ զգի մարդկան։ Այժմ և միշտ։ Այլ ի բաց եղեալ ընդհրէական երկիւղին ըզկարծինն. նախաժամանեցին ի պատիւ այնորիկ. որ մահուամբն ելոյծ ըզմահ և անմահութի պարգեւեաց ամ զգի մարդկան։

Ա-ա-օրհ- Էրգ Յարութիւն Ա։ Բ։ Ա։սացուք։
Ա-ա-օրհ- Սաղմոս Զ։

Կգ. Յոյց մեզ Տէր։ Փխ. Հաճեցար Տի. 191։
Ա-Էպիստոլն ըստ Ղուկասու։ Ժ. 1։
Տէրն մեր Յն Բն

Յետ այսորիկ երևեցոյց (Տի) և այլ ևս եօթանասուն և երկուս. և առաքեաց զնս երկուս երկուս առաջի իւր յամ քաղաքս և 'ի տեղիս, ուր ինքն երթալոց էր։ Նա ասէ ցնս. հունձք բազում են՝ և մշակք սակաւ. արդ՝ աղաչեցէք զՏէր հնձոց, զի հանցէ մշակս 'ի հունձս իւր։ Երթայք, ահա առաքեմ զձեզ իբրև զգառինս 'ի մէջ գայլոց։ Մի բառնայք քսակ մի մախաղ մի կօշիկս, և 'ի ճանապարհի ումեք ողջոյն մի տայցէք։ Յոր տուն մտանիցէք՝ նախ ասասջիք թէ ողջոյն տանս այսմիկ. և եթէ իցէ անդ որդի ողջունի. հանգիցէ 'ի վրս նր ողջոյնն ձեր. ապա թէ ոչ՝ 'ի ձեզ դարձցի։ Նա 'ի նմին տան ագանիջիք, ուտիջիք և ըմպիջիք 'ի նոցանէ. զի արժանի է մշակն վարձու իւրոյ։ Մի փոխիցիք տանէ 'ի տուն։ Յոր քաղաք մտանիցէք՝ և ընդու-

նիցին զձեզ, ուտիջիք զինչ առաջի դնիցեն ձեր. և բժշկեսջիք որ 'ի նմա հիւանդք իցեն. և ասասջիք նոցա, մերձեալ է 'ի վերս ձեր արքայութիւն Աստուծոյ։ Իսկ յորքաղաք մտանիցէք՝ և ոչ ընդունիցին զձեզ, իբրև ելանիցէք 'ի հրապարակս նոր, ասասջիք։ Եւ զփոշիս որ կռուեալ է 'ի քաղաքէ ձերմէ յոտս մեր՝ թօթափեսցուք 'ի ձեզ. բայց զայս գիտասջիք՝ զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ։ Ասեմ ձեզ, զի Սոդոմացւոց ընդարձակագոյն լիցի յաւուրն յայնմիկ՝ քան քաղաքին այնմիկ։ Վա՜յ քեզ Քորազին, վա՜յ քեզ Բեթսայիդա. զի եթէ 'ի Տիւրոս և 'ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն 'ի ձեզ, վաղու ևս արդեօք 'ի խորգ և 'ի մոխիր նըստեալ ապաշխարեալ էր։ Բայց Տիւրոսի և Սիդոնի ընդարձակագոյն լիցի 'ի դատաստանի՝ քան ձեզ։ Եւ դու Կափառնաում, որ մինչև յերկինս բարձրացեալ ես, մինչև 'ի դժոխս իջցես։ Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, և որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ. և որ զիս անարգէ՝ զառաքիչն իմ անարգէ. և որ ինձ լսէ՝ լսէ այնմիկ որ զիսն առաքեաց։ Դարձան եօթանասուն և երկուքն խնդութիւբ և ասեն. Տէր՝ և դեւք հնազանդին մեզ յանուն քո։ Եւ ասէ ցնոսա. տեսանէի զսատանայ անկեալ յերկնից իբրև զփայլակն։ Ահա ետու ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս և զամենայն զօրութիւն թշնամւոյն, և ձեզ ոչ ինչ մեղանչիցեն։ Բայց ընդ այն մի խնդայք՝ եթէ այսք հնազանդին ձեզ, այլ խնդացէք զի անուանք ձեր գրեալ են յերկինս։ Ի նմին ժամու ցնծացաւ Յիսուսն սրբով և ասէ. գոհանամ զքէն Հա՛յր՝ Տէր երկնից և երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և 'ի գիտնոց՝ և յայտնեցեր զայս տղայոց. այո՛ Հայր, զի այսպէս հաճոյ եղև առաջի քո։ Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի Հօրէ իմմէ. և ոչ ոք գիտէ թէ ո՞վ է Որդի, եթէ ոչ՝ Հայր, և ո՞ է Հայր, եթէ ոչ՝ Որդի, և ում կամիցի Որդին յայտնել։ Եւ դար-

ձեալ առանձինն առ աշակերտսն ասէ. երանի ա-
չաց՝ որ տեսանիցեն զոր տեսանէք դ։ Ասեմ ձեզ.
զի բազում մարգարէք և թագաւորք կամեցան տե-
սանել զոր դուք դ տեսանէք, և ոչ տեսին. և լսել
զոր լսէք դ, և ոչ լուան։ 24։
Ռեպ. Խնդրեսցուք։ Կեցո։ Ալլ. Ամենայն։

ՅԵՐԵԿՈՅԻՆ
Ա-ՈՒՐԲ ՍՈՂՈՄՈՆ ՕՐԹ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. 193։
Ա-Է-ՊՍԱԼՄՆ ԵՍՓ ՍՈՂՈՄՈՆԻ։ ԺԴ. 38։
Ա-Ռ ՏԷՐՆ ՄԵՐ ՅԵ ՌԵ

Յայնժամ պատասխանի ետուն նմա ոմանք 'ի
դպրացն և 'ի փարիսեցւոց՝ և ասեն. վարդապետ՝
կամիմք նշան ինչ տեսանել 'ի քէն։ Նա պատաս-
խանի ետ՝ և ասէ ցնոսա. ազգ չար և շնացող նշան
խնդրէ. և նշան մի տացի նմա, բայց նշանն Յով-
նանու մարգարէի։ Զի ոգի էր Յովնան 'ի փոր կի-
տին զերիս տիւս և զերիս գիշերս, նոյնպէս ե-
զիցի և որդի մարդոյ 'ի սիրտ երկրի զերիս տիւս
և զերիս գիշերս։ Արք Նինուէացիք յարիցեն 'ի
դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատա-
պարտեսցեն զսա, զի զղջացան 'ի քարոզութեանն
Յովնանու, և արդ աւասիկ մեծ քան զՅովնան է
աստ։ Դշխոյն հարաւոյ յարիցէ 'ի դատաստա-
նի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատապարտեսցէ
զսա. զի եկն 'ի ծագաց երկրի՝ լսել զիմաստութի
Սողոմոնի. և ահա մեծ քան զՍողոմոն է աստ։
Այլ յորժամ այսն պիղծ ելանիցէ 'ի մարդոյ՝ շրջի
ընդ անջրդին տեղիս. խնդրէ հանգիստ՝ և ոչ գտա-
նէ։ Յայնժամ ասէ. դարձայց 'ի տուն իմ՝ ուս-
տի ելին. և եկեալ գտանէ զնա պարապորդ, մաք-
րեալ և յարդարեալ։ Յայնժամ երթայ՝ և առ-
նու ընդ իւր եօթն այլ այսս չարագոյնս քան զինքն,

և մտեալ բնակէ անդ. և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն. այնպէս եղիցի և ազգիս այսմիկ չարի։ Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն խօսէր, ահա մայր նր և եղբարք նր կային արտաքոյ՝ և խնդրէին խօսել ընդ նմա։ Եւ ասէ ոմն ցնա. ահա մայր քո՝ և եղբարք քո կան արտաքոյ, և խնդրեն խօսել ընդ քեզ։ Նա պատասխանի ետ այնմիկ՝ որ ասացն ցնա, և ասէ. ո՞վ է իմ մայր, կամ ո՞վ են իմ եղբարք։ Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտսն՝ ասէ. ահա մայր իմ և եղբարք իմ։ Զի որ առնիցէ զկամս Հօր իմոյ որ յերկինսն է, նա է իմ եղբայր՝ և քոյր՝ և մայր։ 50։

Մէնէդի Յարու-Ի Ռ։ Գ։ Ասասցուք։

Հոմէարքի Ռ։

Ո՛ր անճա՛ռ էութեամբ Հօր ես փառակից չարչարիլ մարմնով յանձն առեր վասն մեր մի՛շտընջենաւոր օրհնութիւն ի հրեշտակաց օրհնեա՛լ ես Տէր։ Ո՛ր էակդ ես ընդ Հօր եւ որ Հոգւոյն. խաչեցա՛ր և թաղեցա՛ր կամա՛ւ Հօր վասն մեր. մի՛շտընջենաւոր օրհնութիւն ի հրեշտակաց օրհնեա՛լ ես Տէր։ Ո՛ր միւսանգամ գա՛լոց ես հայրենի փառօք. շնորհելով աստուածային յարութիւն տիեզերաց. յամենայն արարածոց յաւիտենից օրհնեա՛լ ես Տէր։

Էրյոխան Սողոս ՌՀ։ Օրհնեցէք զԱ՛ծ. 197։

Ա-Էպոլան ըսպ Մարիոսի։ Ե. 35։

Տէրն մեր Յս Ռս

Մինչդեռ նա զայն խօսէր, գան ոմանք 'ի տանէ ժողովրդապետին, և ասեն՝ թէ դուստրն քո մեռաւ. զի՞ ևս աշխատ առնես զվարդապետդ։ Իսկ Յս իբրև լուաւ զբանն ասացեալ, ասէ ցժողովրդապետն. մի երկնչիր, բայց միայն հաւատա։ Եւ ոչ ոք թոյլ եթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊետրոս

և զՅակովբոս և զՅովհաննէս՝ զեղբայրն Յակովբայ։ Գայ 'ի տուն ժողովրդապետին, և տեսանէ ամբոխ յոյժ և լալականս, և աղաղակ յոյժ։ Եւ մտեալ 'ի ներքս՝ ասէ ցնոսա. զի՞ խռովեալ էք և լայք, մանուկն ոչ է մեռեալ, այլ ննջէ։ Եւ ծաղր առնէին զնա. և նորա հանեալ արտաքս զամենեսեան, առնու ընդ իւր զհայր մանկանն և զմայր, և զնո՛ որ ընդ նմայն էին, և մտանէ ուր դնէր մանուկն։ Եւ կալեալ զձեռանէ մանկանն, ասէ ցնա. տալիթա կում, որ թարգմանի, աղջիկ դու՝ քեզ ասեմ արի։ Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն և գնայր, քանզի էր ամաց իբրև երկոտասանից. և զարմացան մեծաւ զարմանալեօք։ Եւ պատուէր տայր նց յոյժ, զի մի ոք գիտասցէ զայն. և ասաց տալ նմա ուտել։ 43։

ՎՔԵՂ. Խնդրեսցուք։ Կեցո՛։ Ընթերց. Թ. ագաւոր։

Գ. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնո՛ւ-ՄԷ ԱԿ։

ՎՐԹԵՑԷՔ տեառն երգ նոր. և օրհնեցէք. 157։
Ընթերց-ութ Յարո՛ւ-ՄԷ ԱԿ։

ՅԱՌԱՒՈՏԻՆ

Հարց Գ.Զ։

Փառաւորեմք զքեզ Տ՛ր Աստուա՛ծ հարցքն մերոց։ Որ զքեզ անապա՛կան արեանն ցօղեցեր տիեզերաց ի վր խաչին օրհնեմք մի՛շտ և փառաւորեմք։ Որ թաղմամբն երեքօրեայ յարութեամբ զքեզ՝ ծագեցեր տիեզերաց. օրհնեմք մի՛շտ և փառաւորեմք։ ։։

գ. Ընդ՞էր օրհնե՞ցէք և բարձր արարէք զնա՞ յաւիտեա՛ն։ Փառք Հօր։ Որ ի՝ բարձունս եկ և գերեաց զգերութիւն. եւ ետ պարգեւս որդւոց մարդկա՛ն. օրհնե՞ցէք և բարձր արարէք զնա՞ յաւիտեա՛ն։ Այժմ և միշտ։ Նա՛ ի մեռեալս ա-զատ առանց օգնակա՛նի. քահանայք օրհնե՞ցէք և բարձր արարէք զնա՞ յաւիտեա՛ն։

ՍԷՖՈՅՈՍՈՅԷ Գ.Զ։

Ընծա՛ծին երկնայի՛ն դուռն ա՛ծայի՛ն ճայնի՛ն ա-ւետարանէր հրեշտակն. ուրախ լեր բերկրեա՛լդ տէր ընդ քեզ։ Փառք Հօր։ Ի քերովբէս բազ-մա՛լ ընդ Հօր անանապատնա՛բար բնակիլ հաճե-ցա՛ւ ի քում յորովայնի՝. ուրախ լեր բերկրեա՛լդ տէր ընդ քեզ։ Այժմ և միշտ։ Որ բոցե՛ղէն սրով-բէի՛ւք շրջապա՛կեալ պահի՛ւր. այսօր ի մէջ մարդկան ի գի՛րկս հողեղենի՛ յայտնեա՛լ. ուրախ լեր բերկրեա՛լդ տէր ընդ քեզ։

ՈՂՋՈՒԹԻՒՆ Գ.Զ։

Նա՛կից Հօր կամաւորութի՛ւն՝ եկիր ի չարչարանս. զչարչարա՛նս յանձն առեր խաչի՛ համբերելով ինչեր ի գերեզման։ Փառք Հօր։ Լուղաբերիցն եկեա՛լ ի գերեզման փրկչիդ. ըզլո՛ւղս անոյշս բերին. ի խընկել զանապական մարմի՛նդ։ Այժմ և միշտ։ Ուրա՛խս լուեա՛լ ի հրեշտակէն որ ա՛սէր. տէ՛ր յարեա՛ւ ի մեռելոց ձեզ կեանքս պարգե՛ւեաց։

ՏԷՐ ՅԵՐԻՆԷՑ Գ.Զ։

Լուղաբեր եւ սո՛ւ կանա՛յք ողբալո՛վ փութանա՛կս եկին ի գերեզման քո՛ տէր. ի խընկել զանապական մարմի՛նդ։ Փառք Հօր։ Բանբասա՛ աւետաւո՛ր հրեշ-

տակին որ գոչէր առ երջանիկ կանայսըն. զի իրն-
դրէք ըզկենդանին ընդ մեռեալս. քանզի յարեաւ
տէր եւ աւերեաց ըզդրժոխս։ Այժմ և միշտ։
Պատմեալ երանելի կանանցն զյարութիւն Տն
աշակերտացն. ուրախացեալք ընթանային Պետրոս
և Յովհաննէս ի կենատու գերեզման։

Աւետարան Էրգ Յարութեան։ Ցերեկ. Ասացուք։

Աւետարան Սաղմոս ՁԴ։

կՅ. Յոյց մեզ Տէր։ փխ. Հաճեցար Տէր. 191։
Աւետարան ըստ Դուկասի։ ԺԵ. 25։

ՕՏԻՆ մեր ՅԻ ՏԻՆ

Նա ահա յարեաւ ոմն օրինական՝ փորձէր զնա և
ասէր. վարդապետ՝ զի՞նչ գործեցից՝ զի զկեանս
յաւիտենականս ժառանգեցից։ Նա նա ասէ ցնա.
յօրէնս զի՞նչ գրեալ է, որպէս ընթեռնուս։ Նա
պատասխանի ետ և ասէ. սիրեսցես զՏէր Աստ քո
յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և
յամենայն զօրութենէ քումմէ, և յամենայն մտաց քոց. և
զընկեր քո իբրև զանձն քո։ Նա ասէ ցնա. ուղիղ
ետուր զպատասխանիդ, զայդ արա և կեցցես։ Նա
իբրև կամեցաւ զանձն արդարացուցանել՝ ասէ ցՅն.
և ո՞վ է իմ ընկեր։ Պատասխանի ետ Յն և ասէ.
այր մի իջանէր Յերուսաղեմէ Յերիքով, և անկաւ
'ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա՝ և վէրս
'ի վր եդին, թողին կիսամահ և գնացին։ Դէպ
եղև քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ,
և տեսեալ զնա՝ զանց արար։ Նոյնպէս և Ղևտացի
մի եկեալ ընդ նոյն տեղի՝ ետես և զանց արար։
Սամարացի ոմն ճանապարհորդեալ եկն ընդ նոյն
առ նովաւ, և տեսեալ զնա՝ գթացաւ։ Նա մա-
տուցեալ պատեաց զվէրս նր, արկեալ 'ի վր ձէթ
և գինի. և եդեալ 'ի վր գրաստու իւրոյ՝ ած զնա
'ի պանդոկի մի, և դարմանեաց զնա։ Նա 'ի վաղիւ

անդր իբրև ելանէր անտի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս՝ և ասէ. դարման տար դմա, և զոր ինչ ծախեսցես 'ի դա՝ 'ի միւսանգամ գալստեան իմում հատուցից քեզ։ Արդ՝ ո՞ յերեցունց 'ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն 'ի ձեռս աւազակաց։ Եւ նա ասէ. որ արար ողորմութիւն 'ի վրա նր։ Ասէ ցնա Յն. երթ և դու արա՛ նոյնպէս։ Եւ եղև 'ի գնալն նց, և ինքն եմուտ 'ի գեօղ մի. և կին ոմն անուն Մարթա ընկալաւ զնա 'ի տան իւրում։ Եւ նր էր քոյր մի, որում անուն էր Մարիամ. որ և եկն նստաւ առ ոտսն Տն, և լսէր զբանս նր։ Եւ Մարթա զբաղեալ էր 'ի բազում սպասու. եկն եկաց առ նմա և ասէ. Տէր՝ ոչ ինչ փոյթ է քեզ, զի քոյրդ իմ միայն ետթող զիս 'ի սպասու. արդ՝ ասա՛ դմա զի օգնեսցէ ինձ։ Պատասխանի ետ Յն և ասէ. Մարթա Մարթա՝ դու հոգաս և զբաղում իւիք զբաղեալ ես. բայց աստ սակաւ ինչ պիտոյ է. Մարիամ մասն բարի ընտրեաց, որ ոչ բարձցի 'ի նմանէ։ 42։

ՎՐԵՊ. Խնդրեսցուք։ Կեցո՛։ Ամէն։ ՎՐ. ում ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Առաջին Սաղմոս Ա՛խթ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. 193։

Առ Եփեսոսն ըստ Մատթէոսի։ ԺԳ. 1։

Տէրն մեր Յն Վրն

Յաւուր յայնմիկ ելեալ (Յն) 'ի տանէն՝ նստէր առ ծովեզերն։ Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչև մտանել նմա 'ի նաւն՝ և նստել. և ամ ժողովուրդն կայր առ ծովեզերբն, և խօսէր ընդ նս բազումս առակօք՝ և ասէր։ Ահա ել սերմանահան սերմանել. և 'ի սերմանելն իւրում, էր որ անկաւ առ ճանապարհաւ, և եկն թռչուն երկնից՝ և եկեր զնա։ Եւ այլն անկաւ յապառաժի,

ուր ոչ գոյր հող բաղում. և վաղվաղակի բուսաւ՝ առ 'ի չգոյէ հիւթոյ երկրին. 'ի ծագել արևու տապացաւ. և զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ: Եւ այլն անկաւ 'ի մէջ փշոց, և ելին փուշքն և հեղձուցին զնա: Եւ այլն անկաւ յերկիր բարի, և տայր պտուղ. էր որ հարիւրաւոր, և էր որ վաթսնաւոր, և էր որ երեսնաւոր: Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ: Եւ մատուցեալ աշակերտքն ասեն ցնա. ընդէր առակօք խօսիս ընդ նոսա: Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա. քանզի ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան երկնից, և նոցա չէ տուեալ: Զի որ գուցէ՝ տացի նմա և յաւելցի. և որ ոչն գուցէ և զոր ունիցին՝ բարձցի 'ի նմանէ: Վասն այնորիկ առակօք խօսիմ ընդ նոսա. զի տեսանեն՝ և ոչ տեսանեն, և լսեն՝ և ոչ լսեն, և ոչ առնուն 'ի միտ: Եւ կատարի առ նոսա մարգարէութիւն Եսայեայ՝ որ ասէ. լսելով լուիջիք՝ և մի իմասջիք, և տեսանելով տեսջիք և մի տեսջիք: Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, և ականջք իւրեանց ծանրունս լուան. և զաչս իւրեանց կափուցին՝ զի մի երբէք տեսցեն աչօք՝ և ականջօք լուիցեն՝ և սրտիւք իմասցին, և դարձցին՝ և բժշկեցից զնոսա: Բայց ձեր երանի է աչացդ՝ զի տեսանեն, և ականջաց ձերոց՝ զի լսեն: Ամէն ասեմ ձեզ. զի բազում մարգարէք և արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ՝ և ոչ տեսին. և լսել զոր լսէքդ՝ և ոչ լուան: Եւ արդ՝ լուարուք դուք զառակ սերմանացանին: Յամենայնէ՝ որ լսէ զբանն արքայութեան՝ և ոչ առնու 'ի միտ, գայ չարն՝ և յափշտակէ զսերմանեալն 'ի սիրտ նորա. այն է՝ որ առ ճանապարհաւն սերմանեցաւ: Եւ որ յապառաժին սերմանեցաւ՝ այն է, որ իբրև լսէ զբանն, և վաղվաղակի խնդութիւնբ ընդունի զնա: Բայց քանզի ոչ ունի արմատս յինքեան, այլ առ ժամանակ մի է. 'ի լինել նեղութեան և հալածանաց վասն բանին՝ վաղվաղակի գայթակղի:

Իսկ որ 'ի մէջ փշոցն սերմանեցաւ՝ այն է, որ իբրև լսէ զբանն, և հոգք աշխարհիս և պատրանք մեծութեանն հեղձուցանեն զբանն, և լինին անպտուղ։ Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ՝ այն է, որ իբրև լսէ զբանն՝ 'ի միտ առնու, և տայ զպտուղ. է որ հարիւր, և է որ վաթսուն, և է որ երեսուն։ 23։

Մեծեցի Յոյս-ՊԷ Ակ։ ՎԲԷՂ. Ասասցուք։

Համբոյկի Ակ։

Բաշալի ըզյարութիւն Աստուածորդւոյն. այսօր տեսեալ առաքելոցն. եւ բազմութիւք հրեշտակացն. երգէին երգ նոր անլռելի ճայնիւ։ Փառք Հօր։ Զայն ահեղ գաբրիէլեան փողոցն. այսօր գոչէր աւետարանէր. աւետիք են աշխարհի. երգէին երգ նոր անլռելի ճայնիւ։ Այժմ և միշտ։ Այս մեծ եւ ահաւոր. այսօր ծագեաց ՝ի եկեղեցւոյ. յարուցեալ ի մեռելոց Քրիստոս. երգեսցուք երգ նոր անլռելի ճայնիւ։

Աղիսման Սաղմոս ՃՕ։ Օրհնեցէք զԱծ. 197։

Առաքելական ըստ Մարկոսի։ Զ. 1։

Տէրն մեր Յս Քս

Եւ ել անտի, եկն 'ի գաւառ իւր. և երթային զհետ նոր աշակերտքն իւր։ Եւ եղև 'ի շաբաթուն՝ սկսաւ ուսուցանել 'ի ժողովրդեանն. և բազումք իբրև լսէին՝ զարմանային ընդ վարդապետութիւն նորա. և ասէին. ուստի է սմա այս, կամ զի՞նչ է իմաստութիւս որ տուեալ է սմա. զի զօրութիւք այսպիսիք 'ի ձեռաց սորա լինին։ Ո՞չ սա է մանուկ հիւսանն, և որդին Մարեմայ, եղբայր Յակոբայ և Յովսեայ և Յուդայի և Սիմոնի, և չիցե՞ն քորք դորա աստ առ մեզ. և գայթագղէին 'ի նա։ Եւ ասէ ցնոսա. ոչ է մարգարէ անարգ, բայց եթէ 'ի

գաւառի իւրում և յաղգատոհմի և 'ի տան իւրում:
Նա ոչ կարէր անդ և ոչ մի ինչ զօրութիւն առնել,
բայց սակաւ հիւանդաց ձեռն եդեալ՝ բժշկէր զնա:
Նա զարմանայր վասն անհաւատութեան նոցա: 6:
Բէթ. Խնդրեսցուք: Կեցո: Ալելուիա. Թագաւոր:

Գ. ԱՂՔԱՆԹ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն:

ՕՐՀՆԵՑԱՅՈՒՑ զՏէր, որ օրհնեացն. 160:
Ալելուիա Յաղուութիւն:

ՅԱՌԱՒՕՏԻՆ

Հայր Գ:

Փառաւորեալ Ո՛րդի՛ Աստուծոյ՝ որ եկիր կամաւ ի չարչարանս. Տէր Աստուծ հայրցն մերոց: Տարածեցեր զամենազօր բազուկս քո՛ի վերա՛յ խաչին. և երկիրս հիացեալ սասանեցաւ եւ դողալով երերէր. ի յահէ փառաց քոց Տէր Աստուծ հայրցն մերոց: Նա տեսեալ արեգականն զարարիչդ ի վերա՛յ խաչին. չհանդուրժեալ շարչարանաց արարչիդ. խաւարեցոյց ըզլոյսն ի մէջօրէի. ի յահէ փառաց քոց Տէր Աստուծ հայրցն մերոց:

Գ. ԸզՏէր օրհնեցէք բարձր ամարէք յաւիտեան: Փառք Հօր: Նա զենաւորն գեղարդեամբն յարձակեալ. խոցեա՛ց զկող կենարարին. բարձր ամարէք յաւիտեան: Այժմ և միշտ: Աստի աղբեր կենդանարար բղխեալ. լցա՛ց զտիեզերս ի մեղանց. բարձր ամարէք յաւիտեան:

Մեծաց-ոց Գ։

Զանձաւելի լուսոյ մայր. և ըղձնակարան անլուսակընդնակից Որդւոյն. օրհնութեամբ մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Զանհաս տիւնորէնութեամբ մայր. և զանձնաւոր տաճար Աստուածանին. օրհնութեամբ մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Զբոլորից փրկութեան մայր. որ զանտանելին յէից ի յարգանդի երանգ. ընդնա ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք։

Ողորմեա Գ։

Յամենայնի բազումողորմ Աստուած. նայեա յիս գթութեամբ եւ խնայեա. զի դու միայն ես մարդասէր։ Փառք Հօր։ Նա խաչիւրդ քո կենարարաւ պահեա. եւ յարութիւնդ քո փրկեա և ապրեցո. զի դու միայն ես մարդասէր։ Այժմ և միշտ։ Նա ի միւսանգամ ի դալստեան քոյ տէր. վերընտիր զիս նորոգեա և ապրեցո. զի դու միայն ես մարդասէր։

Տէր յերկնից Գ։

Այսօր յարութիւն Քրիստոսի տօնեցէք հաւատացեալք. ի մի Աստուած հայր ամենակալ։ Փառք Հօր։ Այսօր եւ կանանցքն խուզաբերք աւետիս տալով առաքելոցն. օրհնեն զԱստուած զհայր ամենակալ։ Այժմ և միշտ։ Այսօր և հրեշտակք ի յերկինս հոգեւոր հընչմամբ երգով. օրհնեն զԱստուած զհայր ամենակալ։

Առաւօտու երգ Յարութեան Գ։ Քեզ. Սաղմոս։

Առաւօտու Սաղմոս 27։

Կ3. Յոյց մեզ տէր։ Փխ. Հաճեցար տէր. 191։

Ա-Էպոպան ըստ Ղուկասու։ ԺԱ. 1։

Յն մերոյ Յեսի Քրիստոսի

Եւ եղև 'ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս. և իբրև դադարեաց՝ ասէ ցնա ոմն յաշակերտացն իւրոց. Տէր ուսո՛ մեզ յաղօթս կալ, ոգ և Յովհաննէս ուսոյց աշակերտաց իւրոց։ Ասէ ցնո՝, յորժամ կայցէք յաղօթս, ասասջի՛ք. Հայր մեր՝ սրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութի՛ն քո։ Օ՛հաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ զօրըստօրէն։ Եւ թո՛ղ մեզ զմեղս մեր, զի և մեք թողումք ամենայնի՝ որ պարտիցի մեզ. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութի՛ն։ Եւ ասէ ցնո՝. ո՞վ է 'ի ձէնջ՝ որոյ իցէ բարեկամ, և երթայցէ առ նա 'ի մէջ գիշերի, և ասիցէ ցնա. բա՛րեկամ՝ տո՛ւր ինձ փոխ երիս նկանակս. զի բարեկամ իմ եկն առ իս յուղղոյ, և ոչ ինչ ունիմ դնել առաջի նո՛ր։ Եւ նա 'ի ներքուստ տայցէ պատասխանի և ասիցէ. մի՛ աշխատ առներ զիս, զի դուրքդ փակեալ են, և մանկունքս ընդ ինև կան յանկողնի. ոչ կարեմ յառնել և տալ քեզ։ Ասեմ ձեզ, եթէ ոչ յարուցեալ տայցէ նմա վ՝ բարեկամութենն, սակայն վասն ժտութենն յարուցեալ տայցէ նմա՝ զինչ և պիտոյ իցէ։ Եւ ես ասեմ ձեզ, խնդրեցէ՛ք՝ և տացի ձեզ, հայցեցէ՛ք՝ և գտջի՛ք, բախեցէ՛ք՝ և բացցի ձեզ։ Օ՛ի ամ որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա։ Յո՞ ոք 'ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, մի՛ թէ փոխանակ ձկանն օ՞ձ տայցէ նմա։ Եւ կամ խնդրիցէ ձու, մի՛ թէ կարի՞ճ տայցէ նմա։ Իսկ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց, ո՞րչափ ևս առաւել հայր ձեր յերկնից տացէ բարիս այնոցիկ, որ խնդրենն 'ի նմանէ։ 13։

Քեզ. Խնդրեսցուք։ Կեցո՛։ Ալ. Քրիստ ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Առաջին Սաղմոս ՃԽԹ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր։ 193։

Ա-Էպիպոն ըստ Մատթէոսի։ ԺԳ։ 24։

Տէրն մեր Յն ՝Ն

Այլ առակ արկ առ նոսա՝ և ասէ. Նմանեցաւ արքայութիւն երկնից առն, որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում։ Այլ ՝ի քուն լինել մարդկան եկն թշնամին նր և ցանեաց ՝ի վր որոմն ՝ի մէջ ցորենոյն՝ և գնաց։ Այլ իբրև բուսաւ խոտն և արար պտուղ, ապա երևեցաւ և որոմն։ Մատուցեալ ծառայք տանուտեառնն ասեն ցնա. տէր՝ ոչ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում՝ արդ՝ ուստի ունիցի զորոմն։ Այլ նա ասէ ցնս. այր թշնամի արար զայն։ Ասեն ցնա ծառայքն. կամի՞ս՝ զի երթիցուք քաղեսցուք զայն ՝ի բաց։ Այլ նա ասէ ցնս. մի, գուցէ մինչ քաղիցէք զորոմն, և զցորեանն ընդ նմին ՝ի բաց խլիցէք։ Թո՛յլ տուք երկոցունց աճել ՝ի միասին մինչև ՝ի հունձս, և ՝ի ժամանակի հնձոց ասացից ցհնձողսն. քաղեցէք նախ զորոմնդ և կապեցէք զայդ խրձունս առ ՝ի յայրել, և զցորեանն ժողովեցէք ՝ի շտեմարանս իմ։ Այլ առակ արկ առ նոսա՝ և ասէ. Նման է արքայութիւն երկնից հատոյ մանանխոյ. զոր առեալ մարդոյ՝ սերմանեաց յագարակի իւրում։ Որ փոքր է քան զամենայն սերմանիս. և յորժամ աճիցէ, մեծ է քան զամենայն բանջարս. և լինի ծառ՝ մինչև գալ թռչնոց երկնից և հանգչել յոստոս նր։ Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա՝ և ասէ. Նման է արքայութիւն երկնից խմորոյ, զոր առեալ կնոջ թագոյց ՝ի գրիւս երիս ալեր՝ մինչև ամ խմորեցաւ։ Զայս ամ խօսեցաւ Յն առակօք ընդ ժողովուրդսն. և առանց առակի ոչ ինչ խօսէր ընդ նոսա։ Զի լցցի ասա-

ցեալն 'ի մարգարէէ. բացից առակօք զբերան իմ, բղխեցից զծածկեալսն 'ի սկզբանէ աշխարհի։ 35։

ՍԷՈԷԴԷ ՅՈՐՈՒԵ ՐԶ։ ՎՅՈՐՈՊ. Ասասցուք։

ՀՈՄԷՈՐԻՆ ՐԶ։

Այսօր զուարճացան տիեզերքք ամենայն ճըշմարիտ յարութեամբ Աստծոյդ. քանզի զդըժոխս աւերեաց եւ գերեաց զարգելեալս ի նմա։ Այսօր լուսափայլեալ մեծապայծառ ծագմամբ. հրեշտակապետն ի վերայ վիմին կանանցն աւետէր ասելով. զի խընդրէք ըզկենդանին ընդ մեռեալս։ Այսօր բերկրեցան կանայքն իւղաբերք. աւետեօք յարուցեալ Աստծոյդն. դարձան յառաքեալսն ասելով յարեաւ Աստուած։

Աքանչելի կանայքն աներկիւղ եկին ի տեսանել ըզգերեզմանն. զի կատարեալ սէրըն մերժեաց զերկիւղն։ Եկին ի խընկել ըզտէրունեան մարմինն եւ տեսին յարուցեալ ի գերեզմանէն. եւ վերըստին լոյսըն ծագեաց յաշխարհս։ Դարձեալ հրեշտակըն զյարութիւնն տ'ն. և բացան գերեզմանըք նընջեցելոց. եւ յարութիւն տ'ն յաղթեաց մահու։

Կանխելով եբ կանանցն ընդ առաւօտն ի գերեզմանն. և զահաւոր յարութեն ըզձայն ի հրեշտակէն լըւեալ. եթէ յարեաւ Աստծ։ Փառք Հօր։ Թողեալ ըզտընտանի երջանիկ և եբ կանանցն. եւ խընդութիւն ընթանային պատմել աշակերտացն. եթէ յարեաւ Աստծ։ Այժմ և միշտ։ Օ՜քանչելի և ըզհրաշագործ ըզյարութիւնն Քրիստոսի. առաքելոցն

ստուգապէս տեսեալ. ընդ հանուր քարոզէին. Եթէ յարեաւ Աստուած։

Աւյոկման Սողոմոն ԺԸ։ Որհնեցէք զԱ. 197։

Ա-Էպոպան ըստ Մարկոսի։ Զ. 7։

Տէրն մեր Յն Ռն

Եւ շրջէր շուրջ զգաւառսն, և ուսուցանէր։ Եւ կոչեաց առ ինքն զերկոտասանսն, և սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս. և տայր նոցա իշխանութիւն 'ի վերայ այսոց պղծոց։ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ինչ բարձցեն 'ի ճանապարհ, բայց միայն գաւազան. մի՛ պարկ, մի՛ հաց, մի՛ պղինձ 'ի գօտիս. այլ ագանել հողաթափս, և մի՛ զգեստս։ Եւ ասէր նոսա. յորո տուն մտանիցէք, անդէն օթևանս կալջիք՝ մինչև ելանիցէք անտի։ Եւ որ ոչ ընկալցին զձեզ, և ոչ լուիցեն ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց 'ի վկայութիւն նոցա։ Եւ ելեալ քարոզէին զի ապաշխարեսցեն։ Եւ դևս բազումս հանէին. և օծանէին իւղով զբազում հիւանդս՝ և բժշկէին զնս։ 13։

Ռէպ. Խնդրեսցուք։ Կեցո։ Ալելի. Մեծագաւոր։

Դ. ԵՍՔՍԹ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն։

ԱՐԱՐԻՈՎՆ հանդերձ կառոյն ընկղմեցաւ. 164։

Ելելոյ Յոյսոյ։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հայց Գ.Զ։

Որ յաւիտենից ես Աստուած եւ Տէր ամենայն կենդանութեան. խոնարհեցար ի չարչարանս հանմբերելով խաչի և մահու. զքեզ օրհնեմք Աստուած հարցըն մերոց։ Որ ամենայն բարութեան ես Տէր եւ ի քրովբէական աթոռ նստես. եդար ի նորափոր վիմի անապական մարմնով. զքեզ օրհնեմք Աստուած հարցըն մերոց։ Որ էակից ես Հօր եւ սրբ Հոգւոյն. ի՛ջեր ի դըժոխս փրկեցեր զգերեալսն աւերելով ըզմահ. զքեզ օրհնեմք Աստուած հարցըն մերոց։

Գ. ԸզՏէր երգով օրհնութիւն բարձր արարէք յաւիտեան։ Փառք Հօր։ Որ ելոյծ ըզզօրութիւնս դըժոխոց խորհրդով տընօրէնութեան իւրոյ. Քրիստոս թագաւոր փառաց փառաւորեալ ի զօրաց զըւարթնոց եկայք ժողովուրդք երգով օրհնութիւն բարձր արարէք յաւիտեան։ Այժմ և միշտ։ Որ բանիւ գոյացոյց զարարածս էակից Բանն ի Հօրէ Որ. եւ մահու խաչի զամենայնն վասն մեր համբերեալ յաղթեաց մահու ինչխանութիւն. եկայք ժողովուրդք երգով օրհնութիւն բարձր արարէք յաւիտեան։

ՍԵՊՏԵՄԲԵՐ Գ.Զ։

Ո՞ւրախ լեր Ա՛ծածի՛ն յոյս և փրկութի՛ւն մայր. ընդ քեզ՝՝՝ զ ընդունող լուսոյ մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Ի՛ զքեզ լուսոյ մայր և կոյս. ընդ քեզ՝՝՝ զ գանձըդ կենաց ա՛ծային. ձայնի՛ւ ցընծութեա՛մբ մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Այսր ա՛ր ան-ա՛րատ լուսոյն. հրեշտակայի՛ն օրհնութիւն պա-տուական ընդ քեզ՝՝՝ մեծացուցանեմք։

ՈՂՋՈՒԹԻՒՆ Գ.Զ։

Վրի՛ստոս Ա՛ստ ո՛ր տարածեցեր ըզձեռս քո՛ի խա-չին. եւ լուծեր ըզկնիքդ դատապարտութեան մե-ղայ. ո՞ղորմեա՛։ Փառք Հօր։ Ի՛ խաչին բեւեռե-ցար. և հեղմամբ արեանըդ քո՛ փրկեցեր ըզտիե-զերս ի մեղաց. ո՞ղորմեա՛։ Այժմ և միշտ։ Փա-ղեցար ի մէջ երկրի՛. և յերրորդ աւուր յարեար. ընդ ընժոխս աւերեցեր բանի՛ւ. ո՞ղորմեա՛։

ՏԷՐ ՅԵՐԻՆԷՅ Գ.Զ։

Ի՛ խաչանիշ փայտէն դընդ ընդրդեցան դըժոխք. զօ-րութի՛ւն ա՛ր Հոգւոյն նորոգեցաւ երկիր. ո՛վ է սա ո՛ր խափանեաց ընդմի՛ն։ Փառք Հօր։ Հրեշտակն աւետէր կուսին Մարիամու. սա՛ է ի սկզբանէ Բանն որ յառաջ քան զյաւիտեանս Որդին. սա՛ է թագաւորն ո՛ր խափանեաց ընդմի՛ն։ Այժմ և միշտ։ Յարեաւ՝ յաւուր երրորդի. վէ՛մ ընդ պատառեցան երկիր շարժեցաւ սասանեցան դըժոխք. սա՛ է կեն-դանի՛ն յաւիտենից Քրիստոս։

Ա՛-ՊՈՒ-ՕՊՈՒ ԷՐԳ ՅՈՐՈՒԵՆ ՌԿ։ ՔԷՊ. Ասացուք։

Ա՛-ՊՈՒ-ՕՊՈՒ ՍՈՂՄՈՍ ԶԳ։

ԿՅ. Յոյց մեղ Տէր։ ՓԽ. Հաճեցար Տէր. 191։

Ա-Էպիսկոպոսն ըստ Դ-կոսոս։ ԺԱ. 14։

Տէրն մեր Յն Քն

Եւ հանէր դև մի համր. և եղև յելանել դիւին՝ խօսեցաւ համրն, և զարմացան ամ ժողովուրդքն։ Եւ ոմանք 'ի նոցանէ ասեն. բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս։ Եւ այլք փորձէին՝ և նշան յերկնից խնդրէին 'ի նմանէ։ Իսկ նոքա գիտացեալ զխորհուրդս նոցա, ասէ ցնս. ամ թագաւորութի բաժանեալ յանձն՝ աւերի, և տուն բաժանեալ յանձն՝ կործանի։ Ապա եթէ և սատանայ բաժանեցաւ յանձնէ. զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նր. զի ասէք զինէն եթէ բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս։ Եթէ ես բէեղզեբուղաւ հանեմ զդևս, որդիքն ձեր ի՞ հանիցեն. վա՞ այդորիկ նոքին եղիցին ձեր դատաւորք։ Իսկ եթէ մատամբ Այ հանեմ զդևս, ապա հասեալ է 'ի վրա ձեր արքայութի Այ։ Յորժամ հզօր վառեալ՝ պահիցէ զտուն իւր, 'ի խաղաղութեանն են ինչք նր։ Բայց եթէ հզօրագոյն քան զնա 'ի վրա եկեալ յաղթեսցէ նմա, զսպառազինութիւնն հանէ՝ յոր յուսացեալ էր, և զաւար նր բաշխեսցէ։ Որ ոչ է ընդ իս՝ հակառակ իմ է, և որ ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ։ Յորժամ այսն պիղծ ելանիցէ 'ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ. և իբրև ոչ գտանէ, ասէ. դարձայց անդրէն 'ի տուն իմ ուստի ելին։ Եւ գայ գտանէ մաքրեալ և յարդարեալ։ Յայնժամ երթայ և առնու եօթն այլ այսս չար ևս քան զինքն՝ և մտանէ բնակէ անդ, և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն։ Եւ եղև մինչդեռ խօսէր զայս, ձայն եբարձ կին մի 'ի ժողովրդենէ անտի և ասէ. երանի է որովայնին՝ որ կրեացն զքեզ, և սուսանցն՝ որ դիեցուցին զքեզ։ Եւ նա ասէ. նա երանի այնոցիկ է, որ լսեն զբանն Այ, և առնեն։ Եւ 'ի դիզանել 'ի վրա նր ժողովրդ-

դոցն՝ սկսաւ ասել. ազգս այս ազգ չար է. նշան խնդրէ, և նշան յերկնից ոչ տացի սմա՝ բայց նշանն Յովնանու։ Զի ոչ եղև Յովնան նշան Նինուէացւոց, այնպէս եղիցի և որդի մարդոյ ազգիս այսմիկ։ Դշխոյն հարաւոյ յարիցէ 'ի դատաստանի ընդ արս ազգիս այսորիկ՝ և դատապարտեսցէ զսոսա, զի եկն 'ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի. և ահա առաւել քան զՍողոմոն է աստ։ Արք Նինուէացիք յարիցեն 'ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատապարտեսցեն զսա, զի ապաշխարեցին 'ի քարոզութիւնն Յովնանու. և ահա առաւել քան զՅովնան է աստ։ 32։

Ռեպ. Խնդրեսցուք։ Կեցո։ Ամ. Ռում ամենա։

ՑԵՐԵԿՈՅՆ

Ամսոյն Սողմոս ՃԽԹ։

Աչ ողորմեայց մեզ և օրհնեա զմեզ. 229։

Ա-Էպիստոն ըստ Պողիէոսի։ ԺԴ. 36։

Ցն մերոյ Յեսի Ռեսի

Յայնժամ թողեալ (Յեսի) զժողովուրդսն՝ եկն 'ի տուն. մատեան առ նա աշակերտքն նր՝ և ասեն. մեկնեա՛ մեզ զառակ որոմանցն ագարակի։ Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա. որ սերմանէ սերմն բարի՝ է որդի մարդոյ։ Եւ ագարակն աշխարհս է։ Սերմն բարի նոքա են՝ որ որդիքն արքայութեան են. իսկ որոմն որդիք չարին են։ Եւ թշնամին որ վարեաց զայն՝ սատանայ է։ Եւ հունձքն կատարած աշխարհիս է, և հնձողքն հրեշտակք են։ Որպէս ժողովի որոմն՝ և 'ի հուր այրի, այնպէս եղիցի 'ի կատարածի աշխարհիս։ Առաքեսցէ որդի մարդոյ զհրեշտակս իւր, և ժողովեսցեն յարքայութենէ նր զամ գայթակղութիս՝ և զայնոսիկ ոյք գործեն զանօրէնութիւն։ Եւ արկցեն զնս 'ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ՝ և կրճել ատամանց։ Յայնժամ արդարքն ծա-

գեսցին իբրև զարեգակն յարքայութիւնն երկնից։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ՝ թագուցց. և 'ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զամենայն զոր ունի, և գնէ զագարակն զայն։ Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից առն վաճառականի՝ որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս։ Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր՝ և գնեաց զայն մարգարիտ։ Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից ուռկանի արկելոյ 'ի ծով՝ և յամենայն ազգաց ժողովելոյ։ Զոր՝ իբրև լցաւ, հանեալ 'ի ցամաք՝ և նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս, և զխոտանն 'ի բաց ընկեցին։ Այնպէս եղիցի 'ի կատարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք՝ և մեկնեսցեն զչարս 'ի միջոյ արդարոց, և արկցեն զնոսա 'ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ և կրճել ատամանց։ Ասէ ցնոսա Յս. իմացարո՞ւք զայս ամենայն։ Ասեն ցնա. այո՛ Տէր։ Եւ նա ասէ ցնոսա. վասն այսորիկ ամենայն դպիր աշակերտեալ արքայութեանն երկնից՝ նման է առն տանուտէրն, որ հանէ'ի գանձէ իւրմէ զնոր և զհին։ 52։

Մեծի Գալոստեան։

Օրհնեալ որ գաս յանուն Տն. օրհնեալ որ գալոց ես։ Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեամբ կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ։

Հոմիլիայի Դ։

Թագաւոր գոլով քո յաշխարհս. 232։

Աբեյմանն Սալոմոն Զ։ Յնծացէք առ Աստուած. 233։

Առ Եփեսացիսն Գ. Գ. 14։

Վասն Տն մերոյ Յսի Քրիստի

Եւ լուաւ արքայ Հերովդէս. քանզի յայտնի եղև անուն նորա. և ասէր, թէ Յովհաննէս Մկրտիչ յարեաւ 'ի մեռելոց, և վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ։ Այլք ասէին թէ Եղիա է, իսկ այլքն՝ թէ

մարգարէ է. կամ թէ իբրև զմի 'ի մարգարէից։ Իբրև լուաւ Հերովդէս, ասէ. զորոյ ես զգլուխն հատի զՅովհաննու, սա է, նա յարեաւ 'ի մեռելոց։ Զի ինքն Հերովդէս առաքեաց կալաւ զՅովհաննէս, և կապեաց զնա և եդ 'ի բանտի վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նի, զի նա կին արար զնա։ Ասէր Յովհաննէս զՀերովդէս՝ թէ ոչ է օրէն քեզ ունել զկին եղբօր քո։ Եւ Հերովդիա ոխացեալ էր ընդ նմա և կամէր սպանանել զնա, և ոչ կարէր։ Զի Հերովդէս երկնչէր 'ի Յովհաննէ. քանզի գիտէր զնա այր արդար և ՝ի՞բ. և սպասէր նմա. և լուեալ 'ի նմանէ բազում ինչ առնէր, և քաղցրութիւն ընդ նմա։ Իբրև օր մի լինէր պարապոյ, յորժամ ընթրիս տայր Հերովդէս յաւուր ծննդոց իւրոց՝ նախարարաց իւրոց և հազարապետաց և մեծամեծաց Գալիլեացւոց. և 'ի մտանել դստերն Հերովդիայ՝ և 'ի կաքաւել, հաճոյ եղև Հերովդի և բազմականացն։ Ասէ թագաւորն ցաղջիկն. խնդրեա յինէն զոր ինչ կամիս, և տաց քեզ։ Եւ երդուաւ նմա բազում անգամ, թէ զոր ինչ և խնդրեսցես դու յինէն, տաց քեզ, մինչև ցկէս թագաւորութեան իմոյ։ Նա ելեալ ասէ ցմայր իւր. զի՞նչ խնդրեցից. և նա ասէ, զգլուխն Յովհաննու մկրտչի։ Եւ մտեալ անդրէն փութանակի առ թագաւորն՝ ասէ կամիմ զի այժմ տացես ինձ վաղվաղակի 'ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի։ Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն, այլ վասն երդմանցն և կոչնականացն՝ ոչ կամեցաւ անարգել զնա. և առաքեաց վաղվաղակի թագաւորն դահիճ, և հրամայեաց բերել զգլուխն նի. և չոքաւ գլխատեաց զնա 'ի բանտին. և եբեր զգլուխն նի սկտեղը՝ և ետ ցաղջիկն. և աղջիկն տարաւ ետ մոր իւրում։ Իբրև լուան աշակերտքն նի, եկին բարձին զմարմինն՝ և եդին 'ի գերեզմանի։ 29։

Գլ. Խնդրեացուք։ Կեցո։ Աղջ. Թագաւոր։

Կ. ԱԽԽՊԱԿԸ

Ի ԳԻՇԵՐԻՆ
Օրհնութիւն գ.:

ԳՆԱԿԱՆ ընդունելի եղև իմ տէր. 168:
Ալէլուիա յարութիւն գ.:

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ
Յայս ին-քսանէից, ի-նոյ ու-քսանեն քէրքէ, 'ի Մայիսի 7.
Երկնանոն ու-քէ խաչէ պօն է:

Հարց խաչէ ասա գ.:

Այսօր ընդ ամպիս լուսաւորս երեւեալ նշան տէրունական խաչին. բոցանիշ փայլմամբ տեսողացն ընթացեալ ի քաղաքին պատմէին. ընդնշան քո տէր Աստուած հայցին ի մերոց: Յարևելից փայլեաց ճառագայթ որ խաչին. արեգականակերպ ճառագայթիւք միաբան տեսանէր ի յերրորդ ժամու. նշան քո տէր Աստուած հայցին ի մերոց: Ապանէն ցուցաւ մեզ զ'որ խաչին փրկչական. զի յաղթեսցուք նովաւ անօրէն թշնամւոյն. կնիք հաստատութեամբ ընկալեալ ի յանձին նոցա մեր. ընդնշան քո տէր Աստուած հայցին ի մերոց:

Գ. Ոչ զՏ՝ր օրհնեցէք բարձր արարէք ընդնա յաւիտեան: Փառք Հօր: Այսօր նշան որ խաչին ի յերկնից երևեալ. եկայք նոր ժողովուրդք. միաբանութիւք ընդՏ՝ր օրհնեցէք բարձր արարէք ընդնա յաւիտեան: Այժմ և միշտ: Այսօր ի ՝ր գողգոթայ ցոլացեալ երևիւր տեսիլ ահաւոր ժողո-

վոյն. քահանայք երգով ըզՏ՝ր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուցէք Դ։

Առաջ լուսոյ Արարիչ ո՛ր կոյս. որ ընդլոյսն առ ի՛ Հօրէ ծընար մանրմնով. և եղեր աղուեալք արեգականն արդարութեան. հոգեւոր երգով ըզքեզ սրբբո՛ւհի՞ մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Դեռ՝ բոՀվբէ՛ից գերագոյն Էին աթոռ և՛ ծառ կենաց անմահական պըտղոյն. տապանակ կըտակի Դանին և սանիսոր ոսկի երկնային մանանայի՛ն. հոգեւոր երգով ըզքեզ սրբբո՛ւհի՞ մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Դեռ՝ բացաւ սրոՀվբէ՝ափակ դուռըն դրախտի՛ն. և՛ քեզ տըւաւ մեզ փայտն անմահութե՛. զոր ի նմա՛ զենեալն անմահ այսօր յերկնից լուսաւորեաց. հոգեւոր երգով ըզքեզ սրբբո՛ւհի՞ մեծացուցանեմք։

Գնչէրէն Խաչէ տաւ։

Այսօր ե՛կեալ կամաւ Տէրն ի՛՝ խաչէ, եւ տարածեաց ըզբազուկս իւր ի՛ նմա։

Ողբերաւ Դ։

Ի՛՝ յերկնից երևեալ նըշանն յաղթութե՛ ա՛՝յսօ՛ր. հեթանոսաց ծագեալ՝ց ընչան ողորմութե՛։ Նա՛ բազմութե՛ ժողովոյն տեսանէին ա՛՝յսօ՛ր. ո՛՝ր ըզխաչըն լուսո՝ց ճառագայթիւք զարդարեալ։ Ընդ երևումն սրբբոյ խաչի՛ քո Դեռ ա՛՝յսօ՛ր. Երուսաղէմ մեծապէ՛՝ս պանծացա՛՝ւ յոյժ։ Փառք Հօր։ Նա՛ ըզծագումն լուսոյ ա՛՝ծային նըշանի՛՝՝ քո՛՝. ճառագայթիւք տեսանի՝՝ր բազմութե՛՝ ժողովոյն։ Այժմ և միշտ։ Ամենայաղթ զօրութի՛

խաչի՛ քո Քո՛ որ ցուցաւ ի յօգնութիւն ընդդէմ թշնամւոյն. պատերազմեա՛ծ զօրութի՛ւն քո՝:

ՏԷՐ ՅԵՐԻՆԿ ԳԼ:

Գանա՛զան զօրութեա՛ն ընկեսա՛ւ քո՝ ետո՛ւր մեզ Քո՛՝. և սո՛վաւ յաղթեսցո՛ւք անօրէ՛ն թշնամւոյն: Սա՛ է զէն յաղթութի՛ւն սրեալ արեամբ Որդւոյն Ա՛յ. և սո՛վաւ յաղթեսցո՛ւք անօրէ՛ն թշնամւոյն: Սա՛ է ամենա՛ւ տէրունեա՛ն և ի սմա՛ է բազմեալ Քո՛՝ Որդին Ա՛յ. և սո՛վաւ յաղթեսցո՛ւք անօրէ՛ն թշնամւոյն: Փառք Հօր: Սա՛ է սեղան սրբութի՛ւն եւ ի սմա՛ է պատարագեալ Քո՛՝ գառն Ա՛յ. և սո՛վաւ յաղթեսցո՛ւք անօրէ՛ն թշնամւոյն: Ա՛յժմ և միշտ: Սա՛ է կարապետ յաւուր գալստեան փրկչի՛ն. եւ պրսակ պարծանաց հաւատացելոց. և սո՛վաւ յաղթեսցո՛ւք անօրէ՛ն թշնամւոյն:

Ա՛ՄԱՍՈՒՆ ԷՐԳ:

Ետո՛ւր երկիւղածաց քոց նշա՛ն, զի ապրեսցին յերեսաց աղեղա՛ն:

Ո՞՝ փրկեցա՛՝ն սիրելի՛՝ք քո, կեցո՛՝ աջով քով եւ լսո՛՝ւր մեզ՝:

ՔԱՐՈԶ ԱՍՏՍՑՈՒՔ:

Իսկ զինչ ՍՔ Ա՛ԾԻՆ ԵԼԱՆԷՆ ԽԱՉԷ Ի ԱՐԷՍՏԱՆԱՑ Ի ՀԱՄ ՊԱՐԴԵՍ՝ Ի ԴՈՒՐՍ ԱՍԷԼՈՅ

ՇԱՐԱԿԱՆ ԽԱՉԷ ԳԼ:

Ո՛ր ծանգեցեր մեզ լոյս մեծ ընկնչա՛ն յաղթութեա՛ն խաչի՛՝ քո թանգաւոր յա՛՝ր՝տեանց. եւ ետո՛ւր պարիսպ ամրութեա՛՝ն հաւատացեալ՝՝ներ՝՝ քոց աշտարակ հզօր յերեսաց թշնամւոյն. աղաչեմք ընդքե՛՝ղ

Տէր պահպանեա՛ զմեզ ընդ հովանեաւ խաչի՛ քո սո՛ւրբ։ Սա՛ պրսակ զարդարեալ ի շնորհաց իմանալի՛ լո՛ւսոյն. եւ եդեալ ի գլուխս մեղա՛ւցեալոյն. վայելուչ երանգօք ներկեալ ա՛րեամբ եւ ջրով. ի տիգախոց կողէդ զոր ի զինաւորէ՛ն ընկալաք. աղաչեմք զքեզ՝ Տէր պահպանեա՛ զմեզ ընդ հովանեաւ խաչի՛ քո՛ սո՛ւրբ։ Որ զանդունդս մեղաց ծո՛վն սովաւ բաժա՛նեցեր. եւ զբրունաւորն ծածկեցեր խորքքն յաւիտեա՛նս։ հրով. հաներ զոժողովուրդն քո ի բնակութիւն երկնից անկեալ զօրացն. աղաչեմք զքեզ՝ Տէր պահպանեա՛ զմեզ ընդ հովանեաւ խաչի՛ քո՛ սո՛ւրբ։ Զողաբարձ նշպանակ օրինակեալ քառաթեւ ա՛ռ խաչին. ձեւացուցանէր Մովսէս իսրայէլեան բանակի՛ն զօրքն պրղընձի. ապրեցուցանել զվիրաւորեալն ի խածանող սողնոց թունից. աղաչեմք զքեզ՝ Տէր պահպանեա՛ զմեզ ընդ հովանեաւ խաչի՛ քո՛ սո՛ւրբ։ Օգնականագի՛ր անարատ ծընողի՛ քո՝. արկանե՛մք առաջի անոխակալ տէրութե՛ան քո՝. յորժամ գաս փառօք՝ օր դատել զլթընչանմի՛ն խաչի՛ քո՝. ներեա՛ յանցանաց մերոց բարեխօսութ՛ամբ քո՛ եւ կուսի՛. աղաչեմք զքեզ՝ Տէր պահպանեա՛ զմեզ ընդ հովանեաւ խաչի՛ քո՛ սո՛ւրբ։

Կամ Դ։

Օ՛ղորութիւն ա՛ռ խաչի՛ քո Ք՝ա՝. որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի՛. սա՛մ պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ՝։ Դանդի ի սմա բարձրացա՛ր Ստեղծած, եւ ի սմա՛ հեղեր զպատուա-

կան ե՞ք զարիւնդ. սա՞՛ռ պահե՞սցէ զմեզ յա-
ժենայն փորձութենէ։ Այլ զգո՞ մի՛ սանգամ զգ-
գալուստդ նշանաւ խաչի քո՞ ցուցեր աշխարհի.
սա՞՛ռ պահե՞սցէ զմեզ յամ փորձուէ։

ՕՂՆԻ ՍՈՂՄՈՍ Ղ.Օ։

ԿՅ. Պատմեսցեն երկինք զարդարութի՛ն ն՛ր, տե-
սին ամ ժողովուրդք զփառս ն՛ր։

ՓԽ. Տէր թագաւորեաց՝ցնծասցէ երկիր, ուրախ
եղիցին կղզիք բազումք։

Ամպ և մէգ շուրջ է զնովաւ, յիրաւունս և յար-
դարութի՛ ուղղեալ է աթոռ ն՛ր։

Հուր առաջի ն՛ր գնասցէ, այրեսցէ շուրջ զթշնա-
միս ն՛ր։

Երևեցան փայլատակունք ն՛ր տիեզերաց, ետես
և սասանեցաւ երկիր։

Լերինք ոպ մոմ հալեսցին յերեսաց Տ՚ն, յերե-
սաց Տ՚ն ամ երկիր։

Պատմեսցեն երկինք զարդարութի՛ ն՛ր, տեսին
ամ ժողովուրդք զփառս ն՛ր։

Ամաչեսցեն ամենեքեան որ երկրպագանեն կռոց
և ոչ պարծին 'ի դրօշեալս իւրեանց։

Երկիր պագցեն նմա ամ հրեշտակք ն՛ր, զի լուաւ
և ուրախ եղև Սիոն, և ցնծասցեն դստերք Յուդայ
վ՚ն իրաւանց քոց Տէր։

Զի դու բարձրեալ ես 'ի վ՚ն ամ երկրի, յոյժ
բարձրացար 'ի վ՚ն ամ կռոց։

Ոչք սիրէք զՏէր, ատեցէք զչարութի՛, պահէ
Տէր զանձինս երց իւրոց, 'ի ձեռաց մեղաւորի փրկ-
կեսցէ զն՚ն։

Լոյս ծագեաց արդարոց, ուղղոց սրտից եղև ու-
րախութի՛։

Ուրախ եղերուք արդարք 'ի Տէր, խոստովանե-
ղերուք յիշատակի սրբութե՛ ն՛ր։

Ն՝ ապա ընկնեանուն պնուղն կիրդն Երուսաղեմա-
յոց առ Կոստանդինոս արքայ զնա երթելոյ Նշանի ՅԷ
խաչին յերկնից։

Թագաւորի ՅԾասիրի և բարեպաշտի Օգոստոս Կոստանդեայ. Կիւրղոս որ Յերուսաղէմ եպիսկոպոս, 'ի Տէր խնդալ։ Առաջին զայս Յերուսաղեմն ՅԾասէր Թագաւորութեդ քում առաքեմ Թղթոյ նախնիս. քեզ վայելուչս՝ ընդունել. և ինձ տալ, ոչ բանիւք ողղանօք լցեալս, այլ երկնաւորաց աղդական ՅԾատեսութեան։ Այս ոչ եթէ գեղեցկադիր յարմարումն բանից ինչ ճարտարասանսն հաւանութեան ունին յինքեանս, այլ զսրբոց աւետարանչաց առաջաբանութիւնն 'ի ձեռն իրացն եղելոց որ վկայեն զՀշմարտութիւն։ Զանդի ոմանք, յորոց ստացեալ ունին, զպատուականդ քո բազում անգամ պսակեն զգլուխ՝ ոսկեհուռն պսակս փայլուն և պայծառ քարամբք զանազանեալ սրբեալ մատուցանեն։ Իսկ մեք ոչ յերկրէ զքեզ պսակեմք, զի յերկրէ ընծայեալք՝ վաղճան ունին զերկիր, այլ երկնաւոր իրաց ՅԾական զօրութիս 'ի ժամանակս ՅԾասէր քոյոյ Թագաւորութեդ Յերուսաղէմ կատարեալ, փութով քում բարեպաշտութեդ ածեմք 'ի գիտութիւն։ Ոչ զի այժմ յանգիտութէ եկեսցես ՅԾգիտութիւն. զի արդէն ժամանես և զայլս ուսուցանել, որով բարեպաշտիսդ. այլ զի զորս գիտէիրն յայնս և հաստատեսցես։ Այս զԹագաւորութեդ զնախնականն ընկալեալ վիճակ, մեծիւ երկնաւոր ՅԾուստ պսակօք պատուեալ լիցիս. զի ուսեալ՝ Ա՛յ ամենաթագաւորի և արդ զվայելչականն հատուսցես գոհութիւն. և մեծաւ յաղթութիւնք թշնամեացն, քաջալերութիւնք լցցիս, արդեամբք զքո Թագաւորութեդ սիրելի Ա՛յ. վա՛ որոյ առ քեզ հրաշակերտ հասեալ։ Զանդի և առ ՅԾասիրաւն. և առ երջանիկն յիշատակաւ Կոստանդիանու. առ քոյով հարբդ փրկական փայտ խաչին Յերուսաղէմ գը-

տեալ յաճախին շնորհացն. այնմ որ գեղեցիկն խնդրեաց զբարեպաշտուն, զծածկելոցն սէր տեղիքս մատուցին զգիւտ։ Իսկ առ քև, տէր ամենաբարեպաշտ թագաւոր, նախնական բարեպաշտութիւն մեծ, և առ Ա՛ծ երկիւղիւ լցեալ. ոչ այսուհետև յերկրէ այլ յերկնից են զարմանագործութիւնքն՝ և ցն մերոյ և փրկչին Յեսի Քրիստի միածնի Որդւոյն Ա՛յ. որ ընդդէմ մահու է նշանակ յաղթութեան, զերևելին ասեմ զխաչն լուսոյ, ճառագայթիւք փայլեալ յՆերուսաղէմ տեսաւ։ Օ՛ի յաւուրսն սրբս պենդակոստէին. յերիր ժամու ամենայաղթ խաչն լուսոյ կազմեալ՝ յերկնից, գեր 'ի վերոյ սրբոյն Գողգոթայի մինչև 'ի սրբ լեառն ձիթենեաց ցոլացեալ երևէր։ Ոչ միայն միում, կամ երկրորդում երևեալ միայն, այլ ամ քաղաքիս յայտնագոյն ցուցեալ։ Ոչ այնպէս ոչ զի կարծիցէ ոք վաղվաղակի իմն առ աչօք ինչ տեսիլ հարևանցեալ. այլ 'ի բազում ժամն 'ի վեր քան զերկինս ակներև տեսանիւր, և բոցաճաճանչ փայլմամբ արեգակնայիցն յաղթէր ճառագայթիցն, ապա թէ ոչ 'ի նոցանէն յաղթահարեալ ծածկեալ լինէր. զի եթէ ոչ առաւել զօրագոյն քան զարեգակնն տեսողացն մատուցանէր զճառագայթսն։ Մինչ ամենեցուն միանգամայն առ հասարակ 'ի նմանէ 'ի սրբ եկեղեցին ընթանալ բազմութիւն քաղաքիս, ածտեսութիւն երկիւղիւ և ուրախութիւն ըմբռնեալք մանկանց միանգամայն և ծերոց, արանց և կանանց, և ամ չափու հասակի, մինչև 'ի նոցունց իսկ 'ի տնարգել աղջկանց, բնակաց և օտարաց, քրիստոնէից, միանգամայն և որ այլուստ ուստեք յեկաց ազգաց, միահամուռ ամենեցուն իբրև 'ի միոջէ բերանոյ զՅ՛ Քն զՏ՛ մեր զմիածին Որդին Ա՛յ զսխրագործն օրհնել։ Որ արդեամբք և փորձիւ ընձեռեցան, թէ քրիստոնէից հաւատք ամենաբարեպաշտիկ, ոչ հաւանութիւն իմաստութիւն բանից, այլ յայտնութիւն հոգւոյն և

զօրութիւն, ոչ 'ի մարդկանէ միայն պատմեալ, այլ 'ի յերկնից ածուստ վկայեալ։

Արդ վասն զի մեք որ յԵրուսաղէմ բնակեալ եմք, զհրաշից նոր զաքանչելիս քան զկարծիս մերովք իսկ դիմաք ընկալեալ, Աստ ամենաթագաւորի և միածնի Որդւոյն Աստ զվայելչական զերկրպագութիւն գոհութիւն հատուցաք և հատուցուք։ Աղօթս ձիգս և յաւէժս վասն քոյոյ ածասէր թագաւորութեդ 'ի սոքա տեղիքս արարաք և արասցուք։ Զի արժան էր զերկնաւորս զայս ածատեսութիւն, մի տալ լուութեան այլ աւետարանել քում ածային բարեպաշտութեան 'ի նմանէ, վասն այսորիկ փութացայ վասն գրոյս. զի 'ի վերայ հաստատուն և բարի հիման 'ի քեզ յառաջագոյն՝ հաւատոց, զայն՝ որ յաստուծուստ ցուցաւ գիտութիւն, շինեալ հաստատագոյն զառ 'ի Տէր մեր Յս Քս ընկալցիս զյոյսն քաջալերեալ. և ամ սովորութիւն լցեալ, իբրև զնոյն ինքն զԱծ ունելով զօրավիգն, զխաչին նշան յաղթութեան պատրաստագոյն մատուցանիցես պարծանս պարծանաց. զերևեալ նշանն յերկնից ընդ քեզ կրելով։ Զորոյ և զձևն ցուցեալ մարդկան երկին, մեծապէս պանծացաւ։ Բայց հրաշագործութիւս այս, ով ածասէր թագաւոր, մարգարէիցն վկայութիւն և Քսի սրբովք ձայնիւքն՝ որ յաւետարանսն կան, կարգեալ կատարեցաւ առ այժմ. և դարձեալ մեծապէս կատարեսցի։ Զի 'ի Մատթէոսեան աւետարանին՝ ընդհանդերձելոց իրացն գիտութիւն, փրկչին՝ իւրոց երջանիկն առաքելոց պարգևելով. և նոքօք ոչ ընդ նմայն էին խօսելով, յայտնագոյնս յառաջաձայնեալ ասէր. և յայնժամ երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս. զորոյ աւետարանի ածական գիրսն 'ի ձեռն սովորակի առեալ. որք վասն այսր իսկ անդ կան յառաջապատում վկայութիւնքն գրով գլուցես։ Ընդ որ մնանանդ՝ ով ամ, նախագոյնս հոգւոյն կրթութիւք հայել յօժարեցուցանեմ վասն այլոցն

և ես անդ գրելոց՝ 'ի փրկչէն մերմէ յառաջաձայնեալ։ Որոց բաղում երկիւղածութիւնք զգուշութի պիտի առ 'ի ոչ մի ինչ 'ի հակառակաց զօրութէն կրել։ Այս քեզ մերոց բանիցս, ՏԾասէր Թագաւոր, մատուցանեմ նախնիս, Յերուսաղեմէ յառաջ բարբառեմ քեզ ձայնս, մտերիմ հարազատիդ և ամենաբարեպաշտի, ընդ մեզ Քեի երկրպագուի, միածնի Որդւոյն Ս.Յ և փրկչէն մերոյ՝ որ զմատակարարականն ըստ ՏԾեան գրոյն Յերուսաղէմ կատարեաց զփրկութիւն։ Որ կոխեաց աստ զմահ, և իւրով պատուական արեամբն զմարդկան մեղս ջնջեաց. և կեանս և անապականութի, և հոգևորական երկնաւոր շնորհս՝ որ հաւատան՝ ամենեցուն ետ Ս.Ծ։ Զօրութեամբ և շնորհօք զքեզ պահպանեցուցեալ պայծառագոյնս և մեծամեծս ևս բարեպաշտութիւնք վայելուչ ուղղութիւնք, և հարազատ որդւովք Թագաւորականօք զարդացեալ բուսովք, ամենաթագաւորն Ս.Ծ՝ որ ՏՄ բարութեց է տուիչ, բաղում ամաց շրջագայց խաղաղականաց, 'ի պարծանս քրիստոնէից և աշխարհի ՏՄի, պահեսցէ ՏՄ տամբ ողջ զքեզ։ Այս ամենևին զարդարեալ սովորութիւնք, ընդունելութիւնք սրբոց եկեղեցեաց, և Հռովմայեցւոցդ իշխանութիւնք զմարդասիրութի ցուցանելով, և մեծաւ բարեպաշտութե յղփութիւնք յղփացեալ. բաղում խաղաղական պարագայց ամօք՝ ամենեցուն Ս.Ծ շնորհեսցէ ձեզ ՏՄ տամբ, Օգոստէ Թագաւոր ՏԾասէր։ Ողջ լեր'ի Տր։

Պօղոսի առաքելոյն 'ի Գաղատացւոց Թղթոյն է ընթերցուածս։ Գ. 14։

Ա.յլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն 'ի խաչն Տ'ն մերոյ Յեսի Քեի, որով ինձ աշխարհ 'ի խաչ ելեալ է, և ես աշխարհի։ Զի 'ի Քե Յե ոչ թլփատուի ինչ է, և ոչ անթլփատուի, այլ նոր արարածս. և որ միանդամ այսմ կանոնի միաբան

լենին, խաղաղութի 'ի վր նց և ողորմութի, և 'ի վր Իսրայելին Աչ։ Այսուհետև աշխատ ոք զիս մի արասցէ, զի ես զչարչարանս Քո 'ի մարմնի իմում կրեմ։ Շնորհք Տն մերոյ Յսի Քի ընդ ոգւոյդ ձերում եղբարք. ամէն։ 18։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութի սրտից մերոց։

Աւետարան ըստ Մատթէոսի։ ԻԹ. 27։

Տէրն մեր Յս Քս ասէ.

Զի ոպ փայլակն՝ որ ելանէ յարևելից՝ և երևի մինչև յարևմուտս, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ։ Զի ուր գէշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք. վաղվաղակի յետ նեղութե աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի և լուսին ոչ տացէ զլոյս իւր, և աստեղք անկցին յերկնից և զօրութիք երկնից շարժեսցին։ Այս ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ամ աղգք երկրի, և տեսցեն զորդի մարդոյ եկեալ 'ի վր ամպոց երկնից զօրութեամբ և փառաք բազմաք։ Այս առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նր 'ի չորից հողմոց, 'ի ծագաց երկնից մինչև 'ի ծագս նց։ Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն, զի յորժամ նր ոստքն կակղասցին, և տերևն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն։ Նոյնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամ, գիտասջիք թէ մերձ է 'ի դուրս։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ աղգս այս, մինչև այս ամ եղիցի։ Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի անցցեն։ Բայց վ աւուրն այնորիկ և ժամու, ոչ ոք գիտէ. ոչ հրեշտակք երկնից, և ոչ Որդի՝ բայց միայն Հայր։ 36։

Ի՝ պէտուոգրէն պանդուպտոն ի՝ պշկուրհ։

Քրիստ. Աբ խաչիւս։ Աղօթ. Պահպանեա։

Ի՝ վէնի անդուպտոնին 'ի պտուոնը՝ ասէն։

Ա՛ռաւօտեան Սաղմոս ՁԴ։

ԿՁ. Յոյց մեզ Տէր։ Փս. Հաճեցար Տէր. 191։

Ա՛ւետարան ըստ Ղուկասայ։ ԺԱ. 33։

Տէրն մեր Յն ՎՃն ասէ.

Ոչ ուրուք լուցեալ ճրագ՝ դնէ 'ի թաքստեան, և ոչ ընդ գրուանաւ. այլ 'ի վերն աշտանակի, զի որ մտանեն՝ լոյս տեսանիցեն։ Ճրագ մարմնոյ ակն է. յորժամ ակնն առատ է, ամ մարմինն լուսաւոր եղիցի. և երբ ակն չար է, և մարմինն խաւարին եղիցի։ Արդ զգոյշ լեր՝ գուցէ լոյսդ որ 'ի քեզ է՝ խաւար իցէ։ Եթէ մարմինդ քո ամ՝ լուսաւոր է՝ և չգուցէ մասն ինչ խաւարին, եղիցի լուսաւոր ամ. ոգ յորժամ ճրագն նշուղիւք լուսաւորիցէ զքեզ։ Եւ մինչդեռ խօսէր զայս, աղաչէր զնա ոմն փարիսեցի՝ զի ճաշ կերիցէ առ նմա։ Եւ նա մտեալ բազմեցաւ։ Իբրև ետես փարիսեցին՝ զարմացաւ, զի նախ ոչ մկրտեցաւ յառաջ քան զճաշ։ Ասէ ցնա Տէր. այժմ դուք փարիսեցիք զարտաքին բաժակին և զպնակին սրբէք. և ներքինն ձեր լի է յափշտակութիւն և չարութիւն։ Անմիտք՝ ոչ ապաքէն որ զարտաքինն արար՝ և զներքինն նոյն արար։ Բայց աղէ զարժանն իսկ՝ տուք ողորմութի, և ահա ամ սքէ է ձեր։ Այլ վայ ձեզ փարիսեցւոց. զի տասանորդէք զանանուխ և զփեգենայ և զամ բանջար, և անցանէք զիրաւամբք և զսիրովն Աստ. զայս արժան էր առնել՝ և զայնու ոչ անցանել։ Վայ ձեզ փարիսեցւոց. զի սիրէք զբաձրագահս 'ի ժողովուրդս, և զնախողջոյնս 'ի հրապարակս։ Վայ ձեզ՝ զի էք դուք իբրև զգերեզմանս անյայտս, և մարդիկ գնան 'ի վերն՝ և ոչ գիտեն։ Պատասխանի ետ ոմն յօրինականացն՝ և ասէ ցնա. վարդապետ՝ զայս բանս ասելով և զմեզ թշնամանես։ Եւ նա ասէ. և ձեզ վայ օրինականացդ. զի բառնայք մարդկան բեռինս դժուարակիրս, և դուք մատամբ

միով 'ի բեռինսն ոչ մերձենայք։ Ա՜յ ձեզ՝ զի շինէք զշիրիմս մարգարէիցն. և հարքն ձեր սպանին զնս։ Այսպա ուրեմն վկայէք՝ եթէ կամակիցք էք գործոց հարցն ձերոց. զի նոքա կոտորեցին զնս, և դուք զգերեզմանս նց՝ շինէք։ Ա՜ ա՜յնորիկ իմաստութիւն Աստուծոյ ասաց. առաքեցից 'ի նս մարգարէս և առաքեալս, և 'ի նոցանէ սպանանիցեն և հալածիցեն։ Զի խնդրեսցի արիւն ամ մարգարէից՝ հեղեալ 'ի սկզբանէ աշխարհի՝ յազգէ յայդմանէ, յարենէն Աբելի մինչև յարիւնն Զաքարիայ կորուսելոյ ընդ սեղանն և ընդ տաճարն. այո՛ ասեմ ձեզ՝ խնդրեսցի յազգէ յայդմանէ։ Ա՜յ ձեզ օրինականացդ. զի թաքուցանէք զփականս գիտութեան. դուք ոչ մտանէք և որ մտանելոցն են՝ արգելուք։ Եւ 'ի խօսելն զայս ամ առ նս առաջի ամ ժողովրդեանն, զամենի հարկանէին. և սկսան դպիրքն և փարիսեցիք զչարել՝ և գրգռել ընդ նմա վս բազում իրաց. և սպասել որսալ ինչ բանս 'ի բերանոյ նր. զի չարախօսեսցեն զնմանէ։ Որովք 'ի կուտել բիւրաւորաց ժողովրդեանն՝ մինչև կոխել զմիմեանս, սկսաւ ասել ցաշակերտսն իւր. Նախ զգոյշ լերուք անձանց 'ի խմորոյ փարիսեցւոցն, որ է կեղծաւորութի։ Զի ոչ ինչ է 'ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ ծանիցի։ Ա՜ զի զոր ինչ ասիցէք 'ի խաւարի, լսելի լիցի 'ի լոյս. և զոր յականջն խօսեցարուք 'ի շտեմարանս, քարոզեսցի 'ի վերայ տանեաց։ Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց. մի զարհուրիցիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, և յետ այնորիկ աւելի ինչ ոչ ունիցին առնել։ Այլ ցուցից ձեզ յումմէ երկնչիցիք. երկնչիջիք յայնմանէ՝ որ յետ սպանանելոյ ունի իշխանութի արկանել 'ի գեհեն. այո՛ ասեմ ձեզ՝ յայնմանէ երկնչիջիք։ Մի՞ ապաքէն հինգ ճագ երկուց դանգաց վաճառի, և մի 'ի նոցանէ ոչ է մոռացեալ առաջի Աստուծոյ։ Այլ ձեր և ամ իսկ հեր գլխոյ թուեալ է.

մի երկնչիք՝ զի քան զբազում ճագս լաւ էք դուք։ Ասեմ ձեզ. զի ամ որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, և որդի մարդոյ խոստովանեսցի զնմանէ առաջի հրեշտակաց Աստուծոյ։ Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ։ Եւ ամ որ ասէ բան զորդւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զՀոգին սրբոյ հայհոյիցէ, մի թողցի նմա։ Այլ յորժամ տանիցին զձեզ 'ի ժողովուրդս և 'ի պետութիս և յիշխանութիս. մի հոգայցէք՝ ոչ թէ զինչ պատասխանի տայցէք. կամ զինչ ասիցէք։ Զի Հոգին սրբոյ ուսուցցէ ձեզ 'ի նմին ժամու՝ զինչ պարտ իցէ խօսել։ ԺԲ. 12։

ԵՐԿ Հորատեղծեալ։

ՔՐՊ. Խնդրեսցուք։ Կեցո։ Ողբ. Տէր ամենա։

Իսկ 'ի ճաշուն Ի յերեկոյն ամ ինչ յարութիւն է։ Զի ասէն Էլիսաբէտ՝ որ յինուն՝ զինի, ասաս-օրուն հոյն կարարի, Ի 'ի ճաշուն Ի յերեկոյն ի-ր կարգն է։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ասաջին Պաղմոս ՃԽԹ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. 193։

Ի-Էպարան ըստ Մատթէոսի։ ԺԳ. 53։

Տէրն մեր Յս Քս

Եւ եղև իբրև կատարեաց (Յս) զառակս զայնոսիկ՝ փոխեցաւ անտի։ Եւ եկեալ 'ի գաւառ իւր՝ ուսուցանէր զնս 'ի ժողովրդեանն նց, մինչև զարմանալ նց՝ և ասել. սմա ուստի՞ իցէ այս իմաստութի և զօրութիք։ Ո՞չ սա է հիւսանն որդի. ո՞չ մայր սորա կոչի Մարիամ. և եղբարք սորա Յակովբոս և Յովսէս և Սիմոն և Յուդաս։ Եւ քորք սորա ամենեքեան առ մեզ են. արդ ուստի՞ է սմա այս ամ։ Եւ գայթակղէին 'ի նա։ Եւ Յս ասէ ցնս. չիք

մարգարէ անարգ՝ եթէ ոչ յիւրում գաւառի և յիւրում տան։ Եւ ոչ արար անդ զօրութիւս բազումս վասն անհաւատութեանն։ 58։

Եւ ելանէն խաչէն և աւետարանն 'ի դուռս ասելոյ Տէրոյն Յիսուսն 'ի յայնէն գ.։

Փայտ կենաց որ փոխանակ մահացուս պրտղոյն ըզ-Ռ՛ն պրտղաբերեցեր. պարծսպեալ պահեա զուխտս հաւատացելոց։ Ո՛Ռեւ բարձաւ մեզ ճանապարհ ծառոյն կենաց. ի սրովբէափակ պահպանութենէն. պարծսպեալ պահեա զուխտս հաւատացելոց։ Ո՛Ռեւ ազատեցաւ նախահայրն ի ճաշակմանէ պրտղոյն. եւ քեզ երկրրպագեն ամենայն հաւատացեալք. պարծսպեալ պահեա զուխտս հաւատացելոց։

Օրինի՝ Սաղմոս գ.։

Կգ. Աշանեցաւ։ փխ. Ի կարդալ իմում. 195։

Եւ խօսէն աւետարանն խաչելութեան 'ի յայնէն։

Աւետարան ըստ Յովհաննու։ ԺԹ. 25։

Կային խաչելուն Յն մերոյ Յսի Ռսի։

Եւ կային առ խաչին Յսի մայրն նր և քոյր մօր նր Մարիամ Կղէովպայ, և Մարիամ Մագդաղենացի։ Յս իբրև ետես զմայրն, և զաշակերտն զոր սիրէր, զի կայր մօտ. ասէ ցմայրն՝ կին դու ահա որդի քո. ապա ասէ ցաշակերտն, ահա մայր քո. և յայնմ ժամանակէ առ աշակերտն զնա առ իւր։ Յետ այսորիկ իբրև գիտաց Յս, եթէ ահա ամ ինչ կատարեալ է, զի կատարեսցի գիրն, ասէ՝ ծարաւի եմ։ Եւ անդ կայր աման ինչ լի քացախով, և նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեղոյ՝ շուրջ եդեալ զմշտկաւ զոպայի, մատուցին 'ի բերան նր։ Իբրև առ Յս զքացախն հանդերձ լեղուովն՝ ասէ. ամ ինչ կատարեալ է։ Եւ խոնարհեցուցեալ զգլուխ՝ աւանդեաց զոգին։ 30։

Ե- ԳԵՍՈՒՆԱԳԼԽԻՆ ՊԱՆԳՈՍՊՈՆՆ ։

ՏԷՊ. Սէ խաչիւս ։ Կեցո՛ ։ Ապրեցո՛ ։ Պահպանեա ։

Ե- 'Ի ԳՈՒՆԱԼԻՆ ՍՈՒԿՈՒԱԳԻՆ ԺՈՂՈՎԷ. Նա՛ և ես խաղաղութիւն ։ Բահանայն. Օրհնութիւն և փառք ։

Լսոնարհեցո՛ Ֆ- Ապրեցո՛ ։

ՍԷՍԷԳԻ ՅՈՒՐԱԼԷ Գ.Զ ։ Բարոյ. Ասասցուք ։

ՀԱՄԲԱՐՅԻ Գ.Զ ։

Փա՛ռաւորեա՛լ է՞ քո՛ յարութի՛դ ։ Ո՛ր յարեա՛՝ ՛ՐԴ ի մեռելոց յաւո՛ւր երրորդի՝ Քրիստո՛՝ ՛ս Ո՛ՐԴԻ՛ Աստուծոյ. փա՛ռաւորեա՛լ է՞ քո՛ յարութի՛դ ։ Ո՛ր յա՛հե՛՝ ՛ՌՆ՛Ղ բարբառո՛ց յարութե՛՝ քո Տ՛ր երկի՛ր շարժեցա՛ւ. վէ՛՝ ՛մրք պա՛տառեցան Քրիստո՛՝ ՛ս Ո՛ՐԴԻ՛ Աստուծոյ. փա՛ռաւորեա՛լ է՞ քո՛ յարութի՛դ։

Ի՛ ձա՛յն ա՛հեղ յարութե՛՝ քո Տէր զարհուրեցան զինուո՛ր ածը՝ն դա՛՝ ՛ՌՆ՛սքն. յարութիւ՛ փա՛յլ հրեշտակի՛՝ ն ի՛՝ ՛ջմա՛՝ ՛ն. ե՛՝ դո՛՝ ՛ղալո՛՝ ՛վ շարժեցա՛՝ ՛ւ երկի՛ր ։ Փառք Հօր ։ Ա՛՝ ՛ռաւօտեա՛՝ ՛ն ա՛՝ ՛ռ կանանցը՝ դի՛՝ ՛տելով ըզվիմանփո՛ր գերեզմանն. բերելո՛՝ ՛վ զի՛՝ ՛ղս անո՛՝ ՛ՌՆ՛՝ ՛յշս ի յօ՛՝ ՛ծո՛՝ ՛մ՛՝ ՛ն կենարա՛՝ ՛ր մարմնո՛՝ ՛յն. անպարագի՛՝ ՛ր էակա՛՝ ՛նութեա՛՝ ՛ն ։ Ա՛՝ ՛յժմ և միշտ ։ Նա՛՝ ՛ տեսեալ ըզքերո՛՝ ՛վբէ՛՝ ՛ն վերանըստեա՛՝ ՛լ ի վիմի՛՝ ՛ն. տարփողելո՛՝ ՛վ սրբբուհո՛՝ ՛ՌՆ՛՝ ՛յն. ասէ դա՛՝ ՛ՐՁԻ՛՝ ՛Ր ողջո՛՝ ՛ն տուր փո՛՝ ՛ղո՛՝ ՛ցն. քանզի՛՝ ՛ յարեա՛՝ ՛ւ որ յառա՛՝ ՛ջն ասա՛՝ ՛ց ։

Ա՛՝ ՛ՐՅՈՒՆՈՒՆ ՍՈՂՈՄՈՆ ՈՐՕ ։ Օրհնեցէ՛՝ ՛ք զԱ՛՝ ՛Ծ. 197 ։

Ա՛՝ ՛ԷՊՈՐԵՈՆ ԵՍՊ ՍՈՂԻՈՆ ։ Ջ. 30 ։

Ա՛՝ ՛Ռ Տ՛՝ ՛Ն ՄԵՐ ՅԻ՞ ՏԻ՞

Ժողովեցան առաքեալքն (առ Յի՞), և պատմեցին նմա զամ ինչ զոր արարին և զոր ուսուցին ։ Նա՛՝ ՛ ասէ ցնոսա Յիսուս. եկայ՛՝ ՛ք դուք առանձինն յան-

ապատ տեղի, և հանգիջիք սակաւ մի. զի էին բազումք որ երթային և գային, և հաց անգամ չժամանէին ուտել: Եւ գնացին նաւու յանապատ տեղի առանձին: Եւ տեսին զնոսա զի երթային, և զգացին բազումք. և հետի յամ քաղաքաց խուռն ընթանային անդր, և մերձենային առ նոսա: Եւ ելեալ ետես ամբոխս բազում, և գթացաւ 'ի նոսա, զի էին իբրև ոչխարք՝ որոց ոչ ինչ հովիւ. և սկսաւ ուսուցանել զնոսա յոյժ: Եւ իբրև բազում ժամ եղև, մատուցեալ աշակերտքն առէին. տեղիս անապատ է, մինչ դեռ աւուր կայ, արձակեա զժողովուրդսդ, զի երթեալ շուրջ յաղարակս և 'ի գեօղս՝ գնեսցեն իւրեանց զինչ ուտիցեն, զի ասա ուտել ինչ ոչ ունին: 'Եւ պատասխանի ետ և ասէ ցնոսա. դուք տուք դոցա ուտել. ասեն ցնա՝ երթիցուք գնեսցուք երկերիւր դահեկանի հաց, և տացուք դոցա ուտել: Ասէ ցնոսա. քանի՞ նկանակ ունիք՝ երթայք տեսէք, իբրև գիտացին, ասեն ցնա. հինգ՝ և երկուս ձկունս: Եւ հրամայեաց նոցա բազմել երախանս երախանս 'ի վերայ դալար խոտոյ: Եւ բազմեցան դասք դասք՝ ուր հարիւր, ուր յիսուն: Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն, հայեցաւ յերկինս, օրհնեաց՝ մանրեաց զնկանակսն՝ և ետ ցաշակերտսն զի արկցեն նոցա, և զերկուս ձկունսն բաշխեաց ամենեցուն: Կերան և յագեցան, և բարձին զնշխարսն երկոտասան սակառի լի, և 'ի ձկանց անտի: Եւ էին որ կերանն՝ իբրև արք հինգ հազար: 44:

ՎԲԾԼ. Խնդրեսցուք: Կեցո: Ամ. Թագաւոր:

Կ. ԿԻԿՈՍ ԵՍԱՅԻ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնություն գկ։

Արդեսցուք Տն երգ նոր ձայնիւ ցնծութեան. 171։
Ալելուիա Յարութեան գկ։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց գզ։

Պամաւորութիւն եկիր ի չարչարանս Տեր. և ի վերայ նախատանս ստեղծին ընդմեռանիլ յանձն առեր. Տէր Աստուած հայրցն մերոց։ Ընպարտականդ մահու ոչ՝ մահապարտ. դատապարտեալ ի խաչ ելեր վասն ազգի մարդկան. Տէր Աստուած հայրցն մերոց։ Ընմահուանց տրուօղ Քրիստոս Աստուած. ի գերեզմանն ի՞չեր յարութիւնդ մեռելոց. Տէր Աստուած հայրցն մերոց։

գ. Ողջոյն՝ օրհնեցէք բարձր արարէք զանազանն ի վերայ խաչին։ Փառք Հօր։ Որ կանգնեացն զգաքառանկիւն սեղանն խաչին. յաղագս քառակողմ աշխարհի պատարագեալ. յորմէ սեղանոյ բուրեաց անուշահոտ Հոգի՛։ բարձր արարէք զանազանն ի վերայ խաչին։ Այժմ և միշտ։ Որ փոխանակ մեղսանէր մահացուս պրտղոյն. պարգևեաց մեզ կերակուր արդարութեան. ի կեանսն յաւիտենից նորոգելով ընդմի՛։ բարձր արարէք զանազանն ի վերայ խաչին։

Մեծացո՛ցէք գզ։

Սուրբ զԱստծինն. օրհնութեամբ մեծացուցա-

նեմք։ Փառք Հօր։ Աւետարանի հրեշտակն ասեսցէ՝ բանէր ընդ Ընծայնեալ փրկիչն ի սքոյ կուսէն։ Այժմ և միշտ։ Ասէ՝ ուրախ լեր բերկրեալդ. քան զի Տէրն տերանց է ընդ քեզ։

Ողորմեա՛ Գ։

Լոյս ճշմարիտ որ ի Հօրէ առաքեցար առեր մարմին պարագրիլ ի կուսէն. ոչ մեկնելով յանքընին յԷո�նդ Ընծ ողորմեա։ Փառք Հօր։ Որ անհասդ ես յարարածոց եւ քան զամենայն միտս գերազանց. զոր երկինք ոչ բաւէին տանել յարգանդի կուսին կրեցար Ռանդ Ընծ ողորմեա։ Այժմ և միշտ։ Հաշարշարանքս յանձն առեր. ախտակիր հողեղէն նացս եղեր. վասն մերոյ փրկութեան ի գերեզմանի եդար. անկորուստ պահելով զարարածքս. Ռանդ Ընծ ողորմեա։

Տէր յերկինից Գ։

Փառաւորեալ է քո յարութիւդ։ Որ յարեա՛ւ ի մեռելոց յաւուր երրորդի Քրիստոսս Որդի Աստուծոյ. փառաւորեալ է քո յարութիւդ։ Որ յահեղ բարբառոյ յարութեան քո Տի երկիր շարժեցաւ. վէմքդ պատառեցան Քրիստոսս Որդի Աստուծոյ. փառաւորեալ է քո յարութիւդ։ Ի ձայն ահեղ յարութեան քո Տէր զարհուրեցան զինուորացքն դամբանքն. յարփիանփայլ հրեշտակին իջմանն. եւ գոգալով շարժեցաւ երկիր։ Փառք Հօր։ Աղաւօտեա՛ն նոր կանանցն գիտելով ըղվիմանփոր գերեզմանն. բերելով զիւղս անոյշս ի յօծումն կենարար մարմնոյն. անպարագիր էականերութեան։ Այժմ և միշտ։ Ան

տեսեալ ըզքերովբէն վերանըստեալ ի վիմին. տարփողելով սրբբուհովն՝ ասէ գարձիր ողջոյն տուր փողոցն. քանզի յարեաւ որ յառաջն ասաց։

Ա-ա-օպո- Էրգ Յարո-ԸԷ Գ.Կ։ ՎՐՊ. Ասացուք։

Ա-ա-օպո- Սաղմոս ՁԴ։

ԿՅ. Յոյց մեզ Տէր։ Փխ. Հաճեցար Տէր. 191։

Ա-Էպոլոն ըսպ Ղ-ֆասո-։ ԺՐ. 13։

Ա.ռ Տէրն մեր Յն ՎՅ

Ասէ ոմն 'ի ժողովրդենէն ցնա. վարդապետ՝ ասա՛ ցեղբայր իմ բաժանել ընդ իս զժառանգութիւն։ Այլ նա ասէ ցնա. այր դու՝ ո՞ կացոյց զիս դատաւոր կամ բաժանարար 'ի վրայ ձեր։ Այլ ասէ ցնա. տեսէք և զգոյշ լերուք յամ ագահութէ, զի ոչ եթէ 'ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նր։ Խօսեցաւ առ նա առակ մի՝ և ասէ. առն ուրումն մեծատան ետուն անդ տոհմականս. և խորհէր 'ի միտս իւր՝ և ասէր. զի՞ գործեցից՝ զի ոչ գոյ տեղի ուր ժողովեցից զարդիւնս իմ։ Այլ ասէ. գիտեմ զինչ արարից. քակեցից զշտեմարանս իմ, և ևս մեծամեծս շինեցից. և անդր ժողովեցից զցորեան և զամ բարութիս իմ. և ասացից ցանձն իմ. անձն՝ ունիս բազում բարութիս համբարեալ ամաց բազմաց. հանգիր՝ կեր արբ՝ և ուրախ լեր։ Ասէ ցնա Աստ. անմիտ՝ յայսմ գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջիցեն, իսկ զոր պատրաստեցերն՝ ո՞ւմ լինիցի։ Այնպէս և որ գանձէ անձին, և ոչ յԱստ մեծանայցէ։ Ասէ ցաշակերտսն իւր. վա՜յ այդորիկ ասեմ ձեզ. մի՛ հոգայք ընդ ոգւոյ՝ թէ զինչ ուտիցէք, և մի՛ ընդ մարմնոյ՝ թէ զինչ զգենուցուք։ Զի ոգի առաւել է քան զկերակուր՝ և մարմին քան զհանդերձ։ Հայեցարո՛ւք ընդ ագռաւս, զի ոչ սերմանեն և ոչ հնձեն, որոց ոչ գոն շտեմարանք՝ և ոչ համբարանոցք, և Աստ կերակրէ զնս. ո՞րչափ ևս ա-

ռաւել զձեզ՝ որ լաւ էք քան զթռչունս։ Մի՞ 'ի ձէնջ առ հոգալ՝ կարիցէ յաւելուլ 'ի հասակ իւր կանգուն մի։ Իսկ արդ՝ եթէ 'ի փոքուն չէք բաւական՝ վասն այլոցն զի՞ հոգայցէք։ Հայեցարուք ընդ շուշանն՝ ո՞ւր աճէ, ոչ ջանայ՝ և ոչ նիւթէ։ ասեմ ձեզ՝ և ոչ Սողոմոն յամ 'ի փառսն իւր՝ զգեցաւ իբրև զմի 'ի նոցանէ։ Իսկ եթէ զխոտն՝ որ այսօր 'ի բացի է՝ և վաղիւ 'ի հնոց արկանելի, Աստ այնպէս զգեցուցանէ. ո՞րչափ ևս առաւել զձեզ թերահաւատք։ Եւ դուք մի խնդրէք՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք, և մի զբաղնուք. զի զայն ամ հեթանոսք աշխարհի խնդրեն. այլ ձեր Հայր գիտէ՝ զի պիտոյ է այն ամ։ Այլ խնդրեցէք զարքայութի Աստ. և այն ամ յաւելցի ձեզ։ 31։

Գլ. Խնդրեսցուք։ Կեցո։ Աղ. Զամ ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Առաջին Պօղոս Ղեսթ։

Զարհնեցէք զՏէր յօրհնութի նոր. 193։

Ա-Էպիսկոպոս ըստ Պոպլէոսի։ ԺԴ. 1։

Վասն Տն մերոյ Յեսի Քրիստի

Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս չորրորդապետ զլուր Յեսի։ Եւ ասէ ցծառայս իւր. Նա է Յովհաննէս մկրտիչ, նա յարեաւ 'ի մեռելոց, և վասն այնորիկ զօրութիք լինին նովաւ։ Զանազի Հերովդէս կալաւ զՅովհաննէս, կապեաց զնա և եդ 'ի բանտի՝ վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նի։ Զի ասէր ցնա Յովհաննէս. չէ արժան քեզ ունել զդա։ Եւ կամէր զնա սպանանել, բայց երկրնչէր 'ի ժողովրդենէ անտի. քանզի իբրև զմարգարէ ունէին զնա։ Եւ իբրև եղեն ծնունդք Հերովդի՝ կաքաւեաց դուստրն Հերովդիայ 'ի մէջ բաղմականին. և հաճոյ թուեցաւ Հերովդի։ Ուստի և

երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ։ Եւ նա յառաջագոյն խրատեալ 'ի մօրէ իւրմէ, տուր ինձ ասէ այսր 'ի վի՛ր սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի։ Եւ տրտմեցաւ թագաւորն, բայց վասն երդմանցն և բարձակցացն՝ հրամայեաց տալ նմա։ Եւ առաքեաց գլխատեաց զՅովհաննէս 'ի բանտի։ Եւ բերաւ գլուխ նո՛ր սկտեղը՝ և տուաւ աղջկանն, և տարաւ առ մայր իւր։ Եւ մատուցեալ աշակերտքն նո՛ր՝ բարձին զմարմինն և թաղեցին, և եկեալ պատմեցին Յի։ 12։

Սեպտեմբերի Յորոնեն Դ։ Գ։ Ասասցուք։

Հոմիլիայի Դ։

Ո՞զքո՛ յարուցիդ օ՛րհնեմ՝ զքզ մարդասէր. աղաղակելով Տէր փառք քեզ։ Օ՛ր օ՛րհնե՛ն սերո՛վքէքն եւ գովե՛ն քերովքէքն. աղաղակելով Տ՛ր փառք քեզ։ Ընդա՛դար բերանով անհանգիստ բարբառով. աղաղակելով Տ՛ր փառք քեզ։

Ա՛ռեա՛լ եւ մեր զօրհնութիւս հրեշտակացն երգե՛՛՛մք ե՛՛՛ւ ասեմք փա՛՛՛ռք յարութի՛ քո Տ՛ր։ Փառք Հօր։ Որ խաչեցա՛ր վասն մեր թաղեցա՛՛՛ր ե՛՛՛ւ յարեա՛՛՛ր աղատեցեր ի մեղաց։ Այժմ և միշտ։ Սո՛ւրբ Ա՛ստուած սո՛՛՛ւրբ ե՛՛՛ւ հզո՛՛՛ր սո՛ւրբ անմահ թագաւո՛ր։

Ամիսոն Սողոմոն ՃՀՕ։ Օրհնեցէք զԱ՛ստուած. 197։

Ամենասրան Սոպիոսի։ Ջ. 45։

Տէրն մեր Յի Քրիստոս

Եւ նոյնժամայն ճեպեաց զաշակերտսն մտանել 'ի նաւ, և յառաջագոյն քան զնա երթալ յայն կողմ 'ի Բեթսայիդա, մինչ ինքն զժողովուրդսն արձակիցէ։ Եւ հրաժարեալ 'ի նոցանէ՝ ել 'ի լեառն կալ յաղօթս։ Եւ իբրև երեկոյ եղև, էր նաւն 'ի մէջ ծովուն, և ինքն 'ի ցամաքի։ Եւ ետես զնոսա հոգ-

մակոծեալս 'ի վարելն, զի էր հողմն ընդդէմ նոցա. և զչորրորդ պահու գիշերոյն գայ առ նոսա գնալով 'ի վր ծովուն. և կամէր զանց առնել առ նոքօք: Նոքա իբրև տեսին զի գնայր 'ի վերայ ծովուն, համարեցան թէ առաւօք ինչ լինիցի, և զաղաղակ բարձին: Քանզի ամենեքեան տեսին զնա՝ և խռովեցան. և նա անդէն վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա և ասէ. քաջալերեցարուք, ես եմ՝ մի երկնչիք: Նա ել 'ի նաւն առ նոսա, և դադարեաց հողմն: Նա առաւել ևս յիմարեալ էին 'ի միտս իւրեանց, և զարմանային յոյժ. քանզի և 'ի վր հացին ոչ իմացան, զի էր սիրտ նոցա թմբրեալ: Նա իբրև անցին յայն կողս, եկին յերկիրն Գեննեսարէթ: Նա իբրև ելին 'ի նաւէ անտի՝ իսկ և իսկ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ, և ընթացեալ այսր անդր ընդ ամ գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս, ուր լսէին՝ թէ անդ իցէ: Նա ուր և մտանէր 'ի գեղս կամ 'ի քաղաքս կամ յագարակս, 'ի հրապարակս դնէին զախտաժէտս, և աղաչէին զնա՝ զի գոնէ 'ի քղանցս հանդերձից նորա մերձենայցեն. և որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան: 56:

ՎԵՊ. Խնդրեսցուք: Կեցո: Ամէն. Թ. ագաւոր:

Կ. ԿՐԿԵՏԱՔԱՐՔ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն Դշ:

ՕՐՀՆԵՑՈՒԹԻՒՆ զՏր և զյաղթող զօրուի. 175:
Ամէն-ամ Յաղթութիւն Դշ:

ՅԱՌԱՒԻՕՏՈՒՆ

Հարց Գշ:

Արարիչդ արարածոց Վեր՝ ահաւասիկ յսօրս ի խաչին բևեռեալ. ե՞ւ զինաւորքն գեղարդեամբքն յար-

ձայնկեալ ընկողն քո խոցեալ. Տր Այծ հարցըն մերոց: Կենդանիդ յաւիտենից Քն՝ ամենայն յսօրոր ի գերեզմանի եդար. եւ պահապանքըն պահէին ըզգուշութք ըզգերեզման քո. Տր Այծ հարցըն մերոց: Յարեար ի մեռելոց Քն՝ ամենայն յսօրոր ըզդըժոխս աւերեալ. եւ կենդանութի պարգեւեցեր արարածոց քոյով յարութբդ. Տր Այծ հարցըն մերոց:

Ըզտր՝ Ըզնա օրհնելով բարձր արարէք յաւիտեան: Զօր կարապետըն Յովհաննէս մարգարէից ի դըժոխս. աւետարանէր ըզգալուստ արեգականն արդարութե. ըզնա օրհնելով բարձր արարէք յաւիտեան: Փառք Հօր: Որում ըսպասէին արգելեալքն ի մեղսանէր բանտին. ազատեցուցիչ յուսոյ գալըստեան Աձորդւոյն ի յերկնից. ըզնա օրհնելով բարձր արարէք յաւիտեան: Այժմ և միշտ: Որոյ եկեալ կատարեաց զմարգարէից ըզտեսութի. աւերելով զդըրունըս դըժոխոց և ըզզօրութի մահու. ըզնա օրհնելով բարձր արարէք յաւիտեան:

Մեծացուսցէ Գ.Զ:

Լոյս լուսոյ մայր և կենդարար Բանին բնակարան. քեզ երանիցեն ազգ եւ ազինք ամենայն: Փառք Հօր: Աստուածածնին մայր և հրնութեան կերպի նորոգողին. քեզ երանիցեն ազգ եւ ազինք ամենայն: Այժմ և միշտ: Լոյս ծագեցաւ ի քէն նըստելոցս ի խաւարի. քեզ երանիցեն ազգ եւ ազինք ամենայն:

ՈՂՐԵՒ ԳԼ։

Իջեր յերկնից ի հօրէ և մարմնացար ի կուսէն. հանրեալ՝ զ փրկիչ վասն մեր ըզմահ ճաշակեցեր։ Փառք հօր։ Անկեր ի չարչարանս չարչարանացն լուծիչ. խաչեցա՝ զ թաղեցար ե-դար ի գերեզմանի Քրիստոս Աստուած մեր։ Այժմ և միշտ։ Նաև յերրորդ աւուր յարեար ամենակալ՝ զ Տէր. պարգևեալ՝ զ աշխարհի զխաղաղութիւն եւ զմեծ զողորմութիւն։

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ ԳԼ։

Հրաշալի յարութիւն ըզպահանպանսըն զարհուրեցոյց. Եւ հրեշտակն ի յերկնից իջեալ ի ձայն ահեղ յարութիւն Աստծոյն. կանանք՝ նցն աւետէր յարեաւ Աստուած։ Ի ձայնէ հրեշտակին զլուարձացան տրրտմագեաց կանայքն. Եւ դարձան խընդութեամբ ետուն աւետիս առաքելոցն. եթէ յարեաւ նախանպատմելին։ Անկայք լուսազգեացք յօրհնուելի նոր օրհնեսցուք ըզՏէր. քանզի մարմնոյն որ ի մէնջն էառ ի հրեշտակաց երկրրպագութիւն առնու ի սրովբէից և ի քրովբէից։

Տուք ըզփառս ի բարձունս թագաւորին յաւիտենից. որ փրկեաց զազգս որդւոց մարդկան ի ծառայութէն թշնամւոյն. օրհնութիւն առաքողին ի բարձունս։ Այս ինքն իշխանութիւն բաղմեցաւ ի վերայ խաչին կապեաց զիշխանն մեղսանէր։ զմահու գերեալսըն յԱդամայ կենանգործեաց ի կեանս անմահ. օրհնութիւն առաքողին ի բարձունս։ Այսպայուլ տեսան Որդին փառակից հօր և սուրբ Հոգւոյն. գընի՝ ի նոր գերեզմանի.

նոր նորոգեալ զիս ըստ ընացեալ՝ լիս մեղք. օրհնութեան առաքողի՛ն ի՛ բարձունս։ Փառք Հօր։ Հանեցեա՛ն սերովբէն նիստելով ի վերայ վիմի՛ն. հարկանէ՛՝ր փող յարութեանն Տ՝ն. պակուցեալ պահապանացն յահէն եղե՛ն որպէս մեռեալ. օրհնութիւն առաքողի՛ն ի՛ բարձունս։ Այժմ և միշտ։ Հաղորդս արա եւ զմե՞զ Տ՝ր ընդ սրբոց քոց առաքելոցն. որք արժանի եղեն տեսանել զքեզ ի յարո՛ւթեա՛ն քո. արժանաւորեա Տէ՛ր՝ տեսանել զքեզ ի միւսանգամ քո գալըստեանն. օրհնութեան առաքողի՛ն ի՛ բարձունս։

Ա՛՛՛օրհ՛՛՛ Էրգ Յարութեան Դշ։ Քեզ. Աստուած։

Ա՛՛՛օրհ՛՛՛ Սաղմոս Զդ։

կգ. Յոյց մեզ Տէր։ փխ. Հաճեցար Տէր. 191։

Ա՛՛Էրեսպան ըստ Ղուկասու։ ԺԴ. 32։

Տէրն մեր Յս Քս ասէ.

Մի երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն։ Վաճառեցէք զինչս ձեր, և տուք ողորմութի. և արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող մերձենայ, և ոչ ցեց ապականէ։ Զի ուր գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին։ Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս՝ և ճրագունք լուցեալք։ Եւ դուք նմանիցուք մարդկան՝ որ ակն ունիցին նոցն իւրեանց՝ թէ երբ դառնայցէ 'ի հարսանեաց. զի յորժամ գայցէ և բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա։ Երանի՛ իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ նոցն գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ՝ զի գօտի ընդ մէջ ածցէ՝ և բազմեցուսցէ զնոսա, և անցեալ պաշտիցէ զնոսա։ Եւ եթէ յերկրորդ՝ կամ յերրորդ պահու եկեսցէ՝ և գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ։ Այլ զայն գիտասջիք, եթէ գի-

տէր տանուտէրն յորում ժամու գող գայ՝ հսկէր, և չտայր թողլ ական հատանել 'ի տան իւրում։ Եւ դուք եղերուք պատրաստք՝ զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ որդի մարդոյ։ Ասէ Պետրոս. Տէր՝ առ մեզ ասացեր զառակդ զայդ՝ եթէ առ ամենեսեան։ Եւ ասէ Տէր. Ո՞վ իցէ հաւատարիմ տնտես և իմաստուն, զոր կացոյց տէր իւր 'ի վերայ գերդաստանի իւրոյ տալ 'ի ժամու զկերակուրս։ Երանի՛ իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս։ Արդարև ասեմ ձեզ՝ զի 'ի վերայ ամ ընչից իւրոց կացուսցէ զնա։ Այլ եթէ ասիցէ ծառայն այն 'ի սրտի իւրում. յամէ տէր իմ 'ի գալ. և սկսանիցի հարկանել զծառայսն և զաղախնայս, ուտել և ըմպել և արբենալ։ Եկեսցէ տէր ծառային այնորիկ՝ յաւուր յորում ակն ոչ ունիցի, և 'ի ժամու յորում ոչ գիտիցէ. ընդ մէջ կտրեսցէ զնա, և զմասն նոր ընդ անհաւատս դիցէ։ Եւ ծառայ՝ որ գիտիցէ զկամն տեն իւրոյ՝ և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նոր, արբցէ գան բազում։ Եւ որ ոչն գիտիցէ՝ և արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ։ Ամենայնի՝ որում շատ տուաւ, շատ խնդրեսցի 'ի նմանէ. և որում բազում աւանդեցաւ, առաւել ևս պահանջեսցեն 'ի նմանէ։ 48.

ՎԵՊ. Խնդրեսցուք։ Կեցո։ Ամ. Ամ. ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Առաջին Սաղմոս Ոնսթ։

Ողջունեցէք զՏէր յօրհնութի՛ն նոր. 193։

Առաքեալն ընդ Սաղմոսի։ ԺԴ. 13։

Տէրն մեր Յս Վս

Եւ իբրև լուաւ (Յս), գնաց անտի նաւու յանապատ տեղի առանձինն։ Իբրև լուան ժողովուրդքն, գնացին զհետ նոր հետի 'ի քաղաքաց անտի։ Եւ

իբրև ել՝ ետես ժողովուրդ բազում, գթացաւ 'ի նե, և բժշկեաց զհիւանդս նց։ Իբրև ընդ երեկս եղև, մատեան առ նա աշակերտքն՝ և ասեն. տեղիս անապատ է՝ և օրս տարաժամեալ, արձակեա զժողովուրդսդ, զի երթիցեն շուրջ 'ի շէնսն՝ գնեսցեն իւրեանց կերակուրս։ Այլ ասէ ցնա. ոչ ինչ պիտոյ է դոցա երթալ. դուք տուք դոցա ուտել։ Այլ նոքա ասեն ցնա. ոչ ինչ ունիմք աստ, բայց հինգ նկանակ և երկուս ձկունս։ Այլ ասէ ցնա. բերէք այսր զայն։ Այլ հրամայեաց բազմեցուցանել զժողովուրդն 'ի վր խոտոյ. և առեալ զհինգ նկանակսն և զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց և եբեկ՝ և ետ ցաշակերտսն զնկանակսն, և աշակերտքն ժողովրդոցն։ Կերան ամենեքեան՝ և յագեցան, և բարձին զնշխարս կոտորոցն երկոտասան սակառի լի։ Այլ որք կերանն՝ էին արք իբրև հինգ հազար. թող զկանայս և զմանկտի։ 21։

ՍԷՈԷՊԷ ՅՈՒՍԻՆ ԴԶ։ ՎԵՊ. Ա. սասցուք։

ՀԱՄԲԱՐՁԻ ԴԶ։

Օ՜յարութի՛ Ա՛ստուածորդւո՛ն. հրե՛շտակապե՛տն մ՚յսօր աւետէր կանա՛նցն ասե՛լով. յարուցեալ է Տէ՛՜՛ն ի գերեզմանէ՛ն։ Ը՛նթացեա՛լ կանա՛նցըն խընդո՛ւթեամբ պատմէ՛ին աշա՛կերտացն ասե՛լով. յարուցեալ է Տէ՛՜՛ն ի գերեզմանէ՛ն։ Ա՛՚ռ որոյ եւ մեք ընդ հրեշտակին գո՛չեսցո՛ւք զյարո՛ւթի՛ն Քրի՛. ո՛ր փրրկեա՛ցն ը՛ղմե՛՜՛ զ ի ձեռա՛ց մահո՛։

Փառաւո՛ր եա՛լ անճառելի՛ յարութիւնը՛ն Քրիստոսի՛։ Ո՛ր կամա՛ւ Հօր և Հո՛գւո՛ն ի վերա՛յ քառասնեւեին պատա՛րագեալ գառն Ա՛՚. փառաւո՛ր եա՛լ անճառելի՛ յարութիւնը՛ն Քրիստոսի՛։ Ք՛՚ա՛՚ ա՛՚նմահ թանգա՛ւորն հետա՛զօտեա՛լ ի դրժո՛խս. կա՛պեա՛ց զեշխանը՛ն մեղսա՛սէր. զմա՛հու գերեա՛լսը՛ն յԱ՛դամայ

կենագործեաց ի կեանս անմահ. փառաւորեալ անճառելի յարութիւնն Քրիստոսի։

Անճառելի յարութիւնն հրաշացեալ հրեշտակն գոչէր առ կանայսն ասելով. յարուցեալ է Տէրն ի գերեզմանէ։ Փառք Հօր։ Որ էակիցդ ես ընդ Հօր զահաւոր յարութիւն քո 'ի գերեզմանէն. սրբասանեալ կանայքն խընդութեամբ քարոզէին։ Այժմ և միշտ։ Յարեաւ Տէրն ի մեռելոց եւ ըզզօրութիւնս դիժոխոց խորտակեաց. եւ զարգելեալսն ի նմա կորզեաց ըստանձելի յարութիւն իւրով։

Աղաղակեսցուք զՏ. 197։

Ա-Էպոլոն ըստ Մարկոսի։ Ի. 1։

Առ Տէրն մեր Յս Քս

Եւ ժողովեցան առ նա փարիսեցիքն՝ և ոմանք 'ի դպրացն՝ որ եկեալ էին Յերուսաղեմէ։ Եւ տեսեալ զոմանս յաշակերտացն անտի, զի խառնակ ձեռօք, այսինքն է՝ անլուայ ուտէին հաց, բամբասեցին։ Զի փարիսեցիքն և ամ հրեայք՝ եթէ ոչ բռնալիր լուանան զձեռս, հաց ոչ ուտեն. քանզի ունին զաւանգուի ծերոցն. և 'ի հրապարակէ մտեալ՝ եթէ ոչ նախ մկրտիցին, ոչ ուտեն. և այլ ինչ բազում է՝ զոր ընկալան ունել, մկրտութիւս բաժակաց և ստամանաց և պղնձեաց և մահճաց։ Ապա հարցանեն ցնա փարիսեցիքն և դպիրք՝ թէ ընդէր աշակերտքն քո ոչ գնան ըստ աւանդութեանէ ծերոցն, այլ խառնակ ձեռօք հաց ուտեն։ Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա՝ թէ բարւոք մարգարէացաւ Եսայի վասն ձեր կեղծաւորաց, որպէս ասաց. ժողովուրդս այս շրթամբքն մեծարէ զիս, և սիրտք նոցա հեռացեալ 'ի բացեայ են յինէն։ Զուր պաշտեն զիս՝ ուսուցանեն վարդապետութիս զմարդկան պատուիրեալս։

թողեալ զպատուիրանն Աստուծոյ, ունիք զմարդկան աւանդուն. մկրտուիս ստոմանաց և բաժակաց, և այլոց նմանեաց սոցին առնէք բազումս։ Եւ ասէ ցնոսա. բարւոք խոտէք զպատուիրանն Աստուծոյ, զի զձեր աւանդունն հաստատիցէք։ Զի Մովսէս ասէ. պատուեա զհայր քո և զմայր, և որ չարախօսեսցէ զհօրէ կամ զմօրէ, մահու վախճանեսցի։ Եւ դուք ասէք. եթէ ասիցէ ոք ցհայր կամ ցմայր՝ կորբան, որ է պատարագ, զոր յինէն օգտեսցիս. և ոչ ևս տայք թոյլ նմա առնել ինչ հօրն, կամ մօր։ Եւ անարգէք զբանն Աստուծոյ ձերով աւանդութիւնն, զոր աւանդեցէք. և բազում ինչ այլ որ այսմ նման է՝ առնէք։ Եւ կոչեալ առ ինքն զամ ժողովուրդն, ասէ ցնոսա. լուարուք ինձ ամենեքեան՝ և՛ի միտ առէք։ Ոչ ինչ արտաքուստ՝ ի մարդ մտեալ՝ եթէ կարիցէ պղծել զնա, այլ որ ելանէ՝ ի նմանէ՝ այն է որ պղծէ զմարդն։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ 16։

Ռիպ. Լսնդրեսցուք։ Կեցո։ Ամէն. Թ. ագաւոր։

Ի. ՁՈՐՔԵՏԱՍԱՐԻ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն։

ՅԱՂԹԱԿԱՆ քեզ օրհնութիւնք ՏԷր. 179։

Ալելուիա Յարութիւն։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Գ։

Ա՞նճառելի՛ բնութի և Ռա՛ն Հօր առաքե՛ցեալ ի հայրական ծոցոյ ե՛ւ առեր մարմին ի սրբոյն կուսէն. ե՛թ Ամ՛ծ հարցըն մերոց։ Անկեալդ ի փրկութի՛ մեզ թագաւո՛ր անմահ յանձն առեր ըզմահ

խաչի. Եւ իջեր ի գերեզման անապական. սուրբ Աստծոյ հարցքն մերոց։ Այլ յարուցեալ ի մեռելոց երեքօրեայ լոյս ծագեցար տիեզերաց. Իշխանութիւնքդ լուծեր զերկունս մահու. ՝ի՛ Աստծոյ հարցքն մերոց։

Գ. Ընդ՝ի՛ որ հնեցէք բարձր արարէք զթագաւորն ամենեցուն Իշխան Հայր միշտ եւ յաւիտեան։ Փառք Հօր։ Յարուցեալն ի մեռելոց Քրիստոս Աստծոյ. ժողովուրդք առաւել բարձր արարէք ընդ՝ի՛ յաւիտեան։ Այժմ և միշտ։ Անապական լոյսն ի Հօրէ և յՈրդւոյ ծագեալ ՝ի՛ զՀոգին. քահանայք ընդ սերովբէսքն գովեցէք. Եւ առաւել բարձր արարէք ընդ՝ի՛ յաւիտեան։

ՄԷԾԱՑՈՒԱՑԷ Գ.Կ։

Զաստուածածնին և զմի՛շտ կոյսն անդադար օրհնեսցուք. քանզի՝ ծագեաց մեզ լոյս երեսաց Եւ փրկիչ աշխարհաց մերոց։ Փառք Հօր։ Խընդա Եւ ուրախ լեր ամենօրհնեալ մայր. քանզի որ ի քէն ծընաւ ըմ՝ՀՅԺ՛՞Ղ Աստծոյ ի փրկութիւն աշխարհաց մերոց։ Այժմ և միշտ։ Զանձ անապական գտտար ՝ի՛ Աստծոյն. բարեխօսեա Քրիստոսի Աստծոյ մերոյ՝՞՝ կենցուցանել զանձինս մեր։

ՈՂՈՐԴԵԱ ԲԿ։

Որ յարեարդ ի մեռելոց Քրիստոս Աստծոյ եւ մեզ կեանս շնորհեցեր ողո՞՝րմեա։ Փառք Հօր։ Որ զանկեանն ի նախնումն ի մեղս. պատուական արեամբդ քո՞ կանգնեցեր. Եւ մեզ կեանս շնորհեցեր ողո՞՝րմեա։ Այժմ և միշտ։ Այլ յարութի՛ դքո՞

զաշխարհըս կեցուցեր. եւ ըզդրունըս դիժոխոց փակեցեր. եւ մեզ կեանըս շնորհեցեր ողորմեա։

ՏԷՐ ՅԵՐԿՈՒՆՔ ԳԿ։

Յարեաւ Տէրն ի գերեզմանէն։ Ընդ յառնել փրկչին մերոյ երկիր շարժեցաւ։ Վէմք պատառեցան։ Հաւատացելոքն ի վերայ վիմին զարհուրեցան ըզպահապանսն առ դրանքն գերեզմանի։

Օրհնեալն ըզգերեզմանաւորն բոլորեալ դասքն հրեշտակաց տեսանէին ըզՏէրըն յարուցեալ ի գերեզմանէն։ Փառք Հօր։ Ամենայն կանայքն եկին ի գերեզման փրկչին անոյշ իւղօք եւ խընկօք. յօծանեալ զմարմինքն տէրունական։ Այժմ և միշտ։ Լուսապայծառ հրեշտակն. նստէր ի վրայ վիմին աւետարանէր կանանցն. յարեաւ փրկիչքն տիեզերաց։

Առաւօտուն էրգ Յարութեան ԳԿ։ Քեզ. Ասացուք։

Առաքելական ըստ Ղուկասու։ ԺԴ. 49։

Տէրն մեր Յիսուս ասէ.

Հուր եկի արկանել յերկիր. և զի՞նչ կամիմ թէ արդէն իսկ բորբոքէր։ Այլ մկրտութիւն մի ունիմ մկրտել, և զիա՞րդ փութամ մինչև կատարեսցի։ Համարի՞ք եթէ խաղաղութիւն եկի տալ յերկիր, ոչ՝ ասեմ ձեզ, այլ բաժին։ Զի եղիցին յայսմ հետէ հինգ 'ի տան միում բաժանեալք, երեքն յերկուց, և երկուքն յերից։ Բաժանեսցի հայր յորդւոյ՝ և որդի 'ի հօրէ, մայր 'ի դստերէ՝ և դուստրը 'ի մօրէ, սկեսուր 'ի հարսնէ՝ և հարսն 'ի սկեսրէ իւրմէ։ Ասաց և ցժողովուրդսն. յորժամ տեսանիցէք ամպ ծագեալ յարևմտից, իսկոյն ասէք՝ թէ անձրև գայ, և լինի այնպէս. և յորժամ հարաւ

շնչեալ, ասէք՝ թէ խորշակ լինի, և լինի այնպէս։ Կեղծաւորք՝ զերեսս երկնի և երկրի գիտէք փորձել, իսկ զժամանակս զայս զիա՞րդ ոչ փորձէք։ Ընդէր և յանձանց իսկ ոչ ընտրէք զարժանն։ Յորժամ երթայցես ընդ ոսոխի քում առ իշխան, 'ի ճանապարհի տուր զհաշիւն զերծանել 'ի նմանէ. զի գուցէ քարշիցէ զքեզ առ դատաւորն, և դատաւորն մատնիցէ դահճի, և դահիճն արկանիցէ 'ի բանտ։ Ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի՝ մինչև հատուցանիցես զյետին բնիոնն։ Եկին ոմանք 'ի նմին ժամանակի, և պատմեցին նմա վասն Գալիլեացւոցն, որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհս նց։ Պատասխանի ետ և ասէ ցնս. Համարի՞ք եթէ այն Գալիլեացիք եղեն մեղաւոր քան զամ Գալիլեացիս, զի զայնպիսի անցս կրեցին։ Ոչ, ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքին նոյնպէս կորնչիջիք։ Կամ նոքա ութուտասանքն, յորոց վրն աշտարակն անկաւ 'ի Սիլոամ, և սպան զնս. Համարի՞ք եթէ նոքա պարտապանք եղեն քան զամ մարդիկ՝ որ բնակեալ են Երուսաղէմ։ Ոչ, ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյնպէս կորնչիջիք։ Ասաց և զառակս զայս։ Թզենի մի էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում. և եկն խնդրել պտուղ 'ի նմանէ՝ և ոչ եգիտ։ Ասէ ցայգեգործն. ահա երեք ամք են՝ յորմէ հետէ գամ խնդրել պտուղ 'ի թզենւոջդ՝ և ոչ գտանեմ. արդ՝ կտրեա՛ զդա, ընդէր և զերկիրդ խափանէ։ Նա պատասխանի ետ և ասէ. տէր՝ թո՛ղ զդա յայս ամ ևս, մինչև շուրջ զդովաւ բրեցից՝ և արկից աղբ. թերևս արասցէ պտուղ. ապա թէ ոչ՝ յամէ ևս հատցես զդա։ Ժ.Գ. 9։

Գէղ. Խնդրեսցուք։ Կեցո։ Աղ. Գրում ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ա. Աղջն Սաղմոս ՃԽԹ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. 193։

Ա. Էպիստոլն Պօղոսի առ Թեսաղոնիկեցիս։ Ժդ. 22։

Տէրն մեր Յն Քն

Եւ ստիպեաց վաղվաղակի զաշակերտսն մտանել 'ի նաւ՝ և յառաջել յայն կոյս, մինչ ինքն զժողովուրդսն արձակիցէ։ Եւ իբրև արձակեաց զժողովուրդսն, ել 'ի լեառն առանձինն կալ յաղօթս. և իբրև ընդ երեկս եղև, անդ էր միայն։ Եւ նաւն մեկնեալ էր 'ի ցամաքէն բազում ասպարիսօք ծփեալ յալեացն. քանզի ընդդէմ էր հողմն։ Եւ 'ի չորրորդում պահու գիշերոյն եկն առ նս Յն գնալով 'ի վրայ ծովուն։ Իբրև տեսին զնա աշակերտքն զի գնայր 'ի վրայ ծովուն՝ խռովեցան, և ասեն թէ առ աչօք ինչ իցէ. և առ ահին աղաղակեցին։ Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նս Յն՝ և ասէ. քաջալերեցարուք, ես եմ, մի երկնչիք։ Պատասխանի ետ նմա Պետրոս՝ և ասէ. Տէր՝ եթէ դու ես, հրամայեա ինձ գալ առ քեզ 'ի վրայ ջրոցս։ Եւ նա ասէ, եկ։ Եւ իջեալ 'ի նաւէն Պետրոս՝ գնաց 'ի վրայ ջրոցն, և եկն առ Յն։ Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ. և իբրև սկսաւ ընկղմել՝ աղաղակեաց և ասէ. Տէր փրկեա զիս։ Եւ վաղվաղակի Յն ձգեաց զձեռն իւր՝ կալաւ զնա և ասէ, Թերահաւատ՝ ընդէր երկմտեցեր։ Եւ իբրև ելին 'ի նաւն՝ հանդարտեաց հողմն։ Եւ որ 'ի նաւին էին՝ մատեան երկիր պագին նմա՝ և ասեն. արդարև որդի Աստուծոյ ես դու։ Եւ անցեալ եկին 'ի ցամաք 'ի Գեննեսարէթ։ Եւ իբրև ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ, առաքեցին ընդ ամ գաւառն՝ և ածին առ նա զամ հիւանդս։ Եւ աղաչէին զնա, զի գոնէ միայն 'ի քղանցս հանդերձի նր մերձեսցին. և որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան։ 36։

Մեծացուցէ Յարութեան Դ.Կ.։ Բարձր. Ասասցուք։

Համբարձի Դ.Կ.։

Հրեշտակք քո Տր. որ զյարութիւնն քո քարոզեցին։ Զպահապանսն զարհուրեցուցին. զկանայսն լուսաւորեցին ասելով։ Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. չէ աստ այլ յարեաւ։

Փառք յարութեան քո Տր։ Խաչիւ ի յանձն առեր գըթած եւ ըզմահ ճաշակեցեր. զամենեսեան յարուցեր զհաւատացեալսն ի քեզ որք աղաղակէին ասելով. փառք յարութեան քո Տր։ Վէմք պատառեցան ի խաչելութեան քո Տր. եւ գերեզմանք բացան դըժոխք զարհուրեցան եւ մեռեալք յարուցեալ աղաղակէին ասելով. փառք յարութեան քո Տր։

Յարուցեալ է Տրն ի գերեզմանէն ահեղական փայլմամբ. պատառեցան վէմք. եւ երկիր սասանեցաւ ի յահեղ բարբառոյ մեծ կարապետին։ Իջ հրեշտակն ի յերկնից ի գերեզմանըն Տն. հընչեցուցանէր. ըզձայն ահեղ փողոյն ի վերայ գերեզմանին։ Իսկ եկեալ սուրբ կանանցն ի խընկել ըզմարմինն Տեառն. եւ լուեալ ի հրեշտակէն. եթէ յարեաւ ի մեռելոց. կենդանին յաւիտենից։

Փառք Քսի ամենազօր յարութեանն։ Քսի ամենազօր յարութեանն երկրպագեն քերովբէքն. և վեցթեւեան սերովբէքըն հոգեւորական հընչմամբ երգեն ասելով. փառք Քսի ամենազօր յարութեանն։

Այսօր անուշահոտ բուրմամբ ընթանայի՞ն ե՛ք կանայք. տեսանելով ըզհրեշտակն արեգակնակերպ փայլմամբ ի վը վի՛մին գոչէր ասելով. փառք քեզ ամենազօր յարութե՛ն: Այսօր արձակեցաք ի կապանաց նախահօրն. և վերընտրին նորոգմամբ յաւիտենական կենաց եղաք ժառանգորդք. փառք քեզ ամենազօր յարութե՛ն:

Լուղաբերի՛ց կա՞նայնցն ե՛կեալ. ի՛ սո՛ւրբ գերեզմանն. ետես զհրեշտակապետի՛ն ըզճայնըն լուեալ. ո՛ր ժամ զխաչելեալն խընդրէ՛ք զայր՝ի՞ եաւ քրիստոս անմահ թագաւորն: Փառք ՀՕՐ: Երիսահրա՛ւշ լո՞յս մեծ ծագեալ ի՛ սո՛ւրբ գերեզմանն. ետես զարհուրեալ պահապանացն երկիւղալից ըմբռանէին. այլ քարոզ հրեշտակապետի՛ն որ գոչէր առ կանայսն. ո՛ր ժամ զխաչելեալն խընդրէ՛ք զայր՝ի՞ եաւ քրիստոս անմահ թագաւորն: Այժմ և միշտ: Ընթացեալ պետրո՛ս ե՞ւ Յովհաննէս. ի՛ սո՛ւրբ գերեզմանն ետես հանդիպեալ վարշամակի՛ն ե՛ւ ե՞ւ կլտաւոցն. այլ քարոզ հրեշտակապետի՛ն որ գոչէր առ նոսա. ո՛ր ժամ զխաչելեալն խընդրէ՛ք զայր՝ի՞ եաւ քրիստոս անմահ թագաւորն:

Ընդ յոկեանն Սաղմոս ՃՀ: Օրհնեցէք զԱ՛ծ. 197:

Ա-Էպոստոլն ըստ Մարկոսի: Ի. 17:

Տէրն մեր Յս Քս

Եւ իբրև եմուտ 'ի տուն յամբոխէ անտի, հարցանէին զնա աշակերտքն վ՚ առակին: Եւ ասէ ցնս այդպէս և դուք անմիտք էք, ոչ իմանայք՝ եթէ ամ որ արտաքուստ 'ի ներքս մտանէ 'ի մարդ, ոչ կա-

րէ զնա պղծել. զի ոչ եթէ 'ի սիրտ նր մտանէ, այլ յորովայն՝ և արտաքս ելանէ. և սրբէ զամ կերակուրսն։ Այս ասէր, թէ որ ինչ 'ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ։ Զի 'ի ներքուստ 'ի սրտէ մարդկան խորհուրդք չարութեան ելանեն. շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սպանութիւնք, ագահութիւնք, չարութիւնք, նենգութիւնք, գիջութիւնք, չարակնութի, հայհոյութիւն, ամբարտաւանութի, անզգամութի։ Այս ամ չարիք 'ի ներքուստ ելանեն, և պղծեն զմարդ։ Այս անտի յարուցեալ՝ եկն 'ի սահմանս Տիւրոսի և Սիդոնի. և մտեալ 'ի տուն՝ ոչ ումեք կամէր յայտնել, և ոչ կարաց ծածկել։ Լուաւ կին մի զնմանէ, որոյ դուստր իւր նեղեալ էր յայսոյ պղծոյ. եկն անկաւ առաջի նր։ Այս կինն էր հեթանոս՝ փիւնիկ ասորի յազգէ. և աղաչէր զնա՝ զի զդևն հանցէ 'ի դստերէ նր։ Այս Յն ասէ ցնա. թոյլ տուր՝ նախ յագեսցին մանկունք. զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց։ Նա պատասխանի ետ և ասէ. Տէր, և շունք 'ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին։ Այս ասէ ցնա. վայ այդր բանի երթ, ել դևն 'ի դրստերէ քումմէ։ Գնաց 'ի տուն իւր, և եգիտ ելեալ զդևն. և զդուստրն, զի անկեալ դնէր 'ի մահիճս։ 30։

Բարող. Խնդրեսցուք։ Կեցո։ Աղ. Թագաւոր։

Ի. ՀԻՆԳՊԵՏՔԱՔԻ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն Ազ։

Գրգեսցուք երգ նոր Աւ փրկչին մերոյ. 153։
Ալելուիա Յարութիւն Ազ։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Գ.Կ։

Նախայաւիտեան Որդի՝ փառակից Հօր և Ո՛ր Հոգւոյն. որ միշտ յանճառ փառսդ բարեբանիս Քո վերին զօրացդ. ընդքեզ օրհնե՛մք Ա՛ծ՝ հարցըն մերոց։ Անղեալ մարդ ճշմարիտ եկիր կամաւ ի հարչարանս. եւ բարձեր ընդփայտ խաչի անպարտականդ մահու ընդքեզ օրհնե՛մք Ա՛ծ՝ հարցըն մերոց։ Քո գերեղմանն իջեր խափանիչ մահու. երեքօրեայ յարուցեալ լոյս ծագեցար ստուերանըստացս ընդքեզ օրհնե՛մք Ա՛ծ՝ հարցըն մերոց։

Գ. ԸնդՏ՛ր օրհնեցէ՛ք բարձր արարէ՛ք զնա յաւիտեան։ Փառք Հօր։ Զթագաւորն՝ Քրիստոս՝. որ վասն մեր յանցանաց ընդմահ ճաշակեաց. բարձր արարէ՛ք զնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Զէակից Բանին Հօր. որ երեքօրեայ թաղմամբ զդիժոխս աւերեաց. բարձր արարէ՛ք զնա յաւիտեան։

Մեծացուսցէ Գ.Կ։

լատարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ունել 'ի վրայ տասն քաղաքի։ Եկն երկրորդն և ասէ. մնասն քո արար հինգ մնաս։ Ասէ և ցնա. և դու լիջիր 'ի վրայ հինգ քաղաքաց։ Եկն միւսն և ասէ. տէր ահա մնասն քո՝ զոր ունէի ծրարեալ 'ի վարշամակի. երկնչէի 'ի քէն, զի այր ստամբակ ես. բառնաս՝ զոր ոչ եդիր, և հնձես՝ զոր ոչ սերմանեցեր։ Եւ ասէ ցնա. 'ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ ծառայ անհաւատ. գիտէիր թէ ես այր մի ստամբակ եմ, բառնամ զոր ոչ եդի, և հնձեմ՝ ուր ոչ սերմանեցի։ Եւ ընդէր ոչ ետուր զարծաթն իմ 'ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք պահանջէի։ Եւ ասէ ցսպասաւորսն. առէք 'ի դմանէ զմնասն, և տարա՛յք տո՛ւք այնմ՝ որ ունիցի զտասն մնասն։ Եւ ասեն ցնա. տէր՝ ունի տասն մնաս։ Ասեմ ձեզ, եթէ ո՞ւմի որ ունիցի, տացի. և յայնմանէ որ ոչն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի 'ի նմանէ։ Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ, որ ոչն կամէին զիս թագաւորել 'ի վրայ նց, ածէք այսր և սպանէք առաջի իմ։ Եւ իբրև զայս ասաց, գնաց յառաջ՝ ելանել Յերուսաղէմ։ ԺԹ. 28։

ՎՔԵՊ. Լնդրեսցուք։ Կեցո՛։ Ամ. Վրում ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ամսոջին Սողմոս Խ.Զ։

ԿՅ. Ճամբարձաւ։ Փխ. Ծանփս հարէք. 420։

Ամ-Էպոլոն ըսպ Մոպլէոսի։ Ի. 17։

Տէրն մեր Յս Վրս

Իբրև ելանէր (Յս) Յեղէմ, առ զերկոտասանսն առանձինն, և 'ի ճանապարհին ասէ ցնոսա։ Ահաւասիկ ելանեմք Յեղէմ, և որդի մարդոյ մատնեսցի քահանայապետիցն՝ և դպրաց. և դատապարտեսցեն զնա 'ի մահ. և մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել և հարկանել և 'ի խաչ հանել, և

յերիր աւուր յարիցէ։ Յայնժամ մատեաւ առ նա մայր որդւոցն Զեբեդեայ որդւովքն իւրովք հանդերձ. երկիր պագանէր՝ և խնդրէր ինչ 'ի նմանէ։ Եւ նա ասէ ցնա. զի՞նչ կամիս։ Ասէ ցնա. ասա՛ զի նստցին սոքա երկու որդիքս իմ, մի ընդ աջմէ քումմէ՝ և մի ընդ ահեկէ յարքայութիւնդ քում։ Պատասխանի ետ Յն և ասէ. ոչ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոցն եմ, կամ զմկրտութիւնն զոր ես մկրտելոցն եմ՝ մկրտել. ասեն ցնա. կարօղ ենք։ Ասէ ցնա Յն. զբաժակն իմ ըմպիցէք, և զմկրտութիւնն զոր ես մկրտիցիմ՝ մկրտիցիք, բայց նստուցանել ընդ աջմէ և ընդ ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց տուեալ է 'ի Հօրէ իմմէ։ Եւ լուեալ տասանցն, բարկացան 'ի վր երկուցն եղբարց։ Յն կոչեաց զնոսա առ ինքն՝ և ասէ. գիտէք՝ զի իշխանք ազգաց տիրեն նց, և մեծամեծքն իշխեն նց։ Ոչ այնպէս իցէ և 'ի ձերում միջի. այլ որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ։ Եւ որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ։ Որպէս որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ՝ այլ պաշտել. և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց։ 28։

Կիրակոսի փոս։

Բարեբանեալ որ եկիր և գալոցդ ես 'ի յերկնէ՝ ՅԾային քո փառօք, շնորհեա՛ ամենեցուն զյարութիւն՝ ՔՅ որպէս մարդասէր։ Լոյս զուարթ։

Մեծի գոլոփէան։

Օրհնեալ որ գաս յանուն Տն. օրհնեալ որ գալոց ես։ Տէր Աստ մեր երևեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութիւնդ կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ։

Հոմէոսի Դ։

Թագաւոր գոլով քո յաշխարհ. 232։

Ընդհանուր Սաղմոս ԻԳ։

Կ8. Համբարձէք։ փխ. Տն է երկիր. 425։

Ը–Էպիսկոպոսաց ըստ Մարկոսի։ Ժ. 32։

Յն մերոյ Յեսի Քրիստոսի

Եւ առեալ միւսանգամ զերկոտասանսն առանձինն, սկսաւ ասել նոցա զինչ անցք անցանելոց իցեն ընդ նա։ Զի ահաւասիկ ելանեմք Յերուսաղէմ. և որդի մարդոյ մատնեսցի քահանայապետիցն և դպրաց. և դատեսցեն զնա 'ի մահ, և մատնեսցեն զնա հեթանոսաց. և կատակեսցեն զնովաւ, և հարկանիցեն զնա, և թքանիցեն 'ի նա, և սպանցեն. և յերիր աւուր յարիցէ։ Եւ երթային առ նովաւ Յակովբոս և Յովհաննէս՝ որդիքն Զեբեդեայ. և ասեն ցնա. վարդապետ՝ կամիմք զի զոր ինչ խնդրեսցուք 'ի քէն՝ արասցես մեզ։ Եւ նա ասէ ցնոսա. զի՞նչ կամիք յինէն՝ զի արարիցս ձեզ։ Եւ նոքա ասեն ցնա. տուր մեզ՝ զի նստցուք մի յաջմէ քումմէ և մի յահեկէ՝ 'ի փառսն քում։ Պատասխանի ետ Յն և ասէ ցնոսա. ոչ գիտէք զինչ խընդրէք. կարէք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոց եմ, կամ զմկրտութիւնն՝ զոր ես մկրտելոցն եմ, մկրտել։ Եւ նոքա ասեն ցնա, կարեմք։ Եւ Յն ասէ ցնն, զբաժակն զոր ես ըմպելոց եմ՝ ըմպիցէք, և զմկրտուիւն՝ զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցիք. այլ նստուցանել ընդ աջմէ իմմէ և ընդ ահեկէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց պատրաստեալ իցէ։ Եւ լուեալ զայն տասանցն, սկսան բարկանալ Յակովբայ և Յովհաննու։ Եւ Յն կոչեաց զնն առ ինքն, և ասէ ցնն գիտէք՝ զի որ յանուան իշխանքն են հեթանոսաց, տիրեն նց, և մեծամեծք նց իշխեն նոցա։ Ոչ նոյնպէս իցէ և 'ի ձերում միջի. այլ որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ. և որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ամենեցուն ծառայ։ Զի և որդի մարդոյ ոչ եկն առնուլ պաշտօն՝ այլ պաշտել, և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց։ 45։

Բոլորոլ. Խնդրեսցուք։ Կեցո։ Ը.Ղ. Ծագաւորը։

Ը. ԿԻՐԱԿ

ԵՐԿՐՈՐԴ ԾՆԱՎԱՅԵԱՆՑ Ի

Ի ԳԻՇԵՐԻՆ

ՀԵՊՈՒԿ ՀՈՒՐԱՅՈՅ ԴՉ։

ԱՄՍԵՐՔԱՆ ՏԷՐՆ ՄԵՐ ՅԵՐԿԻՆՍ. 414։

ՕՐՀՆՈՒԹԻՆ ԴԿ։

Մեծահրաշ այս խորհուրդ աւանդութիւն առ մեզ հասեալ. զոր հոգւոյն լուսատուն ի պաշտպանէն իւրմէ լուեալ. եթէ տօն մեծ է այսօր իմոյ դասուն որ ի յերկինս։ Քանզի ի յելսէն վերին երկնաւորին որ ի յերկրէ. ըստ դասուց երկնայնոցն տօնէին ուրախութիւն. ի հրեշտակացն սկսեալ մինչ ի յաթոռսն կատարեալ։ Իսկ ի չորրորդէն դասէ պաշտպան եղեալ լուսաւորչին. ի դասուն իւր փութացեալ ուրախութիւն տօնակցութիւն. զոր հարցմամբ ի նմանէ տեղեկանայր մարմնով հրեշտակն։ Եւ քանզի մեծ այս խորհուրդ ի փրկութիւն բանաւորաց. հրեշտակաց եւ մարդկան առ հանարակ կատարեալ. երկոցունց սեռից ի միասին յարմարութիւն։ Եւ զի շարժեալ նախանձու երիցագոյն զաւակին. ի գիւտ մոլորեալ եւ կորուսեալ անառակին. հրամայէ Հայրն վերին ուրախանալ ի միասին։ Ա՝ նոն որոյ եւ մեք հանդիսացեալ ընդ նոսին. երգեսցուք օրհնութիւն հանարակաց փրկողին. որ երարձ ըզխառվութիւն և հանատանեաց զխաղաղութիւն։

† Այսօր ցընծայ եկեղեցի երկնաւորաց եւ երկ-

րայնոց. քանզի մեկնեալն ի միմեանց ընտ նախահօ-
րըն յանցանաց. միաւորի վերընտիր արարչական
խոնարհութեամբն։ Այսօր զէակն համայնից ի մա-
նալեաց և ըգալեաց. որ և ըզմարդն ի պատկեր
իւր ստեղծ զանկեալն ի պատրանաց. օրհնեցէք
որդիք մարդկան կանգնեալք երկրորդ արարչութե՛ն։
Որ զհանդերձեալսն խորհուրդ ՀՈԳՈՎՆ յայտ-
նեաց տեսանողացն. եւ եկեալ կատարեաց ՀՕՐ եւ
ՀՈԳՈՅ առաքմանմբն. օրհնեցէք որդիք մարդկան
կանգնեալք երկրորդ արարչութե՛ն։ Որ ի լրումն
բոլորի տնօրինական մեծ խորհրդոյն. առեցելովն
առ ի մէջ փառօք առ Հայր վերհամբարձաւ. օր-
հնեցէք որդիք մարդկան կանգնեալք երկրորդ ա-
րարչութե՛ն։ Զոր տեսեալ ամենասածնին ի հիաց-
ման ըզվերինան. բարբառելովն առ միմեանս եթէ
այս ո՞վ եկեալ յերկրէ. կարմրացեալ հանդերձիւ
ի տիգամոց բըղխեալ կողէն։

Ուշխանուիք երկնից զարհուրեցան տեսանելով
զելըս քո Ո՛ն. ընկեր առ ընկեր սարսեալ անէին.
ո՞վ է սա թանգաւոր փառաց։ Սա է մարմնացեալ
Բանն Ա՛ծ որ ի խաչին ըզմեղս ըսպան. և վերա-
սլացեալ փառաքն գայ յերկինս Տ՛ր հըզօր զօրու-
թի՛ թուրով։ Սա է՝ որ ի գերեզմանէն յարեաւ և
աւերեաց ըզդըժոխս. և վերհամբարձեալ փառաքն
գայ առ Հայր Տ՛ր կարող ի պատերազմի։

Այսօր հրեշտակք ի՞ յերկինս. ուրախանան ընդ
մարդկան. որք իջեալ ի՞ յերկնից տան աւետիս
աշխարհի. ցընծացէք այսօր Ո՛ն յարեաւ ի մե-
ռելոց։ Այսօր զուարթունն ի՞ վիմին. խընկաբե-

ըմ ոբ կանանցն. փողէր ձայնիւ ցընծուք պատ-
մել աշակերտացն ասելով. ցընծացէք այսօր Յն
յարեաւ ի մեռելոց։ Այսօր վիմին հաւատոյ եւ
Յովհաննու սիրելոյ. ընդ հակառակս ընթացեալ
ի գերեզման յարուցելոյն. զոր տեսեալ պատմէ-
ին Յրիստոս յարեաւ ի մեռելոց։ Այսօր եւ մեք
զուարճացեալք պայծառասցուք տօնիւս. ընդ
հաշտութեանն Աստուծոյ միմեանց արկցուք գիրկս սի-
րով. եւ միաբան գոչեսցուք Յն յարեաւ ի մե-
ռելոց։

Հրեշտակացքն դանաքն. յերկնից ի յերկիր վայ-
րաբերեալ ի սպաս Որդւոյն Աստուծոյ։ Հրեշտա-
կին ձայնիւ. ցընծայր կոյսքն սուրբ եւ ընթա-
ցեալ առ աշակերտսքն պատմէր։ Կենդանին յա-
րեաւ. զերկուանս մահու ելոյծ և կեանս պար-
գեւեաց աշխարհի։

Յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն ահեղակերպ
փայլմամբ. պատուռեցա՛՛՛՛ն վէ՛՛՛մք. եւ երկիր
սասանեցա՛՛՛՛ւ. ի յահեղ բարբառո՛՛՛՛յ մեծ կարա-
պետին։ Այլ հրեշտակն ի յերկնից ի գերեզման-
նքն Տ՛ն. հընչեցուցա՛՛՛՛ն՛՛՛՛ր. ըզձայն ահեղ
գոչման փողո՛՛՛՛յն. ի վերա՛՛՛՛յ գերեզմանին։ Իսկ
եկեալ սուրբ կանանցն ի խընկել ըզմարմինքն
Տեառն. եւ լրուեալ ի հրեշտա՛՛՛՛կէ՛՛՛՛ն. ելթէ
յարեաւ ի մեռելո՛՛՛՛ց. կենդանի՛՛՛՛ն յաւի-
տենից։

Ի. Ի համբառնալ Տանին յերկինս եւ ի նըս-
տել ընդ աջմէ Հօր. զուարճանցեալ առաքելոցն
երկրպագէին. օրհնելով ըզՀայր զառաքող Հոգ-

ւոյն: Զամենահաւաքեալ գունդքն սրբոցն ի վերնատունն խորհրդոյն. համբարձմամբ աշակերտաց սպասէին Հոգւոյն. օրհնելով ըզՀայր զառաքող Հոգւոյն: Յանկարծահաս հնչմամբ հեղեալ կենդանարար աղբեր լուսոյ. անմահական կենաց լուսով զարդարեալ. որք օրհնէին ըզՀայր զառաքող Հոգւոյն:

Զն. Որ ի Հօրէ առաքեցար մարդասէր կարող փրկիչ. եւ ըզմեղուցեալ ըզմարդըն բժշկեցեր. օրհնեալ Տէր հրաժարելոյս. զոր հրաւիրեալ առ քեզ կոչեցեր: Որ ի խաչին բեւեռեցար մարդասէր կարող փրկիչ. եւ ըզցօղ անապական արեանըդ ցօղեցեր տիեզերաց. օրհնեալ Տէր հրաժարելոյս. զոր հրաւիրեալ առ քեզ կոչեցեր: Որ ըզգործս աւերեցեր եւ ըզգերեալսն փրկեցեր. եւ զարգելեալսըն վերածեր ի յոյս կենացըն յաւիտենից. օրհնեալ Տէր հրաժարելոյս. զոր հրաւիրեալ առ քեզ կոչեցեր:

Ծն. Այսօր Բանն ի Հօրէ անմեկնելի եւ անճառելի խորհրդով. ի ձեռն ծնողըն կուսական որովայնի աննորինաբար յերկրի երեւեալ: Մանուկ անժամանակ ի Հօրէ անսերմն ի կուսէ. ի գիրկս մօր գըրգուեցաւ այսօր արարիչն երկնի եւ երկրի: Որ մաքրեաց ըզՅորդանան եւ լուաց ըզմեղս աշխարհի. զոր օրհնեմքն անդադար արարածք ամենայն. զԷակիցըն Հօր եւ Հոգւոյն:

Խչ. Այսօր նշան յաղթող երեւեալ ի յերկրի. պայծառացոյց ըզտիեզերս. զԷ...ն յաղթութեան

Ետուր ըզխաչ քո ցէր. ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց թշնամւոյն: Փայտ կենաց կանգնեալ ի մէջ տիեզերաց. յոյս եւ ապաւէն ազգի մարդկան. սա՛ պահեսցէ ըզմեզ յամենայն վըտանգից մերոց. ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց թշնամւոյն: Փառք Հօր: Յաղթող զօրութիւն խաչի՛ քո պահեա՛ ըզմեզ Ո՛ւ Ս.ԸԾ. որ տարածեցեր ըզձեռս քո ի նմա՝. եւ լուծե՛՛ր ընկնիք դատապարտութեան յանցանաց մերոց. ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց թշնամւոյն:

Ամէն եւ միշտ: Ուստի՝ լուեալ ի՞ նմանէ զարժանահնաս պատասխանին. Եթէ զգերեալ ազգ մարդկան ի՝ գերոցէն արեամբ գնեցի՝. յորմէ օրհնութիւնք նընա՛ ի փրկելոցս արեամբ նորա՝:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Կառք Ս.Յ բիւրապատիկք, հազարք ուղղիչք. և ցր 'ի նն. 'ի Սինէ սրբութէ՛ իւրմէ:

Ա՛ռ 'ի բարձունս և գերեաց զգերութի՛. էառ ա-ւար, բաշխեաց պարգևս. և ետ որդւոց մարդկան:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Փ. Ո՛ դնէ յամպս զգնացս իւր. և շրջի նա 'ի վր թևոց հողմոց:

Խոստովանութի՛ և զմեծվայելչութի զգեցար. արկար ըզլոյս ոպ զօթոց. ձգեցեր զերկինս ոպ խորան. և արկար 'ի վր ջուրց զվերնայարկս նր:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

ՀՈՒՅՍ Դ.Կ։

Այսօր արարիչդ արարածոց. որ նորահրաշ արարչութիւնքդ զարդարեցեր զեկեղեցի. ընդքեզ բարեբանեմք Ս.ընծ հայրցին մերոց։ Այսօր կենդանիդ յաւիտենից. որ ըզմեղօք մեռեալ բնութիս բարձրացուցեր փառօք յերկինս. ընդքեզ բարեբանեմք Ս.ընծ հայրցին մերոց։ Այսօր որ զտարագրեալքս ըստ յանցանացն. գերագոյն քան զառաջինն ընդ քեզ յաթոռ Հօր հանգուցեր. ընդքեզ բարեբանեմք Ս.ընծ հայրցին մերոց։

Գ. ԸզՏր օրհնեցէք ե՛ւ բարձր արարէք ընդնա յաւիտեան։ Փառք Հօր։ Յոգովուրդք հեթանոսաց որք ընդ հրեշտակս բարձրացայք. որով զանճառ փառսն ընկալայք. օրհնեցէք ե՛ւ բարձր արարէք ընդնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Դաւանայք և պաշտօնեայք որք ընդ քրովբէսն դասեցայք. ընդ նոսին համաձայնեալք որ դասեցոյցն. օրհնեցէք ե՛ւ բարձր արարէք ընդնա յաւիտեան։

ՄԵԾԱՑՈՒՑԱՆԷ Դ.Կ։

Աստուածածին մայր լուսոյ. արեգանկանն արդարութեամբ արևելք. որ ի խաւար աշխարհի ծագեցեր ընդլոյսն գերազանց. օրհնութիւնքդ ընդքեզ բարեբանեալ մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Ամպ թեթեւ լուսաւոր անընդունակ խոնաւութեան. որ ըզցողն կենաց ի ցամաքեալ բնութիս ցողեր. օրհնութիւնքդ ընդքեզ բարեբանեալ մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Սերովբէ հոգեղէն եւ մարմնաւոր քերովբէ. որ զանհանն ի նոցունց յորովայնի քում

կրեցեր. օրհնութիւն ընդքեզ բարեբանեալ մեծա-
ցուցանեմք։

Դէշերէն գոլոպենն ՌՈՍ. Դասք լուսեղէն։

Ողորմեա Դկ։

Որ բանիւ Բանիդ Հօր գոյացուցեր զիմանալի՝սդ.
ի պաշտօն փառաց քոց եւ էակից փառակցացդ.
ողորմեա մաղթանօք սոցա երկրորդ բանաւորացս։
Որ անճառ պարգևօք քեւ զառաջինսըն լընուս.
եւ ի ձեռըն նոցա որ ի խոնարհ քան ըզնոսա. ող-
ղորմեա մաղթանօք սոցա երկրորդ բանաւորացս։
Փառք Հօր։ Որով եւ մեք վերջացեալքս. յամէն-
առատ քո շնորհէ. ճոխանամըք նոքօք գեր ի վե-
րոյ քան զարժանն. ողորմեա մաղթանօք սոցա
երկրորդ բանաւորացս։ Ամէն եւ միշտ։ Ամ-
որոյ եւ մեք հանդիսացեալ ընդ նոսա. տօնեմք
ցընծութիւն զհանսարակաց զփրկութիւն. վայելեալք
յաննախանձ ա՝ծայրին քո պարգեւս։

Տէր յերկինից Դկ։

Քահանայապետք առաջին. հանգիստ անախտ
բընութեն. բազմաչեայ քերովբէք եւ վեցթեւեան
սերովբէք. բարեխօս լերուք առ Տ՝ր հանդիսա-
կից ձեր տօնողացս։ Տէրութիւնք վերին. եւ զօ-
րութիւնք հրեշտակաց. իշխանութիւնք վեհագոյն և քա-
հանայապետք երկրորդ. բարեխօս լերուք առ Տ՝ր
հանդիսակից ձեր տօնողացս։ Փառք Հօր։ Հրեշ-
տակապետք երկնաւորք. եւ հրեշտակաց զինուո-
րութիւնք. պետութիւնք բարձրացեալ ի քահանայա-
պետութիւն երրորդ. բարեխօս լերուք առ Տ՝ր հան-
դիսակից ձեր տօնողացս։ Ամէն եւ միշտ։ Որք

ի սկզբան փրկութեան. ի քաջ հովուին յայտնութեան. անբան հօտին զղջին հովուաց երգակցելով երգէին. ընդ նոսին համաձայնեալ երգեմք եւ մեք զփառս ի բարձունս:

Առաւօտու երգ:

Զյարութիւն ընդփրկչին օրհնեսցուք. զփրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւն:

Համբարձաւ Աստուած օրհնութեամբ եւ Տէր մեր ձայնիւ փողոյ:

Բեկ. Ասասցուք. խաղ գանձ:

Օրհնի Սբ Ածին Եղանէն խոսքի ի առէտաքրանա ի մէ
զորըգում ’ի տունս, առեալ Շարական Գ.Ձ:

Թագաւոր գոլով քո յաշխարհ. մտեր ի քաղաքն Երուսաղէմ. նստեալ ի վր հողեղէն նոր յաւանակի. կոչել զհեթանոսս յերկրպագութի: Ծերքն ոստովք ձիթենեօք. եւ տղայքն ոստովք արմաւենեօք. եւ երամ երամ դասուքն անդադակէին. ովսաննա օրհնեալ եկեալ ի յանուն Տն: Ցնծացաւ ը Սիոն, բերկրեցան ը եկեղեցիք. եւ խնդութի բազմաւ եղին ընդ առաջ. օրհնէին զգալուստ քո փրկիչ յաշխարհ:

Օրհնի՝ Սաղմոս Գ.Ա:

կՅ. Երկինք ցնծասցեն առաջի Տեառն, զի գայ և հասեալ է Տէր ’ի դատել զերկիր:

փխ. Օրհնեցէք զՏէր յօրհնութի նոր, զի սքանչելիս արար:

փրկեաց նմա աջ իւր, և բազուկ սբ իւր:

Ծանոյց Տէր զփրկութի իւր, առաջի ազգաց յայտնեաց զարդարութի իւր:

Յիշեաց ողորմութիւն իւրով զՅակովբ, ճշմարտութիւն իւրով զտունն Իսրայելի, և տեսին ամ ծագք երկրի զփրկութիւն Աստ մերոյ։

Աղաղակեցէք առ Տէր ամ երկիր, օրհնեցէք զընծացէք և սաղմոս ասացէք։

Սաղմոս ասացէք Աստ մերոյ օրհնութիւն, օրհնութիւն և 'ի ձայն սաղմոսաց։

Ի ձայն օրհնութեան կռածոյ փողոյ, օրհնութիւն զընծութիւն և 'ի ձայն եղջեր փողոյ աղաղակեցէք առաջի թագաւորին Տեառն։

Խռովեսցի ծով լրիւ իւրով, տիեզերք և ամ բնակիչք նորա, և գետք ծափս հարցեն 'ի միասին ձեռամբ։

Լերինք ցնծասցեն առաջի Տեառն, զի գայ և հասեալ է Տէր 'ի դատել զերկիր։

Դատի զաշխարհս արդարութիւն, և զժողովուրդս իւր ուղղութիւն։

Ընթերցուած յԵրգոց երգոյն Սողոմոնի։ Գ. 9։

Ո՞վ է սա որ երևեալս է իբրև զառաւօտ, գեղեցիկ իբրև զլուսին, ընտիր իբրև զարեգակն. իբրև ըզհիացումն կարգեալ։ Ա՛տի 'ի պարտէզ իմ քոյր իմ հարսն, կթեցի զմուռս հանդերձ խնկօք իմովք. կերայ զհաց իմ մեղու իմով. արբի զգինի իմ կաթամբ իմով։ Կերայ՛ք մերձաւորք իմ և արբէ՛ք. և արբեցարո՛ւք եղբօրորդիք իմ։ Այս ննջեմ և սիրտ իմ արթուն կայ։ Ո՞վ է սա որ ելանէ սպիտակացեալ. յեցեալ յեղբօրորդին իւր. 'ի ներքոյ խընծորոյն զարթուցից զքեզ. անդ երկնեաց զքեզ մայր քո. անդ երկնեաց որ ծնաւն զքեզ։ Եղբօրորդին իմ էջ 'ի պարտէզ իւր 'ի տաշտս խնկոց. հովուել 'ի բուրաստանս, և ժողովել շուշանս։ Այս եղբօրորդւոյ իմոյ՝ և եղբօրորդին իմ ինձ, որ հովուէն 'ի մէջ շուշանաց. մինչև տիւն լուսաւորեսցէ և ստուերքն շարժեսցին։ Զայն եղբօրորդւոյ

իմոյ առ դրանն։ Բաց ինձ քոյր իմ, մերձաւոր իմ, աղաւնի իմ, կատարեալ իմ. զի գլուխ իմ լցաւ ցօղով. և վարսք իմ 'ի շաղից գիշերոյ։ Դիր զիս իբրև զկնիք 'ի սրտի քում. իբրև զմատանի 'ի վերայ բազկի քո. զի հզօր է իբրև զմահ սէր։ Դա պարիսպ և ստինք իմ իբրև զաշտարակ. ես էի յաչս նր իբրև գտեալ խաղաղութեան։ Այգի եղև Սողոմոնի 'ի Բեելմաւոն. ետ զայգին իւր ցպահապանսն. բերցէ այր իւրաքանչիւր ընդ պտղոյ նր հազարս արծաթոյ։ Այգի իմ առաջի իմ. հազարք Սողոմոնի, և երկերիւրք պահապանաց որ պահեն զպտուղ նր։ Որ նստիսդ 'ի պարտէզս, այլք անսան քեզ. զձայն քո լսելի արա ինձ։ Բ. 13։

Ընթերցուած Յեսայեայ մարգարէէ։ ԿԳ. 1։

Իսկ այս ո՞վ է որ դիմեալ գայ Յեդոմմայ. 421։

Պօղոսի առաքելոյն Յեբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս։ Թ. 24։

Զի ոչ եթէ 'ի ձեռագործ սրբութիսն եմուտ Քրիստոս՝ յօրինակս ճշմարտութեանն. այլ 'ի բուն իսկ յերկինս, յանդիման լինել երեսացն Աստուծոյ մեր։ Ոչ զի բազում անգամ մատուցանիցէ զանձն պատարագ ոմն քահանայապետն որ մտանէր 'ի սրբութիսն սրբուանցն ամի ամի արեամբ օտարաւ, ապա թէ ոչ՝ պարտ էր նմա բազում անգամ չարչարել 'ի սկզբանէ աշխարհի. բայց արդ ահաւասիկ միանգամ 'ի կատարած յաւիտեանց՝ յանարգութեան մեղաց իւրով պատարագաւն յայտնեալ է։ Եւ զոր օրինակ կայ մեզ մարդկան միանգամ մեռանել, և յետ այնորիկ դատաստան, նոյնպէս և Քրիստոս միանգամ մատուցեալ պատարագ առ 'ի բառնալոյ զմեղս բազմաց. իսկ յերկրորդումն առանց մեղաց յայտնեսցի այնոցիկ՝ որ ակն ունիցին նմա հաւատովք 'ի փրկութեան։ 28։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Օրհնեալ որ գաս յանուն Տն. օրհնեալ որ գալոց ես։

Ա-Էպիսկոպոս ըստ Ղուկասայ։ ԺԹ. 29։

Տէրն մեր Յն։ ՝Բն։

Եւ եղև իբրև մեձեցաւ 'ի Բեթփագէ և 'ի Բեթանիա մօտ 'ի լեառնն՝ որ կոչի Ձիթենեաց, առաքեաց երկուս յաշակերտացն իւրոց՝ և ասէ։ Երթայք դուք 'ի գեօղն՝ որ հանդէպ մեր կայ, յոր իբրև մտանէք՝ գտանիցէք յաւանակ կապեալ, յորում ոք 'ի մարդկանէ երբէք ոչ նստաւ. լուծէք զնա և ածէք։ Եւ եթէ ոք հարցանիցէ զձեզ՝ թէ ընդէր լուծանէք, այսպէս ասասջիք ցնա, թէ ՝Տն իւրում պիտոյ է։ Իբրև չոքան որ առաքեցանն, գտին ոպ ասացն ցնա, կայր յաւանակն։ Եւ մինչդեռ լուծանէին զյաւանակն, ասեն տեարքն նորա ցնա. զի՞ լուծանէք զյաւանակդ։ Եւ նոքա ասեն. ՝Տն իւրում պիտոյ է։ Եւ ածին զնա առ Յն. և արկին զնովաւ զհանդերձս, և հեծուցին զՅն։ Եւ մինչդեռ երթայր, զհանդերձս իւրեանց տարածանէին զճանապարհաւն։ Եւ իբրև այն ինչ մերձ եղև 'ի զառ 'ի վայր լերինն Ձիթենեաց, սկսաւ ամբաղմութիւն աշակերտացն ուրախութիւն օրհնել զԱ՚ծ 'ի ձայն մեծ վասն ամենայն զօրութեանցն՝ զոր տեսին. և ասէին. օրհնեալ որ գայ թագաւորդ յանուն Տն. խաղաղութիւն յերկինս, և փառք 'ի բարձունս։ Եւ ոմանք 'ի փարիսեցւոցն յամբոխէ անտի ասեն ցնա. վարդապետ՝ սաստեա՛ աշակերտացդ քոց։ Պատասխանի ետ և ասէ. ասեմ ձեզ՝ զի եթէ դոքա լռեսցեն. քարինքդ աղաղակեսցեն։ Եւ իբրև մերձեցաւ, տեսեալ զքաղաքն՝ ելաց 'ի վրա նր, և ասէ։ Եթէ գիտէիր դու դոնէ յաւուրս յայսմիկ զխաղաղութիւն քո. բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց։ Զի եկեսցեն աւուրք 'ի վրա քո, և պատեսցեն զքեզ թշնամիք քո պատնէշ. և պաշարեսցեն զքեզ, և նեղեսցեն զքեզ յամենայն կողմանց, և յատակեսցեն զքեզ, և զորդիս քո 'ի քեզ. և ոչ թո-

ղուցուն քար 'ի քարի վէ՞ յա՞մ 'ի քեզ. փոխանակ զի ոչ ծանեար զժամանակ այցելութեանդ քո։ Եւ մըտեալ 'ի տաճարն սկսաւ հանել զաղաւնէվաճառսն, և զգնօղս. և զսեղանս հատավաճառացն ցրուեաց։ Եւ ասէ ցնա. գրեալ է՝ և եղիցի տունն իմ տուն աղօթից, և դուք արարէք զդա այրս աւազակաց։ Եւ ուսուցանէր զնա հանապազ 'ի տաճարին. իսկ քահանայապետքն և դպիրք՝ և գլխաւորք ժողովրդեանն խնդրէին զնա կորուսանել, և ոչ գտանէին՝ թէ զինչ արասցեն. զի ժողովուրդն ամ կախեալ կային զնմանէ 'ի լսել։ 48։

Սաղմոս-ագն յոտոպէ. Ա ՝ի վերուստ խաղաղութեանն։

Ի՞ պէտ-նոգ-ցէն պանդ-ապոնն, ի՞ պէրա ի՞ողն աշխարհն։

Ռ՞ պ. Ամ՞ խաչիւս։ Կեցո՛։ Ընդ. Պահպանեա՛։

Ի դառնալն յեկեղեցին սկսանին գՀորաստեղծեալն։

Ռ՞ պ. Խնդրեսցուք։ Կեցո՛։ Ընդ. Ամ՞ ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ընթերցն Սաղմոս Խ.Ղ։

Կ՞. Համբարձաւ։ Փխ. Ծանփս հարէք. 420։

Ընթերցան ըստ Մատթէոսի։ Ի. 29։

Տերամբ մերով Յիսուս Քրիստոս

Եւ յելանելն նոցա յԵրիքովէ, գնացին զհետ նոր ժողովուրդք բազումք։ Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն. իբրև լուան թէ Յիսուս անցանէ՝ աղաղակեցին և ասեն. ողորմեաց մեզ Յիսուս որդի Դաւթի։ Եւ ամբոխն սաստեաց նոցա՝ զի լռեսցեն և նոքա ևս առաւել աղաղակէին և ասէին, Տէր՝ ողորմեաց մեզ որդի Դաւթի։ Օ՛տեղի առ Յիսուս, կոչեաց զնա և ասէ. զի՞նչ կամիք՝ զի արարից ձեզ։ Ասեն ցնա. Տէր՝ զի բացցին աչք մեր։ Եւ գթա-

ցեալ Յն մերձեցաւ յաչս նոցա, և վաղվաղակի տեսին։ և գնացին զհետ նոր։ Իբրև մօտ եղեն Յերուսաղէմ, և եկին 'ի Բեթփագէ մերձ 'ի լեառն ձիթենեաց. յայնժամ Յն արձակեաց երկուս յաշակերտացն իւրոց։ Եւ ասէ ցնա. երթայք 'ի գեօղն՝ որ առաջի ձեր է, և անդէն գտանէք էշ կապեալ՝ և յաւանակ ընդ նմին, լուծէք ածէք ինձ։ Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ ասասջիք, եթէ ՏՆ իւրեանց պիտոյ են, և վաղվաղակի առաքեսցէ զնա։ Բայց այս ամենայն եղև՝ զի լցցի բան մարգարէին՝ որ ասէ։ Ասացէք դստեր Սիովնի. ահա թագաւոր քո գայ քեզ հեզ, և հեծեալ յէշ և յաւանակի իշոյ։ Գնացին աշակերտքն, և արարին ոպ հրամայեաց նոցա Յն։ Եւ ածին զէշն և զյաւանակն, և արկին զնոքօք ձորձս իւրեանց. և նստաւ 'ի վրն նոր։ Եւ բազում ժողովուրդք տարածեցին զհանդերձս իւրեանց 'ի ճանապարհին, և այլք հատանէին ոստս 'ի ծառոց՝ և տարածանէին 'ի ճանապարհին։ Եւ ժողովուրդքն՝ որ առաջին և զկնի երթային՝ աղաղակէին և ասէին. օրհնուի որդւոյ Դաւթի. օրհնեալ որ գայ յանուն Տն. օրհնութի 'ի բարձունս։ Եւ 'ի մտանելն նոր Յերուսաղէմ՝ դղրդեցաւ քաղաքն ամ, և ասէ՝ ով իցէ սա։ Եւ ժողովուրդքն ասեն. սա է մարգարէն Յն՝ որ 'ի Նազարեթէ Գալիլեացւոց։ Եւ եմուտ Յն 'ի տաճարն՝ և եհան արտաքս զամենեսին, որ վաճառէին և գնէին 'ի տաճարի անդ. և զսեղանս հատավաճառացն կործանեաց՝ և զաթոռս աղաւնեվաճառացն։ Եւ ասէ ցնա. գրեալ է. տուն իմ տուն աղօթից կոչեսցի. և դուք արարէք զդա այրս աւազակաց։ Եւ մատեան առնա կոյրք և կաղք 'ի տաճարին, և բժշկեաց զնա։ Իբրև տեսին քահանայապետքն և դպիրք զսքանչելիսն զոր արար, և զմանկտին որ աղաղակէին 'ի տաճարին և ասէին, օրհնութի որդւոյ Դաւթի, բարկացան. և ասեն ցնա. լսե՞ս՝ զինչ ասեն դոքա։

Ասէ ցնա Յս. այո՝ չեցէ ընթերցեալ ձեր՝ եթէ 'ի բերանոյ տղայոց և ստնդիեցաց կատարեցեր զօրհնուն: Եւ թողեալ զնա եկ արտաքոյ քաղաքին 'ի Բեթանիա, և անդ ագաւ: 17:

Ե- ԷԼԱՆԷՆ ԽՈՍԷ- Ն ԱՐԷՊՈՊՈՆԱՅ, Ն- ՅՄ ՊՏՐՊՈՒ- 'Ի ՊՈՒՐԱ. ԱՌԷԼՈՎ Շ.ՈՐԱԿԱՆ ԽՈՍԷ ԲՁ:

Աղաւինեցաք ի խաչ քո արարիչ յաւիտենից. որ ետուր մեզ պահպան յաղթող ընդդէմ թշնամւոյն. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր: Բարձրեալ թագաւոր որ վասն մեր եկեր ի խաչ. և բարձեր սովաւ զյանցանս նախաստեղծին Ադամայ. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր: Գլուխս որ հաւատոյ և փայտ կենաց մարդկան յայտնեալ. զոր տեսեալ այսոյն պղծոյ կործանեցաւ անկանգնելի. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր: Գոչացաւ թշնամին ընդ յայտնել սրբոյ խաչին. և ի յանկէ փառաց նորա կործանեցաւ յանդունդս երկրի. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր: Երկինքք ցընծային և երկիրս ուրախանային. քանզի փրկիչ ցուցաւ ի՛ր խաչն և լուսատու տիեզերաց. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր:

ՕՐՀՆԷ՝ ՍՈՂՈՄՈՆ Դ:

ԿՅ. Աշանեցաւ: ՓԽ. Ի կարդալ իմում. 195:

Ա-ԷՊՈՊՈՆ ԸՍՊ ՄՈՒՐԻՈՒ: ԺԱ. 20:

Պ՝Ն խաչելութեանն մերոյ Յսի Քրի:

Եւ ածին արտաքս զի'ի խաչ հանցեն զնա: Եւ ունէին պահակ զՍիմովն Կիւրենացի որ ընդ այն ան-

ցանէր եկեալ յագարակէ, զՀայրն Աղէքսանդրի և Ռուփայ, զի բարձցէ զխաչափայտն նր։ Եւ ածեն զնա 'ի Գողգոթա տեղի մի, որ թարգմանի տեղի կառափելոյ։ Եւ տային նմա գինի զմռսեալ. և նա ոչ առ. և հանեն զնա 'ի խաչ։ Եւ բաժանեցին զհանդերձս նր, արկեալ վիճակս 'ի վր՝ թէ ո՞ զինչ առնուցու։ Էր ժամ երրորդ, և հանին զնա 'ի խաչ։ Եւ էր գիր վնասու նր գրեալ, թէ թագաւոր է հրէից։ Եւ ընդ նմա հանին 'ի խաչ երկուս աւազակս, մի ընդ աջմէ և մի ընդ ահեկէ նր։ Եւ լցաւ գիրն որ ասէ, թէ ընդ անօրէնս համարեցաւ։ Եւ որք անցանէին հայհոյէին զնա՝ շարժեալ ըզգլուխս իւրեանց, և ասէին. վա՜հ, որ քակէիր զտաճարն՝ և զերիս աւուրս շինէիր. ապրեցո՛ զանձն քո՝ և էջ 'ի խաչէդ։ Նոյնպէս և քահանայապետքն այպն արարեալ՝ ընդ միմեանս հանդերձ դպրոքքն՝ և ասէին, զայլս ապրեցոյց՝ զանձն ոչ կարասցէ ապրեցուցանել. Թե արքայդ Իսրայելի, իջցէ այժմ 'ի խաչէ այտի, զի տեսցուք և հաւատասցուք դմա։ Եւ որ ընդ նմա 'ի խաչն ելեալ էին՝ նախատէին զնա։ Եւ իբրև վեց ժամ եղև՝ խաւար կալաւ զամ երկիր մինչև ցինն ժամն։ Եւ յիններորդ ժամուն աղաղակեաց Յն 'ի ձայն մեծ և ասէ. Էլի՛ Էլի՛, լամա սաբաքթանի, որ թարգմանի՝ Աստ իմ, Աստ իմ, ընդէ՞ր թողեր զիս։ Եւ ոմանք 'ի նոցանէ, որք շուրջն կային զնովաւ, իբրև լուան, ասէին թէ զԵղիա կարդայ։ Եւ ընթացեալ մի ոմն՝ ելից սպունգ մի քացախով և հարեալ յեղեգան՝ տայր ըմպել նմա. և ասէ. Թո՛յլ տուր, տեսցուք՝ գայ Եղիա իջուցանել զդա։ Եւ Յն արձակեաց ձայն մեծ՝ և եհան զոգի։ 37։

Եւ պէտուն տաճարին պատռեցաւ։

Թեղ. Մի՛ խաչիւս։ Աղօթ. Պահպանեա։

Եւ 'ի պատուն սուրբ-ոգն յոգոյն. Եւ ևս խաղաղութեամբ։ Յահանոյն. Օրհնութիւն և փառք։

Եւ ապա Լսոնարհեցւոյ Եպրեցւոյ։

Մեծեցի Յարութեան Դշ։ Պարապ. Ասացուք։

Համբարձի Դշ։

Ի յարութեան յաւուր գալըստեան փրկչին. տա-
ռածանէին մանկունքն ըղձանդերձս. և անդադար
ձայնիւ օրհնէին օրհնեալ եկեալ անուամբ Տ՛ն։
Ոստս ի ծառոց բերեալ մատուցանէին. Ի՛ծորդ-
ոյն առ ճանապարհաւն. և անդադար ձայնիւ օրհ-
նէին օրհնեալ եկեալ անուամբ Տ՛ն։ Ի՛ ծերոց
բընդլեսեալ օրհնուի՛. եւ ի տղայոց փառաբանուի.
և անդադար ձայնիւ օրհնէին օրհնեալ եկեալ ա-
նուամբ Տեառն։

Համբարձաւ Տէրն մեր Յս յերկինս. 414։

Եղիշեան Սողոմոն Իգ։

Կց. Համբարձէք։ Փխ. Տեառն է երկիր. 425։

Եւ-էիպոլեան ըստ Մոլիոսի։ Ժ. 46։

Կ՚ գալստեան Տն մերոյ Յսի Յսի։

Եւ գան յերիքով. և ընդ ելանելն նր յերիքովէ
աշակերտաքն և բազում ժողովրդով, որդի Տիմէի
Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ յանցս ճանա-
պարհի։ Իբրև լուաւ՝ թէ Յս Նազովրեցի է, սկսաւ
աղաղակել և ասել. որդի Դաւթի Յս՝ ողորմեաց
ինձ։ Եւ սաստէին նմա բազումք՝ զի լռեսցէ. և
նա առաւել ևս աղաղակէր. որդի Դաւթի ողոր-
մեաց ինձ։ Օտեղի առ Յս՝ և հրամայեաց կոչել
զնա։ Կոչեն զկոյրն՝ և ասեն ցնա. քաջալերեաց
արի՝ կոչէ զքեզ։ Եւ նր ընկեցեալ զձորձս իւր,
յարեաւ եկն առ Յս։ Պատասխանի ետ նմա Յս և
ասէ. զի՞նչ կամիս՝ թէ արարից քեզ։ Ասէ ցնա
կոյրն. ռաբբունի՝ զի բացցից։ Եւ Յս ասէ ցնա.
Երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ. և վաղվաղակի
բացաւ, և երթայր զհետ նր 'ի ճանապարհին։ Եւ

յորժամ մերձ եղեն յԵղէմ 'ի Բեթփագէ և 'ի Բեթանիա մօտ 'ի լեառն ձիթենեաց, առաքէ երկուս յաշակերտաց անտի. և ասէ ցնոսա. երթայք դուք 'ի գեօղդ՝ որ ընդդէմ ձեր կայ. և նոյնժամայն իբրև մտանէք 'ի նա, գտանիցէք յաւանակ մի կապեալ. յորոյ վրայ ոչ ոք 'ի մարդկանէ նստաւ, լուծէք զնա՝ և ածէք։ Եւ եթէ ոք ասասցէ ձեզ՝ եթէ զի՞ լուծանէք զյաւանակդ, ասասջիք՝ եթէ տեառն իւրում պիտոյ է. և վաղվաղակի առաքեսցէ զնա այսր։ Ազգան, և գտին զյաւանակն կապեալ առ դուրս արտաքոյ 'ի փողոցի անդ, և լուծին զնա։ Եւ ոմանք՝ յորոց անդն կային, ասեն ցնոսա. զի՞ գործէք, զի՞ լուծանէք զյաւանակդ։ Եւ նոքա ասեն ցնոսա որպէս ասացն Յն. և թոյլ ետուն նց։ Ածեն զյաւանակն առ Յն. և արկանեն 'ի վրայ նորա հանդերձս, և նստաւ 'ի վրայ նր։ Եւ բազումք զհանդերձս իւրեանց տարածանէին 'ի վրայ ճանապարհին, և այլք ոստս 'ի ծառոց հատանէին՝ և արկանէին զճանապարհաւն։ Եւ որ առաջին և զկնի երթային, աղաղակէին, և ասէին. ովսաննայ Բարձրելոյն։ Օրհնեալ որ գայդ յանուն Տն. օրհնեալ թագաւորութիւդ եկեալ հօր մերոյ Դաւթի. խաղաղութիւն յերկինս՝ և փառք 'ի բարձունս։ Եւ եմուտ Յն յԵղէմ 'ի տաճարն. և հայեցաւ շուրջ զամենեքումբք. և զի էր երեկոյացեալ ժամն, ել 'ի Բեթանիա երկոտասանիւքն հանդերձ։ Ժ.Ա. 11։

ԲՔՂ. Խնդրեսցուք։ Կեցո։ Ամ. Քրիստոս ամենա։

Ը. ԿԻՐԱԿՈՍԻ ՊԱՏԱՐԱԳԻ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն։

ԱՐԱՐՈՂՆ հանդերձ կառոքն ընկղմեցաւ. 164։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Որ հովուեցիր Իսրայէլի, նայեաց. որ առաջնորդեցեր ոչխարն Յովսեփու։

Որ նստիր դ'ի քրովբէս, յայտնեաց առաջի Եփրեմի Բենիամինի և Մանասէի։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Փ. Մեծ եղև մինչև յերկինս ողորմութիւն քո. և մինչև յամպս ճշմարտութիւն քո։

Բարձրեալ ես դու յերկինս Աստուծ. և յամ երկրի են փառք քո։

Փառք և. այժմ և. ալէլուիա։

ՅԱՌԱՒԱՕՏՈՒՆ

Հարց Դ։

Ո՛ր զամենազօր զօրութիւնդ քո՝ ցուցեր ի Բաբելոնի. փլուկելով զերիս մանկունսն ի հնոցին. ըզքեզ օրհնեմք Աստուա՜ծ հայրցդ մերոց։ Որ ըզբազմանգիտութիւնդ ողորմութիւնդ քո ցուցեր զօրանց երկնաւորանց. տարածելով զբազուկս քո՝ ի խաչին. ըզքեզ օրհնեմք Աստուա՜ծ հայրցդ մերոց։ Որ ըզբազմանգութ ողորմութիւնդ քո ցուցեր առ աղգս մարդկան. թաղելով ի սիրտ երկրի. զի զմահու բարձցես զերկիւղ. ըզքեզ օրհնեմք Աստուա՜ծ հայրցդ մերոց։

գ. Լ՛ՂՏՐ օրհնեցէք բարձր ամարէք ընդնա յաւիտեան։ Բանն անեղական խոնարհեալ ի հողեղէն գոյացուի՛ս. համբերեալ չարչարանաց զմահ խաչի՛ ի յանձն էառ. բարձր ամարէք ընդնա յաւիտեան։ Փառք ՀՕՐ։ Եւ ի՛ջեալ ի գերեզման անապական և նոր մարմնով. յարուցեալ յերրորդ աւուր ընդ ոյս ծագեաց տիեզերաց. բարձր ամարէք ընդնա յաւիտեան։ Ամէն և միշտ։ Խակ հրեշտակապետն ի՛ջեալ ի գերեզմանն կենսատուին. ա՛ւետէր առ ե՛ր կանայսն Տ՛ր յարեաւ ի մեռելոց. բարձր ամարէք ընդնա յաւիտեան։

Մեծաց-ոց-ոցն Դկ։

Ա՜՛ծածի՛ն մայր եւ կոյս. ծա՛գօղ արեգականն ամրարութեան. որ լուսաւորեացն ըզմեզ. հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք. եւ փառաւորեմք ըզմիածի՛՜ն քո՞ զՍ՛րդի՛ն։ Փառք ՀՕՐ։ Եւ՜՛ ոյծ զօրէնիս բընութեան մարդկան. հրաշափառ քո՞ ծընունդ. եւ զէութի՛ն բնութեանն ամբողջ պահեալ. ե՜՛ւ կուսութեանդ քո ոչ խախտեցան կընիք. հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք. եւ փառաւորեմք ըզմիածի՛՜ն քո՞ զՍ՛րդի՛ն։ Ամէն և միշտ։ Օ՜՛քեզ մորենի անկէզ, լեառն վի՛մածին. դո՛ւռն փակեալ եւ աղբեր կընքեալ. նա՜՛խատեսացն գուշակեալ մայր եւ կոյս. հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք. եւ փառաւորեմք ըզմիածի՛՜ն քո՞ զՍ՛րդի՛ն։

Ողբերգ Դկ։

Յարեա՛ր երեւեցա՛ր առաքելոցն. եւ մեզ փրկի՛չ ողորմեա։ Փառք ՀՕՐ։ Մեզ Աստո՛՜ Թագաւորի՛դ

անմահի. երկիր պագանեմք և զյարութիւնդ քո փառաւորեմք: Այժմ և միշտ: Փառք փրկողին և միածնին անմահի. փրկեա զժողովուրդս քո զոր ընտրեցեր պատուական արեամբդ քո սրբով:

Տէր յերկնից դկ:

Յորժամ եկին ի գերեզմանն իւղաբեր կանայքն. եւ բերին ընծայս ի խնկել զանմահական մարմինն: Փառք Հօր: Յայնժամ հրեշտակն աւետարանէր յարեալ Քրիստոս. պատմեցէք աշակերտացն զյարութիւն Տ՛ն: Այժմ և միշտ: Իսկ նոցա զարհուրեալ վն աղաչեին տեսլեանն. պատմէին աշակերտացն զահագին տեսիլն:

Առաւօտու Երգ:

Զյարութիւն ըզփրկչին օրհնեսցուք. զփրկչին մերոյ օրհնեսցուք ըզյարութիւն:

Համբարձաւ Աստուած օրհնութեամբ եւ Տէր մեր ձայնիւ փողոյ:

Կարգ Ասացուք:

Առաւօտու Սաղմոս ԽԶ:

ԿՑ. Համբարձաւ: փխ. Ծափս հարէք. 420:

Աւետարան ըստ Ղուկասու: Ի. 1:

Տէր մեր Յս Քս

Եւ եղև 'ի միում աւուրցն յայնցանէ, մինչդեռ ուսուցանէր զժողովուրդն 'ի տաճարի անդ՝ և աւետարանէր, հասին 'ի վերայ քահանայապետքն և դպիրք ծերովքն հանդերձ, և ասեն ցնա. ասա մեզ՝ որո՞վ իշխանութեամբ գործես դու զայդ, կամ ո՞վ է՝ որ ետ քեզ զայդ իշխանութիւն: Պատասխանի ետ և ասէ ցնոսա. հարցից և ես ցձեզ բան

մի, և ասացէք ինձ։ Ակրտութիւնն Յովհաննու յերկնից էր՝ եթէ 'ի մարդկանէ։ Եւ նոքա խորհեցան 'ի միտս իւրեանց և ասեն։ Եթէ ասեմք յերկնից, ասէ. իսկ ընդէր ոչ հաւատացէք նմա. և եթէ ասեմք 'ի մարդկանէ, ամ ժողովուրդն քարկոծ առնեն զմեզ. զի հաստատեալ է 'ի միտս զՅովհաննէ, թէ մարգարէ է։ Եւ պատասխանի ետուն չգիտել թէ ուստի ելից։ Եւ Յն ասէ ցնա. և ոչ ես ասեմ ձեզ, որով իշխանութիւն առնեմ զայս։ Ի. 8։

Քրիստ. Խնդրեսցուք։ Կեցո։ Ողորմ ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ուրբաթն Սողմոս Խ.Զ։

Կց. Համբարձաւ։ Փխ. Հայսիս հարէք. 420։

Ուխտաւորաց ըստ Մատթէոսի։ ԻԸ. 18։

Տէրն մեր Յն Քն

Եւ այգուցն իբրև դարձաւ անդրէն 'ի քաղաքն քաղցեաւ։ Եւ տեսեալ թզենի մի 'ի վրայ ճանապարհին՝ եկն 'ի նա, և ոչ ինչ եգիտ 'ի նմա՝ բայց միայն տերև. և ասէ ցնա. մի այսուհետև 'ի քէն պտուղ եղիցի յաւիտեան. և առժամայն չորացաւ թզենին։ Իբրև տեսին աշակերտքն՝ զարմացան և ասեն, թէ զիարդ վաղվաղակի ցամաքեցաւ թզենին։ Պատասխանի ետ Յն՝ և ասէ ցնա. ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս և ոչ երկմտիցէք՝ ոչ միայն թզենւոյդ առնիցէք, այլ թէպէտ և լերինդ ասիցէք. բարձիր և անկիր 'ի ծով, եղիցի։ Եւ զամ ինչ զոր և խնդրիցէք յաղօթս հաւատովք՝ առնուցուք։ Եւ իբրև եկն 'ի տաճարն, մատեան առ նա՝ մինչդեռ ուսուցանէր, քահանայապետքն և ծերք ժողովրդեանն՝ և ասեն. որով իշխանութիւն առնես զայդ. և ով ետ քեզ զիշխա-

նութիւդ զայդ։ Պատասխանի ետ Յն և ասէ ցնն. Հարցից և ես զձեզ բան մի. զոր թէ ասիցէք ինձ, և ես ձեզ ասացից՝ որով իշխանութիւն առնեմ զայս։ Մկրտութիւն Յովհաննու ուստի՞ էր՝ յերկնի՞ց, թէ 'ի մարդկանէ։ Եւ նոքա խորհէին ընդ միտս՝ և ասէին։ Եթէ ասեմք յերկնից, ասէ ցմեզ. իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա. և եթէ ասեմք 'ի մարդկանէ, երկնչիմք 'ի ժողովրդենէն. զի ամենեքին զՅովհաննէս իբրև զմարգարէ ունէին։ Պատասխանի ետուն Յնի և ասեն. ոչ գիտեմք։ Ասէ ցնն և նա. և ոչ ես ասեմ ձեզ՝ որով իշխանութիւն առնեմ զայս։ Դայց զի՞նչդ թուի ձեզ. առն միոջ էին երկու որդիք, և մատուցեալ առ առաջինն ասէ. ո՛րդեակ՝ երթ այսօր գործեա յայգւոջ։ Նա պատասխանի ետ և ասէ. երթամ տր և ոչ չոգաւ։ Դարձեալ և առ միւսն, և ասէ նոյնպէս. նա պատասխանի ետ և ասէ. ոչ կամիմ։ Դայց յետոյ զղջացաւ՝ և չոգաւ յայգին։ Ընդ՝ ո՞ յերկոցունց արար զկամն հօրն։ Ասեն՝ յետինն։ Ասէ ցնն Յն. ամէն ասեմ ձեզ, զի մաքսաւորք և պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ յարքայութի՛ն երկնից։ Զի եկն Յովհաննէս ճանապարհաւ արդարութե՛ն և ոչ հաւատացէք նմա. և մաքսաւորք և պոռնիկք հաւատացին նմա, և դուք տեսէք՝ և ոչ զղջացարուք յետոյ հաւատալ նմա։ 32։

Մեծեդի Յոր-ՐԵ ՐԿ։ Գ՝որ՝ոշ. Ասացուք։

ՀոմՔոչի ԴՁ։

Որք տնկակից եղաք նմանութե՛ն. 428։

Համբարձաւ Տէրն մեր Գն օրհնութի՛ն. 414։

Ընչոկոն Սոչոս ԻԳ։

գ3. Համբարձէք։ ՓԽ. Տն է երկիր. 425։

Ա-Եպոչոն ըոչ Սոչկոոչ։ ԺԱ. 12։

Տրն մեր Յն Գն

Եւ 'ի վաղիւ անդր մինչդեռ ելանէին 'ի Յերիա-

նիա, քաղցեաւ։ Եւ ետես թզենի մի 'ի բացուստ
տերևալից. և եկն՝ թէ գտանիցէ ինչ 'ի նմա. և
իբրև եկն 'ի նա՝ ոչ ինչ եգիտ, բայց միայն տերև.
զի ոչ իսկ էր ժամանակ թզոյ։ Պատասխանի ետ
և ասէ ցնա. մի՛ ևս ոք յաւիտեան 'ի քէն պտուղ
կերիցէ. և լսէին աշակերտքն նր։ Գան Յերուսաղէմ.
և մտեալ 'ի տաճարն՝ սկսաւ հանել զվաճառա-
կանսն և զգնողս՝ որ էին 'ի տաճարին. և զսեղանս
հատավաճառացն ցրուեաց, և զաթոռս աղաւնէ-
վաճառացն կործանեաց. և ոչ թողոյր՝ եթէ ոք
անօթ ինչ անցուցանիցէ ընդ տաճարն։ Եւ ուսու-
ցանէր և ասէր ցնս. գրեալ է. տուն իմ տուն
աղօթից կոչեսցի ամ հեթանոսաց, և դուք արա-
րէք զդա այրս աւազակաց։ Լուան քահանայա-
պետքն և դպիրք. և խնդրէին՝ թէ որպէս կորուս-
ցեն զնա, բայց երկնչէին 'ի նմանէ. զի ամ ժողո-
վուրդն զարմացեալ էր ընդ ուսումն նորա։ Եւ իբ-
րև երեկոյ լինէր արտաքոյ քան զքաղաքն ելանէին։
Եւ մինչդեռ այգուցն առ նովաւ անցանէին, տե-
սին զթզենին ցամաքեալ յարմատոց։ Յիշեաց
Պետրոս՝ և ասէ ցնա. ռաբբի՝ ահաւասիկ թզենին
զոր անիծեր, ցամաքեցաւ։ Պատասխանի ետ Յն
և ասէ ցնս. եթէ ունիցիք զհաւատսն Աստ, ամէն
ասեմ ձեզ. որ ոք ասիցէ լերինս այսմիկ՝ բարձիր
և անկիր 'ի ծով, և ոչ երկմտիցէ 'ի սրտի իւրում,
այլ հաւատայցէ՝ թէ զոր ասէն լինի, եղիցի նմա
զոր ինչ և ասիցէ։ Վասն այսորիկ ասեմ ձեզ. զամ
ինչ վն որոյ աղօթս արարեալ խնդրիցէք, և հա-
ւատայցէք թէ առնուցուք, եղիցի ձեզ։ Եւ յոր-
ժամ յաղօթս կայցէք՝ թողուցուք, եթէ ունի-
ցիք ինչ զումեքէ. զի և Հայրն ձեր՝ որ յերկինս է,
թողցէ ձեզ զյանցանս ձեր։ Այլ եթէ դուք ոչ
թողուցուք, և ոչ Հայրն ձեր որ յերկինս է՝ թող-
ցէ ձեզ զյանցանս ձեր։ 26։

Ռ՚Ք՚Ղ. Խնդրեսցուք։ Կեցո՛։ Ամէն. Գ՚ադաւոր։

Ը. ԿԻՐԱԿԱՍԱՐԱՐ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն Դ։

Օգնականն ընդունելի եղև իմ Տէր. 168։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Որ դնէ յամպս զգնացս իւր. և շրջի 'ի վրայ թևոց հողմոց։

Խոստովանութի՛ւն և զմեծվայելչութի՛ն զգեցար. արկար զլոյս ոսպ զօթոց. ձգեցեր զերկինս ոսպ խորան. և արկար 'ի վրայ ջուրց զվերնայարկս նորա։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Փ. Տէր խոնարհեցո՛ զերկինս և էջ. մերձեաց 'ի լերինս, և ծխեսցին։

Փայլեա՛ զփայլատակունս քո, և խռովեա՛ զնս. առաքեա՛ զնետս քո. և ցրուեա՛ ըզնոսա։

Փառք և. այժմ և. ալէլուիա։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Դ։

Այսօր՝ ցընծա՛ն երկինք եւ երկի՛ր յա՛ռուրբ՝ քո՛ Տէր. Ա՛ր՛ծ հա՛ցըն մերոց։ Այսօր նորո՛գեցան տի՛եզերք ամենայն յա՛ռուրբ՝ քո՛ Տէր. Ա՛ր՛ծ հա՛ցըն մերոց Այսօր հրեշտակապե՛տն աւետարանէր զյա՛ռուրբ քո Տէր. Ա՛ր՛ծ հա՛ցըն մերոց։

Դ. Ըզտէր օ՛րհնեցէք բա՛՛ռք արարէ՛՛ք ընդա՛ յաւիտեա՛ն։ Փառք Հօր։ Որ հարցարանօ՛ք խա՛՛ղի՛՛ն փրկեա՛ց զտիեզերս. և հեղմամբ արեանն իւրով ղթո՛ղութի՛՛ մեզ շընորհեա՛ց. բա՛՛ռք արարէ՛՛ք ընդա՛

յաւիտեան։ Այժմ և միշտ։ Որ երեքօրեայ թաղ-
մամբ զդիժոխս աւերեաց. եւ յարութեն իւրով
զյարուն մեզ պարգևեաց. բարձր արարէք ընդնա
յաւիտեան։

Մեծաց-ոց Դ։

Ընծայեն ե՞ր կոյս ամենօրհնեալ Մարիամ. որ
օրհնեալդ ես ի կանայս. զքեզ օրհնեմք մի՞շտ որ
արժանի՛դ ես մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Ան-
ապական տաճար և առանգաստ լուսոյ. որ ի՝ քեզ
փեսայացեալ Բանն կենաց բնակեցաւ. զքեզ
օրհնեմք մի՞շտ որ արժանի՛դ ես մեծացուցանեմք։
Այժմ և միշտ։ Հուրն կենդանի՞ որ ի մորե-
նին վառեցաւ. զոր անվընաս յարգանդի քում
կրեցեր և ծընար Աստուած և մարդ. զքեզ օր-
հնեմք մի՞շտ որ արժանի՛դ ես մեծացուցանեմք։

Ողորմեա՛ Դ։

Ո՞ր ըզկերպարանս մանացու բընուն ազգի մարդ-
կան. յանձն առեր Անբծ Բանդ էակից Հօր. եւ
եկիր կամաւ ի խաչ։ Փառք Հօր։ Ո՞ր ի վերայ
նախաստեղծին ըզմեռանիլ յանձն առեր. համբե-
ռելով չարչարանաց ի խաչի՛ն բարձրացար Բանըդ
գոյակից Հօր. եւ իջեր ի գերեզման։ Այժմ և
միշտ։ Նո՛ւ յերրորդ աւուր յարեար զմահու լու-
ծեր զնիշխանութի՝ն. արձակելով զբմբրընեալսն ի
նմանէ Բանըդ փառակից Հօր. եւ նրստար ընդ
աջմէ Հօր։

Տէր յերկնից Դ։

Ինչ հրեշտակն յերկնի՞ց աւետաւո՞ր երջանիկ
և ե՞ր կանանցըն քարոզէր ասելով. է՝ ձեզ՛ Դ

վերըստին լոյսըն ծագեալ ի յաշխարհ: Փառք Հօր: Այսօր տեսիլ ահեղակերպ հրեշտակապետին մերձեալ ի գունդ զինուորացն. այսօր սըրտաբեկեալ պահապանացըն զարհուրեալ մեռանէին. է ձեզ վերըստին լոյսըն ծագեալ ի յաշխարհ: Այժմ և միշտ: Այսօր ցընծայ Նորուսաղէմըն վերին. այսօր ցընծայ Սիոն մայր եկեղեցի. քանզի փըրկիչըն մեր յարեաւ և աւերեաց ըզդըժոխս. եւ մեզ վերըստին լոյսըն ծագեալ ի Հօրէ:

Առաւօտու երգ:

Զյարութիւն ըզփըրկչին օրհնեսցուք. զփըրկչին մերոյ օրհնեսցուք ըզյարութիւն:

Համբարձաւ Աստուած օրհնութեամբ եւ Տէր մեր ձայնիւ փողոյ:

Կարգ Ասացուք:

Առաւօտու Սաղմոս ԽԶ:

43. Համբարձաւ: Փխ. Ծափս հարէք. 420:

Աւետարան ըստ Ղուկասու: Ի. 9:

Տէրն մեր Յս Քս

Սկսաւ ասել առ ժողովուրդն՝ զառակս զայս. այր ոմն տնկեաց այգի, և ետ զնա մշակաց. և ինքն գնաց ճանապարհ ժամանակս բազումս: Եւ 'ի ժամու՝ առաքեաց առ մշակսն ծառայ. զի 'ի պտղոյ այգւոյն տացեն նմա. և մշակքն գան հարին զնա, և արձակեցին ունայն: Եւ յաւել միւս ևս ծառայ յղել, նոքա և զնա ևս գան հարին՝ անարգեցին, և առաքեցին ունայն: Եւ յաւել զերրորդն առաքել. նոքա և զնա վիրաւորեցին, և հանին արտաքս: Ասէ տէր այգւոյն. զի՞նչ արարից, առաքեցից զորդի իմ սիրելի, թերևս 'ի սմանէ պատկառեսցեն: Իբրև

տեսին զնա մշակքն, խորհեցան ընդ միմեանս և ասեն. սա է ժառանգն. սպանցուք զսա. զի մեր լինիցի ժառանգութիւն: Եւ հանին զնա արտաքս քան զայգին և սպանին. արդ՝ զի՞նչ արասցէ ընդ նս տէր այգւոյն. ոչ ապաքէն գայցէ և կորուսանիցէ զմշակսն զայնոսիկ, և տայցէ զայգին այլոց: Իբրև լուան՝ ասեն. քա՛ւ՝ մի լիցի: Եւ նա հայեցեալ ընդ նս՝ ասէ. իսկ զի՞նչ իցէ այն՝ որ գրեալն է. թէ զվէմն՝ զոր անարգեցին շինողքն, նա եղև գլուխ անկեան: Ամենայն որ ընդհարցի ընդ վէմս ընդ այս՝ խորտակեսցի, և յորոյ վրայ անկցի՝ հոսեսցէ զնա: Եւ խնդրէին դպիրքն և քահանայապետք արկանել 'ի նա ձեռս 'ի նմին ժամու, և երկեան 'ի ժողովրդենէն. զի գիտացին՝ թէ առ նս ասաց զառակն զայն: Եւ ապա սպասեցին, և առաքեցին դաւաճանս կեղծաւորեալս զանձինս առ արդարս ունել. զի ըմբռնեսցեն զնա բանիւք, առ 'ի մատնել զնա պետութեանէ և իշխանութեանէ դատաւորին: Հարցին զնա և ասեն. վարդապետ՝ գիտեմք եթէ ուղիղ խօսիս և ուսուցանես, և ոչ առնուս ակն՝ այլ ճշմարտութիւն զճանապարհն Աստուծոյ ուսուցանես: Արժա՞ն է մեզ կայսեր հարկս տալ՝ թէ ոչ: Եւ նայեցեալ ընդ խորանմանկութիւն նց՝ ասէ ցնս. ցուցէք ինձ զդահեկանն. և նոքա ցուցին. և ասէ. զո՞յր պատկեր և զգիր ունի. պատասխանի ետուն և ասեն՝ զկայսեր: Եւ նա ասէ ցնս. արդ երթայք տո՛ւք զկայսերն կայսեր, և զԱստուծոյ Աստուծոյ: Եւ ոչ կարացին զնա ըմբռնել բանիւք առաջի ժողովրդեանն. և զարմացեալ ընդ պատասխանին նր՝ լռեցին: 26:

Բէթ. Խնդրեսցուք: Կեցո՛: Աղ. Բոլոր ամենա:

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Առաջին Պողոս Խ.Զ:

Կգ. Համբարձաւ: Փխ. Հայրէք. 420:

Ա՛ֆեսոսեան ըստ Մատթէոսի։ ԻԱ. 33։

Տէր մեր Յս Քս ասէ.

ԱՅԼ առակ լուարուք. այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի, և ցանգով պատեաց զնա, և փորեաց 'ի նմա հնձան, և շինեաց աշտարակ. և ետ զնա ցմշակս, և գնաց 'ի տար աշխարհ։ Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նր։ Եւ կալեալ մշակացն զծառայս նր զոմն տանջեցին՝ զոմն քարկոծեցին։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն, և արարին նց նոյնպէս։ Յետոյ առաքեաց առ նս զորդի իւր՝ և ասէ. Թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։ Իսկ մշակքն իբրև տեսին զորդին, ասեն ընդ միտս. սա է ժառանգն. եկայք սպանցուք զսա, և կալցուք զժառանգութի սորա։ Եւ առեալ հանին զնա արտաքոյ քան զայգին՝ և սպանին։ Արդ՝ յորժամ եկեսցէ տէր այգւոյն զի՞նչ արասցէ մշակացն այնոցիկ։ Ասեն ցնա. զչարսն չարաւ կորուսցէ. և զայգին տացէ այլոց մշակաց, որք տայցեն նմա զպտուղս 'ի ժամու իւրեանց։ Ասէ ցնս Յս. չիցէ՞ երբէք ընթերցեալ ձեր 'ի գիրս. զվէմն՝ զոր անարգեցին շինօղքն, նա եղև գլուխ անկեան, 'ի Տնէ եղև այս, և է սքանչելի յաչս մեր։ Վասն այսորիկ ասեմ՝ ձեզ, զի բարձցի 'ի ձէնջ արքայութի Աստ, և տացի ազգի՝ որ առնիցէ զպտուղս նր։ Եւ որ անկցի 'ի վրն վիմիս այսորիկ՝ փշրեսցի, և յորմէ՞ վրն անկցի՝ հոսեսցէ զնա։ Իբրև լուան քահանայապետքն և դպիրք և փարիսեցիք զառակս նր, գիտացին թէ վրն նց ասաց։ Եւ խնդրէին զնա ունել, բայց երկեան 'ի ժողովրդոցն. քանզի իբրև զմարգարէ ունէին զնա։ 46։

Մ՚ԵՍԵՊԻ ՅՈՐՈՒԵՔ ԳԶ։ ՔՈՐՈՂ. Ասասցուք։

Հոմիլիայի Դ։

Որք տնկակից եղաք նմանութեամբ. 428։
Համբարձաւ Տէրն մեր յերկինս. 414։

Աբիյոնեան Սաղմոս ԻԿ։

Կ3. Համբարձէք։ Փս. Տն է երկիր. 425։

Ա-Էպիփանեան ըստ Մարկոսի։ ԺԱ. 27։

Տերամբ մերով Յիսուս Քրիստոս

Գան միւսանգամ յԵրուսաղէմ. և մինչդեռ 'ի տաճարի անդ զգնայր, գան առ նա քահանայապետքն և դպիրք և ծերք, և ասեն ցնա. որովք իշխանութիւն առնես զայդ, և ով ետ քեզ զիշխանութիւնդ զայդ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Հարցից և ես զձեզ բան մի, տուք ինձ պատասխանի. և ես ասացից ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս։ Մկրտութիւն Յովհաննու յերկնից էր՝ եթէ 'ի մարդկանէ, տուք ինձ պատասխանի։ Խորհէին ընդ միմեանս՝ և ասէին. եթէ ասեմք եթէ յերկնից, ասէ ցմեզ. իսկ ընդէր ոչ հաւատացէք նմա։ Այլ եթէ ասեմք՝ 'ի մարդկանէ, երկնչիմք 'ի ժողովրդենէն. զի ամենեքին գիտէին զՅովհաննէս՝ թէ մարգարէ էր։ Պատասխանի ետուն և ասեն ցՅիսուս. չգիտեմք։ Այլ Յիսուս ետ նց պատասխանի և ասէ. և ոչ ես ասեմ ձեզ, որով իշխանութիւն առնեմ զայս։ Այլ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք՝ և ասել։ Այր մի տնկեաց այգի, և ած շուրջ զնովաւ ցանգ, և գուբ հնձան փորեաց, և շինեաց աշտարակ. և ետ զնա ցմշակս, և գնաց 'ի տար աշխարհ։ Այլ առաքեաց առ մշակսն 'ի ժամանակի ծառայ մի, զի 'ի մշակաց անտի առցէ 'ի պտղոյ այգւոյն։ Այլ նց կալեալ՝ գան հարին զնա, և արձակեցին ունայն։ Դարձեալ առաքեաց առ նն այլ ծառայ, և զնա կառափնատեցին՝ և արձակեցին անարգեալ։ Այլ դարձեալ այլ առաքեաց, և զնա սպանին, և զբազումս այլս՝ զոմանս հարկանէին և

զոմանս սպանանէին։ Ապա որդի մի էր իւր սիրելի, զնա առաքեաց առ նա յետոյ, և ասէ. Թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։ Իսկ մշակքն իբրև տեսին զնա զի գայր ասեն ցմիմեանս. սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա, և մեր լիցի ժառանգութիւնն։ Եւ կալեալ զնա սպանին, և հանին արտաքոյ այգւոյն։ Արդ՝ զի՞նչ արասցէ տէր այգւոյն. եկեսցէ և կորուսցէ զմշակսն, և տացէ զայգին 'ի ձեռս այլոց։ Եւ ո՞չ զգիրն զայն իցէ ընթերցեալ ձեր, թէ զվէմն զոր անարգեցին շինողքն, նա եղև գլուխ անկեան։ Ի Տնէ եղև այս, և է սքանչելի յաչս մեր։ Եւ խնդրէին զնա ունել, և երկեան 'ի ժողովրդենէ անտի, զի գիտացին թէ առ նա ասաց զառակն. և թողին զնա և գնացին։ Եւ առաքեն առ նա զոմանս 'ի փարիսեցւոց անտի՝ և 'ի հերովդիանոսաց, զի զնա որսասցեն բանիւ։ Եւ նոքա եկեալ հարցանէին զնա ենդութիւն՝ և ասէին. վարդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես, և ոչ ինչ փոյթ է քեզ զումեքէ. զի ոչ հայիս յերեսս մարդկան, այլ ճշմարտութիւն զճանապարհն Աստուծոյ ուսուցանես. արդ՝ ասա՛ մեզ, արժա՞ն է հարկս տալ կայսեր՝ թէ ոչ. տացո՞ւք՝ եթէ ոչ տացուք։ Եւ Նա գիտաց զկեղծաւորութիւն նոցա, ասէ ցնա. զի՞ փորձէք զիս կեղծաւորք. բերէք ինձ դահեկան մի՝ զի տեսից։ Եւ նոքա բերին։ Եւ ասէ ցնա. ո՞ր է պատկերս այս՝ կամ գիր։ Եւ նոքա ասեն ցնա. կայսեր։ Պատասխանի ետ Նա, և ասէ ցնոսա. երթայք տո՛ւք զկայսերն՝ կայսեր, և զԱստն՝ Աստ։ Եւ զարմացան ընդ նա։ ԺԲ. 17։

Բ՚Ի. Խնդրեսցուք։ Կեցո՛։ Ամենեքեան. Ամենագաւոր։

Զ. ՀԱՅՐԱՊԱՏԱՐԱՔ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն Դկ։

Յրդեցիր զեր նոր ձայնիւ ցնծութիւն. 171։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Անծ եղև մինչև յերկինս ողորմութի՛ քո. և մինչև յամպս ճշմարտութի՛ քո։

Բարձրեա՛լ ես դու յերկինս Ա՛ծ, և յա՛մ երկրի են փառք քո։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Փ. Խոնարհեցո՛ց զերկինս և էջ, և մեգ՝ի ներքոյ ոտից նորա։

Նստ՝ի քրովբէս և թռեաւ. սլացաւ նա՝ի թևս հողմոց։

Փառք և. այժմ և. ալէլուիա։

Յանուն Օրհնութեան

Հարց Դկ։

Փառաւորեա՛լ է անո՛ւն քո՛ ե՛ր. տէ՛ր Ա՛ծ հայրե՛ն մերոց։ Որ ի բարձունս բընակեա՛լդ ես. եւ հայիս յարանցս քո՛ քաղցրութի՛ւն. փառաւորեա՛լ է անո՛ւն քո՛ ե՛ր. տէ՛ր Ա՛ծ հայրե՛ն մերոց։ Որ ի յերկրի՛ երևե՛ցար. եւ ընդ մարդկա՛ն շրջեցար. թանգա՛ւոր յաւիտենից. փառաւորեա՛լ է անո՛ւն քո՛ ե՛ր. տէ՛ր Ա՛ծ հայրե՛ն մերոց։

Գ. Ընդ տէ՛ր Ա՛ծ՝ արարածք օրհնեա՛ցէք. եւ բարձր արարո՛ւածք զե՛կեալն ի փրկուի՛ մարդկա՛ն։ Որ էակի՛ցն է՝ հօր եւ սո՛ւրբ հոգւոյն. ի՛ յերկրի՛

երեւեցան. ամենայն արարածք օրհնեցէք. եւ բարձր արարէք զնկեալսն ի փրկութիւն մարդկան։ Որ հրեշտակաց անպարագրելին է. ի վերայ խաչին տեսան. ամենայն արարածք օրհնեցէք. եւ բարձր արարէք զնկեալսն ի փրկուի մարդկան։ Փառք Հօր։ Որ սրովբէից անհասանելի է. ի գերեզմանի եդան. ամենայն արարածք օրհնեցէք. եւ բարձր արարէք զնկեալսն ի փրկուի մարդկան։ Այժմ և միշտ։ Որ քրովբէից անճառելի է. ի յերրորդ աւուր յարեան. ամենայն արարածք օրհնեցէք. եւ բարձր արարէք զնկեալսն ի փրկուի մարդկան։

Սեծուսուսդ Դ։

Ընդքեզ Ս՛ծածին. աղբեր անբիսպառ լուսոյն. որ լուսաւորէ զհաւատացեալս. միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Դու պարծանքք կուսուե՛ մարդկան. դու ուրախութի՛ հրեշտակաց. դո՛ւ բարձօղ անի՛ծիցն. վասն որմ ընդքեզ Ս՛ծածին. մեծացուցանեմք։ Այժմ և։ Դու ճըշմարիտ արեւելք արեգականն արդարութեան. յորմէ ծագեաց փրկուի տիեզերաց. միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք։

Ողորմեա՛ Դ։

Թմբեաս իմ Ողորմեա՛ ինձ Ս՛ստուած։ Որ ի Հօրէ առաքեցար անբսկիզբն Որդի. եւ ի սրբոյ կուսէն ծընար. ողորմեա՛ ինձ Ս՛ստուած։ Որ ի խաչին բեւեռեցար Ս՛ստուած Բանդ. եւ ի Հօրէ ոչ մեկնեցար. ողորմեա՛ ինձ Ս՛ստուած։ Փառք Հօր։ Որ ի գերեզմանի եդար.

թագաւոր անմահ. եւ ի յերրորդ աւուր յարեաց. ողորմեա՛ ինձ Աստուա՛ծ։ Այժմ և միշտ։ Որ ի յերկինս համբարձար. ամենակարող. և ընդ ա՛ջմէ Հօր նստար. ողորմեա՛ ինձ Աստուա՛ծ։

Տէր յերկինս։

Հրեշտակացն դասքն. յերկնից ի յերկիր վայրաբերեալ ի սպասս Որդւոյն Աստուծոյ։ Փառք Հօր։ Հրեշտակին ձայնիւ. ցընծայր կոյսն սուրբ եւ ընթացեալ առ աշակերտսն պատմէր։ Այժմ և։ Կենդանին յարեաւ. զերկուսիսն մահու ելոյծ և կեանս պարգեւեաց աշխարհի։

Առաւօտու Երգ։

Օ՜ յարութի՛ ընդ երկրկիր ծրհնեսցո՛ւք. զփրկչին մերոյ օրհնեսցո՛ւք ընդ յարութի՛։

Համբա՛ռաւ Աստուա՛ծ օրհնութիւն եւ Տէր մե՛ր ձայնիւ փառոյ։

Բոլոր Աստուածաշունչ։

Առաւօտու Սաղմոս ԽՀ։

48. Համբարձաւ։ փխ. Օ՜ափս հարէք. 420։

Ա-Եպիսկոպոս ըստ Ղուկասու։ Ի. 27։

Առ Տէրն մեր Յս Քս

Ասատուցեալ ոմանք 'ի սաղուկեցւոցն, որք հակառակէին չլինել յարութիւն, հարցին ցնա՝ և ասեն. վարդապետ՝ Մովսէս գրեաց մեզ, եթէ ուրուք եղբայր մեռանիցի, որոյ իցէ կին և անորդի իցէ, զի առնուցու եղբայր նր զկինն, և յարուցէ զաւակ եղբօր իւրում։ Արդ՝ եօթն եղբարք էին. և առաջնոյն առեալ կին՝ մեռաւ անորդի։ Առ զնա և երկրորդն, մեռաւ և նա անորդի։ Առ զնա և երրորդն.

նոյնպէս և եօթանեքին, և ոչ թողին որդիս։ Մեռաւ և կինն։ Արդ՝ 'ի յարութիւն ո՞ւմ 'ի նոցանէ լինիցի կին, զի եօթանեքին կալան զնա կին։ Պատասխանի ետ նց Յն և ասէ, որդիք աշխարհիս պսսորիկ կանայս առնեն՝ և արանց լինին։ Իսկ որ արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել՝ և յարութիւն որ 'ի մեռելոց, ոչ կանայս առնեն, և ոչ արանց լինին։ Զանգի և ոչ մեռանել ևս կարեն, զի հաւասար հրեշտակաց են՝ և որդիք Աստ. քանզի յարութիւն որդիք են։ Այլ զի յառնեն մեռեալք, և Մովսէս գուշակեաց 'ի մորենւոջն, ոգ՝ ասէ զՏէր Աստ Աբրահամու և զԱստ Սահակայ և զԱստ Յակովբայ։ Եւ Ած չէ մեռելոց՝ այլ կենդանեաց, զի ամենեքին նմա կենդանի են։ Պատասխանի ետուն ոմանք 'ի դպրացն և ասեն. վարդապետ՝ բարւոք ասացեր։ Եւ ոչ ևս ոք իշխէր հարցանել զնա՝ և ոչ ինչ։ 40։ Քեզ. Խնդրեսցուք։ Կեցո։ Աղ. Ում ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ
Առաջին Պօղոս խզ։

Կ3. Համբարձաւ։ Փխ. Հարսիս հարէք. 420։

Ա-Էպոպան ըստ Պոպլէոսի։ Իմ. 1։

Տէրն մեր Յն Քն

Դարձեալ պատասխանի ետ (Յն) և ասէ ցնս առակս։ Մանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի՝ որ արար հարսանիս որդւոյ իւրում։ Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն 'ի հարսանիս, և ոչ կամեցան գալ։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս՝ և ասէ. ասացէք հրաւիրելոցն. ահա ասիկ զճաշ իմ պատրաստեցի. զուարակք իմ և պարարակք զենեալ են, և ամ ինչ պատրաստ է. եկայք 'ի հարսանիս։ Եւ նոքա յուլացեալ գնացին՝ ոմն յագարակ իւր, և ոմն 'ի վաճառ իւր. և այլք կալան զծառայս նր, թշնամանեցին, և սպա-

նին։ Իսկ թագաւորն իբրև լուաւ բարկացաւ, և առաքեաց զզօրս իւր և սատակեաց զսպանողսն զայնոսիկ, և զքաղաքն նոցա այրեաց։ Յայնժամ ասէ ցծառայս իւր. Հարսանիքս պատրաստ են, և հրաւիրեալքն չէին արժանի։ Արդ՝ երթայք յանցրս ճանապարհաց, և զորս միանգամ գտանիցէք՝ կոչեցէք 'ի հարսանիս։ Եւ ելեալ ծառայքն 'ի ճանապարհս ժողովեցին զամենեսեան զորս և գտին՝ զչարս և զբարիս. և լցան հարսանիքն բազմականոք։ Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականոքն, ետես անդ այր մի՝ որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց։ Եւ ասէ ցնա. ընկեր՝ զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց. և նա պապանձեցաւ։ Յայնժամ ասէ թագաւորն ցսպասաւորսն. կապեցէք զդորա զոտս և զձեռս՝ և հանէք զդա 'ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ և կրճել ատամանց։ Զի բազումք են կոչեցեալք և սակաւք են ընտրեալք։ 14։

Մէ՞թէ ցորո՞ւն գոկ։ Ցորոյ. Ասացուք։

Համբարձի Դշ։

Որք տնկակից եղաք նմանութեան. 428։

Համբարձաւ Տէրն մեր Յե օրհնութիւն. 414։

Աբիմելեքն Սաղմոս ԻԳ։

Կգ. Համբարձէք։ փխ. Տո՛ն է երկիր. 425։

Ա՛-Էպիփանն ըստ Մարկոսի։ ԺՀ. 18։

Առ Տէրն մեր Յե Յե

Զան առ նա սադուկեցիքն որ ասեն՝ թէ չիք յարութիւն. հարցանէին ցնա և ասէին։ Վ՛արդապետ՝ Մովսէս գրեաց մեզ, եթէ ուրուք եղբայր մեռանիցի և թողուցու կին՝ և որդի ոչ թողուցու. զի առցէ եղբայր նո՛ր զկին նո՛ր, և յարուսցէ զաւակ եղբօր իւրում։ Արդ՝ եղբարք եօթն էին առ մեզ. առաջինն առ կին՝ և մեռաւ, և ոչ եթող զաւակ։ Եւ երկրորդն առ զնոյնն՝ և մեռաւ, և ոչ նա ե-

թող զաւակ. նոյնպէս և երրորդն առ զնոյն: Եւ
եօթնեքեան իսկ. և ոչ թողին զաւակ, յետ ամե-
նեցուն մեռաւ և կինն: Արդ՝ 'ի յարութեան յոր-
ժամ յառնիցեն, ո՞ր 'ի նոցանէ լինիցի կինն. զի
եօթնեքեան կալան զնա կին: Պատասխանի ետ
Յն և ասէ ցնոսա. ո՞չ վն այդորիկ իսկ մոլորեալ
էք. զի ոչ գիտէք զգիրս՝ և ոչ զզօրութիւն Աստ-
ծոյ: Զի յորժամ 'ի մեռելոց յարիցեն, ոչ արք կա-
նայս առնեն, և ոչ կանայք արանց լինին. այլ
իբրև զհրեշտակս իցեն՝ որ յերկինս են: Այլ վն
յարութեան մեռելոց զի յառնեն, ո՞չ իցէ ընթեր-
ցեալ ձեր 'ի գիրսն Մովսէսի 'ի մորենւոջն. որպէս
ասաց ցնա Աստ. ես եմ ասէ՝ Աստ Աբրահամու, Աստ
Իսահակայ, և Աստ Յակովբայ: Եւ ոչ է Աստ մե-
ռելոց՝ այլ կենդանեաց: Եւ արդ՝ դուք յոյժ մո-
լորեալ էք: Եւ մատուցեալ մի ոմն 'ի դպրացն՝
լսէր նոցա մինչ վիճէին. իբրև ետես եթէ բար-
ւոք ետ նոցա զպատասխանին, եհարց ցնա և ասէ.
ո՞ր պատուիրան է առաջին: Եւ Յն ասէ ցնա. ա-
ռաջին քան զամ՝ լուր Իսրայէլ՝ Տէր Աստ մեր՝ Տէր մի
է. և սիրեսցես զՏէր Աստ քո յամ սրտէ քումմէ,
և յամ անձնէ քումմէ, և յամ մտաց քոց, և
յամ զօրութէ քումմէ. այս է առաջին պատուի-
րան: Եւ երկրորդն նման սմին. սիրեսցես զընկեր
քո՝ իբրև զանձն քո: Ասեմ քան զսոսա այլ պա-
տուիրան ոչ գոյ: Եւ ասէ ցնա դպիրն. բարւոք է
վարդապետ. ճշմարտութիւն ասացեր՝ թէ մի է Աստ,
և ոչ գոյ այլ բաց 'ի նմանէ: Եւ սիրելն զնա յամ
սրտէ և յամ զօրութէ և յամ մտաց, և սիրելն
զընկերն իբրև զանձն, առաւել է քան զողջակէզս
և զզոհս: Եւ տեսեալ Յն թէ իմաստութիւն ետ
զպատասխանին՝ ասէ ցնա. չես հեռի յարքայութէ
Աստ: Եւ ոչ ևս ոք իշխէր ինչ հարցանել ցնա: 34:

ՎԵՂ. Խնդրեսցուք. Կեցո՛: Աղօթ. Ամագաւոր:

Ը. ՏԻՆ ԴՊԵՍԱՔԱՔԻ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն Դ:

ՕՐՀՆԵՍՑՈՒԲ զՏէր, և զյաղթող զօրութիւն. 175:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Յերեսաց նր եկցեն հարուածք. և զհետ շաւղաց նր երթիցեն մեծամեծք ի թուչնոց:

Լերինք հալեսցին, և անտառք վատնեսցին. ճանապարհք՝ որք 'ի սկզբանէն էին, կուրասցին. և 'ի նմանէ դողասցի ամենայն երկիր:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Փ. Համբարձէք իշխանք զդրունսս ձեր 'ի վեր. համբարձցին դրունք յաւիտենից, և մտցէ թագաւորն փառաց:

Ով է սա թագաւոր փառաց. Տէր հզօր զօրութիւն իւրով. Տէր կարող 'ի պատերազմի:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

Յ Ա Ռ Ա Ւ Օ Տ Ո Ւ Ն

Հոգեգալստեան Դ:

Որ յառաջ քան զարև անուն քո՞ի յերկրի երևեցար. եւ ընդ մարդկան շրջե՛ցար. Ա՛ստուա՛ծ հա՛ւրցլն մերոց: Կամաւորապէս անշընչացա՛ր. եւ ի ծո՛ց հօր աւանդեցեր զքո՛ որ զՀո՛գին. Ա՛ստուա՛ծ հա՛ւրցլն մերոց: Նո՛ւ ըզհրաշալի՛ անունդ քո՛ մարգարէն վերագոչեաց. հոգի երեսաց ըմբռնոց Տ՝ր Քրիստո՛ս. Ա՛ստուա՛ծ հա՛ւրցլն մերոց:

Գ. Ըզ՝Տ՝ր Սիրաբանութիւն օրհնե՛ցէք եւ ա-

առաւելեալ բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Օ. յարուցեալն ի մեռելոց Քրիստոս և զկենդանին յաւիտենից. միաբանութիւն օրհնեցէք եւ առաւելեալ բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Փառք Հօր։ Որ ըզդրոշնոս դիժոխոց փրշրեաց և զարգելեալսն ի նմա կորզեաց ի կեանս. միաբանութիւն օրհնեցէք եւ առաւելեալ բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Որ վիմովն կնքելով յարեաւ և դրօքն փակելովք եմուտ առ աշակերտսն. միաբանութիւն օրհնեցէք եւ առաւելեալ բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուցանէ Դ։

Ընծայիւն և սիրբոշհի. որ ըզԲանն Աստծոյ անսերմն յղութեամբ յարգանդի կրեցեր. անդադարաւոր երգով մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Օ. քեզ մայր կուսութեան և յղութեան լուսոյ. և առանգաստ անճառելոյ բնակողին ի քեզ փեսայացեալ Բանին. անդադարաւոր երգով մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Քեզ լուծան կնիք դատապարտութեան. եւ քեզ կանգնեցաւ մեղուցեալ մայրըն գլորեալ. վասն որոյ ըզքեզ Աստծին և կոյս. անդադարաւոր երգով մեծացուցանեմք։

Ողբերգ Դ։

Ինչեր յերկնից միածին անմեկնելիդ ի Հօրէ. հովանացեալ ՝ի Հոգւոյն. Բանըդ մարմնացար ի կուսէն։ Փառք Հօր։ Անկիր ի չարչարանս չարչարանացըն լուծիչ. ձեռք որ զերկինս արարին. տարածեցեր ի խաչին։ Այժմ և միշտ։ Հանմեն-

բեցեր վասն մերոյ փրկութեան. զմեռանիլ յանձն առեր. կենդանատու մեռելոց։

ՏԷՐ ՅԵՐԿԻՆՔ ԴԿ։

Հրեշտակք քո Տի. որ զյարութիւնն քարոզեաց։ Փառք Հօր։ Օպահանպանսն զարհուրեցան. զկանայսն լուսաւորեաց ասելով։ Այժմ և միշտ։ Օ՜ի խընդրէ՞ք զկենդանին ընդ մեռեալս. չէ՛ աստ այլ յարեաւ։

Աստուածածնէ։

Յարութի՛ զփրկչին օրհնեսցո՛ւք. զփրկչին մերոյ օրհնեսցո՛ւք զյարութի՛։

Համբարձաւ Աստուա՛ծ օրհնութի՛ն եւ Տէր մ՚ը ձայնիւ փո՛ղոց։

Բարեկամ Աստուածոյ։

Աստուածոյ Սաղմոս ԽԸ։

ԿՅ. Համբարձաւ։ Փխ. Հանիս հարէք. 420։

Աբեղայեան ըստ Ղուկասու։ Ի. 41։

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍ ԿԻՍ

Ասէ և առ նս. զինչդ ասեն զԿՅՆԷ՝ թէ որդի է Դաւթի. և ինքն Դաւիթ ասէ՝ ի գիրս սաղմոսաց. ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։ Իսկ արդ՝ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ, զինչդ որդի նորա իցէ։ Եւ լու՝ի լու՝ամ ժողովրդեանն ասէ ցաշակերտսն։ Զգոյշ լերուք՝ի դպրացն, որ կամին պատմուճանօք շրջել, և սիրեն ողջոյնս՝ի հրապարակս և զնախաթոռս՝ի ժողովուրդս և զբարձերէցս յընթրիս։ Որ ուտեն զտունս այրեաց, և պատճառանօք յերկարեն զաղօթս. նոքա ընկալցին աւելի դատաստանս։ Եւ հայեցեալ նոքա զմեծատունսն՝ որ արկանէին զտուրս իւրեանց՝ի գանձա-

նակն։ Այտես և զկին ոմն այրի աղքատ, որ արկ անդր երկուս լումայս։ Այլ ասէ. արդարև ասեմ ձեզ. զի այրին այն աղքատ՝ աւելի արկ քան զամենեսին։ Ամենեքին նոքա 'ի մթերից իւրեանց արկին յընծայսն Աստ. բայց նա 'ի կարօտուէ իւրմէ զամ զկեանս իւր զոր ունէր՝ արկ։ ԻԱ. 4։

ՎԵՊ. Խնդրեսցուք։ Կեցո։ Աղ. Վրուամ ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Առաջին Պօղոս Խ.Ը։

Կ3. Համբարձաւ։ Փխ. Ծանիս հարէք. 420։

Ա-Եպիսկոպոս ըստ Մարդէոսի։ ԻԲ. 15։

Կ՝ ՅՆ մերոյ Յեսի Քրիստոսի։

Յայնժամ գնացեալ փարիսեցիքն, առին խորհուրդ զնմանէ՝ թէ ո՞ւր դնիցեն նմա որոգայթ բանիւք։ Այլ առաքեն առ նա զաշակերտսն իւրեանց հերոդիանոսօքն հանդերձ՝ և ասեն. վարդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես, և զճանապարհն Աստ ճշմարտութիւնն ուսուցանես, և ոչ է քեզ փոյթ զումեքէ, և ոչ հայիս յերեսս մարդոյ։ Արդ՝ ասա՛ մեզ, զիա՞րդ թուի քեզ. պա՞րտ է հարկս տալ կայսեր՝ թէ ոչ։ Գիտաց Յն զխորամանկութիւն նոցա, և ասէ. զի՞ փորձէք 'զիս կեղծաւորք. ցուցէք ինձ զդահեկան հարկին։ Այլ նոքա մատուցին նմա դահեկան մի։ Այլ ասէ ցնոսա. ո՞ր է պատկերս այս՝ կամ գիր։ Ասեն՝ կայսեր։ Յայնժամ ասէ ցնս. երթա՛յք՝ տո՛ւք զկայսերն՝ կայսեր, և զԱստ՝ Աստ։ Իբրև լուան՝ զարմացան. և թողին զնա և գնացին։ Յայնմ աւուր մատեան առ նա սադուկեցիքն. որ ասէին՝ թէ չիք յարութիւն. հարցին ցնա, և ասեն. վարդապետ՝ Մովսէս ասաց. եթէ ոք մեռցի անորդի՝ արասցէ զկին նորա եղբայր իւր, և յարուսցէ զաւակ եղբօր իւրում։ Այլ առ մեզ եղբարք եօթն.

առաջինն արար կին՝ և մեռաւ. և զի ոչ ունէր զաւակ, եթող զկինն իւր եղբօր իւրում։ Նոյնպէս և երկրորդն և երրորդն, մինչև ցեօթներորդն։ Յետ ամենեցուն մեռաւ և կինն։ Արդ՝ 'ի յարութիւնսը յեօթանցն եղիցի նա կին. զի ամենեքին կալան զնա կին։ Պատասխանի եւ նոյն Յն և ասէ. մոլորեալք՝ ոչ գիտէք զգիրս և ոչ զզօրութիւն Աստուծոյ։ Զի 'ի յարութիւնս ոչ կանայս առնեն՝ և ոչ արանց լինին, այլ են իբրև զհրեշտակս յերկինս։ Բայց վասն յարութեան մեռելոց չիցէ՞ ընթերցեալ ձեր զասացեալն ձեզ յԱստուծոյ։ Ես եմ Աստուծ Աբրահամու՝ Աստուծ Իսահակայ և Աստուծ Յակոբայ, և չէ Աստուծ՝ Աստուծ մեռելոց՝ այլ կենդանեաց։ Իբրև լուան ժողովուրդքն՝ զարմանային ընդ վարդապետութիւն նոր։ Իսկ փարիսեցիքն իբրև լուան՝ եթէ պապանձեցոյց զսադուկեցիսն, ժողովեցան 'ի միասին. և եհարց մի ոմն 'ի նոցանէ զնա փորձելով, և ասէ։ Վարդապետ՝ որ պատուիրան է մեծ յօրէնս։ Նա Յն ասէ ցնա. սիրեսցես զՏէր Աստուծ քո յամենայն սրտէ քումմէ՝ և յամենայն անձնէ քումմէ՝ և յամենայն մտաց քոց։ Այս է մեծն և առաջին պատուիրան։ Նա երկրորդն նման սմին. սիրեսցես զընկեր քո՝ իբրև զանձն քո։ Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան։ Նա 'ի ժողովել փարիսեցւոցն՝ եհարց ցնա Յն՝ և ասէ։ Զի՞արդ թուի ձեզ վասն Քրիստոսի, որդի է։ Ասեն ցնա. Դաւթի։ Ասէ ցնա Յն. իսկ զի՞արդ Դաւիթ Հոգւովն կոչէ զնա Տէր՝ և ասէ։ Ասաց Տէր ցՏէր իմ. նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։ Իսկ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ՝ զի՞արդ որդի նոր իցէ։ Նա ոչ ոք կարէր տալ նմա պատասխանի բան մի, և ոչ իշխէր ոք յայնմ օրէ հարցանել զնա և ոչ ինչ։ 46։

ՄԷՈԵՊԷ ՅՈՐՈՒԷ ԴԶ։ ՔՐՈՊ. Ասասցուք։

ՀԱՄԲԱՐՁԱԿ ԴՀ։

Որք տնկակից եղաք նմանութեան. 428։

Համբարձաւ Տէրն մեր յերկինս. 414։

Ընդ յոգնման Սաղմոս ԻԳ։

ԿՅ. Համբարձէք։ Փխ. Տէն է երկիր. 425։

Ա-Էպիսկոպոս ըստ Մարկոսի։ ԺԲ. 35։

Տէրն մեր Յե ՎՅե

Պատասխանի ետ (Յե) և ասէ, մինչ ուսուցանէր 'ի տաճարին. զիա՞րդ ասեն դպիրքն, եթէ ՎՅեն որդի Դաւթի է։ Նա ինքն Դաւիթ Հոգւովն սրբով ասէ. ասաց Տէր ցՏէր իմ, նի՛ստ ընդ աջմէ իմմէ՝ մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։ Արդ՝ եթէ ինքն իսկ Դաւիթ զնա Տէր կոչէ՝ զիա՞րդ իցէ որդի նո՛ր։ Նա բազում ժողովուրդ լսէր նմա քաղցրութիւն։ Նա ասէր ուսուցանելով 'ի վարդապետութիւն իւրում. զգո՛յշ լերուք 'ի դպրաց անտի, որ կամին 'ի հանդերձս երևելիս շրջել, զնախողջոյնս խնդրել 'ի հրապարակս, և զնախաթոռս 'ի ժողովուրդս, և զգահակալուխս յընթրիս։ Որ ուտեն զտունս այրեաց, պատճառանօք յերկարեալ զաղօթս, զի աւելի ևս դատաստանս ընկալցին։ Կայր Յե ընդդէմ գանձանակին, տեսանէր թէ զիա՞րդ ժողովուրդն արկանէր պղինձ 'ի գանձանակն. և բազում մեծատունք արկին բազում ինչ։ Նկն այրի մի՝ և արկ երկուս լումայս, որ է նաքարակիտ մի. և կոչեցեալ առ ինքն զաշակերտսն իւր, ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ՝ զի այրին այն տառապեալ շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին 'ի գանձանակն։ Վասնզի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին. այլ նա 'ի չքաւորութէ իւրմէ՝ զամ ինչ զոր ունէր՝ արկ գոյիւ չափ զկեանս իւր։ 44։

ՎՅԷՂ. Խնդրեսցուք։ Կեցո՛։ Ամէն. Թագաւոր։

Ը. ՊԽՐՔԱՐ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն Դկ։

ՅՂԹԱԿԱՆ քեզ օրհնութիւնք տէր. 179։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Խոնարհեցարջ զերկինս և էջ. և մէգ 'ի ներքոյ ոտից նորա։

Եհ 'ի քրովբէս և թռեաւ, սլացաւ նա 'ի թևս հողմոց։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

փ. Համբարձաւ Աստծ օրհնութիւն. և Տէր մեր ձայնի՛ւ փողոյ։

Սաղմոս ասացէք Աստուծոյ մերում, սաղմոս ասացէք թագաւորին մերում սաղմոս ասացէք։

Փառք և. այժմ և. ալէլուիա։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Դկ։

Ասնչկիզբն Բանդ որ յանձնառ ամենայն ներս տիւ՛ռ. զքեզ տեսանէ՞ ի խաչին. վա՞ն արարածոց քոց փրկուե՞ր. Աստուա՞ծ հայրն մերոց։ Զքեզ որ անքննելի՛նդ ես յերուսաղեմայ՛ն ըսպասաւորին ապտակեալ եւ զինաւորն գեղարդեամբն խոցեալ. զանարատ ըզկող քո՞ ի խաչին. Աստուա՞ծ հայրն մերոց։ Որ թագաւորդ ես անմահ. ըզմեռանիլ յանձն առեր. եւ ըզթաղումն երեքօրեայ. վասն արարածոց քոց փրկուե՞ր. Աստուա՞ծ հայրն մերոց։

Գ. ԸզՏէր օրհնեցէք Առաքելո՛ւ բարձր արարքէք ընդնա յաւիտեան։ Փառք Հօր։ Զթագաւո-

ըն Աստուա՛ծ և ընդխաչեանն ի մէջ ի յանծրինա՛ց. եւ ընդլեղի՛ դառնութեա՛ ճաշակեալ վասա՛ն մեր. առաւելա՛գոյն բարձր արարէք ընդնա՛ յաւիտեա՛ն։ Այժմ և։ Նարատ գառն Աստուծոյ պատարագեալ. եւ ընդխոցումն գերազարդեանն առեալ ի կողն. եւ ընդփրկական արիւնն ելեալ ի վերայ մեր տիեզերաց. առաւելագոյն բարձր արարէք ընդնա՛ յաւիտեա՛ն։

Մեծացուցէք։

Որ զանձառելին ծընար. սուրբ Աստուածածին կոյս. օրհնեալ ես յաւիտեա՛ն։ Փառք ։օր և։ Որ զարարչակիցն ։օր. զիսկզբանէ Յանն Աբեղ. յորովայնի քո՛ւմ կրեցեր. օրհնեալ ես յաւիտեա՛ն։ Այժմ և միշտ։ Օ՜քե՛զ Եզեկիէլ եսե՛ս. Երկնայի՛ն դուռն. և հարսն անփորձ. օրհնեալ ես յաւիտեա՛ն։

Ողորմեա՛ Դ։

Ամենայն մերոյ փրկութեա՛ խոնարհեցար ի յերկնից. և ի՛ սրտի՛ կուսէն մարմնացար. Աստուա՛ծ Յա՛նդ ո՛ղորմեայ՛ մեզ։ Փառք ։օր։ Հրաշմարտապէս մարմնացար և ընդ մարդկան շրջեցար կատարեցեր զամենայն. և օ՛սրհնեցեր յառաջին անիծիցն. Աստուա՛ծ Յա՛նդ ո՛ղորմեայ՛ մեզ։ Այժմ և միշտ։ Տրտ՛ Որդի Աստուծոյ ի մեռելոց յարուցեալ. և ի՛ սրտի՛ յերկինս համբարձար. Աստուա՛ծ Յա՛նդ ո՛ղորմեայ՛ մեզ։

Տէր յերկնից Դ։

Փառք յարո՛ւթեա՛ քո՛, Տ՛ր։ Խաչի՛ լի՛ յանձն առեր գլ՛թաց. եւ ընդմե՛հ ճաշակեցեր. զամենեսեան յարո՛ւցեր զհաւատացեալսն ի քեզ. ոլորք

աղաղակէին ասելով. փառք յարութեան քո՛մ Տէր։ Ալ էմբք պատառեցան ի խաչելութեան քո՛մ Տէր. եւ գերեզմանք բացան. դիժոխք զարհուրեցան. և մեռեալքք յարուցեալ աղաղակէին ասելով. փառք յարութեան քո՛մ Տէր։

Յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն ահեղակերպ փայլմամբ. պատառուեցա՛մ՛ն վէմք. եւ երկիր սասանեցա՛ւ. ի յահեղ բարբառո՛յ մեծ կարապետին։ Փառք Հօր։ Լոյս հրեշտակն ի յերկնից ի գերեզմանքն Տէն. հընչեցուցա՛մ՛ն էր. ըզձայն ահեղ գոչման փողոյն. ի վերա՛յ գերեզմանին։ Այժմ և միշտ։ Կոսկ եկեալ սուրբ կանանցն ի խընկել ըզմարմինքն Տեառն. եւ ըուեալ ի հրեշտա՛մ՛կէ՛ն. Եթէ յարեաւ ի մեռելոյ։ Կենդանի՛ն յաւիտենից։

Աստուած է։

Յայտուութի՛ ընդերկչին օրհնեսցո՛ւք. զփրկչին մերոյ օրհնեսցո՛ւք ընդյարութի՛։

Ամբարձաւ Աստուա՛ծ օրհնութիւն եւ Տէր մե՛ր ձայնիւ փողոց։

Դոքսոլոգ Սաղմոս։

Աստուած Սաղմոս Խ.Զ։

43. Ամբարձաւ։ Փխ. Ելա՛ւ հարէք. 420։

Ա-Էպիստոլն ընդ Ղ-ին։ ԻԱ. 5։

Տէրն մեր Յ՚ Ռ՚

Եւ յասել ոմանց զտաճարէն, թէ գեղեցիկ վիմաք և աշտարակաք զարդարեալ է, ասէ։ Այդ ամ զոր տեսանէք, եկեսցեն աւուրք՝ յորս ոչ թողցի այդր քար 'ի քարի վրայ, որ ոչ քակտեսցի։ Հարցին ցնա և ասեն. վարդապետ՝ երբ լինիցի այդ, և

զի՞նչ նշան իցէ՝ յորժամ այդ լինելոց իցէ։ Եւ նա ասէ. զգոյշ կացէք, մի խաբիցիք. զի բազումք գայցեն յանուն իմ և ասիցեն՝ թէ ես եմ. և մերձեցաւ ժամանակ, մի երթայցէք զկնի նոցա։ Եւ յորժամ լսիցէք պատերազմունս և խռովութիւս՝ մի զարհուրիցիք, զի պարտ է նախ այնմ լինել. այլ ոչ առժամայն կատարած։ Յայնժամ ասէ ցնոսա. յարիցէ ազգ յազգի վրայ, և թագաւորութի՛ւն ի թագաւորութե՛ն վրայ։ Եւ շարժմունք մեծամեծք. և ի տեղիս տեղիս սովք և սրածութիւնք, եղիցին արհաւիրք և նշանք մեծամեծք յերկնից։ Բայց յառաջ քան զայս ամենայն, մխեսցեն զձեռս իւրեանց ի ձեզ՝ և հալածեսցեն. մատնեսցեն ի ժողովուրդս և ի բանտս, և տանիցին առաջի դատաւորաց և թագաւորաց վասն անուան իմոյ. և լինիցի ձեզ այն ի վկայութի։ Արդ՝ դիք ի սիրտս ձեր՝ մի յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի։ Զի ես տացի ձեզ բերան և իմաստութի՛ւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ՝ կամ տալ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր։ Մատնեսջիք և ի ծնողաց և յեղբարց և յազգականաց և ի բարեկամաց, և սպանանիցեն ի ձէնջ. և եղիջիք ատելեալք յամենեցունց վասն անուան իմոյ. և մազ մի ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ. և համբերութիւ՛ ձերով ստասջիք զոգիս ձեր։ Այլ յորժամ տեսանիցէք շուրջ պատեալ զօրօք զԵրուսաղէմ, յայնժամ գիտասջիք թէ մերձ է աւերն նո՛ր։ Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի լերինս, և որ ի միջի նո՛ր իցեն՝ խուսեսցեն, և որ ի գաւառսն իցեն՝ մի մտցեն ի նա. զի աւուրք վրէժխնդրութե՛ն են այնոքիկ՝ առ ի կատարելոյ ամենայն գրելոց։ Բայց վա՛յ իցէ յղեաց և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ. զի եղիցի տագնապ մեծ ի վրայ երկրի, և բարկութի՛ւն ժողովրդեանն այնմիկ։ Եւ անկցին ի սուր սուսերի, և գերեսցին յամենայն հեթանոսս. և Երուսաղէմ եղիցի կոխան յազգաց՝ մինչև կատարեսցին

ժամանակք հեթանոսաց։ Եւ եղիցին նշանք յա-
րեգակն և 'ի լուսին և յաստեղս. և յերկրի տագ-
նապ հեթանոսաց՝ յահեղ բարբառոյ իբրև ծովու
և խռովութեանէ, յելանելոյ ոգւոց մարդկան յեր-
կիւղէ և 'ի կարծեաց եկելոց 'ի վերայ տիեզերաց. զի
զօրութիւնք երկնից շարժեսցին։ Եւ յայնժամ տես-
ցեն զորդի մարդոյ եկեալ՝ ամպովք զօրութեամբ և փա-
ռօք բազմօք։ Եւ յորժամ սկսանիցի այս լինել,
ամբարձջիք և բարձրացուսջիք զգլուխս ձեր. զի
մերձ է փրկութիւն ձեր։ Եւ ասաց առակ մի նոցա.
տեսէք զթզենիդ և զամենայն ծառս. յորժամ ցուցանի-
ցեն զպտուղ իւրեանց, տեսանէք՝ և 'ի նոցանէ
ճանաչէք եթէ մերձ է ամառն։ Այսպէս և դուք
յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ՝ գիտասջիք
թէ մերձ է արքայութիւն Աստուծոյ։ Ամէն ասեմ ձեզ. թէ
ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամենայն լինիցի։ Երա-
կինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցանիցեն։
Զգոյշ լերուք անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք
ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ՝ և հոգովք
աշխարհականօք, և յանկարծակի հասանիցէ 'ի վերայ
ձեր օրն այն. զի իբրև զորոգայթ հասանիցէ 'ի վերայ
ամենեցուն, որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի։
Արթուն կացէք այսուհետև, յամենայն ժամ աղօթս
արարէք. զի արժանի լինիջիք զերծանել յայնմ
յամենայն որ լինելոց է, և կալ առաջի որդւոյ մարդոյ։
Եւ 'ի տուէ 'ի տաճարին ուսուցանէր, և զգիշերս
ելեալ ագանէր 'ի լերինն՝ որ կոչէր ձիթենեաց։
Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա
'ի տաճարն լսել 'ի նմանէ։ 38։

Բէթ. Խնդրեսցուք։ Կեցո։ Աղ. Արում ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Աստուծոյ Սաղմոս ԽԲ։

Կց. Համբարձաւ։ Փխ. Ծանրս հարէք. 420։

Ա՝-Եպիսկոպոս ըստ Ա՝ոպՄԷոսի։ ԻԳ. 1։

Տէր մեր Յ՚Ս՚Ք՚

Յայնժամ խօսեցաւ (Յ՚Ս՚Ք՚) ընդ ժողովուրդսն՝ և ընդ աշակերտսն իւր, և ասէ։ Յաթոռն Մովսեսի նստան դպիրքն և փարիսեցիք։ Օ՚՚ամ ինչ՝ զոր ասիցեն ձեզ արարէք և պահեցէք. բայց ըստ գործոցն նց՚ մի առնէք, զի ասեն և ոչ առնեն։ Կապեն բեռինս ծանուցեալս և դժուարակիրս, և դնեն 'ի վրայ ուսոց մարդկան, և մատամբ իւրեանց ոչ կամին շարժել զնս։ Այլ զ՚՚ամ զգործս իւրեանց առնեն 'ի ցոյցս մարդկան. լայնեն զգրապանակս իւրեանց, և երկայնեն զքղանցս հանդերձից իւրեանց։ Սիրեն զյատակաղահս յընթրիս, և զնախաթոռս 'ի ժողովուրդս՝ և զողջոյնս 'ի հրապարակս։ Այլ կոչել 'ի մարդկանէ՝ ռաբբի ռաբբի։ Բայց դուք մի զքք կոչէք վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ. և ամենեքին դուք եղբարք էք։ Այլ հայր մի կոչէք ձեզ յերկրի, զի ձեր մի է հայր՝ որ յերկինսն է։ Այլ մի կոչիցիք ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր Ք՚Ս՚ է։ Այլ մեծն 'ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր։ Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։ Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի փակէք զարքայութիւն երկնից առաջի մարդկան. դուք ոչ մտանէք, և որոց մտանեն՝ չտայք թողլ մտանել։ Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի՝ ուտէք զտունս այրեաց. պատճառանօք երկարէք զաղօթս, վ՚՚ զի աւելի դատաստան ընդունիցիք։ Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի՝ յածիք ընդ ծով և ընդ ցամաք առնել եկամուտ մի. և յորժամ լինիցի, առնէք զնա որդի գեհենի կրկին ևս քան զձեզ։ Վա՛յ ձեզ առաջնորդք կոյրք, զի ասէք՝ որ երդնու 'ի տաճարն՝ չէ ինչ, բայց որ երդնու յոսկին որ 'ի տաճարին է՝ արժան է։ Ո՝՚՚ոյրք և կոյրք՝ զի՞նչ մեծ է, ոսկի՞ն եթէ տաճարն

որ սրբէ զոսկին։ Եւ որ երդնու 'ի սեղանն՝ չէ ինչ, բայց որ երդնու 'ի պատարագն որ 'ի վրայ նր է՝ արժան է։ Յիմարք և կոյրք՝ զի՞նչ մեծ է, պատարագն, եթէ սեղանն՝ որ սրբէ զպատարագն։ Իսկ արդ՝ որ երդուաւ 'ի սեղանն, երդուաւ 'ի նա՝ և յամ որ 'ի վրայ նր է. և որ երդուաւ 'ի տաճարն, երդնու 'ի նա՝ և 'ի բնակիչն նր. և որ երդուաւ յերկինս, երդնու յաթոռն Աստ՝ և յայն որ նստին 'ի վրայ նր։ Վա՜յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի տասանորդէք զանանուխ և զսամիթ և զչման, և թողէք զծանր ծանր օրինացն՝ զդատաստան և զողորմութի և զհաւատս. զայս արժան էր առնել՝ և զայն չթողուլ։ Առաջնորդք կոյրք, որ զմժղուկս քամէք՝ և զուղտս կլանէք։ Վա՜յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի սրբէք զարտաքին զբաժակին և զսկաւառակի, և 'ի ներքոյ լի են յափշտակութ և անխառնութ։ Փարիսեցի կոյր՝ սրբեա՛ նախ զներքին բաժակին և զսկաւառակին, զի լինիցի և արտաքինն նց սրբ։ Վա՜յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի նման էք գերեզմանաց բռելոց, որ արտաքոյ երևին գեղեցիկք՝ և 'ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց և ամ պղծութ։ Այնպէս և դուք արտաքոյ երևիք մարդկան արդարք, և 'ի ներքոյ լի էք կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ։ Վա՜յ ձեզ դրպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի շինէք ըզշիրիմն մարգարէից՝ և զարդարէք զգերեզմանս արդարոց։ Եւ ասէք. եթէ էաք յաւուրս հարցն մերոց, ոչ հաղորդէաք արեան մարգարէիցն։ Այսպէս ուրեմն վկայէք զանձանց՝ եթէ որդիք էք այնոցիկ՝ որ կոտորէին զմարգարէսն։ Եւ դուք լցէք զչափ հարցն ձերոց։ Օ՛ձք՝ ծնո՛ւնդք իժից, զիա՞րդ փախնուցուք 'ի դատաստանէ գեհենին։ Վա՜յ այդորիկ ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս և իմաստունս և դպիրս, և 'ի նոցանէ սպանանիցէք և

'ի խաչ հանիցէք, և 'ի նոցանէ տանջիցէք 'ի ժողովուրդս ձեր, և հալածիցէք 'ի քաղաքէ 'ի քաղաք։ Որպէս զի եկեսցէ 'ի վրայ ձեր ամ արիւն արդար հեղեալ յերկրի. յարենէն Աբելի արդարոյ մինչև ցարիւնն Զաքարիայ որդւոյ Բարաքեայ՝ զոր սպանէք ընդ մէջ տաճարին և սեղանոյ։ Ամէն ասեմ ձեզ. եկեսցէ այն ամ 'ի վրայ ազգիս այսորիկ։ Էմ, Էմ. որ կոտորէիր զմարգարէս՝ և քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ. քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո՝ զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թևովք, և ոչ կամեցարուք։ Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ։ Բայց ասեմ ձեզ՝ թէ ոչ ևս տեսանիցէք զիս յայսմ հետէ, մինչև ասիցէք, օրհնեալ եկեալ յանուն Տն։ 39։

Մեսեղի Յարութեան Դ։ Յարոյց. Ասացուք։

Հոմիլիայի Դ։

Որք տնկակից եղաք նմանութեան. 428։

Համբարձաւ Տէրն մեր Յն օրհնութիւն. 414։

Աղյոկման Սաղմոս ԻԳ։

Կց. Համբարձէք։ Փխ. Տն է երկիր. 425։

Առ Եփեսիոն ըստ Մարկոսի։ ԺԳ. 1։

Տն մերոյ Յսի Քրիստի

Եւ յելանելն նր 'ի տաճարէ անտի, ասէ ցնա մի յաշակերտացն նր. վարդապետ, տես որպիսի են քարինքս, և որպիսի շինուածք։ Պատասխանի ետ նմա Յս և ասէ. տեսանես զայդ ամ շինուածս, ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ թողցի այդր քար 'ի քարի վրայ՝ որ ոչ քակտեսցի։ Եւ մինչ նստէր նա 'ի լերինն Ձիթենեաց յանդիման տաճարին, հարցանէին ցնա առանձինն՝ Պետրոս և Յակոբոս և Յովհաննէս և Անդրէաս։ Ասա մեզ՝ երբ լինիցի այդ. 'և զի՞նչ նշան է՝ յորժամ կատարելոց իցէ այդ ամ։ Պատասխանի ետ Յս, և ասէ ցնոսա. զգոյշ կացէք, մի ոք զձեզ խաբեսցէ։ Զի բազումք եկես-

ցեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ ես եմ Քրիստոս. և զբազումս մոլորեցուսցեն։ Բայց յորժամ լսիցէք պատերազմունս և համբաւս պատերազմաց՝ մի խռովիցիք, զի պարտ է լինել. բայց չէ է կատարած։ Զի յարիցէ ազգ յազգի վրայ, և թագաւորութիւն 'ի թագաւորութիւն վրայ. և եղիցին շարժմունք 'ի տեղիս տեղիս, սովք և սրածուիք և խռովուիք. այլ այն ամ սկիզբն է երկանց։ Այլ զձեզ իսկ մատնեսցեն յատեանս, և 'ի ժողովուրդս տանջիցիք, և առաջի դատաւորաց և թագաւորաց կայցէք վասն իմ 'ի վկայութիւն նոցա, և ամ հեթանոսաց. բայց նախ պարտ է աւետարանիս քարոզել։ Բայց յորժամ տանիցին զձեզ մատնել, մի յառաջագոյն հոգայցէք, և մի զմտաւ ածիցէք՝ թէ զի՞նչ խօսիցիք. այլ որ ինչ տացի ձեզ 'ի ժամուն յայնմիկ՝ զայն խօսիցիք. զի ոչ դուք էք որ խօսիցիքն՝ այլ Հոգին սրբ։ Մատնեսցէ եղբայր զեղբայր 'ի մահ՝ և հայր զորդի. և յարիցեն որդիք 'ի վրայ հարց, և սպանանիցեն զնոսա։ Այլ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ. այլ որ համբերեսցէն խսպառ՝ նա կեցցէ։ Այլ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածին, զի կայցէ 'ի տեղւոջ ուր չիցէ արժան. որ ընթեռնուն 'ի միտ առցէ։ Յայնժամ որ 'ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն 'ի լերինս. և որ 'ի վրայ տանեացն իցէ՝ մի իջցէ 'ի տուն, և մի մտցէ բառնալ ինչ 'ի տանէ իւրմէ. և որ յագարակին իցէ՝ մի դարձցի յետս առնուլ զձորձս իւր։ Բայց վայ իցէ յղեաց և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ։ Յաղօթս կացէք՝ զի մի ձմերանի լինիցի այն։ Այլ եցին աւուրքն այնոքիկ նեղութեանց՝ որպիսի ոչ եղեն երբէք այնպիսիք 'ի սկզբանէ արարածոց մինչև ցայժմ, և մի այլ լիցի։ Այլ եթէ ոչ էր կարճեալ Տէր զաւուրսն զայնոսիկ վասն ընտրելոց իւրոց, ոչ ապրէր ամ մարմին. այլ վասն ընտրելոցն զորս ընտրեաց՝ կարճեաց զաւուրսն զայնոսիկ։ Յայնժամ

եթէ ոք ասիցէ ձեզ, եթէ ահաւասիկ է Քրիստոս՝ կամ աւանիկ, մի հաւատայցէք։ Զի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք. և տացեն նշանս և արուեստս՝ առ 'ի մոլորեցուցանելոյ եթէ հնար ինչ իցէ և զընտրեալսն։ Բայց դուք զգոյշ լերուք՝ ա-հաւասիկ յառաջագոյն ասացի ձեզ զամենայն։ Այլ յաւուրսն յայնոսիկ յետ նեղութեանն այնորիկ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տացէ զլոյս իւր։ Եւ աստեղք յերկնից թափեսցին, և զո-րութիւնք յերկինս շարժեսցին։ Եւ յայնժամ տես-ցեն զորդի մարդոյ եկեալ ամպովք՝ զօրութեամբ և փառօք բազմօք։ Եւ յայնժամ առաքեսցէ զհրեշտակս իւր, և ժողովեսցէ զընտրեալս իւր 'ի չորից հողմոց՝ 'ի ծագաց երկրի մինչև 'ի ծագս երկնից։ Բայց դուք 'ի թզենւոյ անտի ուսջիք զառակն. յորժամ տա-կաւ ոստքն նորա կակղանայցեն և տերև արձակիցի 'ի նմա, գիտէք թէ մերձ է ամառն. նոյնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, գի-տասջիք թէ մերձ է առ դուրս։ Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչև այս ամենայն եղիցի։ Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցանիցեն։ Այլ վասն աւուրն այնորիկ և ժամու՝ ոչ ոք գիտէ՝ ոչ հրեշտակք յերկինս՝ և ոչ Որդի, բայց միայն Հայր։ Զգոյշ եղերուք. սկեցէք և կացէք յաղօթս. զի ոչ գիտէք երբ ժամանակն իցէ։ Որպէս այր մի գնա-ցեալ 'ի տար աշխարհ՝ թողուցու զտուն իւր. և տայցէ ծառայից իւրոց իշխանութիւն, և իւրաքան-չիւր զգործս իւր. և դռնապանին պատուէր տայցէ, զի արթուն լինիցի։ Արդ՝ արթուն կացէք, զի ոչ գիտէք երբ եր տանն գայցէ՝ յերեկորեայ՝ եթէ 'ի մէջ գիշերի՝ եթէ 'ի հաւախօսի՝ եթէ ընդ առա-ւօտս։ Գուցէ եկեալ յանկարծակի՝ գտանիցէ զձեզ 'ի քուն։ Բայց զոր ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ՝ արթուն կացէք։ 37։

Քրիստոս. Խնդրեսցուք։ Սեցո։ Ուղղութ. Թագաւոր։

Ը. Ե Ս Ք Ս Ք

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն Ա.Զ։

Յարութեան երգ նոր Ա.Յ փրկչին մերոյ. 153։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Համբարձէք իշխանք ըզդրունս ձեր 'ի վեր. համբարձցին դրունք յաւիտենից, և մտցէ թագաւոր փառաց։

Ո՞վ է սա թագաւոր փառաց. Տէր հզօր զօրութիւն իւրով. Տէր կարող 'ի պատերազմի։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Փ. Կա՛ռք Ա.Յ բիւրապատիկք. հաղարք ուղղիչք, և Տէր 'ի նոսա. 'ի Սինէ սրբութիւնքն իւրմէ։

Նա՛ 'ի բարձունս և գերեաց զգերութիւն. էառ ա-ւար, բաշխեաց պարգևս, և ետ որդւոց մարդկան։

Փա՛ռք և. այժմ և. ալէլուիա։

Դա՛սք հրեշտակաց օրհնեն զքեզ Քրիստոս, ալէլուիա. մարդկա՛ն ազգ սաղմոսեն քեզ. ալէլուիա։

Յանուն Օրհնութեան

Հարց Դ։

Ո՞ր յահեղակերպ ամենա՛ն նշանա՛ց և ընդ հօր ե՛ս յէ՞ութիւնքդ. խոնարհեցա՛ր յերկնի՛ց վասն մերոյ փրկո՛ւթիւնքդ. ըզքեզ բա՛րեբանեմք Ս.ըծ հա՛ղցն մերոց։ Ո՞ւստի սերովբէքն ի խոնարհ ունելով ըզդէմն յարփիանրա՛ն փառաց քո՞ց Քրիստոս՝. իսկ Յուդայի ըմբռութի՛ւն մերձեալ ի համբո՛յր նշանակ և առի՛թ մատնո՛ւթիւն. ըզքեզ բա՛րեբանեմք

Աստուած հարցն մերոց։ Որ ի բարձրութիւնս երկնից էիր էակից Հօր և մի Հոգւոյն. Եւ ի դասուց Եբրայեցւոց դպրաց և փարիսեցւոց բարձար ի խաչ վասն մեր. օրհնեալ բարեբանեմք Աստուած հարցն մերոց։

Գ. Օրհ. զՏէր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան։ փառք Հօր։ Համբարձաւ Տէր օրհնութեամբ և զօրք երկնից երգէին. ով է սա թագաւոր փառաց. բարձր արարէք զնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Մայր էր նա, որ ի հովանաւոր էր ի լուսեղէն ամպոյն. ձայն եղև դա է Որդի իմ սիրելի. բարձր արարէք զնա յաւիտեան։

Մեծացուսցէ Դ․կ։

Ի քեզ եմք ապաւինեալ. Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ։ փառք Հօր։ Որ քան զերկինս բարձրագոյն Մարիամ. պարծանք եկեղեցւոյ. Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ։ Այժմ և։ Որ քան զարեգակն պայծառագոյն Մարիամ. մի դադարեր բարեխօսել վասն մեր. Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ։

Ողորմեա Դ․կ։

Որ վասն մեր յերկնից խոնարհեցար. նորոգել զտիեզերս. օգնեա և ինձ փրկիչ. ողորմութեամբ քո կեցո։ փառք Հօր։ Որ ըստ հոգեղէն բնութեան մարդկան զգեցար մարմին. զվիրաւորեալս մեղօք. զանձն իմ մխիթարեա. ողորմութեամբ քո կեցո։ Այժմ և միշտ։ Որ ըզդատակնիք մահու լուծեր զնախաստեղծին. զդատապարտեալս մեղօք. զհոգիս իմ նորոգեա. ողորմութեամբ քո կեցո։

Տէր յերկնից Դ.կ:

Փառք Քսի ամենազօր յարութեան: Քսի ամենազօր յարութեամբ երկրպագեն քերովբէքն. և վեցթեւեան սերովբէքն հոգեւորական հնչմամբ երգեն ասելով. փառք Քսի ամենազօր յարութեան: Այսօր անուշահոտ բուրմամբ ընթանային ո՞ք կանայքն. տեսանելով ըզհրեշտակն արեգակնակերպ փայլմամբ ի վր վիմին գոչէր ասելով. փառք Քսի ամենազօր յարութեան: Այսօր արձակեցաք ի կապանաց նախահօրն. և վերըստին նորոգմամբ յաւիտենական կենաց եղաք ժառանգորդք. փառք Քսի ամենազօր յարութեան:

Իւղաբերիցն կանանց եկեալ. ի սուրբ գերեզմանն. եւ զահաւոր ըզհրեշտակապետին ըզձայնին լուեալ. ո՜ մայրք զխաչելեալն խնդրէք յարեաւ Քրիստոս անմահ թագաւորն: Փառք Հօր: Արփիահրաշ լոյս մեծ ծագեալ. ի նոր գերեզմանն. եւ զարհուրեալ պահապանացն երկիւղալից ըմեռանէին. այլ քարոզ հրեշտակապետին որ գոչէր առ կանայսն. ո՜ մայրք զխաչելեալն խնդրէք յարեաւ Քրիստոս անմահ թագաւորն: Այժմ և միշտ: Ընթացեալ Պետրոս և Յովհաննէս. ի սուրբ գերեզմանն. եւ հանդիպեալ վարշամակին եւ նորոգ կտաւոցն. այլ քարոզ հրեշտակապետին որ գոչէր առ նոսա. ո՜ մայրք զխաչելեալն խնդրէք յարեաւ Քրիստոս անմահ թագաւորն:

Ա՛մենայն էրգ։

Այսուրեմի՛ ընդիրրկչին օրհնեսցո՛ւք. զիրրկչին մերոյ օրհնեսցո՛ւք ընդ յարո՛ւրեմի։

Ամբա՛ռձաւ Աստուա՛ծ օրհնութի՛ւն եւ տէր մե՛ր ձայնիւ փո՛ղոց։

Վերջոյ Աստացուք։

Ամենայն Սողոմոն Խ.Ղ։

ԿՅ. Ամբարձաւ։ ՓԽ. Նայիս հարէք. 420։

Ա-Էպիսկոպոսն ըստ Ղուկասու։ ԻԲ. 1։

Ոչ տէրն մեր Յիսուս

Ներձեցաւ տօն բաղարջակերացն՝ որ կոչէր պասքա. և խնդրէին քահանայապետքն և դպիրք՝ թէ ոչ սպանանիցեն զնա, բայց երկնչէին 'ի ժողովրդենէ անտի։ Ապա եմուտ սատանայ 'ի Յուդա 'ի կոչեցեալն Իսկարիովտացի, որ էր 'ի թուոյ երկոտասանիցն։ Զոգաւ եդ բանս ընդ քահանայապետսն և ընդ դպիրս և ընդ իշխանս ժողովրդեանն, զի մատնեսցէ զնա նոցա։ Եւ խնդացին, և խոստացան տալ նմա արծաթ։ Եւ յանձն առ, և խնդրէր պարապ մատնել զնա նոցա՝ մեկուսի յամբոխէն։ Եկն օր բաղարջակերացն, յորում օրէն էր զենուլ զպասեքն։ Եւ առաքեաց զՊետրոս, և զՅովհաննէս՝ և ասէ. երթայք պատրաստեցէք մեզ զպասեքն՝ զի կերիցուք։ Եւ նոքա ասեն. ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք։ Եւ ասէ ցնոսա. ահա իբրև մտանիցէք 'ի քաղաքն, պատահեսցէ ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ. երթիջիք զհետ նորա 'ի տունն, յոր մտանիցէ. և ասասջիք ցտանուտէր տանն. վարդապետ ասէ քեզ. ո՞ւր են վանքն իմ, յորում զպասեքն ուտիցեմ աշակերտօքս հանդերձ։ Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ, և անդ պատրաստեսջիք։ Եւ գնացեալ գտին ոչ և ասացն նոցա, և պատրաստեցին զպասեքն։ Եւ

իբրև ժամ եղև՝ բազմեցաւ, և երկոտասան առաքեալքն ընդ նմա։ Եւ ասէ ցնա. ցանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ՝ մինչ չև չարչարեալ իցեմ։ Բայց ասեմ ձեզ, թէ ոչ ևս կերայց 'ի սմանէ՝ մինչև լցցի յարքայութիւն Աստուծոյ։ Եւ ընկալեալ բաժակ՝ գոհացաւ և ասէ. առէք զայդ՝ և բաժանեցէք 'ի ձեզ։ Ասեմ ձեզ՝ թէ յայսմ հետէ ոչ արբից 'ի բերոյ որթոյ՝ մինչև եկեսցէ արքայութիւն Աստուծոյ։ Եւ առեալ հաց գոհացաւ՝ երեկ և ետ նոցա՝ և ասէ. այս է մարմին իմ, որ վասն բազմաց տուեալ. զայս արասջիք առ իմոյ յիշատակի։ Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն առ՝ և ասէ, այս բաժակ է նոր ուխտ իմով արեամբ վասն ձեր հեղլոյ։ Բայց աւասիկ ձեռն մատնչի իմոյ ընդ իս 'ի սեղանս։ Եւ որդի մարդոյ ըստ սահմանելոյն երթայ, բայց վա՜յ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն մատնիցի։ Եւ նոքա սկսան խնդրել ընդ միմեանս, թէ ո՞վ է 'ի նոցանէ՝ որ զայն գործելոց իցէ։ Եւ եղև հակառակութիւն 'ի մէջ նոցա, թէ ո՞ 'ի նոցանէ համարիցի մեծ։ Եւ նա ասէ ցնա. թագաւորք ազգաց տիրեն նոցա, և որ իշխեսցեն նոցա՝ բարերարք կոչին. այլ դուք ոչ այնպէս. այլ որ մեծն է 'ի ձեզ՝ եղիցի իբրև զկրտսերն, և առաջնորդն իբրև զսպասաւորն։ Որ է մեծ, բազմեալն՝ եթէ սպասաւորն. ո՞չ ապաքէն բազմեալն. բայց ես եմ 'ի միջի ձերում իբրև սպասաւոր։ Եւ դուք էք՝ որ ցանգ կայիք ընդ իս 'ի փորձութիւնս իմ. և ես ուխտեմ ձեզ՝ ոգ և Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն. զի ուտիցէք և ըմպիցէք 'ի սեղան իմ յարքայութեանն իմում, և նստիցիք յերկոտասան աթոռս՝ դատել զերկոտասան ազգ Իսրայելի։ 30։

Ռեպ. Խնդրեսցուք։ Կեցո՛։ Ալ. Պ.ում ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ա՛ռաջին Պողմոս խ.Ջ։

Կ3. Համբարձաւ։ փխ. Հ՝Օրմիս Հարէք. 420։

Ա՛ռ Էպոլոն ըստ Պոպլէոսի։ ԻԳ. 1։

Տէրն մեր Յն Ռն

Եւ եղեալ արտաքս (Յն) 'ի տաճարէն գնայր. և մատեան աշակերտքն ցուցանել նմա զշինուածս տաճարին։ Եւ նա պատասխանի ետ և ասէ ցնս. տեսանէ՞ք զայդ ամ, ամէն ասեմ ձեզ. ոչ մնասցէ այդր քար 'ի քարի վրայ՝ որ ոչ քակտեսցի։ Եւ մինչդեռ նստէր 'ի լերինն ձիթենեաց, մատեան առ նա աշակերտքն առանձինն և ասեն. ասա՛ մեզ՝ ե՞րբ լինիցի այդ, և կամ զի՞նչ նշան իցէ քոյոյ գալստեանն, և վախճանի աշխարհիս։ Պատասխանի ետ Յն՝ և ասէ ցնս. զգո՛յշ լերուք՝ գուցէ ոք զձեզ խաբիցէ։ Զի բազումք գայցեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ ես եմ Ռն. և զբազումս մոլորեցուցանիցեն։ Լսելոց էք պատերազմունս՝ և համբաւս պատերազմաց. զգո՛յշ լերուք՝ մի խռովեսջիք, զի պարտ է լինել այնմ ամի, այլ չէ է կատարած։ Յարիցէ ազգ յազգի վրայ, և թագաւորութի 'ի թագաւորութիւն, և եղիցին սովք և սրածութիւնք և սասանութիւնք 'ի տեղիս տեղիս։ Սակայն և այն ամենայն սկիզբն է երկանց։ Յայնժամ մատնեսցեն զձեզ 'ի նեղութի, և սպանանիցեն զձեզ. և եղիջիք ատեցեալք յամենայն ազգաց վասն անուան իմոյ։ Եւ յայնժամ գայթակղեսցեն բազումք, և զմիմեանս մատնեսցեն՝ և ատեսցեն զմիմեանս։ Եւ բազում սուտ մարգարէք յարիցեն, և զբազումս մոլորեցուսցեն։ Եւ վասն բազմանալոյ անօրէնութեն, ցամաքեսցի սէր բազմաց։ Բայց որ համբերեացն իսպառ, նա կեցցէ։ Եւ քարոզեսցի աւետարանս արքայութեն ընդ ամենայն տիեզերս՝ 'ի վկայութի ամենայն հեթանոսաց, և ապա եկեսցէ կատարած։ Երդ՝

յորժամ տեսանիցէք զպղծուի աւերածոյն, որ ասացեալն է 'ի ձեռն Դանիէլի մարգարէի. զի կայցէ 'ի տեղւոջն սրբութեան. որ ընթեռնուն՝ 'ի միտ առցէ։ Յայնժամ որ 'ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն 'ի լերինս. և որ 'ի տանիս կայցէ, մի իջցէ առնուլ ինչ 'ի տանէ իւրմէ. և որ յանդի իցէ, մի դարձցի յետս առնուլ զձորձս իւր։ Բայց վա՛յ իցէ յղեսաց և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ։ Յաղօթս կացէք՝ զի մի լինիցի փախուստն ձեր ձմերանի, և մի 'ի շաբաթու։ Զի եղիցի յայնժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղև 'ի սկզբանէ արարածոց աշխարհի մինչև ցայժմ, և ոչ այլ լիցի։ Եւ թէ ոչ կարճէին աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր ամ մարմին. բայց վասն ընտրելոցն կարճեսցին աւուրքն այնոքիկ։ Յայնժամ թէ ոք ասիցէ ձեզ՝ ահաւասիկ աստ է Քրիստոս կամ անդ. մի հաւատայցէք։ Զի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք. և տացեն նշանս մեծամեծս և արուեստս, մինչև մոլորեցուցանել՝ թէ հնար ինչ իցէ և զընտրեալսն։ Ահա յառաջագոյն ասացի ձեզ։ Եթէ ասիցեն ձեզ. ահաւասիկ յանապատի է, մի ելանիցէք. և թէ ահա յշտեմարանս է, մի հաւատայցէք։ Զի ոպ փայլակն՝ որ ելանէ յարևելից՝ և երևի մինչև յարևմուտս, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ։ Զի ուր գէշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք։ Եւ յաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տայցէ զլոյս իւր, և աստեղք անկցին յերկնից, և զօրութիւնք երկնից շարժեսցին։ Եւ ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք. և տեսցեն զորդի մարդոյ եկեալ 'ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառաւք բազմաւք։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նորա 'ի չորից հողմոց՝ 'ի ծագաց երկնից մինչև 'ի ծագս նոցա։ Ի թզե-

նոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին և տերևն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն։ Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամ, գիտասջիք թէ մերձ է 'ի դուրս։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչև այս ամ եղիցի։ Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի անցցեն։ Բայց վասն աւուրն այնորիկ և ժամու ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք երկնից և ոչ Որդի՝ բայց միայն Հայր։ Այլ ոպ աւուրքն Նոյի, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ։ Զի ոպ էին յաւուրսն որ յառաջ քան զջրհեղեղն, ուտէին և ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին, մինչև յօրն՝ յորում եմուտ Նոյ 'ի տապանն. և ոչ գիտացին՝ մինչև եկն ջրհեղեղն և եբարձ զամենեսին. այնպէս եղիցի և գալուստն որդւոյ մարդոյ։ Յայնժամ թէ լցեն երկու յագարակի, մին առցի՝ և միւսն թողցի։ Եւ եթէ երկու աղայցեն 'ի մի երկանս, մին առցի և միւսն թողցի։ Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ։ Այն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն՝ յորում պահու գող գայ, սկէր՝ և ոչ տայր ական հատանել զտան իւրոյ։ Վասն այսորիկ և դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ ակն ունիցիք՝ գայ որդի մարդոյ։ Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ և իմաստուն, զոր կացոյց տէր իւր 'ի վրայ ծառայից իւրոց՝ տալ նց կերակուր 'ի ժամու։ Երանի իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէրն գտանիցէ արարեալ այնպէս։ Ամէն ասեմ ձեզ, զի 'ի վրայ ամ ընչից իւրոց կացուցցէ զնա։ Այլ թէ ասիցէ ծառայն չար 'ի սրտի իւրում՝, տէր իմ յամէ զգալ. և սկսանիցի հարկանել զծառայակիցս իւր, ուտիցէ և ըմպիցէ ընդ արբեցողս։ Գայցէ տէր ծառային այնորիկ՝ յաւուր յորում ոչ ակն ունիցի, և 'ի ժամու յորում ոչ գիտիցէ. և կտրեսցէ զնա ընդ մէջ, և զբաժին նր ընդ կեղծաւորս դիցէ. անդ եղիցի լալ

և կրճել ատամանց։ Յայնժամ Նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց ելին ընդ առաջ փեսայի և հարսին։ Զինգն 'ի նոցանէ յիմարք էին՝ և հինգն իմաստունք։ Յիմարքն առին զլապտերսն, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին։ Իսկ իմաստունքն առին ձէթ ամանովք ընդ լապտերս իւրեանց։ Եւ 'ի յամել փեսային, նիրհեցին ամենեքեան և 'ի քուն մտին։ Եւ 'ի մէջ գիշերի եղև բարբառ. ահա փեսայ գայ, արիք ընդ առաջ նր։ Յայնժամ յարեան ամ կուսանք՝ և կազմեցին զլապտերս իւրեանց։ Ասեն յիմարքն ցիմաստունսն, տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր։ Պատասխանի եւտուն իմաստունքն՝ և ասեն. գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական, այլ երթայք 'ի վաճառականս՝ և գնեսջիք ձեզ։ Իբրև նոքա գնացին գնել՝ եկն փեսայն, և պատրաստքն մտին ընդ նմա 'ի հարսանիսն՝ և փակեցաւ դուռնն։ Յետոյ գան և այլ կուսանքն՝ և ասեն. տէր տէր՝ բաց մեզ։ Նա պատասխանի ետ և ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ ոչ գիտեմ զձեզ։ Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամն։ Որպէս այր մի գնացեալ 'ի տար աշխարհ, կոչեաց զծառայս իւր՝ և ետ նց զինչս իւր։ Ումեմն ետ հինգ քանքար՝ և ումեմն երկուս՝ և ումեմն մի, իւրաքանչիւր ըստ իւրում կարի, և գնաց։ Ընդաւ վաղվաղակի՝ որ առ զհինգն՝ գործեաց նոքօք, և շահեցաւ այլ ևս հինգ։ Նոյնպէս և որ զերկուսն, շահեցաւ այլ ևս երկուս։ Եւ որ զմին առ, գնաց փորեաց զերկիր, և թագուցց զարծաթն ն իւրոյ։ Յետ բազում ժամանակի գայ տր ծառայիցն այնոցիկ՝ և առնէ համարս 'ի մէջ նց։ Եւ մատուցեալ՝ որ զհինգ քանքարն առ, մատոյց այլ ևս հինգ քանքար՝ և ասէ. տէր՝ հինգ քանքար ետուր ցիս, արդ՝ աւասիկ հինգ այլ ևս քանքար 'ի վր շահեցայ։ Ասէ ցնա տրն իւր. աղնիւ ծառայ բա-

րի և հաւատարիմ, որովհետև 'ի սակաւուդ հաւա-
տարիմ ես, 'ի վե՛ր բազմաց կացուցից զքեզ. մո՛ւտ
յուրախութի՛ն քո։ Ա՛ստուցեալ և որոյ զերկուս
քանքարսն առեալ էր՝ և ասէ. տէ՛ր՝ երկուս քան-
քարս ետուր ցիս, ահաւասիկ երկուս ևս այլ քան-
քարս՝ զոր 'ի վե՛ր շահեցայ։ Ասէ ցնա տէրն իւր.
աղնի՛ւ ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև 'ի
սակաւուդ հաւատարիմ ես, 'ի վե՛ր բազմաց կացուցից
զքեզ. մո՛ւտ յուրախութի՛ն քո։ Ա՛ստուցեալ
և որոյ զմի քանքարն առեալ էր, և ասէ. տէ՛ր՝
գիտէի, զի այր մի խիստ ես, հնձես՝ զոր ոչ սեր-
մանեցեր, և ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր. եր-
կեայ՝ գնացի և թագուցի զքանքարն քո յերկրի.
արդ՝ ահաւասիկ քոյդ ցքեզ։ Պատասխանի ետ տրն՝
և ասէ ցնա. ծառայ չար և վատ՝ գիտէիր թէ
հնձեմ՝ ուստի ոչ սերմանեցի, և ժողովեմ՝ ուս-
տի ոչ սփռեցի. պարտ էր քեզ արկանել զարծ-
ա՛թդ իմ 'ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք
պահանջէի զիմն։ Արդ՝ առէ՛ք 'ի դմանէ զքանքարդ՝
և տո՛ւք այնմ որ ունիցի զտասն քանքարն։ Զի
ամ՛ի որ ունիցի և յաւելցի, և որ ոչն ունիցի՝ և
զոր ունիցին, բարձցի 'ի նմանէ։ Եւ զծառայդ
անպիտան հանէ՛ք 'ի խաւարն արտաքին. անդ եղիցի
լալ և կրճել ատամանց։ Եւ յորժամ եկեսցէ որ-
դի մարդոյ փառո՛ք իւրովք՝ և ամենայն հրեշտակք
ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց։
Եւ ժողովեսցին առաջի նորա ամ՛ ազգք, և մեկ-
նեսցէ զնո՛ 'ի միմեանց, ո՛ր հովիւ զի մեկնէ զոդիս
յայծեաց։ Եւ կացուսցէ զոդիսն ընդ աջմէ իւրմէ՝
և զայծիսն 'ի ձախմէ։ Յայնժամ ասասցէ թագա-
ւորն ցայնոսիկ որ ընդ աջմէն իցեն. եկա՛յք օրհ-
նեալք Հօր իմոյ ժառանգեցէ՛ք զպատրաստեալ ձեզ
զարքայութի՛ն 'ի սկզբանէ աշխարհի։ Զի քաղ-
ցեայ՝ և ետուք ինձ ուտել. ծարաւեցի՝ և արբու-
ցէք ինձ. օտար էի՝ և ժողովեցէք զիս. մերկ՝ և

զգեցուցէք զիս. հիւանդ էի՝ և տեսէք զիս. 'ի բանտի էի՝ և եկիք առ իս։ Յայնժամ պատասխանի տացեն նմա արդարքն և ասասցեն. Տի՝ երբ տեսաք զքեզ քաղցեալ՝ և կերակրեցաք, կամ ծարաւի՝ և արբուցաք։ Երբ տեսաք զքեզ օտար՝ և ժողովեցաք, կամ մերկ՝ և զգեցուցաք։ Երբ տեսաք զքեզ հիւանդ՝ կամ 'ի բանտի, և եկաք առ քեզ։ Պատասխանի տացէ թագաւորն՝ և ասասցէ ցնա. ամէն ասեմ ձեզ, որովհետև արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք։ Յայնժամ ասասցէ և ցայնոսիկ՝ որ ընդ ահեկէն իցեն. երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նր։ Զի քաղցեայ՝ և ոչ ետուք ինձ ուտել. ծարաւեցի՝ և ոչ արբուցէք զիս. օտար էի՝ և ոչ ժողովեցէք զիս, մերկ էի՝ և ոչ զգեցուցէք զիս. հիւանդ՝ և 'ի բանտի՝ և ոչ տեսէք զիս։ Յայնժամ պատասխանի տացեն և նոքա՝ և ասասցեն. Տի երբ տեսաք զքեզ քաղցեալ՝ կամ ծարաւի կամ օտար կամ մերկ կամ հիւանդ կամ 'ի բանտի, և ոչ պաշտեցաք զքեզ։ Յայնժամ պատասխանի տացէ նոցա՝ և ասասցէ. ամէն ասեմ ձեզ, որովհետև ոչ արարէք միում 'ի փոքրկանցս յայսցանէ՝ և ոչ ինձ արարէք։ Եւ երթիցեն նոքա 'ի տանջանսն յաւիտենականս, և արդարքն 'ի կեանսն յաւիտենականս։ Եւ եղև իբրև կատարեաց Յն զամ զբանս զայսոսիկ, ասէ ցաշակերտսն իւր։ Գիտէք, զի յետ երկուց աւուրց զատիկ լինի. և որդի մարդոյ մատնի 'ի խաչ ելանել։ Ի. 2։

փոս։

Երկրպագելով և մեք ճշմարիտ ենք Հոգւոյն, գոչեսցուք, Աստուած փառք քեզ։ Լոյս զուարթ։

Մեծի գալստեան։

Օրհնեալ որ գաս յանուն Տն, օրհնեալ որ գալոց ես։

Տէր Աստուծ մեր երևեցաւ մեզ, արարէք տօնս ուրախութեամբ կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ:

Յետոյ Աստուածաբան կամ գանձ:

Զինի Աստուծոյ զգենուն ամ չահանոյչն հիաքուն, և յոպենան էլանելն խուչնա և ասելուսուն և ինչոչ և մոռելնոչ և ոռնոյն պարպուչ:

Համբարձի 12. յոպենանն ասի:

Առաքելոյ աղաւնոյ իջանելով. 511:

Կենդանարար Աստուծ մարդասէր Հոգի. 512:

Երեկոյեան Սաղմոս ՃԼՍԻ:

Կց. Հոգի քո նոր և բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ:

Փս. Տէր լուր աղօթից իմոց. ունկն դիր խընդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով:

Լուր ինձ արդարութեամբ քով. և մի մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում. զի ոչ արդարանայ առաջի քո ամ կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ արար յերկիր զկեանս իմ, և նստոյց զիս 'ի խաւարի ոպ մեռեալ յաւիտենից:

Զանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս. խորհեցայ յամ գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Ընձն իմ ոպ երկիր ծարաւի է առ քեզ. վաղվաղակի լուր ինձ Տէր. զի նուազեցաւ յինէն հոգի իմ:

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն. նմանիցիմ այնոցիկ՝ ոյք իջանեն 'ի գուբ:

Լսելի արա ինձ առաւօտուց զողորմութիս քո. զի ես 'ի քեզ Տէր յուսացայ:

Յոյց ինձ ճանապարհ յոր գնացից. զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց Տէր. զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո՛ ինձ առնել զկամս քո. զի դու ես Աստ՚ծ իմ։
Հոգի քո նբ և բարի առաջնորդեսցէ ինձ ՝ի յերկիր ուղիղ։
Վ՚ն անուան քո Տ՚ր կեցուսցես զիս, արդարութիւն քով՝ հանցես ՝ի նեղութէ զանձն իմ։
Ողորմութիւն քով սատակեսցես զթշնամիս իմ. և կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ. զի ես ծառայ քո եմ։

Ա՚-Եպիսկոպոս ըստ Մարկոսի։ ԺԴ. 1։

Վ՚ն Տ՚ն մերոյ Յն՚ի Ք՚ն։

Նա էր զատիկն և բաղարջակերաց յետ երկուց աւուրց. խնդրէին քահանայապետքն և դպիրք՝ եթէ զիարդ զնա նենգաւ կալեալ սպանանիցեն։ Բայց ասէին՝ թէ մի ՝ի տօնի աստ, զի մի խռովութիւն լինիցի ՝ի ժողովրդեանն։ Նա մինչև էր ՝ի Բեթանիա՝ ՝ի տան Սիմոնի բորոտի բազմեալ, եկն կին մի որ ունէր շիշ իւղոյ նարդեան ալնուի մեծագնոյ, և բեկեալ զշիշն՝ եհեղ ՝ի վերայ գլխոյ նորա։ Նա աշակերտքն զչարէին և ասէին. ընդէր եղև կորուստ իւղոյդ այդորիկ։ Արթ էր զայդ իւղ վաճառել աւելի քան երեք հարիւր դահեկանի, և տալ աղքատաց. և զայրանային նմա յոյժ։ Նա Յն՚ ասէ ցնա. թո՛յլ տուք դմա՝ զի՞ աշխատ առնէք, զի գործ մի բարի գործեաց դա յիս։ Յա՛մ ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, և յորժամ կամիք՝ կարող էք առնել նց՚ բարիս. այլ զիս ոչ յա՛մ ժամ ընդ ձեզ ունիք։ Դա զոր ունէրդ՝ արար. յառաջագոյն խնկեաց զմարմին իմ ՝ի նշան պատանաց։ Ամէն ասեմ ձեզ. ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ա՛մ աշխարհ, և զոր արար դա՝ խօսեսցի վասն յիշատակի դորին։ Նա Յուդա Սկարիովտացի մի յերկոտասանից անտի, գնաց առ քահանայապետսն՝ զի մատնեսցէ զնա նց՚։ Նոքա իբրև լուան՝ խնդացին, և խոստացան տալ նմա արծաթ։ Նա խնդրէր՝ թէ զիարդ պարապով մատնեսցէ զնա։ Նա յա-

ռաջնում աւուր բաղարջակերացն՝ յորժամ զզատիկն զենուին, ասեն ցնա աշակերտքն. ո՞ւր կամիս՝ երթիցուք պատրաստեսցուք՝ զի կերիցես զզատիկն։ Եւ առաքէ երկուս յաշակերտաց անտի՝ և ասէ ցնոսա. երթայք 'ի քաղաք. և իբրև մտանիցէք 'ի քաղաքն՝ պատահեսցէ ձեզ այր մի որ սափոր ջրոյ յուսս ունիցի, երթայք զհետ նորա։ Եւ յորտուն մտանիցէ, ասասջիք ցտանուտէրն. վարդապետ ասէ՝ ո՞ւր են իջևանքն, ուր աշակերտօքս ուտիցեմ զզատիկն։ Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ՝ անդ պատրաստեսջիք մեզ։ Եւ գնացին պատրաստել աշակերտքն նոր. եկին 'ի քաղաքն՝ և գտին որպէս ասացն նոցա. և պատրաստեցին զզատիկն։ Եւ իբրև երեկոյ եղև՝ գայր երկոտասանիւքն հանդերձ։ Եւ իբրև բազմեցան և դեռ ուտէին, ասէ Յն. ամէն ասեմ ձեզ՝ զի մի ոմն 'ի ձէնջ մատնելոց է զիս, որ ուտէ իսկ ընդ իս։ Եւ նոքա սկսան տրտմել՝ և ասել մի ըստ միոջէ մի թէ ես իցեմ, և միւսն՝ մի թէ ես իցեմ։ Եւ պատասխանի ետ և ասէ ցնոսա. մի յերկոտասանից այսր, որ մխեաց ընդ իս 'ի սկաւառակդ։ Այլ որդի մարդոյ երթայ՝ որպէս և գրեալ է վասն նր. բայց վա՛յ իցէ մարդոյն այնմիկ՝ յորմ ձեռս որդի մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա՝ թէ չէր իսկ ծնեալ մարդն այն։ Եւ մինչդեռ ուտէին, առեալ Յն՝ հաց՝ օրհնեաց և եբեկ՝ ետ նոցա, և ասէ. առէք՝ այդ է մարմին իմ։ Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ ետ նոցա, և արբին 'ի նմանէ ամենեքեան։ Եւ ասէ ցնոսա. այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ փոխանակ բազմաց հեղանի։ Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ ևս յաւելից ըմպել 'ի բերոյ որթոյ մինչև ցօրն ցայն՝ յորժամ արբից զնա նոր յարքայութեան Աստ։ Եւ գոհացեալ՝ ելին 'ի լեառն Ձիթենեաց։ 26։

ՀԲԵՂ. Գոհաբա։ Կեցո։ Աղօթք։ Խաղաղութիւն։ 116։

ՄԿՆՏԿԱՍՏԷ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Հոգւոյն է. և զանի սրբոյնէ 'ի վերայ Քրիստոսի յարութեանն։

Հեղինակ Շարականաց։

ԱՍՊԵՏԱՐԱՆԻ ՏԷՐՆ ՄԵՐ ՅԵՐԿԻՆՍ. 414։

Կամ Ռկ։

Անարարութիւնն անբաժանելի՝ եւ զօրութիւն՝ երկնայի՛ն. լոյս ծա՛գեալ՝ յա՛շխարհս. նրմա՛՝ ՀԱՂՂ՚Ի՞՝Ա հանցո՛ւք զօրհնո՛՝ւթիւ՛նս եւ՛ գո՛՝վ։ Որ էջեալ յերկնից. այսօր եւ հանդեաւ յառաքեալսն ճշմարի՛տ սուրբ Հոգի՛՝ն. նրմա՛՝ ՀԱՂՂ՚Ի՞՝Ա հանցո՛ւք զօրհնո՛՝ւթի՛՝ս եւ՛ գո՛՝վ։ Որ ի խորհուրդս փրկակա՛՝նս. այսօր ընդ ի՛ջանել յառաքեալսն ծանուցաւ մարգարէ՛ի՛՝ն. նրմա՛՝ ՀԱՂՂ՚Ի՞՝Ա հանցո՛ւք զօրհնո՛՝ւթի՛՝ս եւ՛ գո՛՝վ։

Օրհնութիւն Դ։

Ա՛ռաքելոյն աղաւնոյ. ի՛ջանելովն մեծաձայն հընչմանմբ ի՛ բարձունց. ի նմանութիւն լուսոյ փայլման հրաշալինեանց անկիզելի՛ զաշակե՛՝՚ռոսն. մինչդեռ նրստէ՛ի՛՝ն ի սուրբ վերնատա՛՝ն։ Ա՛ննիւթական աղաւնի՝. անքննելի որ քննէ՛ ընկալօրս Աստուծոյ. զոր առեալ ի Հօրէ պատմէ զահաւոր և ըզմիւսանգամ գալո՛՝՚ուստն. զոր քարոզեցի՛՝ն համագոյակա՛՝ն։ Օրհնութի՛՝ ի բարձունս. ելոցին ի

Հօրէ և յԱրդւոյ Հոգւոյն սրբոցմէ. որով առաքեալքն արբեցան անմահական բաժակա՛ւն. եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս։

† Կենդանարար Աստուա՛ծ մարդասէր Հոգի. ընժողովեալսըն միաբանական սիրով լուսաւորեցե՛ր հրեղինաք լեզուա՛ք. վասն որոյ եւ մեք այսօր տօնե՛մք ընդգալուստ քո սուրբ։ Օրհնեցացան քո գալըստեան՛մըն սուրբ առաքեալքն. կոչելով ի միասին ընդցրուեալսն ի միտեա՛նց բազմաձայն լեզուա՛ք. վասն որոյ եւ մեք այսօր տօնե՛մք ընդգալուստ քո՝ ե՛ր։

Անմահարար բաժակ հեղեա՛ւ յերկնի՛ց սուրբ Հոգի. զոր արբին ի վերնատունըն դա՛ս սուրբ առաքելոցն. օրհնեա՛լ ես սո՛ւրբ Հոգի՛դ ճըշմարի՛տ։ Առատապէս ծաւալեա՛լ ի մե՛զ հուրըն կենդանի. քանզի արբեա՛լ առաքելոցն եւ արբուցի՛ն տի՛ն զերրանց. օրհնեա՛լ ես սո՛ւրբ Հոգի՛դ ճըշմարի՛տ։ Այսօր մեծապէս ցընծան եկեղեցի՛ք հե՛թանոսաց. ընդմայլեա՛լք ուրախութի՛ւն ի քէ՛ն կենդանարար բաժակ. օրհնեա՛լ ես սո՛ւրբ Հոգի՛դ ճըշմարի՛տ։

Հոգին ո՛ր էր միշտ և է՝ եւ եղիցի. ո՛չ սկըսեալ և ո՛չ դադարեա՛ծ. այլ միշտ ընդ Հօր և ընդ Որդւոյ կարգեա՛լ և թըւեա՛լ. և միշտ օրհնեա՛լ է ի յաւիտեա՛ն։ Այր միշտ ընդունող սրբոյ. և ընցուցիչ ա՛ծացուցի՛ծ. եւ միշտ ընդ Հօր և ընդ Որդւոյ կարգեա՛լ և թըւեա՛լ. և միշտ օրհնեա՛լ է ի յաւիտեա՛ն։ Ընչտաշարժ ինքնաշարժ. ինքնիշխան ինքնաղօր ամենաղօծ. վասըն զի շընչէ ուր

կամի յորքան ախորժէ յորժամ և՝ յորքա՞ի՞ն. և միշտ օրհնեալ է ի յաւիտեան։

ԺԱ. Ամբարձաւ Տէրն մեր Քրիստոս. օրհնուք՝ ընդ ամպս երկնից. եւ առաքելոցն երկրրպագեալ դարձան Յերուսաղէ՞մ. միաբանութիւ՛ք վերառաքէին զաղօթս։ Ընտեալ ի յերկինս բի՛ւրաւոր զօրք բազմութի՛ւն հրեշտակաց. որք աղաղակէին եւ ասէի՞ն. օրհնեալ եկեալ ի յանուն Տեառն։ Նստեալ ընդ աջմէ ծընողին. կատարելով ըզխոստացեալ պարգեւս. մինչի՛ թանրի՛է եբ Հոգին գայ առ ձե՞ղ. աղբերացուցանել զմեծ զողորմութի՛ւն։

ԺՆ. Յամենակ դարձի իմոյ եհան ի յերկիր. արդ Տէր ընկալ ըզծառայս քո. և Հոգի՞ քո բարի առաջնորդեսցէ ի՛նձ ի յերկիր ուղի՛ղ։ Խոստովանող հոգիս. որ ելից զունայնութենէ ընթացս աշխարհի. արդ Տէր ընկալ ըզծառայս քո. և Հոգի՞ քո բարի առաջնորդեսցէ ի՛նձ ի յերկիր ուղի՛ղ։ Ի վերջնումն աւուր մեծի. յորժամ առնես պյցելութի՛ քոյոց սիրողաց. յայնժամ խնայեա՛ ի ծառայս քո. եւ Հոգի՞ քո բարի առաջնորդեսցէ ի՛նձ ի յերկիր ուղի՛ղ։

ԱՄ. Նո՛ր Ա՛ռն ծընեալ մանկո՛՛ւնք սուրբ աւազանաւն. շնորհաղարդեա՛՛լք Հոգւովն Սո՛ստուծոյ. օրհնեցէ՛ք զՀայրն երկնաւոր յաւուր ծնընդեան՛՛ն սրբրուհւոյ կուսին. յոր օրհնեցա՛՛յք յանէ՛ծից նախնոյն։ Արեամբ գառի՛ն անարատի՛՛ փրկեալ ժողովուրդք. յաւուր ծնընդեա՛՛ն մեր անտանելոյն. գովեցէ՛ք ըզմիածինն որ հաճեցաւ

առնուլ մարմին՝ և անսե�մն ի նմանէ. յոր օրհնեցան՝ յանէծից նախնոյն։ Յառատաբուղխ շնորհաց Հոգւոյն լուսազարդեան՝ ազգք հեթանոսաց. յաւուր ծնընդեան՝ և մօր բանին ծնողի. ըզփառակից Որդւոյ զՀոգին բարեբանեցէք՝ հոգեւոր ներգով. որ մաքրազարդեան՝ զմարմնական Որդւոյն։

ՅՈԿ. Ըզքեզ որ հոգւով և հրով մաքրեցեր ըզմարդկան աղտեղութիւն. որպէս զԱծ և ըզփրկիչ ամենեքեան օրհնեսցուք։ Փրկիչն երևեցաւ և զաշխարհս ապրեցոյց ի պատրանաց թշնամւոյն. որդեգրութիւն շնորհելով ի ձեռն մկրտութեան։ Ցրով կենդանի զմեզ ըզմեղս մեր այսօր. երեւեալ ապրեցուցիչն. և զովացուցանէ զաշխարհս ածայրն ջերմով։

Ա՚Օ. Թագաւոր փառաց Աստուծ Հոգի դկենդանարար. ի շնորհաբաշխ աւուր մեծի ծնընդեան Սարիամու. դիտեր Դաւթի թագաւորի՝ ծն. նորոգեա զկենդանութիւն մերոյ թագաւորի՚՚՚ն. զի օրհնեսցուք ըզքեզ տէր այժմ և յաւիտեան։ Ըզբեր կենաց և փրկութիւն մերոյ Հոգի՝ Հօր եւ Որդւոյ. ի յարմատոյն Յեսսեայ. բղխման գաւազանի հասեալ ժամուն. շնորհազարդ պայծառացո զգաւազան իշխանութիւն մերոյ հայրապետի՚՚՚ն. զի օրհնեսցուք ըզքեզ տէր այժմ և յաւիտեան։ Լրումն աշխարհի եւ ճառագայթ իմանալի Հոգի ո՛ր Աստ՝. ի ցընծութիւն աւուր ըմբման ուրախութիւն Յովակիմայ եւ Աննայի՝. աղօթիւք սոցա ըզցո ըզպէտս կարեաց հայաստանեայց եկեղեցւո՚՚՚յ. զի օրհնեսցուք ըզքեզ տէր այժմ և յաւիտեան։

ԽԶ. Որ հաստատեցեր բանիւ. զեկեղեցի քո Քրիստոծս. ի վերայ առաքելական վիմի. երգել ի սմանձ զերգըս հոգեւորս: Կանգնեալ ի սմա սեղան սրբութեան. բաշխէ զմարմին իւր և զարիւն. եւ տայ ի սմանէ մեզ նորոգութիւն. ի թողութիւն մեղաց մերոց: Փառք Հօր: ՅՀրեշտակ Հոգւոյն սրբոյ. աղաւնակերպ երևմամբ. ի վերայ մարմնոյ և արեանն Տ՝ն. ի բժշկութիւն հոգւոց մերոց:

Ամէն և միշտ:

Հոգեւորական՝ն սուրբ մանկըրտութիւն՝. զարդարեցեր նոքօք ըզտի՝ն զերս. ի զգեստս լուսափայլս եւ նորափետոնս. վասն որոյ եւ մեք այսօր տօնե՝մք ըզգալուստ քո սուրբ:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Օ՜սի՛ր որ հաստատեա յիս Ա՝ծ. և զՀոգի ուղիղ նորոգեա 'ի փորի՝ իմում:

Մի՛ ընկենուր զիս Տ՝ի յերեսաց քոց. և զՀոգի քո սրբ մի՛ հանե՛ր յինէն:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Փ. Դո՛ր զԴաւիթ ծառայ իմ. և իւղով սրբով իմով օծի՛ ըզնա:

Զեռն իմ ընկալցի զնա. և բազուկ իմ զօրացուսցէ՛ ըզնա:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Ա՝Զ:

Զհոգւոյն զգալուստն տօնեմք. որ մխիթարեաց զառաքեալսն հանգչելով ի նա՝ հրեղէն լե-

զուօք. օրհնեալ յաւիտեան: Զերեւումն Հոգւոյն տօնեմք. վերաբերեալ Աստուծոյ խոստովանիմք. նորոգօղ եւ կենդանարար. օրհնեալ յաւիտեան: Այսօր ուրախացեալք Հոգւովն. խոստովանիմք Աստուած զՀոգին որ բղխումն եւ լցուցիչ է զամ. օրհնեալ յաւիտեան:

Գ. Իջանէր օրհնեցէք եւ առաւել բարձր արարէք ընդ նմա յաւիտեան: Փառք Հօր: Զերկրորդն ի Հօրէ եւ յՈրդւոյ զէակից նոցունց. որ զՀոգին օրհնեցէք եւ առաւել բարձր արարէք ընդ նմա յաւիտեան: Այժմ եւ միշտ: Զեկեալն այսօր Աստուած հրեղինօք լեզուօք. առ բանն ընտրութեան օրհնեցէք եւ առաւել բարձր արարէք ընդ նմա յաւիտեան:

Մեծացուսցէ ԱԶ:

Այսօր ընտիր ժողովուրդք. ցնծասցէք ընդ գալըստ Հոգւոյն սրբոյ. Մեծացուցանելով զերկրորդն ի Հօրէ եւ յՈրդւոյ: Փառք Հօր: Այսօր ցնծայիւն առաքեալքն. զարդարեալք ի շնորհաց Հոգւոյն սրբոյ. Մեծացուցանելով զերկրորդն ի Հօրէ եւ յՈրդւոյ: Այժմ եւ միշտ: Այսօր ըզուարճացան արարածք. ճշմարիտ գալըստեամբ Հոգւոյն սրբոյ. Մեծացուցանելով զերկրորդն ի Հօրէ եւ յՈրդւոյ:

Գիշերի:

Իջեալ Հոգին յառաքեալսն, եւ հրազինեաց զընտրեալսն. անկէզ ի որ վերնատանն: Եւ հանգեաւ նոքօք յազգըս մարդկան զանազան լեզուաց բաժանմամբ:

ՈՂՋՈՒԹԻՒՆ ԱՂ։

Որ յամենայնի՛ ես ա՛ծո՛ւթի՝. եւ ի ձայն հընչման ի՛ջեր յերկնի՛ց եւ ՀՈԳԻ. ո՛ղորմեա՛ մեզ։ Փառք ՀՕՐ։ Որ զամենայն լը՛նուս զօրո՛ւթի՛ քո՝. եւ ի դա՛ստ առա՛քելոցն ի՛ջեր բընակի՛լ եւ ՀՈԳԻ. ո՛ղորմեա՛ մեզ։ Այժմ և միշտ։ Որ անբաժանելի՛ ես յա՛ծո՛ւթե՛. եւ ի հրեղէ՛ն լեզո՛ւս բաժանեա՛լ հանգեա՛ր յա՛ռաքեա՛լսըն սուրբ ՀՈԳԻ՝. ո՛ղորմեա՛ մեզ։

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՆՆ ԱՂ։

Ո՛ր ի քրովբէական կա՛ռսրդ հա՛նգչիս. այսօր ի՛ջեր յերկնի՛ց ի դա՛ստ առա՛քելոցըն ՀՈԳԻ. օրհնեա՛լ ե՛ս Թանգա՛ւո՛ր անմա՛հ։ Որ գընա՛ս ի վերայ Թեւո՛ց հո՛ղմոց. այսօր ի հրեղէ՛ն լեզո՛ւս բաժանեա՛լ հանգեա՛ր յա՛ռաքեալսըն ՀՈԳԻ. օրհնեա՛լ ե՛ս Թանգա՛ւո՛ր անմա՛հ։ Որ խնամե՛ս տեսչո՛ւթի՛ զքո զարա՛ծածս. այսօր եկի՛ր ի հա՛ստատել զեկեղեցի՛ քո ՀՈԳԻ. օրհնեա՛լ ե՛ս Թանգա՛ւո՛ր անմա՛հ։

Յո՛ղովեա՛լ ընտրե՛լոց մե՛տասա՛նի՛ցն. սպա՛սեա՛լ մընայի՛ն աւետեա՛ցըն ՀՕՐ հաւատո՛վ ի՛ վերնատա՛ն։ Փառք ՀՕՐ։ Ա՛ՐՔ ՀՈԳԻ՝ն երևեալ սրբո՛ցըն. լը՛ցո՛յց խընդությա՛ՀՈԳԻ՝ զա՛ռաքեալսըն հաւատո՛վ ի՛ վերնատա՛ն։ Այժմ և միշտ։ Որք ա՛ՐԲԻ՝Ն ըզհո՛ւրըն կենդանի՛. եւ ընթացեա՛լ ա՛ՐԲՈՒՑԻ՝Ն տի՛եզերաց. ո՛ՐՔ ԱՐԲԻ՝ՆԸՆ ԿԵ՛ՆԴԱ՛ՆԱՑԱ՛Ն։

ԱՌՈՒՕՊՈՒ ԷՐԳ։

Զգա՛լի՛ուստ ՀՈԳԻ՝Ն օրհնե՛սցուք, զՀՈԳԻՆ սրբո՛ց օրհնեսցո՛ւք ընդգա՛լի՛ուստ։

Յեկեղեցի՛ս բարեբանեցէ՛ք զԱ՛ստուած, և ընդՏԷՐ յաղբե՛րացն Իսրայելի։

ՎԵՐ. որբոյն Գրիգորի Նարեկացւոյ Գանձ լուսոյ. ի մի Աստուած:

Զկնի Սբ Ածին զգեցեալ հրաշք հանոյչն, և Ելանէն խաչէ և աւետարանաւ և ամենայն զարդուք 'ի դուրս, ասէլով

Շարական Դ:

Առաքելոյ աղաւնոյ իջանելով. 511:

Ապա Սաղմոս ՃԽԸ:

Կ3. Հոգի քո սուրբ և բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ:

Փխ. Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր. 508:

Ընթերցուած 'ի Գործոց առաքելոց: Ա. 1:

Եւ 'ի կատարել աւուրցն պենտակոստէից, էին ամենեքեան միաբան 'ի միասին: Եւ եղև յանկարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրև սաստիկ հողմոյ. և ելից զամենայն տունն յորում նստէին: Եւ երևեցան նոցա բաժանեալ լեզուք իբրև 'ի հրոյ, և նստաւ իւրաքանչիւր 'ի վերայ նոցա: Եւ լցան ամենեքեան Հոգւով սրբով, և սկսան խօսել յայլ լեզուս՝ որպէս և Հոգին տայր բարբառել նոցա: Եւ էին յԵրուսաղէմ բնակեալ հրեայք արք երկիւղածք, յամենայն ազգաց որ 'ի ներքոյ երկնից: Եւ իբրև եղև բարբառս այս, եկն միաբան բազմութիւնն և խռնեցաւ, զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօսել նոցա: Աքանչանային ամենեքեան, և զարմանային և ասէին ընդ միմեանս, ոչ աւասիկ ամենեքեան սոքա որ խօսին Գալիլեացիք են. և զի՞նչ ուրդ լսեմք մեք յիւրաքանչիւր բարբառս մեր՝ յորում ծնեալ եմք: Պարթևք և Մարք, և Իլամացիք, և որ բնակեալ են 'ի Միջագետս, 'ի Հրէաստանի, և 'ի Կամիրս, 'ի Պոնտոս, և յԱսիա, 'ի Փռիւգիա, և 'ի Պամփիւլիա, յԵգիպտոս, և 'ի կողմանս Լիբէացւոց, որ ընդ Կիւրենացիս, և որ եկք Հռոմայե-

ցիք, հրեայք, և եկք նոցուն, կրետացիք, և Ա-
րաբացիք, լսեմք խօսիլ նոցա 'ի մեր լեզուս զմե-
ծամեծս Աստուծոյ։ Այքանչանային ամենեքեան
զարմացեալք՝ ասէին ցմիմեանս, զի՞նչ կամիցի այս
լինել։ Այլ կիսոցն ընդ խաղ արկեալ ասէին, ե-
թէ քաղցուալից իցեն։ Յարուցեալ Պետրոս հան-
դերձ մետասանիւքն, ամբարձ զձայն իւր՝ և խօսե-
ցաւ ընդ նոսա։ Այրք հրէաստանեայք և որ բնա-
կեալ էք Յերուսաղէմ ամենեքեան, այս ձեզ յայտ-
նի լիցի՝ և ունկն դիք բանից իմոց, ոչ որպէս դուք
կարծէք՝ թէ սոքա արբեալ իցեն, զի դեռ երիք
ժամք են աւուրս։ Այլ այս է որ ասացաւ 'ի ձեռն
մարգարէին Յովելայ։ Այլ եղիցի յետ այսորիկ
յաւուրս յետինս՝ ասէ Աստուած, հեղից յոգւոյ իմ-
մէ 'ի վերայ ամենայն մարմնոյ, և մարգարէացին
ուստերք ձեր և դստերք ձեր, և երիտասարդք
ձեր տեսիլս տեսցեն, և ծերք ձեր երազովք երա-
զեսցին, և 'ի վերայ ծառայից իմոց և 'ի վերայ ա-
ղախնանց իմոց յաւուրսն յայնոսիկ հեղից յոգւոյ
իմմէ և մարգարէացին։ Այլ տացս նշանս յերկինս 'ի
վեր, և նշանս յերկիր 'ի խոնարհ, արիւն և հուր
և մրրիկ ծխոյ, արեգակն դարձցի 'ի խաւար՝ և լու-
սին յարիւն, մինչ չև եկեալ իցէ օր Տեառն մեծ և
երևելի։ Այլ եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն
Տեառն՝ կեցցէ։ 21։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Հոգի քո սուրբ և բարի առաջնորդեսցէ ինձ 'ի
յերկիր ուղիղ։

Ա-Եպիսկոպոսն ըստ Յովհաննու։ ԺԴ. 15։

Տէրն մեր Յն ՀՌ ասէ.

Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք, և
ես աղաչեցից զՀայր, և այլ միխիթարիչ տացէ ձեզ.
զի ընդ ձեզ բնակեսցէ 'ի յաւիտեան, զՀոգին
ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ կարէ ընդու-

նել, զի ոչ տեսանէ զնա՝ և ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցէ, և ընդ ձեզ եղիցի: Ոչ թողից զձեզ որբս. գամ առ ձեզ. փոքր միւս ևս և աշխարհս ոչ տեսանէ զիս, բայց դուք տեսանիցէք զիս, զի ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք: Յայնմ աւուր գիտասջիք դուք, զի ես 'ի Հօր իմում, և դուք յիս, և ես 'ի ձեզ. որ ունի զպատուիրանս իմ՝ և պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս, և որ սիրէն զիս՝ սիրեսցի 'ի Հօրէ իմմէ, և ես սիրեցից զնա, և երևեցուցից նմա զիս: Ասէ ցնա Յուդա ոչ Սկարիովտացին, Տէր զի՞ եղև, զի մեզ յայտնելոց ես զքեզ՝ և ոչ աշխարհի: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա, եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ, և Հայր իմ սիրեսցէ զնա, և առ նա եկեսցուք, և օթևանս առ նմա արասցուք: Այ որ ոչն սիրէ զիս՝ զբանս իմ ոչ պահէ, և բանն իմ զոր լսէք՝ ոչ է իմ, այլ Հօրն՝ որ առաքեացն զիս: 24:

Բարեկենդանի Գ-ին. Ա. ասն 'ի վերուստ խաղաղութեան:

Աղօ. փեսանոգբեն զանդասանն և զաշխարհ:

Բարեկ. Մի խաչիւս: Աղօթ. Պահպանեա:

Ար ապա երկրան 'ի գերբեկմանս: Ար ասէն Տարեկան հանգստեան 'ի յոյնէն Ակ:

Զեռքդ քո՛ արարին և ստեղծին զիս՝ ի հողո՛ւ. ի՛ յօրհնել զքեզ Ա՛ստ յաւիտեա՛ն: Ինկ պատրանք բա՛նսարկուին խափանեցայ յա՛նճառ լուսո՛ւն. և դարձայ անդրէ՛ն ի հո՛ղ յո՛ր մէ՛ ստեղծայ: Ա՛ստ-խիթարի՛չ սո՛ւրբ Հոգի՝ լուսաւորեա՝ զմտքս նի՛նջեցեա՛ լսն. եւ հանգո՛ զՀոգի՛ս նց՝ ընդ սո՛ւրբսն քո՛:

Յամամոտ:

Զաղաղարու զննջումն ոչ կանխագէտ յառաջ ասէիր. զի և 'ի Ռեթանիա յառաջէիր՝ զի յարուցես

զսիրելին քո. և զքեզ գոչելով ասեմք. օրհնեալ որ գաս 'ի հարչարանս կամաւ Հօր՝ 'ի փրկութի անձանց մերոց։

Կոմ

Յորժամ եկեալ կենարարն 'ի գերեզմանն Ղազարու՝ յորժամ եկեալ կենարարն 'ի գերեզմանն Ղազարու՝ աւետաւոր ձայնիւն աղաղակէր ասելով. Ղազարէ, արի եկ արտաքս։ Իսկ մեռեալն 'ի գերեզմանէն յարեաւ. և նոյն ինքն զանմահութիւն պարգևսն ետ սիրելւոյն, և ահագին ձայնիւն 'ի գերեզմանէն կոչեաց. վա՜յ որոյ և մանկունք երրայեցւոց ոստովք օրհնէին զանմահ թագաւորութի՝ քո. ովսաննա օրհնեալ է գալուստ քո՝ օրհնութի՝ 'ի բարձունս. օրհնեալ որ գալոցդ ես անուամբ Տն։

Նոյնոյ ՈՐԻԹ։

Կ3. Նշեցին ականջք քո 'ի լսել զձայն աղօթից իմոց։

Փխ. Ի խորոց կարդացի առ քեզ Տէր, Տէր լուր ձայնի իմում։

Նշեցի ականջք քո 'ի լսել զձայն աղօթից իմոց։

Թէ զանօրէնութիւնս քննես Տէր, Տէր, ո՞ կարէ կալ առաջի քո, զի 'ի քէն է քաւութիւն։

Վա՜յ անուան քո Համբերի Տէր. Համբեր անձն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ 'ի Տէր։

Ի պահէ առաւօտու մինչև յերեկոյ, 'ի պահէ առաւօտու յուսացաւ Իսրայէլ 'ի Տէր։

Ի Տեառնէ է ողորմութի՝ բազում, և 'ի նմանէ է փրկութի՝. և նա փրկեաց զԻսրայէլ յամենայն նեղութեանց նր։

Ընթերցան ըստ Ղուկասու։ ԺԴ. 49։

Տէրն մեր Յս Քս ասէ.

Ուր եկի արկանել յերկիր, և զի՞նչ. կամիմ թէ արդէն իսկ բորբոքեր, և մկրտութիւն մի ունիմ մկրտել. և զինչդ փութամ մինչև կատարեսցի

ցի։ Զամարիք եթէ խաղաղութիւն եկի տալ յերկիր, ոչ. ասեմ ձեզ, այլ բաժին։ Զի եղիցին յայսմ հետէ հինգ 'ի տան միում բաժանեալք երեքն յերկուց, և երկուքն յերից։ Բաժանեսցի հայր՝ յորդւոյ. և որդի՝ 'ի հօրէ. մայր՝ 'ի դստերէ, և դուստր՝ 'ի մօրէ. սկեսուր՝ 'ի հարսնէ, և հարսն՝ 'ի սկեսրէ իւրմէ։ Ասաց և ցժողովուրդսն, յորժամ տեսանիցէք ամպ ծագեալ յարևմտից, իսկոյն ասէք՝ թէ անձրև գայ, և լինի այնպէս, և յորժամ հարաւ շնչեալ, ասէք թէ խորշակ լինի, և լինի այնպէս։ Կեղծաւորք զերեսս երկնի և երկրի գիտէք փորձել, իսկ զժամանակս զայս զի՞արդ ոչ փորձէք։ Ընդէ՞ր և յանձանց իսկ ոչ ընտրէք զարժանն։ Յորժամ երթայցես ընդ ոսոխի քում առ իշխան, 'ի ճանապարհի տուր զհաշիւն զերծանել 'ի նմանէ, զի գուցէ քարշիցէ զքեզ առ դատաւորն, և դատաւորն մատնիցէ դահճի, և դահիճն արկանիցէ 'ի բանտ։ Ասեմ քեզ ոչ ելանիցես անտի՝ մինչև հատուցանիցես զյետին ընիոնն։ 59։

Զկնի Ա-Եպիփանին՝ Ակ. Ճ՛անապարհ մոլորե. 62։

Պողլոնոյ. Զոգւոցն հանգուցելոց. Գրիգոր. Ա՝ Հոգւոցն հանգուցելոց. Աղ. Գ՝ որդի։ Զայր մեր։

Հոմանոյ ոյսպէս յամէն կերպի 'ի Զապիէն մինչև 'ի ՌԲ խոչն հանգապէտն շարունն ասէն 'ի յայնէն, զի անձկիշապակ ներկեցելոցն. Երեք շարունն. Ա. Հանգապէտն. Բ. Ընծանի. Գ. Խոչի. Փառք Հօր. Ե ասպիս Ճ՛ԻԹ. Կ3. Եղիցին ականջք։ Փս. Ի խորոց կարդացի։)

Ե՝ 'ի պատնեալն յեկեղեցին. ոկոնին Շարունն Ակ։

Անարդութիւնն անբաժանելի. 511։

Աղա Նորաստեղծեալ։

Գրիգ. Ինդրեսցուք։ Կեցո։ Աղ. Գ՝ռում ամենա։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ի պատն Ժամն Ժողովքն 'ի պատ-ան Եկեղեցւոյն. Խ-ասէն 'ի Լեր- Սաղմոս ՃԼԽԲ։

ԿՅ. Ջոգի քո։ փխ. Տէր լուր աղօթից. 508։

Ընթերցուած 'ի Գործոց առաքելոց։ Բ. 1։

Եւ 'ի կատարել աւուրցն պենտակոստէից։ 518։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Ջոգի քո սուրբ և բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։

Ա-ԷՊՈՊԱՆ ԸՍՊ ՅՈՎՀԱՆՆՈՍ։ ԺԵ. 26։

ՏԷՐՆ մեր ՅԻ ՎՐԻ ասէ.

Բայց յորժամ եկեսցէ մխիթարիչն, զոր ես առաքեցից ձեզ 'ի Հօրէ, զՀոգին ճշմարտութեան՝ որ 'ի Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վասն իմ, և դուք վկայէք, զի 'ի սկզբանէ ընդ իս էք։ Այս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի գայթագղեսջիք. 'ի ժողովրդոց իւրեանց հանցեն զձեզ։ Այլ եկեսցէ ժամանակ՝ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ։ Եւ զայն արասցեն ընդ ձեզ, քանզի ոչ ծանեան զՀայր՝ և ոչ զիս։ Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ եկեսցէ ժամանակ յիշիցէք՝ թէ ես ասացի ձեզ։ Այս 'ի սկզբանէ ոչ ասացի ձեզ. քանզի ընդ ձեզ էի։ Բայց արդ երթամ ես առ առաքիչն իմ, և ոչ ոք 'ի ձէնջ հարցանէ ցիս, թէ յո՞ երթաս։ Այլ զի զայս խօսեցայ ընդ ձեզ, տրտմութի՛ն ելից զսիրտս ձեր։ Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ, լաւ է ձեզ եթէ ես երթամ, զի եթէ ես ոչ երթայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ։ Եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ, վասն մեղաց, և վասն արդարութեան, և վասն դատաստանի։ Վասն մեղաց՝ զի ոչ հաւատան յիս. վասն արդարութեան՝ զի առ

Հայր իմ երթամ. և ոչ ևս տեսանէք զիս. վասն դատաստանի՝ զի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է։ Դեռ բազում ինչ ունիմ ասել ձեզ, այլ ոչ կարէք հանդարտել այժմիկ։ Յորժամ եկեսցէ նա Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ, զի ոչ եթէ յանձնէ ինչ խօսիցի. այլ զոր լսիցէ խօսեսցի, և զգալոցն պատմեսցէ ձեզ։ Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ անտի առնուցու՝ և պատմեսցէ ձեզ։ Ամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վասն այնորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ անտի առնուցու, և պատմեսցէ ձեզ։ ԺԱ. 15։

Ե՝ Ելանէն Խաչն՝ Ի՝ Աւետարանաւ՝ Ի՝ Մատթէոսէ՝ Ի՝ Ամ պարդոյ՝ 'ի դուրս, ասելոյ Տարեկան ԴՁ։

Առաքելոյ աղաւնոյ իջանելով. 511։

Ա՝-Ի՝ Պարան ըստ Յովհաննու։ ԺԱ. 16։

Տէրն մեր Յն ՝Ն ասէ.

Փոքր մի, և ոչ ևս տեսանէք զիս, և ապա սակաւիկ մի՛ և տեսանիցէք զիս. և ես երթամ առ Հայր։ Ասէին ումանք յաշակերտաց անտի ցմիմեանս. զի՞նչ է այս՝ զոր ասէ ցմեզ, թէ փոքր մի՛ և ոչ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ մի՛ և տեսանիցէք զիս. և թէ ես առ Հայր երթամ։ Եւ ասէին. զի՞նչ իցէ այն փոքր միւս ևսն, չգիտեմք զինչ խօսի։ Գիտաց Յն եթէ կամէին ցնա հարցանել, և ասէ ցնս. վասն այդորիկ խնդրէք ընդ միմեանս՝ զի ասացի թէ փոքր մի՛ և ոչ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ միւս ևս՝ և տեսանիցէք զիս։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լացջիք՝ և ողբասջիք դուք, և աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք. այլ տրտմութիւնն ձեր յուրախութի՛ եղիցի։ Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութի՛ է նմա, զի հասեալ է ժամ նի՛. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ ևս յիշէ զնեղութի՛ն վասն խնդութեն. զի ծնաւ մարդ յաշ-

խարհ։ Եւ դուք այժմ տրտմութիւն ունիք. այլ դարձեալ տեսից զձեզ, և ուրախ լիցին սիրտք ձեր. և զուրախութիւնն ձեր ոչ ոք հանիցէ 'ի ձէնջ։ Եւ յայնմ աւուր զիս ինչ ոչ հարցանիցէք։ Ամէն ամէն ասեմ ձեզ՝ զի զոր ինչ խնդրիցէք 'ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ Մինչև ցայժմ ոչ ինչ խնդրեցէք յանուն իմ. խնդրեցէք, և առնուցուք. զի ուրախութիւն ձեր լցեալ լիցէ։ Այս առակօք խօսեցայ ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ևս առակօք խօսեցայց ընդ ձեզ. այլ յայտնապէս զՀօրէ պատմեցից ձեզ։ Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ. և ոչ ասեմ ձեզ՝ եթէ ես աղաչեցից զՀայր վասն ձեր. զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ՝ զի դուք զիս սիրեցէք, և հաւատացէք՝ եթէ ես ՍՈՒՏ ելի։ Ելի 'ի Հօրէ՝ և եկի յաշխարհ. դարձեալ թողում զաշխարհ, և երթամ առ Հայր։ Ասեն ցնա աշակերտքն. ահա արդ յայտնութիւն խօսիս. և առակ և ոչ մի ինչ ասես։ Այժմիկ գիտեմք՝ եթէ գիտես զամ. և ոչ ինչ պիտոյ է՝ եթէ ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ հաւատամք՝ եթէ ՍՈՒՏ ելեր։ Պատասխանի ետ նոցա Յս, և ասէ. այժմ հաւատացէք։ Ահա եկեսցէ ժամ, և եկեալ իսկ է, զի ցրուեսջիք յիւրաքանչիւր տեղիս, և զիս միայն թողուցուք. և չեմ միայն, զի Հայր ընդ իս է։ 32։

ԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ։

Կենդանարար Աստ մարդասէր Հոգի. 512։

Ա-Էպիստոլն ըստ Յովհաննու։ Ժ.Զ. 33։

Տէրն մեր Յս Քս ասէ.

Այս խօսեցայ ընդ ձեզ. զի ընդ իս խաղաղութիւն ունիցիք. յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի։ Այս իբրև խօսեցաւ Յս, ամբարձ զաչս իւր յերկինս և ասէ. Հայր՝ հասեալ է ժամ, փառա-

ւորեա՛ զՈրդի քո, զի և Որդի քո փառաւորեսցէ զքեզ։ Ոչ եւ ետուր նմա իշխանութիւն ամ մարմնոյ. զի ամի՝ զոր եւ ետուր նմա, տացէ զկեանսն յաւիտենականս։ Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստ՝ և զոր առաքեացեր զՅն Քն։ Այս զքեզ փառաւորեցի յերկրի. զգործսն կատարեցի, զոր եւ ետուր ցիս՝ զի արարիցս. և այժմ փառաւորեա՛ զիս Հա՛յր՝ առ՝ի քէն փառօքն՝ զոր ունէի յառաջ քան զ՚ինելն աշխարհի առ՝ի քէն։ Յայտնեցի զանուն քո մարդկան՝ զորս եւ ետուր ինձ յաշխարհէ. քո էին, և ինձ եւ ետուր զնս. և զբանն քո պահեցին։ Արդ գիտացին՝ եթէ զամ ինչ զոր եւ ետուր ինձ, առ՝ի քէն են, զի զբանն՝ զոր եւ ետուր ինձ, ետու նց. և նոքա ընկալան, և ծանեան ճշմարտութիւնքն՝ թէ առ՝ի քէն ելի. և հաւատացին՝ եթէ դու առաքեցեր զիս։ Արդ՝ ես վասն նց աղաչեմ, և ոչ վասն աշխարհի աղաչեմ. այլ վասն նց՝ զորս եւ ետուրն ինձ, զի քո են։ Այլ որ ինչ իմ է, ամ քո է. և որ ինչ քո է, այն իմ է. և փառաւորեալ եմ՝ի նս։ Այլ ես ոչ ևս եմ յաշխարհի, և նոքա յաշխարհի են, և ես առ քեզ գամ. Հա՛յր սո՛ւրբ՝ պահեա՛ զնս յանուն քո, որով եւ ետուրն ինձ. զի եղիցին մի, ոգի և մեք մի եմք։ Մինչ էի յաշխարհի ընդ նս, ես պահէի զնս յանուն քո՝ որով եւ ետուրն ինձ, և պահեցի. և ոչ ոք՝ի նոցանէ կորեաւ, բայց որդին կորստեան, զի գիրն լցցի։ Յհ. 12։

Եբրայեցոց Թղթոյն Ամ։
Նոյն և նման Հօր և Որդւոյ. 553։

Ա-Եպիստոլն ըստ Յովհաննու։ Յհ. 13։

Տէրն մեր Յն Քն ասէ.

Բայց արդ առ քեզ գամ և զայս խօսիմ յաշխարհի, զի ունիցին զուրախութիւն իմ լիով յանձինս իւրեանց։ Այս ետու նց զբանն քո. և աշխարհս ատեաց զնս. զի չեն յաշխարհէ, ոգի և ես չեմ յաշխարհէ։

Ոչ զայս աղաչեմ, զի բարձցես զնե յաշխարհէ. այլ զի պահեսցես զնե 'ի չարէ։ Յաշխարհէ աստի չեն, ոչ և ես չեմ յաշխարհէ։ Սուրբ արա զնե ճշմարտութիւնքդով. զի քո բանդ ճշմարտութիւն է։ Ոչ զիս առաքեցեր յաշխարհ. և ես առաքեցի զնե յաշխարհ։ Եւ 'ի վերնե նց ես սրբեմ զանձն իմ, զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութիւնքդ։ Այլ ոչ վերնե նց միայն աղաչեմ, այլ և վերնամ հաւատացելոց բանիւն նոցա յիս. զի ամենեքին մի իցեն, ոչ դու Հայր յիս՝ և ես 'ի քեզ, զի և նոքա 'ի մեզ իցեն. զի և աշխարհ հաւատասցէ՝ եթէ դու առաքեցեր զիս։ Եւ ես՝ զփառսն զոր ետուր ինձ՝ ետուս նոցա, զի իցեն մի՝ ոչ և մեք մի եմք։ Ես 'ի նե՝ և դու յիս, զի եղիցին կատարեալք 'ի մի. և գիտասցէ աշխարհ՝ եթէ դու առաքեցեր զիս. և սիրեցի զնե ոչ դու զիս սիրեցեր։ Հայր՝ զորս ետուրն ինձ, կամիմ՝ զի ուր ես եմ, և նոքա իցեն ընդ իս. զի տեսանիցեն զփառսն իմ, զոր ետուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ քան զլինելն աշխարհի։ Հայր արդար, և աշխարհ զքեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ ծանեայ, և նոքա ծանեան՝ եթէ դու առաքեցեր զիս։ Եւ ծանուցի նոցա զանուն քո, և ծանուցից. զի սէրն՝ զոր սիրեցեր զիս՝ 'ի նե իցէ, և ես 'ի նե։ Զայս իբրև ասաց Յն՝ ել աշակերտօքն հանդերձ յայն կոյս ձորոյն Կեդրոնի, ուր էր պարտէզ. յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր։ ԺԸ. 1։

Զինի՝ Քրիստոս. Ի սան 'ի վերուստ խաղաղութեան։

Ն՝ փեռնոգրենն զանգասանն, ն՝ զաշխարհա։

Քրիստոս. Սրբ խաչիւս։ Աղօթ. Պահպանեա։

Ն՝ 'ի գառնոյն սարկաւագն գարոզն. Եւ ևս խաղաղութիւն։ Քահանայն. Օրհնութիւն և փառք։

Ն՝ սկսանին Լուսաւորչեցոյ ն՝ Աղրեցոյ։

Մենենգի Յարութիւն։ Քրիստոս. Ասացուք ամ գանոյ։

Հոմիլիայի ԻԿ։

Երրորդութիւնն անբաժանելի· 511։

Եւ յոկնան Պաղլոս ՀՕ։ Օրհնեցէք զԱՍ· 197։

Ա-Եպիսկոպոս ըստ Յովհաննու-։ ԺԴ· 15։

Տէրն մեր Յս ՀՐՏ ասէ.

Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ· 519։

Զինի ա-Եպիսկոպոսին կիսկոպոս պաղլոս Յովհաննու- ոա-ՀԵՔԵՔԻՆԻՆ, ԷՐԵ- ՓՈՔՐ Է· ՄԷՆ ՓՈՔՐԻ շարկոնոն ՀՐ ա-ա՛· Ե- ՀԷՊ ՄԷՆ շարկոնին ապՀԼ- ՀՐ կիսկոպ՛։

Ա-ՄՕՆԻՆ Շարկոնոն ԻՁ։

Սարսափելի հողմոյ նման, ահեղագոչ· 553։

Աղօթք հանդերձ ծուներ դնելով զՏՐ աղաչեսցուք։ Տ՚ ողորմեա։ Էրէ- անգամ կրկնէ՛։

Եւ ևս խաղաղութեամբ։ Օրհնութիւն և փառք։

ԱղՕԼ- սրբոյն Յովհաննու- ոսկեբերանին՝ ասացեալ ՚ի ՀԲ Երրորդա-ին, զոր սարկեալ է վՀ Գալատեան

Հոգ-ոյն սրբոյ։

Ամենակալ անարատ Աստ· անսկիզբն Հայր· անտեսանելի, անբաւելի, անպատմելի, անպարագրելի, անփոփոխելի, անիմանալի, անհասանելի, որ միայն ունիս զանմահութիւն, բնակեալդ ՚ի լոյս անմատոյց, որ արարեր զերկինս և զերկիր, զծով և զամենայն որ ՚ի նոսա։ Եւ վՀ անչափ սիրոյ քո որ առ ազգս մարդկան, առաքեցեր զմիածին Որդիդ քո· փրկել յանիծիցն Ադամայ, որ ի՚ջեալ յերկնից մարմնացաւ Հոգւով սրբով, և զամենայն կիրս մարդկան կրեալ, ազատեաց զմեզ ՚ի կրից մեղաց։ Եւ խաչի և մահու համբերեալ յաղագս մեր, փրկեաց զմեզ ՚ի ծառայութենէ սատանայի, և յերկրպագութենէ կռոց· և ուսոյց միայնոյ սՔ Երրորդութեդ զգլուխ և զծուներ խոնարհեցուցանել, և խնդրել զթողութիւն մեղաց։ Եւ յետ յարութեան երևեցաւ աշակերտացն զանազան

նշանագ յաւուրս քառասունս հաղորդել ընդ նոսա հացիւ 'ի հաստատութի կենսաբեր տնօրէնութեն։ Եւ 'ի վերանալ յերկինս 'ի քառասներորդ աւուր յարութե իւրոյ, եդ ձեռն 'ի վր և օրհնեաց զաշակերտսն տալով նց զկատարեալ շնորհս առաքելուն. և եբաց զմիտս նց, իմանալ զգիրս. և պատուիրեաց նց մնալ յԵրուսաղէմ, և սպասել ուծային խոստման աւետեացն Հօր երկնաւորի և մարդասիրի։ Զոր տր պարգևեցեր աղգի մարդկան զանբաւ ողորմութեդ շնորհս. առաքեցեր զէակից քո զՀոգիդ սբ 'ի մեծի միաշաբաթիս, 'ի կատարման յիսներորդ աւուր յարութե փրկչիդ։ Յերրորդ ժամու գոյացաւ նախահայրն 'ի Հոգւոյն սրբոյ յոգի կենդանի ուծային փչմամբ, զոր անդրէն կորուսանք ճաշակմամբ պղտղոյն և մահացեալ, վերստին դարձեալ 'ի սոյն ժամու կենդանաստեղծի Հոգւովն սրբով, իջմամբ 'ի դասս առաքելոցն. որ 'ի հրեղէն լեզուս երևեալ, նստաւ 'ի վր նց և լցոյց զամենեսին Հոգւով սրբով։ Որ և առաջին ծնունդ ծնեալ զերեք հաղարսն, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, առաջին երկրպագեցին սբոյ Երրորդութեդ։ Եւ մեք զծունկս և զպարանոցս խոնարհեցուցանեմք, և քո առաքելովքն աղաչեմք։ Լնկալ զմեր երկրպագութիս ընդ նոսին, և որք նովին արժանաւորութբ խորհրդաբար երկրպագեալ քեզ մինչև ցայժմ։ Եւ լուր մեզ յաւուրս յայսմիկ մեծի պենդակոստէիս յետ ամբառնալոյ Որդւոյ քո Յսի Քրի յերկինս, որով հաւատով քկարդամք առ քեզ։ Հայեաց 'ի բարձանց 'ի սրբութէ քումմէ 'ի ժողովուրդս քո որ առաջի կան, և ակն ունին մեծի ողորմութե քո։ Առաքեա զբարերար զՀոգիդ սբ այսօր 'ի տաճարս քո, և 'ի ժողովեալքս 'ի սմա. ոչ և յայնժամ 'ի վերնատունն և յառաքեալսն, զի և 'ի սմա հանապազ միածինդ քո պատարագի, ոչ 'ի վերնատունն, ուր զխորհուրդն սբ աւանդեալ բաշխեաց

առաքելոցն 'ի խորհրդական ընթրիսն, և զնոցին
լուաց զոտս, և դրօքն փակելով երևեցաւ յառա-
ջին միաշաբաթին յարութեանն երեկոյին, և դարձեալ
յութերորդ աւուրն 'ի վերնատունն։ Եւ 'ի կատար-
ման պենդակոստէին աւուրցն, իջեալ Հոգիդ սրբ
հնչմամբ հողմոյ, և ելից զնա հրով հանդերձ'ի նմա
միաբանելովքն սրբովք. վասն որոյ փառաւորեմք
զքեզ Տէր բարերար Հայր Տն մերոյ Յսի Քի. և
աղաչեմք բոլորով սրտիւ. հայեա'ի մեզ քաղցրու-
թիւն. և յիշեա գթութիւն քո զտառապեալքս և ըզ-
դատապարտեալքս, և դարձո զգերութիւն հոգւոց
մերոց ըմբռնելոց 'ի սատանայէ. և կանգնեա զան-
կեալքս և զկործանեալքս աղաչեմք։ Զի թէպէտ
և մեղաք, սակայն 'ի քեզ անկաք յարգանդէ և
յորովայնէ. և դու ես Աստ մեր, մի թողուր զմեզ.
զի պակասեցան յունայնութեանն աւուրք մեր, և եղաք
նախատինք թշնամեաց, և ծաղր և այպն ատե-
լեաց։ Այլ յուսալով յողորմութիւն քո՝ որ յաւուրս
յայսմիկ եղև, հայցեմք 'ի քէն բաց մեզ զդուռն
ողորմութեանն քո, և սրբեա զմեզ 'ի գաղտնեաց մերոց։
Տես զխոնարհութիւն ծառայից քոց, և թող մեզ
զամ յանցանս մեր զգիտութեանն, և զանգիտութեանն։
Հնորհեա զքաւութիւն ժողովրդեան քո, և մաքրեա
զամենեսեան զօրութիւն Հոգւոյդ սրբոյ։ Փրկեա զմեզ
'ի բռնութենէ թշնամւոյն, և ամրացո զկեանս մեր
յամ չարահնար խաբէութեց բանսարկուին։ Հրեշ-
տակի խաղաղութեան յանձն արա զմեզ, որ յառաջ
քան զհայցելն մեր զպէտս մեր պատրաստես. ար-
ժանացո զմեզ նախ քան զվաղճանն մեր դառնալ
առ քեզ խոստովանութիւն և ապաշխարութիւն։ Տա-
ճարացո զամենեսեան յընդունելութիւն Հոգւոյդ սրբոյ
ընդ սրբց առաքելոցն, և ընդ նոսին գրեա զանուանս
մեր 'ի դպրութիւն կենաց։ Զամենեսեան զմեզ ժո-
ղովեա յարքայութիւդ քո 'ի վերինդ Եղէմ, յեր-
կնային բարձրագոյն վերնատունդ, զի քո ողոր-

մութիւն. և քեզ փառս վերառաքեսցուք, և միածնի քո Որդւոյ և ամենասքանչ Հոգւոյն այժմ և միշտ։

Երէց Հարցեան Ռկ։

Այսօր երկնայինքն ուրախացան. 565։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։ Երեց։ Երկնի։

Այս ևս խաղաղութեան։ Օրհնութիւն և փառք։

Ամ ապա ի՞արդեան պէրիրոյդ ապօլ՚ան ամ Որդին Հիածին։

Տէր մեր Յն Ռն, որ զքո խաղաղութիւդ շնորհեցեր սքոց առաքելոցն փչմամբ՚ի նս, և զՀոգիդ յայտնապէս այսօր պարգևեցեր նց, որ զտրտմութիւն նց մխիթարեաց, և հրեղէն լեզուօք՚ի լեզուս նց հանգուցեալ. երաց զբերանս նց, խօսել յամ լեզուս։ Այս զամ մարդիկ՝ որ յաշտարակէն բաժանեալ էին, ՚ի բազմաստուած մոլորուէ միաւորեաց ՚ի մի ածգիտուի ճշմարիտ երեքանձնական զօրութեանդ, յամ լեզուս զմի Աստ փառաւորել ուսոյց. աւետարանին քարոզութիւնն ընդ տիեզերս, և նմին միայնոյ ծունր խոնարհեցուցանել, ոչ երեք հազարքն նորածնեալք յայսմ աւուր մկրտութիւն։ Ընդ որս և մեք նովին Հոգւով լուսաւորեալք, հաւատով զծունր խոնարհեցուցանեմք սքոյ Երրորդութեդ, և աղաչեմք միաբան ժողովեալքս։ Ապեա՛ յիս յանարժանս, որ զաղօթս ժողովրդեան քում քեզ մատուցանեմ առաջի սքոյ սեղանոյ քո։ Բաց Տէր զիմ մեղաւորիս շրթունս, ոչ զերանելի առաքելոցն, և լցո՛ Հոգւովդ, հաղորդել ամ շնորհաց՚ի քէն տուելոց ընդրելոց քոց։ Այս մի վն բաղում մեղաց իմոց արգելցես զողորմութիւն քո յինէն, որ յուսալով կամ առաջի քո, և հայցեմ յանբաւ գթութէդ, արժանի արա զծառայս քո աստուածային պարգևացդ, իմաստութեն և խորհրդոյ, հեղութեն և զօրութեն, գիտութեն և հանճարոյ և ածպաշտութեն և հոգ-

ւով երկիւղի քո լցո զիմ միտս, և սիրտ սէր, և միտս մաքուրս, և հոգի ուղիղ նորոգեա։ Որ նաւելոց նաւահանգիստ ես, ուղղեա զգնացս իմ 'ի ճանապարհս ամբիծս։ Խորհել միշտ յօրէնս քո, պահել զպատուիրանս քո, քարոզել զբանս քո, երկրպագել ՀՕՐ հոգւով և ճշմարտութիւն, և յաղօթել հոգւով և մտօք յանուն քո, ըստ անսուտ բանին զոր ասացեր, եթէ զոր ինչ խնդրիցէք 'ի ՀՕՐԷ իմմէ յանուն իմ, տացի ձեզ։ Յոր խոստումն և ես մեղաւորս յուսալով, աղաչեմ զտուօղդ բարեաց և ողորմութեցդ, որ շնորհես առաւել քան զոր ինչ խնդրեմք և իմանամք, կատարել 'ի բարի զաղօթս մեր։ Որ զախտացեալ բնութիս մեր յանախտ ՅԱԾՈՒԹԻԴ քո միացուցեր և նովիմբ կարեաց մերոց կցորդեցար, և զախտս մեր բժշկեցեր։ Լուր մեզ Ա.Ծ փրկիչ մեր։ Խոնարհեցո զունկն քո յերկրպագութի ժողովելոցս 'ի սէր եկեղեցի քո, ըստ նմանութե քոյոց ընդրելոց 'ի վերնատանն։ Արբեա զսոսա յՅԱՄ պղծութէ մեղաց, և առաքեա զՀՈԳԻԴ սէր 'ի միաբան հաւատացեալքս, զի բնակեսցէ 'ի մեզ, և լուսաւորեսցէ լուսով ՅԱԾՈՒԹԵԴ, և առաջնորդեսցէ մեզ ՅԱՄ ճշմարտութիւն, 'ի պահպանութի պատուիրանաց քոց, ամենագէտ արասցէ ՅԱԾԱՅԻՆ պատուիրանացդ, զոր խօսեցան մարգարէքըն և վարդապետք 'ի ձեռն ՀՈԳՒՈՅՆ սրբոյ, որ ուսուցանէ և զօրացուցանէ առնել զՅԱՄ։ Աղաչեմ զքեզ Տէր, մի վն բաղում մեղաց իմոց արգելցես զՀայցուածս նց, զի քո են փրկեալք և առ քեզ զձեռս համբառնան խնդրել զՀաշտութի։ Արդ ընկալ զծնրադրութի մաղթանաց սոցա, ոչ զնոր լուսաւորելոցն, և զՀամբարձումն ձեռաց սոցա ոչ պատարագ երեկոյին, և զաղօթս սոցա ոչ խունկ անուշ առաջի բարերար թագաւորիդ, և Հովանեաւ թևոց քոց ծածկեա զնոսա, պահելով յերևելի և յաներևոյթ թշնամւոյն, ոչ զի անարատ քրիս-

տոնէութիւն կացցուք յաշխարհիս, և արժանի լիցուք երկնային կենացդ ընդ ամ սիս, և գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր և սի Հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս։

Երրորդ Հարեան Դշ։

Որ 'ի վերս բղխեալ գաւազանին. 570։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏի աղաչեսցուք։ Տի ողորմեա։ Երէց։ Լրինէ։

Ամ ևս խաղաղութեամ։ Օրհնութիւն և փառք։

Ամ։ Ապա կարդան զերրորդ աղօթս սա Հոգին սրբ։

Որ եսդ Տի զօրութեաց, Ամ ճշմարիտ, աղբեր լուսոյ և կենաց, բղխեալ անքննաբար 'ի Հօրէ և Որդւոյ հրաշագործ սի Հոգիդ։ Զոր խոստացաւ սրբց առաքելոցն Յիսուս Ամ մեր, որ մնհուամբ զկապանս մահու ելոյծ, և սկիզբն մեղաց փակեաց'ի հուրն անշէջ, և 'ի խաւարն արտաքին, անլոյծ կապանօք անդ ամրափակեալ զպիղծ վիշապն իւրով ապստամբ զօրութիւն, և զարգելեալ հոգիսն. որ յԱդամայ, վերածեաց իւրով յարութիւն. և վերացաւ առ Հայր մերով բնութիւս հանդերձ։ Ամ 'ի լրումն ամ խորհրդոց, զքեզ նորոգող և կենդանարար սի Հոգիդ առաքեաց մխիթարիչ տրտմեցելոցս։ Որ խոնարհեցար Ամ յԱյ Հօրէ, և եկիր 'ի վերնատունն անտանելիդ երկնաւորաց, լցուցեր անճառելի խոնարհութիւն և շնորհք քո զընդրեալսն զոր առաքեցեր քարոզ ընդ ամ տիեզերս Յանին կենաց, որք լցին զտիեզերս ամ գիտութիւն քո Տի, և ծանուցին զտիեզերս ամ զմի ածութիւն քո աշխարհի, բառնալով զկռոց զսնոտի պաշտօնն։ Զնան սրբ աւաղանաւն զՀեթանոս յորդեգրութիւն Հօրն երկնաւորի, և արարին զամենեսեան երկրպագուս սրբ Երրորդութեդ։ Յամ տեղիս եդին զՀիմունս սրբ եկեղեցւոյ, և հաստատեցին սեղան փառաց քոց.

յորմէ կերակրեցին անմահական խորհրդովն զամ հաւատացեալս։ Օրերկիրս երկին արարեալ, երկնայնոցն զմարդիկ դասակից։ Եւ արդ Տի Ա.Ծ մեր, ողորմած և մարդասէր՝ ընկալ զպաղատանս մեր զոր հայցեմք 'ի քէն, հանգո՛ զհոգիս ծառայից քոց, ննջեցելոց մերոց, որք քև լուսաւորեալք հոգևոր ծննդեամբն քրիստոնեայ անուամբ արժանաւորեցան հաղորդութեան ճշմարտին մարմնոյ և արեան, հաւատով և ուղիղ դաւանութիւն փոխեցան յաշխարհէ, զորոյ և զյիշատակն կատարեցաք այսօր յուսով փրկական պատարագաւն յաւուր երևման քո Տի։ Տի ամենակալ, Ա.Ծ մահկանացուաց, և անմահից, արարիչ ամի, և 'ի հանդերձելումն յոյս ամ ծագաց երկրի, որ 'ի վերջին աւուրս տօնի մեծի պենդակոստէիս զուարճացուցեր գալստեամբ քո 'ի վերնատունն զժողովեալսն յանուն քո. լուր և այժմ ձայնի աղաչանաց մերոց, և յիշեա՛ զյառաջագոյն ննջեցեալսն, և հանգո՛ 'ի խորանս սրբոց քոց 'ի տեղւոջ լուսոյ։ Յիշեա՛ զաղօթս և զպաղատանս նոցա և զխոստովանուն որ 'ի կեանս և 'ի վաղճանի, և թողութի շնորհեա՛ յանցանաց նոցա, և արժանացո՛ սպասել հատուցման հանդերձեալ փառացն զոր պատրաստեցեր սիրելեաց քոց, և ընդ նոսին օրհնել զամենասքանչելիդ։ Եւ մեզ ժողովելոցս 'ի տաղաւար քո, երկրպագուաց քոց և տօնօղաց զօր ամենակեցոյց գալստեան քո, շնորհեա՛ զերկնային զխաղաղութիդ, և զնորոգումն հոգւոյ և մարմնոյ, 'ի հնութէ մեղաց ծնանել զմեզ վերըստին ապաշխարութիւն և արտասուօք, և զօրացո՛ զգաստութիւն և արդարութիւն՝ ընդ սրոց առաքելոցն 'ի բնակութի քեզ, զի մի՛ լիցի 'ի մեզ տեղի և մուտ չարին, սրբեա՛ զշրթունս ծառայից քոց, և զլեզուս լեզուօքն հրեղինօք. ընդ հոգևորսն հոգևոր օրհնութիւն օրհնել, և սաղմոս ասել յամ ժամ սրտիւ, և խոնարհ հոգւով զբանաւոր

պաշտօնս քեզ մատուցանել, և 'ի խորոց սրտէ արտասուալից պաղատանօք խնդրել զքաւութիւն։ Եւ զայմ զկեանս մեր պարսպեա՛ երկիւղիւ քո, 'ի չարին խորհրդոց, 'ի բանից և 'ի գործոց, և արժանի՛ արա 'ի հաճոյս քո կեալ, և ըստ կամաց քոց կատարել զկեանս մեր ճշմարիտ խոստովանութիւն և ջերմեռանդն զղջմամբ, փրկական խորհրդոյն հաղորդութիւն, քահանայական յաղարկմամբ, նուիրօք և պատարագօք առաջի սո՛ւրբ սեղանոյ քո յիշատակել։ Հանապազ առաջի անկեալ աղաչեմք զքեզ մարդասէր Տի՛ր սո՛ւրբ Հոգի, զի և զհոգւոց մերոց գընացս 'ի մարմնական կենացս պահեսցես անվերկիւղ անցանել և փրկել յօդային պիղծ այսոցն, առաջնորդելով յերկիր ուղիղ, և 'ի կեանսն արդարոց, ուր հոգիք սո՛ւրբն ուրախութիւն օրհնեն զքեզ։ Եւ 'ի միւսանգամ նորոգմանն 'ի գալստեան փրկչիդ զարթուցանել զամենեսեան 'ի ձայն փողոյն յորժամ ստանաս յարութիւն զայմ մարդիկ։ Լ սպառնալեաց գեհենին և աններելի տանջանացն զերծուսցես ըզմեզ, և խառնեսցես 'ի բանակս արդարոց քոց ընդ սիրելիս անուան քո, լինել ժառանգակից արքայութիւնդ։ Եւ մեք բանաւոր հօտքս և հաւատացեալքս 'ի քեզ օրհնեսցուք և փառաւորեսցուք զամենասո՛ւրբ զնորոգութիւդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ 'ի վճարել պօլսոյն ասէն Հարսկան գ.Զ։

Որ համարգոյդ ես Հօր և Որդւոյ. 576։

Եւ զվնեն շարականին կարդան զչորեսն նեբբեսելեան սրբոյն Նեբսեսի Լամբրոնացւոյն, զոր ասացեալ է 'ի փառս ամենասո՛ւրբ Հոգւոյն։

Ամիսիմ 'ի սիրոյ սրտիս բաղձանաց՝ նուիրել զբանս աղքատ մտաց իմոց՝ աւուրս մեծի։ Հանգանակեցէք տկարութիւն իմոյ զպարգևս աղօթից՝ հանդիսացեալ ժողովուրդք։ Տո՛ւք ինձ զտուեալն այս-

օր շնորհս աշխարհի. որպէս զի անվեհեր արկից զանձն իմ 'ի խորս խմաստից գիտութեան Աստ, և սեղանաւորեցից զանապական կերակուր՝ հոգւոց պարարիչ։ Զիր առատ հեղեալ այսօր 'ի յերկիր. մաղթեսցուք նշուլից նոր ճառագայթել 'ի հայեցուածս մտաց մերոց, և առաջնորդել ընդ շաւիղս ճծայնոցն հետևել բանից։ Ով սքանչելեացս. զոր ցանկային ընդ աղօտ ակնարկութիւն նկատել հրեշտակք, այսօր շնորհօք իջեալ՝ 'ի ստորին գաւառս սփռեցաւ։ Եւ ո՞վ զք ոչ յուսասցի՝ հաւատով 'ի պարգևս նոր վայելել։ Հոգին սբ՝ որում բերանաբաց կալով 'ի փափագման դասք սերովբէից և քերովբէից՝ զորքանութիւն նոր ոչ կարացին նկատել, յայսմ աւուր խակապէս իջեալ յագեցոյց զմարդիկ 'ի գիտութիւն անճառ խորհրդոց իւրոց։ Ընդ որս և ես սպասեմ յառաստութիւն նոր կաթիլս խմաստից ընդունել։ Արդարև ձգեաց 'ի փայտն կենաց մարդն զձեռն իւր, որ յառաջն 'ի բաց առաքեցաւ 'ի նմանէ. առ եկեր, և զյաւիտենականն անձին սեպհականեաց զկենդանութիւն։ Եւ ո՞ այսր շնորհի միջնորդ և մատակարար, ո՞վ այլ, բայց եթէ ՏԷր մեր ՅԻՒՐԻ. կեանքն, լոյսն, ճանապարհն, դուռն, հովիւն, քահանայապետն, յոյսն, միջնորդն, բարեխօսն, կարապետն։ Որ առանց ընդ երկինս երկնից ինքնիշխան զօրութիւն, և եմուտ հրաշափառապէս 'ի ներքին կողմն վարագուրին անճառելի հիացմամբ. և եդ յանդիման Աստ Հօր զառհաւատչեայն 'ի մարդկանէ բարեխօս վն մեր. ուստի առեալ փոխարէն զձիր առատ՝ տարածեաց յերկիր։ Յորմէ զմայլեալ արրեցաք, և զերկուանս տրտմութիւն նախամօրն յաւէտ մոռացաք։

Այսօր խաւարաւ պատրանաց աշխարհի ընկլուղեալքս՝ ընկալաք զլոյսն իմանալի պայծառացուցիչ հոգւոց՝ և առաջնորդ յերկիրն կենդանեաց։ Այսօր զգեստ թաղծութիւն՝ զոր ընկալաք 'ի հօրէն մերմէ

Ադամայ՝ մերկացաք. քանզի նորն Ադամ զարդարեաց զմեզ յոսկէուռն պսակեալ և պաճուճեալ։ Այսօր հուր սքանչելի՝ երկնաւոր բոցաճաճանչ նշուլիւք արտափայլեալ 'ի յերկիր՝ արծարծեալ կիզեաց 'ի մարդկանէ զփուշն, և զսաստիկ պատիժս մեղացն անիծից։ Այսօր լեզուաց հրեղինաց վիճակի գտեալ արժանի ազգ, որ հաւասար էր անասնոց անմտից, դարձեալ ստացաւ վերստին ըզշնորհն բանի, պատկերակից գտեալ արարչին իւրոյ։ Այսօր հնչիւն սաստիկ և քաղցր ցօղ Հոգւոյն ուրոտաց յերկիր, և զբարբառ անիծիցն՝ որ շարժեցաւ՝ դարձեալ փոխարկեաց յօրհնութիւն։ Այսօր հոտ բուրման անուշահոտ կնդրկի անապականութիւնն ծաւալեալ՝ զծուխս մահու մառախլապատ թանձրութիւնն յեղաշրջեալ յանմահութիւն հաստատեաց։ Այսօր զգալի պատարագի՝ զոր առաքեաց աշխարհս զգալի 'ի գաւառն իմանալի, որ նորոգեաց զտարր սորին զգալի 'ի ձև պատկերի աննիւթ քաղաքի։

Մեվ մեծի տուրևառութիւն շահի երկնայնոցն և երկրայնոցս։ Օ՛ի սոքա ետուն մարմին, և 'ի նոցանէ առին զՀոգին։ Տունս Ադամայ ընծայեաց զՔՌ, և տուն ԱՅ հատոյց սմա փոխարէն զմխիթարիչ սբ Հոգին։ Պարդիկ ետուն զմարդն՝ ԱՅ, և Ա՚Ծ ետ զԱ՚Ծ՝ մարդկութես։ Այս է տուրևառուն՝ ԱՅ արդարութիւնն քարոզ։ 'Նախ 'ի մէնջ 'ի ծառայիցս պատարագ հնաղանդութիւն. և ապա 'ի ՏԷՆ պարգևք խաղաղութիւն։ 'Նախ 'ի մէնջ խաղաղութիւն ՔՌ, որ քակեալ զմիջնորմն ցանկոյն՝ արար զերկոսեանն մի. և ապա յԱՅ աւետեաց հնչումն, որ աւետարանեաց խաղաղութիւն հեռաւորաց և մերձաւորաց։ Յառաջագոյն յՈրդւոյ նուաճեալ բնուիս՝ զկամն Հօրն 'ի քաղցրութի դրդեաց. և ապա եկեալ Հոգին՝ զերկրաւորքս 'ի հանդէս երկնայնոցն խառնեաց։ 'Նախ ՔՌ մահու խաչի հնաղանդեալ՝ ըզթշնամուն յանձն իւր նահանջեաց. և ապա Հոգին

տկարութեամբ մերոյ հասեալ 'ի թիկունս՝ առ Հայր բարեխօսեաց։ Խորհուրդ լայն և ընդարձակ, առաւելութիւն գիտութեան Աստուծոյ, եղբարք, տեսանի. զի լերինք են արդարութիւն նր, և իրաւունքն խորք բազումք. որպէս և վկայեաց մարգարէն։ Պօղոս մաղթէ զայս իմաստից Հոգւոյ՝ աշակերտացն ընդունել, որ հիացուցանէ զքննողս, և յաճախէ զլիզձս փափագանաց՝ որ առ Աստծ։ Ա՛ռ ի՞նչ մարդանալն Որդւոյ. և վասն էր ընդ մարդանալն ոչ եղև փրկութիւն աշխարհի։ Այր աղագաւ անպարտականին խաչն նախատանաց, և ընդէր ոչ յետ այնորիկ մարդիկ կատարեալք։ Վասն էր ընդ Որդւոյ շրջեալ և բնակեալ աշակերտացն՝ և անիմաստ մնացեալ. և վասն այր պատճառի միայն ընդ իջանել Հոգւոյն այնքան շնորհիւ զարդարեալ պսակեցան։ Ա՛ռ ի՞նչ Աստի այնքան մեծամեծ նշանաքն ոչ զոք հաւանեցուցեալ. և Պետրոսի յայսմ աւուր միով բարբառով զթիւ երից հազարացն աշակերտեալ։ Զոր քննել արժան է, և զգանձս իմաստութեանն Աստ յերշտեմարանս սրտից ամփոփել, առ 'ի կարող լինել նախ սրտիւ հաւատալ յարդարութեան, և ապա բերանով խոստովանել զփրկութեան։ Զանազի փրկագործութեանս յեղանակ ոչ է զօրութիւն, այլ իրաւամբք և արդարութիւն։ Այլ զի ընդ ամենակարող զօրութիւնն Աստ՝ և ամենաբաւական ողորմութեանն յերկինս և յերկրի հաստատեսցի։

Զանազի այն որ արար զմարդն 'ի պատկեր իւրոյ բարերարութեամբ բարի՝ և ետես զնա 'ի նախանձուէ բանսարկուին դաւաճանեալ և մեռեալ, ըստ արդար իրաւանցն ոչ կամեցաւ զպատրանաքն ըմբռնեալն թողուլ 'ի ձեռս որսողին։ Ասաց առ Զանն համագոյական. Էջ, հաղորդեսցս ընդ բնութիւնն՝ զոր ստեղծաք 'ի բարի. մի արդեօք բնաւորապէս բղխէ զծուխս չարութեանն՝ որ առաջի իմ բարդի։ Զանիր, զի թէ ըստ բնական կրիցն տկարանայ առ օրէնս իմ,

անմեղադրելի է 'ի պատուհասէն՝ զոր նա սահմանօքն ածէ 'ի վը նորին։ Իսկ եթէ օտար 'ի բնութէ, և եկամուտ ունի զայն արկածք, զպատրողն յանդիմանեալ դատապարտեա, և զնա ողորմութիւն և գթութիւն նորոգեա։ Այս պատուէր առեալ 'ի Հօրէ Իսանն՝ հաղորդեցաւ ընդ մարմինս. և մարմինս հաղորդեցաւ ընդ Աստուծոյ, խառնումն անճառ. և յատկութիւն էութեց անշփոթ։ Այլ զի զսպառընթաց մարմնոյն՝ անձամբ անձին փորձեալ ծանիցէ։ Անկաց նովաւ զամս երեսուն. և ոչ խորհեցաւ օտար 'ի բնութէն 'ի ներգործութի։ Անկն 'ի Յորդանան՝ նուիրեալ զամենակատար մաքրութիւն Հօր, և դաւանեցաւ 'ի նմանէ հաւասարապատիւ Որդի սիրելի և փառակից Հօր և Հոգւոյն Ճշմարտի։ Ա արեցաւ 'ի Հոգւոյն առ բանսարկու թշնամւոյն 'ի մարտն հանդիսի. և ծանեաւ զմեքենայս նետից օձին թունաւորի, որ պատրէր զսոսա ըստ բնութեն օրինի 'ի խոտորումն մեղացն վրէի։ Պահեաց 'ի կերակրոցն հաւասար դասուց արդարոցն գնդի. և թոյլ ետ մարմնոյն շարժիլ ըստ հարկաւորն իւր ըղձի։ Իսկ թշնամին առընթեր կացեալ սպասէր. և որչափ նա անձնիշխան կամօք 'ի փափաք կերակրոցն ոչ ձգտէր, և ոչ զմեքենայսն ձգել 'ի նպատակն պատկառէր։ Նա յորժամ շարժեցաւ, զնետս սրեալս 'ի պատկանդարանէն՝ ձգել 'ի Տէրն յուսացաւ։ Հաց, ասէ, արա՛ զքարինսդ զօրութիւն քո, որ զայդչափ ժուժկալութի պահոց տոկացեր. և լեր արարիչ հակառակ Աստուծոյ։ Նա լուեալ, եթէ բանիւ Աստուծոյ կեայ մարդ առաւել քան հացիւ՝ է գրեալ, գրովք զնա հնարէր գողանալ։

Յայնժամ ծանեաւ զՀաղբսն, խայտառակեաց ըզմեքենայսն, պատառեաց զպարուրեալ թակարդն՝ որով որսայր զմարդիկ։ Մեկնեաց առաջի Հօր իւրոյ և հրեշտակաց. և ինքնիշխանութիւն 'ի բաց վարեաց զպատրողն՝ պատրած բնութես օրինօք։ Ան-

նուկն Դանիէլ արդար դատեցաւ դատաստան. յամօթ արար զծերսն չար՝ պատրիչ մարդկութեաս, որք զմեղս իւրեանց սմա համբաւէին։ Ա՛յ հնացեալ, ասէ, աւուրբք չարութեան, այժմ եկին հասին մեղք քո՝ զոր գործէիր յառաջագոյն. զի դատէիր դատաստան անիրաւութեան, և զանմեղ բնութիւն մարդկան՝ քեզ կցորդս դատապարտէիր։ Ապականեալ քո չար պատրեաց զքեզ. և ախտ մարդատեցութեան շրջեաց զսիրտ քո։ Ա՛յսպէս խաբէիք զորդիս մարդկան. և նոքա առ երկիւղի հաւասարէին կամաց ձերոց. բայց ոչ և Արդի երկնաւոր Հօրն կալաւ յանձին զանօրէնութիս ձեր։ Այս ասելով, և առ ոտն կոխելով զօձն ծերացեալ՝ յայտ արար զառաջին յաղթութիւն, և զանմեղութիւն բնութեան առաջի Հօր իւրոյ և հրեշտակաց։ Յայնժամ մատեան հրեշտակքն, և պաշտէին զնա հարկաւորօքն, յորժամ յաղթեաց չարին բնաւորականօքն. և արդարացեալ բնութիւնս՝ տիրեաց 'ի վէր դիւացն հակառակորդաց՝ զօրաւորն բազկօք։

Արդ՝ քանզի նա միայն գտաւ անփորձ 'ի չարէն՝ և հաճոյ Ա՛յ. վասն այսորիկ սկսաւ կոչել զմարդիկ յապաշխարութիւն կենաց՝ արքայութեան յուսով։ Իսկ նոքա խաւարեալք 'ի պատրանացն՝ դժուարէին հետևել կոչողին. և ծանրանայր սահեցելոցն յերկիր՝ նայել ընդ երկինս։ Այլ պատրեալքն 'ի ցանկութիւն աշխարհիս՝ ոչ ախորժէին զփառս վերին. և բնութիւնքն ձգել անմարթ էր՝ անձնիշխան զնոսա ստեղծողին. և նշանօքն և վարդապետութիւնքն սակաւք եկին 'ի հաւանութիւն։ Ապա զի՞նչ առնէր. ով սքանչելեացս. քանզի պատժոց պարտական էին մարդիկ, և պարտ էր զպատիժն հատուցանել, և ապա յարդարութէն Ա՛յ ողորմութիւն ապժանի գըտանել, սա՝ որ անպարտականն գտաւ առաջի Հօր իւրոյ, 'ի գործ արկեալ զբազմապատիկ խմաստութիւն՝ մեռաւ պարտականացս ամենեցուն փոխանակ.

և ջնջեալ պատառեաց զձեռագիր մերոց յանցանացն։ Այլ 'ի գժոխս՝ որում ոչ էր հնար ըմբռնիլ 'ի մահուանէ. և արձակեաց զմեռեալսն։ Ակն առ կենդանիս նոյն ինքն՝ և հաստատեաց զնոսա։ Եւ զորս յանցանօքն Ադամայ 'ի ներքոյ էին դատապարտուեալ մահու, շնորհօք անմեղութեան իւրոյ վերածեաց յարդարութիւն կենաց, և յերկիրն կենդանեաց։ Զանազի այսպէս իմանամք 'ի Պօղոսէ յայտնեալ զմեծ խորհուրդն ՝ածպաշտութեան որ երևեցաւ մարմնով. արդարացաւ հոգւով, յայտնեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ 'ի հեթանոսս, հաւատարիմ եղև յաշխարհի, և համբարձաւ փառօք։ Եւ մտեալ 'ի ներքին կողմն վարագուրին՝ ընծայեաց պատարագ Հօր՝ քահանայն մեծ զպատուականն իւր արիւնն։ Ծանոյց և զդաւաճանողին պատրանս, և բարեխօսէր առնել զխաղաղութիւն ընդ մարդկան։ Լսէր Հայրն բարի հաճեալ ընդ սքանչելի գործս Որդւոյն սիրելոյ, և լուծեալ զկնիք դատապարտութեան Ադամայ հօրն նախնոյ, ետ 'ի նա զՀոգին, սփռել 'ի վերայ արեամբ գնեալ իւր հօտին, և լուսաւորել զմիտս ամենեցուն 'ի յոյսն վերին։

Յայնժամ առեալ Միածինն զմխիթարիչն՝ ցօղել 'ի Սաղիմ, և ձիւնացոյց 'ի նա զգումարեալ թագաւորսն՝ ըստ նախագուշակ երգողին։ Որ եկն և բնակեցաւ 'ի սիրտս նց. և լուսաւոր արար զլայնութիւն և զերկայնութիւն սիրոյն Քրիստոսի։ Եւ զի շնորհ էր ձրի փոխանակ մահուն Քրիստոսի, յաղագս այնորիկ հաւասարապէս յարժանաւորս և յանարժանս տարածանի։ Ուստի և 'ի միոյ բարբառոյն Պետրոսի անձինք երից հազարաց այսօր աշակերտին։ Ապա յիրաւի վկայեաց Դաւն՝ սքանչելի գոլ զշնորհ աւուրս մեծի։ Զի ոչ քան զսերմանելն՝ ժողովելն է ախորժելի, նոյնպէս և ՝ամ սերմանց խորհրդոյն Քրիստոսի պտուղն 'ի յայսմ աւուր կթի։ Այս է Հոգին սքանչելի, որում վկայեաց՝ ինքն

ուսուցանել մեզ, և յիշեցուցանել զամ առ 'ի յինքենէ զասացեալսն։ Այս ցօղ քաղցրութեան զուարթացոյց զբոյսս բանիցն Քո։ և օրհնեալ պսակեաց զամս տնօրինական իւր գործոց։ Ա՜ ո այնորիկ աղաղակէ եկեղեցի. ձմեռն էանց. այգիք մեր ծաղկեցին, և ետուն զՀոտ։ Յայսմ առաւօտու հայեցաւ Հայրն երկնաւոր 'ի յերկիր. արբոյց զսա յորդառատ գետով սքանչոյն. և փթթեալ ծաղկեցոյց զզանազան բոյսս առաքինութեանց 'ի բազմապատիկ տնկոց արմատոց. որպէս ասէ մարգարէն։ Ահա ձիր՝ որ ոչ չափի. և պարգև՝ որոյ ոչ կշիռ գործոյ զուգակցի։ Ահա տուր՝ որոյ իսկութի բնութեանն ոչ պարփակի. և շնորհ՝ որոյ ոչ զեղումն գերաղանց մտաց սահմանի։ Ահա ողորմութի առատ, որ ամ թագաւորութիւն աշխարհիս հաւասարեալ՝ փոքր գտանի. և միթարութի՝ որոյ ոչ ուրախութի մարմնաւոր սքաղմանց լծորդի։ Պանդի՞ ոք կարաց ընդ տիրելն աշխարհի՝ և զանապականութիւն ստանալ. կամ որո՞ւմ թագաւորի եղև ձեռնարկելի զմահ 'ի կեանս փոխել. կամ ո՞ր երանութի մարմնաւոր՝ կարաց զկեանս յաւիտենականս ընդգրկել։ Իսկ նա յիշանելն այսօր 'ի վե՛ր դասուց առաքելոցն՝ զօրացոյց զբազուկս նց, զայսոսիկ հանուրց տիեզերացս բաշխել։ Պանդի սովաւ նց առլցեալ՝ ստուերաւ զհիւանդս բժշկեցին, թաշկինակաւ զցաւս փարատեցին, ձեռօք զմեռեալս յարուցին, զկաղս գնացուցին, զկոյրս լուսաւորեցին, առաւել զՀոգւոց աչս՝ քան թէ զմարմնոց յերկինս հրաւիրեցին. անվախճան փառացն ժառանգաւոր զմարդիկ արարին։ Ահա ապա յայտ եղև, եթէ ոչ ինչ յերկրաւորացս երկնայնոց տրիցն գտաւ զուգահաւասար։ Որ ոչ միայն 'ի բանականացն եղև սմա ազգ ներընդունակ. այլ և անշունչ տարերք գեր 'ի վերոյ մարդկան գտան սովաւ զօրացեալք։ Որ և նոյն ինքն յիշանելն՝ նախ զտունն ելից սքանչելապէս, և

ապա հանգեաւ յոր նստէինն սիրողապէս։ Եւ քան-
զի ասէ։

Եւ 'ի կատարել աւուրցն պենդակոստէից՝ էին
միաբան ամենեքին 'ի միասին։ Եւ եղև յանկար-
ծակի հնչիւն յերկնից եկեալ իբրև սաստիկ հող-
մոյ. և ելից զամ տունն՝ յորում նստէին։ Եւ
երևեցան նց բաժանեալ լեզուք իբրև 'ի հրոյ, և
նստաւ իւրաքանչիւր 'ի վր նց։ Եւ լցան ամենե-
քեան ոգւով սրբով. և սկսան խօսել յայլ և այլ
լեզուս, ոպ և ոգին տայր նց բարբառել։ Միաբան
էին ամենեքեան 'ի միասին՝ ասէ, ոպ զի ցուցցէ՝
եթէ ոչ երկոտասանքն միայն, այլև Աստծին կոյսն
ընդ նս, հանդերձ կանամբքն՝ որք պաշտէին զն 'ի
Գալիլեայ՝ և տեսողք էին յարութեանն։ Ընդ որս և
եօթանասնից գունդք հանդերձ ամ ծանօթիւք։
Արդ եկն 'ի վր նց ոգին սբ՝ ըստ նախ խոստմանն
Յն, որ ասաց։ Ահա ես առաքեմ զաւետիս օր
իմոյ 'ի ձեզ. և դուք նստարուք 'ի քաղաքիդ Երէմ,
մինչև զգենուցուք զօրութիւն 'ի բարձանց։ Եւ
հնչիւն որոտման եհար, որով ցուցանէր զա-
ռաւելութի հեղմանն։ Գարձեալ զի և նոյն ոգի
էր, որ 'ի սկզբան շրջէր 'ի վր ջուրցն. ելից զտունն
ընդ իմանալի զօրութեն և զգալի տեսակ հրոյն 'ի
սքանչացումն տղայաբարոյիցն։ Եւ ապա բաժանե-
ցաւ 'ի հրոյն յայնմանէ լեզուք. և հանգեաւ 'ի
վր իւրաքանչիւր ումեք 'ի նոցանէ. որով նշանակէր
զպարգևս շնորհի այլատարազ լեզուախօսութեն։
Ուստի և ընդ հանդչելն 'ի վր նց՝ զգալի մարմնոյն
զգայարանաց տեսանելի լեզուքն հրեղէնք, միտք
նց իմանալի զօրութիք իմաստնացեալք՝ սկսան յայ-
լատարազ խօսս զլեզուսն շարժել։ Ըստ որում ասէ.
խօսէին յայլ և այլ լեզուս, ոպ և Ոգին տայր նց
բարբառել։ Ոչ եթէ վ զի լեզուացն շնորհ նախա-
մեծար էր, այլ քանզի առընթեր ոչ գոյր այլ
նշանակ, զշնորհն՝ որով զօրացանն, հրատարակել։

Իսկ յայլատարազս խօսելով՝ զբովանդակ ամբոխ
քաղաքին ած 'ի վր նց հիացեալ. ըստ որում և
ասէ, եկն միաբան ամ բազմութին, և խռնեցաւ.
և սքանչանային ամենեքեան զարմացեալք. և այլք
վն սքանչելի այլաբանմանն ընդ խաղ արկեալ ա-
սէին, թէ արբեալք իցեն: Ուրդ՝ վասն ամենե-
ցուն այսպէս լինելոյ շնորհիս, ոչ ներգործեաց
'ի նս Հոգին ընդ իջանելն՝ զխոստումն Որի, այլ
զլեզուսն: Զի նա ոչ ասաց՝ եթէ 'ի լեզուս խօսիք
Հոգւովն. այլ՝ եթէ ուսուսցէ ձեզ, և յիշեցուսցէ
ձեզ զամ, զոր ինչ ասացի ձեզ: Ոչք թէ զայս ա-
ռեալ էին 'ի սկզբանն, ոչ այնպէս ամբոխեալ
էին և զբազմութին 'ի նշաւակ տեսութեն իւրեանց
այլատարազ խօսիւքն ձգել: Ա ասն որոյ ամենի-
մաստն Նախ որպէս զմանկունս 'ի խնջոյս խաղուց՝
զարմանալի փոփոխմամբ շփոթեաց զնոսա: Զի
ոչք երէկ և այսօր արք Գալիլեացիք գուեհիկք և
շինականք՝ ահա ասեն՝ իբրև զիմաստուն հելլենա-
ցիս ճարտարաբանեն. և այլք 'ի պարթեւական
տարաշխարհիկ բարբառս նոցա պատասխանեն:
Պետրոս՝ որ 'ի Կափառնաում ընեալ, լսեմք՝ զի
ընդ Հռովմայեցւոց լեզուն խրոխտալով արշաւէ:
Եւ Փիլիպպոս՝ որ 'ի Բեթսայիդա Գալիլեացւոց՝
Աբրաբացւոց բարբառովն զխօսս իւր յօդէ: Յով-
հաննէս որ 'ի Նազարէթ ընեալ՝ զիարդ Կիլիկեցւոց
ձայնիւն զմեզ հարցանէ: Եւ Թովմասու սոքա լսեն,
որ Յեթովպացւոց լեզուն զբանս մարգարէից յի-
շեցուցանէ: Թադէոսն այն տխմար՝ տեսէք, որ-
քան վայելուչ մեծաց Հայոց բառիւքն զբանս իւր
յօդէ: Եւ Բարդողոմէոս մանուկ՝ իբր թէ 'ի Սարս
ծնեալ՝ զնոցին խօսսն հնչեցուցանէ: Ո՜վ սքանչե-
լեացս. 'ի զանազան գաւառս ծնաք, և աշխա-
տութեամբ զբարբառս նոցին վարժեցնք: Եւ ահա
սոքին՝ որք ոչ տեսին զայն քաղաքս՝ անաշխատ
զնոցին ձայնս հնչեն: Մեծ են ասեն՝ արուեստք

սքանչելեացս. և թէ առ ի՞նչ ունի աւարտել՝ ոչ կարեմք նկատել։

Յայնժամ յարուցեալ Պետրոս հանդերձ մետասանիւքն համբարձ զձայն իւր. և սկսաւ տարակուսանացն լուծումն շնորհել։ Ա՛ռք հրէաստանեայք, և ամենեքին որ բնակեալ էք Յերուսաղէմ. այս ձեզ յայտնի լեցի, և ունկն դիք բանից իմոց։ Ոչ է արբեցութիւս այս գինոյ յերիւք ժամու աւուրս. այլ բաժակ է բերկրութե, և առհաւատչեայ անապականութե, մարգարէիւք նախագուշակեալ, և յայսմ աւուր խորհուրդն'ի լրումն աւարտեալ։ Ո՞վ օրէնսուսոյցք, և մարգարէից աշակերտք. այս այն է 'ի Յովելեայ ասացեալն. զոր միշտ ընթեռնուք՝ կատարեցաւ։ Արանզի ահա յաւուրս յետինս եհեղ Ա՛ծ յՈգւոյ իւրմէ 'ի վերս զանազան հասակաց մարմնաւորաց, և մարգարէանամք։ Ա՛յս Յե նազովրեցի՝ որ երևեցաւ առ ձեզ նշանօք և արուեստիւք, և տարապարտ խաչեցաւ, ել յերկինս՝ և նստաւ ընդ աջմէ Ա՛յ. և զայս պարգևս ընկալեալ Հոգւոյն Սրբոյ 'ի Հօրէ, սփռեաց 'ի վերս մեր։ Սա՝ յորժամ համբառնայր յերկինս փառօք՝ մեզ ուխտեաց. և մնեալ յերկինս՝ Հօր և Հոգւոյն հաւասար նստեալ՝ զայս ասաց։ Ես զգործսն՝ զոր ինձ հաւատացիք՝ կատարեցի յերկրի. զանուն Հօր իմոյ փառաւորեցի առ մարդիկ. զեղծեալն'ի մեխանաց չարին զպատկերակից մեր՝ ընդ բնութի ածութես մեր խառնեալ՝ սրբեցի սքանչելապէս։ Օմահ իմ փոխանակ ողորմելի և տառապեալ ազգի մարդկան տուեալ՝ զերծուցի զնոսա յանիծից. և այժմ նովին մարմնով եկեալ՝ առնում զերկրպագութի յերկնաւորացս։ Ա՛յսուհետև քեզ եհաս ժամանակ գործոյ, ով փառակից իմ Հոգի. պարտիս զքոյդ մարդասիրութիդ ցուցանել 'ի յերկրի։ Ա՛յսուհետև քեզ ապաստան առնեմ զանուն ածութես մեր յարգել առ մարդիկ։ Հայր իմ ներեաց և եթող զպարտան՝ որով դու

խափանեցար 'ի հեղլոյ առ նա, մարմնոյ իմ պատարագաւն. սա առ զիս առհաւատչեայ 'ի նոցանէ, և տայ նոցա զքեզ խաղաղութի։ Այլ այժմիկ սիրոյ աղբիւր՝ սիրով առ նա. և մխիթարեա զորս 'ի պանդխտութե վայրն՝ նժդեհ և անցաւոր կենաց տառապին։ Դարձո զնա 'ի նանրութեցն. զոր 'ի զուր խռովեցուցանէ թշնամին, նայել յայս բազմապատիկ օթեվանս՝ զոր պատրաստեցաք նոցա։ Դաշխեա նոցա իմաստութի առատ, զի մի եղեռնագործն մոլորեցուսցէ զնա։ Հաղորդեցայ կարեաց նոցա, և ծանեայ փորձիւ, զի տկար և դիւրակործան բնութե են վիճակեալ. վա այնորիկ աղաչեմ, անմեկնելի լեր 'ի նոցանէ. և զօրացո զնա ընդդէմ ամ փորձանաց։ Հանջեա զկամս մարմնոցն, և զօրացո զկամս մտացն։ Դեզ տամ զնա. քեզ յանձն առնեմ զնա. զքեզ խոստացայ նոցա, և այժմ 'ի քեզ ամրափակեմ զամենեսեան. որպէս զի մի լեցի 'ի նանիր հեղումն արեան իմոյ, որ վա նոցա։ Առատացո 'ի նա, ով համագոյակից իմ Հոգի՝ ըզշնորհս բժշկութե, զմարգարէութի, զխորհելն ըզվերինն, զատելն զներքինն։ Աս թէպէտ և բաղում անգամ խօսէի զճառս արքայութեն երկնից, ոչ մատուցանէին զունկն սիրով՝ առ 'ի լսել։ Այլ յորժամ բժշկութիս կատարէի, մեռեալս յարուցանէի, կաղս գնացուցանէի, կոյրս լուսաւորէի, ամենեցուն սէրն առ իս աճեալ առատանայր։ Օհաց հոգւոց զբանս իմաստութե տայի, և ոչ ոք զգաստանայր։ Իսկ յորժամ զհաց մարմնոցն առատապէս ետու 'ի յագումն նոցա, այնչափ յորդորեցան 'ի սէր իմ, մինչ զի կամէին զիս յափշտակել, և թագաւոր զիս կացուցանել։ Այս է ճանապարհ մտաց աղգի մարդկան, զոր փորձեցի. անկարացեալ են՝ զայս նոցա խոստացեալ վերին բարեացս խորհել։ Ոչ են ծանօթ երկնաւոր փառաւորութես. այլ միշտ ընդ երկիր յածին. և կարծեաք

ունին զայս ճշմարտութիւն. և այն է համարեալ առ նա կեանք վայելուչ։ Ա՛ռ որոյ դու զողայամտութիւն նոցա նախ նշանօք և սքանչելեօք զարմացո՛, և զկարծիս նոցա՝ ի հաւատս հաւանութեան բժշկութեան շնորհիւն ուղղեա։ Ա՛ի արգելցես զառատութիւն քո շնորհս, ՝ի փառս և ՝ի գովեստ ածութիւնս մեր բաշխել։ Ա՛ենծ է, զի ոչ երկինս՝ նոյնպէս և երկիր լցցի փառօք ածուենս մեր. և ոչ զհրեշտակս՝ սոյնպէս զմարդիկ ստասցուք անուանս մեր օրհնաբանիչս։ Ոչ է զարմանք, եթէ զմեր արարածն մոլորեալ՝ մերով բազմապատիկ զօրութեամբս առ մեզ նուաճեսցուք։ Ա՛յդ՝ էջ աղաչեմ էջ, զի պաշարեալ է տարակոյսն զնա։ Փոքր ինչ ՝ի տնօրէնութեանս մահուն մեկնեցայ. և երկունք ոչ ծննդականի պաշարեաց զիմ աշակերտս, մինչ երագեալ զյարութիւն՝ մխիթարեցի զնա։ Ա՛ինն ՝ի մետասանիցն ոչ էր անդ. և տասանցն վկայելոյ ոչ հաւատայր վասն յարութեանն, մինչև դարձեալ յայտնեցայ նոցա. և զխոցուած կողիցս՝ հաւատ նմին մտացն ետու շօշափել։ Ա՛յժմ իմ ճանապարհ արարեալ ընդ երկինս, մի՛ կարճմտուի նոցա գայթակղեսցի ՝ի մխիթարութեանս քո յուսոյդ։ Ա՛ռ որոյ երագեա՝ ՝ի մխիթարել զորդեակսն իմ և զաշակերտսն։ Գնա՛ հանգիր ՝ի նա, ոչ խոստացայ նոցա. և վարդապետեալ յիշեցո՛ նոցա զամ առ յինէն ասացեալսն։

Յայնժամ սլացեալ ամենակարն զօրութիւն, փրկականն առատութիւն, հեղութեան աղբերն, մարդասէր շնորհն, հեղումն առատութեանն Ս.յ, կենդանարար բղխումն քարոզեալ ՝ի մարգարէից՝ անցանէր ահեղ որոտմամբ ընդ դասակարգութիւս անմարմնականացն պարուց. և սքանչացեալ պակեան հիացմամբ նահապետութիւնք երկնաւոր զօրացն։ Ա՛ռ զի զոր ցանկային ընդ աղօտ տեսանել, նայեցան խոկական էութիւնն դիմեալ ՝ի վերայ ազգի մարդկան սփռեալ։ Ա՛ռանցի էջ բոլորովին անձնաւորութիւն

Հոգւոյն սրբոյ այսօր 'ի դասս առաքելոցն գնդի, ոչ միածինն 'ի յարգանդ կուսին։ Այլ որ եկն, այլ ոչ մեկնեցաւ. այլ մնաց յեկեղեցի Քրիստոսի. ըստ անսուտ խոստման իւրն փեսայի, որ ասաց. ընդ ձեզ բնակեսցէ, և ընդ ձեզ եղիցի յաւիտեան։ Որ և զօրացոյց այսօր զառաքեալսն, և նոցա մատակարարութիւնն զընդհանուր տիեզերս։ Զի և սմա առաւել քաղցրացաւ ճաշակ մարդկան փրկութիւնն, ընդ որս եկաց և բնակեցաւ 'ի նոսա։ Ուստի և Պետրոս կրելով յինքեան զՀոգին, զստելն Անանիայի՝ ոչ մարդկան տայր, այլ Աստուծոյ։ Ընդէր ասէ՝ եղիք 'ի մտի փորձել զՀոգին Աստուծոյ՝ զիս կամելով պատրել. ոչ մարդկան ստեցիք, այլ Աստուծոյ։ Որոյ շնորհն՝ 'ի դնելն զձեռս առաքելոցն՝ հանգեաւ 'ի վրայ Ստեփանոսի. որ և անդէն զօրացաւ առնել նշանս և արուեստս մեծամեծս։ Այս արդարև ոչ թագաւոր եկեղեցւոյ՝ որոշէր զՊօղոս և զԲառնաբաս 'ի գործ բանին իւրոյ սպասաւորութեանն։ Այս զոմանս ընդրեաց յառաքելութիւն, զոմանս 'ի մարգարէութիւն, զայլս 'ի հովուութիւն և 'ի վարդապետութիւն։ Ոչ Մատթեայ զառաքելութիւնն վիճակեալ, և Ագաբեայ և Տիմոթեայ՝ զմարգարէութիւնն, և երիցանցն Եփեսոսի եկեղեցւոյն՝ զհովուութիւն և զվարդապետութիւն։ Զգոյշ լերուք ասէ՝ հօտիդ յորում եդ զձեզ Հոգին սրբոյ տեսուչս և վարդապետս։ Այս արձակեալ համարձակեցոյց զլեզուս նիւթեղէնս՝ կոչել հայր զԱստուծ. որ նստի 'ի կառս հրեղէնս անմարմին բանականացն։ Զի առաք զՀոգին որդեգրութիւն, որով աղաղակեմք, աբբայ, հայր։ Զոյն ինքն Հոգին վկայէ հոգւոյս մերոյ՝ եթէ եմք որդիք Աստուծոյ։ Այս տայ ուսումն բան իմաստութիւն, այլում բան գիտութիւն. միւսումն հաւատք զլերինս փոփոխելոյ. այլում զօրութիւն՝ սքանչելի գործս կատարելոյ։ Այս օծանէ զմիտս մեր՝ ըստ Յովհաննու. և առնէ քրիստոնեայս, և քրիստնկալս. և յայսմ օծութիւնէ զօրանամք

գիտել զնա՝ Այս լուսաւոր առնէ զաչս սրտից մերոց՝ գիտել զայս կոչման մերոյ, և զմեծութիւն փառաց ժառանգութեան, և զլայնութի և զերկայնութի սիրոյն Քրիստի։ Այ ո՞ որոյ արհամարհեցաք զերևելիս. և փափաքեմք յանտեսանելիսն։ Այլ Հոգւովս՝ Քրիստի՝ մեզ բնակեալ մեռոյց զզգայարանս մարմնոյ՝ հեշտութեան մեղաց. և կենդանացոյց զբանական հոգիս՝ արդարութեան խորհրդոցն յուսով։ Որով զօրացեալ կոխեցին մարդիկ զնեղութի. զհալածանս, զսով, զսուր, զոր կանս և զհանդերձեալսն. պայծառացեալ Հոգւովն՝ ի գիտութի սիրոյն Քրիստի։ Այ՝ որ քննէ զխորս Աստ՝ քննէ և զսիրտս մարդկան. և տեսեալ զտկարութի բնութեան՝ ի թիկունս հասանէ տկարութեան մերում. և բարեխօս լինի՝ ի հեծութիս անմռունչս վասն եկեղեցւոյ առ Աստ։ Այլ ինքն սիրողացն զԱստ յամ գործս բարիս գործակից լինի հանապազ։ Ամենեցուն կամի զփրկութի, ամենեցուն սպասէ հաւատոց. ոչ զի՝ ի նուիրելն՝ զհաւատոյ սերմանեսցէ՝ ի նս զշնորհս և զզօրութիս հոգևորս։

Կամիս գիտել զչափ սիրոյ դորա առ մարդիկ. յաբեաց՝ ի կառս ներքինոյն, ոչ երբեմն փիլիպպոս։ Տես թէ ո՞չ միով հաւատով հարցմանն՝ տուաւ Հոգին փոխանակ։ Տէր, ասէ, աղաչեմ զքեզ, վասն ի՞նչ ասէ մարգարէն զայս, թէ վասն այլոյ ուրուք։ Դուռն եղև ուղիղ հարցումն մտից Հոգւոյն յանձն ներքինոյն, և պատրաստեաց տեղի բանիցն փիլիպպոսի, մինչ երթայր ջրոյն առ ընթեր. և իջեալ Հոգին ուսուցիչ ներքինոյն, աւելորդ համարեցաւ այլ աշխատ առնել զփիլիպպոս։ Այս է Հոգւոյն սոյն պաշտպանելն աշխարհի. այսքան է նր միութարելն զմարդիկ։ Ոչ զանթովպացին խտրէ. ոչ զհեթանոսս անարգէ. ոչ զհրեայս յարգէ. ամենեցուն հաւասար զձիրն ընձեռէ։ Այլ զհաւատս յօժարութեամբ սրտի՝ նիւթ շնորհին իւրոյ՝ ի մէնջ տալ փափաքէ։ Այլ՝ ի նոյն փայլատակեալ ջահս

զանազան շնորհի՝ զեկեղեցւոյ մանկունս ճառա-
գայթէ։ Այլ գրգեալ զնա շնորհօք՝ առ սէր Հօրն
ձգէ 'ի հեշտուէ զբաղմանց աշխարհի։ Զի տղայ-
ոց խաղալիկ՝ նշանքն և լեզուախօսութիւնն 'ի Հո-
գւոյն տուեալ. և կաթն մանկանց՝ շնորհք բժշկու-
թիւն, և աջողութիւք զօրութեց. իսկ կատարելոցն
մատակարարէ հաստատուն կերակուր, որ է սէրն
Աստ։ Որպէս աղաղակէ՝ որ ճաշակեացն. եթէ ու-
նիցիմ մարգարէութիւն, և գիտիցեմ զամ գիտուի,
և հաւատս՝ զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունի-
ցիմ, ոչ ինչ օգտիմ։ Զսոյն և աշակերտացն ըղ-
ձանայ յասելն. աղօթս առնեմ և ծունր դնեմ,
առնուլ ձեզ՝ ոչ Հոգի նշանագործութիւն այլ զՀո-
գին իմաստութիւն. որ լուսաւորէ զաչս սրտից 'ի գի-
տութիւն լայնութիւն և երկայնութիւն, բարձրութիւն և
խորութիւն սիրոյն Քրիստի։ Ա՛ն այսորիկ և նշանաց և
լեզուաց ազգումն 'ի Հոգւոյն՝ իբրև զանօգուտս՝
պակասեաց 'ի միջոյ։ Իսկ Հոգին իմաստութիւն և
հանճարոյ՝ միշտ ներգործէ 'ի մէջ եկեղեցւոյ. և
զսէրն Քրիստի պայծառացուցանէ յորդւոց սորա Հո-
գիս։ Մի՛ ոք կարծեսցէ ցՐ անուանել զՅն, եթէ
ոչ 'ի նմանէ նախ զաղդումն ընկալցի։ Այլ թէ
ոք մատչի յառաջ առանց կոչման սորին հրամանի,
իբրև զկախարդն Սիմոն փորձօղ սի՛ Հոգւոյն՝ 'ի
գաւթայ տաճարիս հերքեսցի։ Կնիք է ամուր 'ի վրայ
իւրաքանչիւր անդամոց եկեղեցւոյ սՅ Քրիստի, որ
պարսպեալ պահին սովաւ յիւրաքանչիւր պատիւս
շնորհի։ Քանզի որ հաստատեաց զմեզ ձեօք հան-
դերձ 'ի Քրիստ, Աստ է. որ ետ զառհաւատչեայ Հո-
գւոյն 'ի սիրտս մեր, և կնքեաց զմեզ։ Ա՛ն արդապետ
է, ուսուցանել և յիշեցուցանել զառ 'ի Քրիստ ա-
